15897

Philosophy
162

190
po. 325

ՄԱՌԻ ՊԷՅԼԷՐԵԱՆ

ԳԷՄԻ ՊԷՐ

1914

Տպագր. ՄԱՄՈՒՐԾԱՆ

ԻԶՄԻՐ

ԴԷՊԻ ՎԵՐ

2003

Printed in Turkey

891.99
Պ-43
Մշ

ՄԱՌԻ ՊԵՅԼԵՐԵԱՆ

ԴԷՊԻ ՎԵՐ

1914

Տպագր. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ԻԶՄԻՐ

162-2015
|9918
39|
№ 162

ԱԶՆ. ՏԻԿԻՆ ՍՕՖԻ Թ. ՍՊԱՐԹԱԼԸ

Ս.ո

ԱՋԵ. ՏԻԿԻՆ Ս. Թ. ՍՊԱՐԹԱԼԸ

Ի ՆԵԱՆ

ԽՈՐՈՒՆԿ ՅԱՐԳԱՆՔԻ

ԵՒ

ԱՆԿԵՂԾ ՀԻԱՅՄԱՆ

Խոնարհաբար

ՀԵՂԻՆԱԿԷՆ

Բանում մի գրքույկ

ՎԵՂԱՐԱՒՈՐԸ

A. DEVEJIAN LIBRARY
NEW YORK
Ա. ՏԷՎԷՃԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ԲԱԳՐԱՏ Վրդ. ԹՈՒԽԱՏՈՒԼՈՒՆԼԻՑ

Ամ... Քաղաքի մայր եկեղեցին ահագին բազմութիւն մը խառնուեր էր այդ օրը։

Քաղաքին սիրուած ու յարգուած հարուստներէն Ծերունի Բարրատեանի միւնուճար տղան կուսակրօն եկեղեցականի աքեմ ու վեղար պիտի ընդունէր այդ օրը Հայոց Հայրիկէն. և այր ու կին, ծեր ու տղայ զիրար կը հրէին, կը հրմշտէին տեսակ մը բիրտ ուճապարանքով, միշտ ուրիշի առաջ, զէպի դասը անցնելու յամառ ճիգերով, ուր ուրիշի մօտէն պիտի տեսնէին արարողութեան բոլոր մանրամասնութիւնները, և որոշ պիտի լսէին Հայրիկին հոգեշունչ քարոզը։

Եկեղեցին իր ամենէն շքեղ ջահերը կախեր, և ամենէն հակայ մոմերը վառեր էր. և սուրբերը իրենց ամենէն աղուոր զարդերը հագեր էին այդ օրը։

Խունկի բարդ բարդ քուլաներ վէտ վէտ ծիծաղումներով կը բարձրանային կ'անօրանային զէպի եկեղեցւոյն գմբէթը, փաթթուելով զայն թանկագին ու խորհրդաւոր մշուշներու մէջ, զորս արեւուն ճառագայթները շեշտակի ծակելով, լուսեղէն լեզուներու պէս կուգային հանդ-

էլ խորանին առջև ծնրադրած երիտասարդին թիսհեր գլխուն վրայ։

Ժողովուրդը արարողության յուզիչ և խորհրդաւոր վեհմութեան տակ խոնարհած, պատկառոտ ու լռիկ իր աղօթքները կը խառնէր դպիրներուն քաղցրաձայն երգերուն ու ալէլուներուն։

Եւ խորանին առջև Հայրիկը իր ձերմակ մազերուն լուսապակին մէջ անգամ մըն ալ վեհ ու գեղեցիկ, երկու ձեռքերը դրած իր ուսերուն տակ խոնարհած մատաղ գլխուն վրայ, կը մրմնջէր նուիրական աղօթքները, կը սրբագործէր ուխտը և կ՚օրհնէր Քրիստոսի սեղանին վրայ դրուած այդ երիտասարդ, խանդով ու եռանդով գեղուն կեանքին զոհաբերութիւնը։

Ուխտը կատարուած վերջացած էր։

Նորընծան ուրբի երաւ, և առաջին նայուածքը վերստին ինկաւ դասին մօտիկ նստարանին վրայ, ուր կարծես փլած ըլլար եօթանասնամեայ ծերունի մը, արցունքներէ ուռած ու կարմրած աչքերով։

Նա՝ հայրն էր երիտասարդ Զաքէին։

Երկրորդ նայուածք մը աւելի՜ անուշ գնաց հեռուն ամբոխի ովկէանին մէջ փնտռելու պաշտուած դէմք մը, ու երեւի թէ գտաւ զայն, վասնզի թեթեւակի դողաց, և զինքը շրջապատող մամերուն պէս ճերմկեցաւ, մինչ շրթունքներուն վրայ կը փթթէր խաչին ճամբան իջնող գաղափարական մարդու գերագոյն ժպիտը, պարտականութեան և սրտի վեհագոյն ձգտումներուն հետեւող առաքեալի գիտակից ու խորունկ ժպիտը, որը գուցէ միակ իրական գոհունակութեան ու երջանկութեան ժպիտն ըլլայ աշխարհի վրայ։

* * *

Առաջնորդարանի սրահին մէջ ծերունի Բարդրատեանը աթոռի մը վրայ ինկեր էր լռիկ։

Փիչ մը հեռուն, նորընծայ վարդապետը վեղարը դէմին, երկար սեւ պատմուճանը ձգած ուսերուն, ուրբի վրայ կը մնար։

Դէմքին ազնուական ժպտունութիւնը անգամ մը ևս շեշտուեր էր վեղարին սև շրջանակին մէջ, և իր խոշոր սև աչքերուն նայուածքը անգամ մը ևս անուշ ու թափանցող դարձեր էր այն օրէն՝ երբ ուխտեր էր արտի և հոգւոյ վէրքեր քննել ու բուժելու ջանալ այնուհետև, և բարեկամն ու պաշտպանը դառնալ բոլոր զրկուածներուն, տառապեալներուն ու դժբաղդներուն։

Եւ տակաւին չէր կրնար առանց խորապէս յուզուելու տեսնել իր ծերունի հայրը, որուն ճերմակ մազերը, յուսահատութիւնն ու արցունքները չարաչար կը տանջէին իր փափուկ հոգին։

— Զաւա՛կս, կանչեց մէկէն ծերունին առաջին անգամ ինքը խզելով ճնշող լռութիւնը . . .

Երիտասարդ վեղարաւորը խկոյն մօտեցաւ, ծնրադրեց հօրը ոտքերուն տակ, և դէմքը ծածկեց անոր ծունկերուն վրայ։

— Զուզեցիր հօրդ ծերութեան օրերուն մխիթարութիւնը ըլլալ, զաւա՛կս, շարունակեց ծերունին դողդոջուն ձայնով. վաղը պիտի մեկնիս, թողուլ զիս միանակ իմ ամայի տունս մէջ, որը կը յուսայի թէ օր մը պիտի շէնցնէիր թոռնիկներու թրվռացող երամներովը . . . յուսախաբ ըրիր ծերունի հայրդ, մարեցի՛ր սիրտս, քանդեցիր մեր օջաղը . . .

Վեղարաւորը գլուխը վեր առաւ. գեղեցիկ դէմքը թրջուած էր արցունքներով։

— Ներէ՛ ինձ, հա՛յր, բաւ ան, չկրցի քու փափաքներդ իրագործել, ուստ՛ղ . . . կամքս շա՛տ հզօր էր սրտիս ձայնը, որը կը գոռար թէ՝ անարժան բան մը ըրած կ՚ըլլայի նուիրուելով միակ հոր մը, միայն ինձմէ ծնած զաւակներու, մինչ անդին այնքա՛ն թշուառներ, խեղճեր, որոնք կան, որոնք բոլորն ալ իմ հայրերս, զաւակներս, բոլորն ալ իմ քոյրերս ու եղբայրներս են . . . անոնք կը տառապին, կուլան, կ՚արիւնին, հա՛յր։ Օ՜հ, թոյլ տուր ինձ, որ երթամ սրբելու անոնց արցունքները, բուժելու անոնց վէրքերը, մեղմացնելու անոնց տանջանքները։ Չեմ ուզեր անձնասէր մը ըլլալ միայն իմ ընտանեաս երջանկութեան ու բարօրութեանը վրայ խորհելով։ Մանուշակը հասկցաւ զիս, քանի որ ինքն իր կամքով. այնքա՛ն ազ-

նուրէն խլեց մեր նշանախաւութեան կապը . . . դուն ալ հանկցիր զիս, հա՛յր, կը պաղատիմ, և ըսէ՛ ինձ «երթաս բարեաւ» :

Ծերունին իր դողդոջուն ձեռքերը դրաւ երիտասարդին գլխուն վրայ:

— Օրհնեա՛լ ըլլաս, միմնչեց, օրհնեա՛լ ըլլաս, զաւակս:

Ու երբ վեղարաւորը իր հօրը վերջին երկա՛ր համբոյրը ընդունելէ ետքը ոտքի ելաւ, ծերունին կրցաւ անոր ցոյց տալ հանգարտ ու պարզ ճակատ մը, որը քիչ առաջ այնքա՞ն ցաւագին յուզումներ կը փոթորկէին . . . :

*
* *

Հիմա կը հեռանար վեղարաւորը իր հայրենի երկրէն և Սեւ Ծովի վրայ կը թռչէր դէպի աւելի դժբաղդ, աւելի՞ սխալ աշխարհներ, իր հոգւոյն անունդը հոն պիտի գտնէր :

Երջանիկ ու զուարթ աշխարհները իրեն այնքա՛ն չունէին . ինքն ալ անոնց պէտքը չունէր :

Կարկաց ծով ու ցամաք, քալեց դաշտ ու ձոր, մագլցեցաւ լեռ ու սար և հասաւ հոն՝ ուր շատ կանուխէն կը թռչէին իր երազները :

Սիրեց, Հաւատաց, Յուսաց և Գործեց :

Աշուղները իրենց ամենէն գեղեցիկ երգերը նուիրեցին անոր . և ժողովուրդը իր սրտին ու բաղձանքներուն է՞ն մօտիկ հէքիաթներու մէջ խառնեց, հիւսեց անոր կեանքը, ցոյց տալով զայն փոխն ի փոխը մերթ մարմնացեալ հրեշտակի մը, մերթ ձերմակ մօրուս հրաշագործ սուրբի մը, մերթ քաղցր, արդարատէր և ողորմած թագաւորի մը պաշտուած կերպարանքին տակ :

Եւ սակայն խաւարի որդիքը կը հակէին անոր շուրջը :

Եւ եղաւ որ ուզեցին սեւցնել անոր գործքերը . . . :

Մի՞թէ լոյսը կը սեւնայ :

Նա շարունակեց գործել, ու դիւցազնօրէն մաքառեցաւ լուսոյ թշնամիներուն դէմ :

Նա քարոզեց շարունակ և ամեն տեղ Բարին, Ճշմարիտը, Գեղեցիկը :

Միշտ ու ամեն տեղ նա բարեկամը մնաց ազգատին, պաշտպանը զրկուածին, մխիթարիչ հրեշտակը տառապեալին։

Ու երբ կը խնդէր անառակին, գողին, ոճրագործին հետ նոյնքան քնքշութեամբ իր անուշ, թովիչ նայուածքը յառած անոնց կարմիր աչքերուն, կը բամբասէին զինքը իր թշնամիները թէ՝ չարերն են իր ընկերները։

— Բարիները ինձ պէտք չունին, կը պատասխանէր ան. և կը շարունակէր իր ճամբան։

Նա Մեծ Վարպետին կեանքը կապրէր։

*
* *

Մայիսի առաւ մըն էր, մին այն թովիչ արշալոյսներէն, որոնք յատուկ են լեռնային երկիրներուն։

Վեղարաւորը կանուխ արթնցեր, կը պատրաստուէր իր սովորական պտոյտը ընել լեռներուն ու դաշտերուն վրայ։

Կը սիրէր ան կրտսուել անտառներուն մէջ, ազօթել մեծ մինակ բնութեան հետ և իր մաքուր արտին խունկը ծխել Ամենակալին առջև, բաց դաշտին վրայ։

Կը սիրէր խառնել իր ապրումներուն թռչունները դայլայլիներուն, մերթ ատոմակ կանգնիլ վրայ թռչկոտող խաղաւոր թիթեռնիկներուն վրայ զմայլելով, մերթ ծաղիկներ փնջելով և վարդերու ու շահոքրամներու անուշ հոտէն գինովնալով։

Կը սիրէր յաճախ իր երկար պտոյտներէն ետքը՝ ծառի մը թաւուռ հովանիին տակ ընկողմանած, երկար՝ ծփծփալ խոտերու ու խորհուրդներու մէջ, քնելով իր ցարդ ըրածները, և ապագայ ընելիքներուն ծրագիրը մշակել։

Եւ ահա իր յափշտակութեան է՛ն քաղցր վայրկենին ցաւագին ազաղակ մը ցրուեց, տարտղնեց իր ոգի եւ բազմերը։

Վեղարաւորը ընդոստ ցատկեց տեղէն։

Ազաղակը կրկնուեցաւ, այս անգամ աւելի՛ ուժգին, աւելի կսկծալի։

Կնոջ մը ձայնն էր անկասկած, կնոջ մը որ բութ դանակով կը մորթեն։

Վեղարաւորը երագեց իր քայլերը և ահա մօտակայ լեռան ստորոտը տեսաւ երկու մարդակերպ գազաններ, որոնք կին մը բռնած մազերէն խուժդուժօրէն ու վայրագօրէն կը շարչարէին։

Առաջին նայուածքով Վեղարաւորը զգաց թէ ինկած կին մըն էր ան. հագուստներուն աչք ծակող գոյները ու չափազանցուած սեթեւեթը, ներկուած դէմքն ու աչքերը՝ ուր այդ պահուն սակայն սարսափը մարեր էր այն լկտի արտայայտութիւնը որը յատուկ է այդ դժբաղդ կանանց նայուածքին, յայտնապէս ու բացարձակապէս կը շեշտէին ատիկայ։

Ի՛նչ փոյթ սակայն։

Հոգի մըն էր որ կը տառապէր, և պէտքը ունէր իր օգնութեան։

Այդ բաւական էր։

Վեղարաւորը մօտեցաւ։

— Ինչո՞ւ կը տանջէք այդ կինը, հարցուց մեղմութեամբ խօսքը դահիճներուն ուղղելով, թողէ՛ք որ երթայ։

Անոնք դարձան դէպի Վեղարաւորը, և ապուշ նայուածքով մը սկսան դիտել այն գեղեցիկ ու սէգ դէմքը, որը այդ վայրկենին բարկութենէն կարմրեր էր։

Թշուառականները գինով էին։

Վեղարաւորը զգաց այդ։

— Թողէ՛ք, կրկնեց քաղցրութեամբ, ինչո՞ւ կը շարչարէք այդ խեղճ կինը։

— Մեզի խաբեց, թոթովեց անոնցմէ մէկը, հազիւ լեզուն բերանին մէջ դառնալով, դրամնիս առաւ ու քթերնուս խնդաց։

— Թող մեռնի՛, թող մեռնի՛, մռնչեց միւսը գազանային զայրոյթով իր որսը աւելի պինդ սեղմելով։

Թշուառուհին գերմարդկային ճիգ մը ըրաւ։

Ինքզինքը քաշեց ազատեց զինքը շարչրողին ձեռքերէն։ Ապա ձեռնամած ու պազատապին վազեց ինկաւ Վեղարաւորին ոտքերուն տակ...։

— Փրկէ՛ զիս, ազաղակեց յուսահատութեամբ փաթթուելով անոր վերարկուին քղանցքներուն, փրկէ՛ զիս

ի սէր Աստուծոյ, որուն պաշտօնեան ես երկրի վրայ։

Գազանները կատղած ցատկեցին խեղճ կնոջ վրայ կարծես ուզելով բզքտել զայն։

— Փրկէ՛ զիս կը պոռար թշուառուհին խենդի աչքերով նայելով վերապահորին։

Զխսեցաւ ան, վերարկուին տակէն վեցհարուածեան մը հանեց և սպառնալից փողը դարձնելով դէպի երկու հրէշները.

— Թողէ՛ք այդ կինը, որոտաց . . . :

Անոնք շոկուեցան սարսափած, և խակոյն թողլով կինը արագ արագ հեռացան երերալով դեռ իրենց ռաքերուն վրայ։

Վերապահորը կը նայէր երկար անոնց ետեւէն մինչ ոչ ևս էին։

Կը խորհէ՞ր . . . :

Զէնքով սպառնացեր էր ի՞նքը, Խաղաղութեան պաշտօնեան, Սիրոյ զինուորը։

Զէ՞ որ Մեծ Վարդապետը Ինքն ալ տակաւին խարազանով սպառնացեր էր Հօրը տունէն վռնտելու համար ամբարիշտները ու աւազակները։

Իր աչքերուն մէջ բարկութիւնը տեղի տուեր էր անհուն գթութեան ու խորունկ ցաւի արտայայտութեան։

Այն թովիչ անուշութիւնը, որ վայրկեան մը թողեր էր իր նայուածքը ի տես գազանային վայրագութիւններու, եկեր էր դարձեալ տեղաւորուիլ հոն։

Նայեցաւ իր ռաքերուն տակ ինկած կնոջ վրայ։

Թշուառուհին կուլար ոգու մը պէս բարձրաձայն հեծկլտալով։

Յորդ արցունքները լուացեր էին իր երեսին կարմիրն ու ճերմակը, և բնական կաշին կը գողդըզար խորունկ յուզմունքի մը սարսուռներով։

— Հա՛յր . . . մրմնջեց վերջապէս երբ կրցաւ խօսիլ, հա՛յր . . . թողութիւն տուր ինծի։

— Գնա՛ խաղաղութեամբ, զաւակս, պատասխանեց ան քաղցրութեամբ, գնա՛ և ալ մի՛ մեղանչեր. այնչա՞փ քաղցր է չիրակ ու պարկեշտ ճամբու մէջ քալելը . . . թող այս դէպքը փրկարար դաս մը ըլլայ քեզի . . . :

— Հա՛յր . . . կրկնեց տարաբաղդ կինը փաթթուելով անոր ծունկերուն և արցունքներովը թրջելով անոր ոտ-

քերը . . . արդե՞օք Աստուած պիտի ներէ ինծի . . . :

— Տղայ . . . մրմնջեց ան խորապէս յուզուած թշուառուհոյն խորունկ զիղջէն, Ան՝ որ այնքան քաղցրութեամբ ներեց անառակ կնոջը, միթէ՞ քեզի համար պիտի ըլլայ խստասիրտ . . . :

Եւ ձեռքերը դնելով անոր գլխուն վրայ արձակեց զանի իր մեղքերէն և օրհնեց անոր զղջումը :

Եւ վերջին նայուածք մը նետելով անոր, ուր կարծես խեղճ կնոջ բոլոր ցաւերը հաւէցան, վեղարաւորը հեռացաւ ծանր ծանր :

Ու սրբուած կինը դեռ ծնրադիր նոյն դիրքին մէջ, յաւիշտակուած, գերագոյն անդորրութեան ու անխառն երջանկութեան արտայայտութիւն մ՚ունենալով իր տանջուած դէմքին վրայ երկա՞ր կը նայէր անոր եռուէն, ճիշդ այն նայուածքով, որով անառակ Մագթագինէն կը նայէր Քրիստոսի մաքրագործումի վսեմ վայրկեանէն ետքը :

*
* *

Լսեցին իր թշնամիները թէ՝ անառակ կին մը պաշտպաններ էր զէնքով, ինքը եկեղեցւոյ վարդապե՞տը . . . թէ երկար տարի անոր հետ առանձին մնացեր էր հոն, լերան տորոնը, ինքը՝ կուսակրօն – եկեղեցականը :

Եւ բամբասանքն ու զրպարտութիւնը, պժգալի տուտը, անամօթ ու վերջ չարախօսութիւնները սկսան տանձարձակ պտտիլ իր անձին շուրջը, մնուել իր մաքուր կեանքը :

Ու յաջորդ կիրակին երբ նա եկեղեցւոյ բեմը կ՚ելլէր քարոզելու, սեւ հոգիներ՝ որոնք յաջողեր էին ժողովուրդին մի քանի ոչէտ ու դիւրահաւան զաւակները որսալ, մի քանի մաքուր սրտեր պղտորել և փողոցային խայտառակ դաւադրութիւն մը սարքել, սկսան եկեղեցւոյն մէջ վայրենօրէն պոռչտալ :

— Անկի՛ անարժան վարդապետը . . . անկի՛ անառակ կղերականը . . . :

Զխօսեցաւ ան :

Կարծես իրեն համար չըլլային այդ անիրաւ նախատինքները :

Ժողովուրդն վրայ պոռցուց իր հանդարտ, քաղցր ու վեհ նայուածքը։

— Սո՛ւտ է, սո՛ւտ, անմե՛ղ է ան . . . պոռաց խակոյն ժողովուրդը միահամուռ, շլանալով այդ նայուածքին անմեղութեան, սրբութեան ու մեծութեան ճառագայթներէն, և այդ վեմ ազազակին մէջ խեղդելով ստութեան սխուր պոռչտուքը, — Անմե՛ղ է ան, կը ստէք դուք, վատե՛ր . . . ա՛ն մեզի հաց տուաւ երբ անօթի էինք, ջուր տուաւ երբ ծարաւի էինք. մեզ խնամեց՝ երբ հիւանդ էինք, մեզ մխիթարեց երբ ազատ էինք ու վշտացեալ . . . անմե՛ղ է ան . . . անմե՛ղ է ան . . .։

Եւ առակի վայնասուն մըն է փրթաւ։

Հինգ հարիւրէ աւելի հուժկու կուրծքերէ դուրս պոռթկացող այդ ազազակները կը դղրդեցնէին Սատուծոյ տաճարը։

Վեղարաւորը զգաց վայրկենին ծանրութիւնը։

Ձեռքերը անգամ մը թափ տուաւ լռութեան հրաւիրելու համար իր հօտը։

Ու երբ լռեցին անոնք, լսուեցաւ ի՛ր ձայնը, իր առոյգ ու կորովի ձայնը, որ այնքան սրտեր կը յուզէր, այնքան մտքեր կ՚ոգեւորէր ու կը խանդավառէր։

— Ի՞նչ է այդ, զառնուկներս, լաւ մեզմիկ, միթէ՞ առնարժան հայհոյանքներու և անկարեւոր խծբծանքներու համար կը վայելէ որ զիրար ըզքաշէք. թողէք որ ճշմարտութիւնը ինքնին պարզուի որը ինչքան ուշ փայլի այնքան պայծառ կը շողայ։

Եւ ժպտելով իր հօտին, սկսաւ քարոզը անխառով, որպէս թէ բնաւ ոեւ է յուզում կրած չըլլար, թէ բնաւ երբէք կարգ մը սեւ երես ապերախտներ ահաւելիօրէն չարչարած չըլլային իր մեծ հոգին։

Ու այս անգամ իր քարոզը, որոյ բնաբանն էր «Սատուած սէր է», եղաւ այնքա՜ն սրտաշարժ, այնքա՜ն բարեխառն համակ զգացումով ու վեմ թռիչներով, որ ժողովուրդը վերացած, թռչուած անոր խօսքերէն, ցրուեցաւ մխիթարուած, մոցած քիչ առաջուայ սեղի ունեցած սխուր ու անախորժ դէպքը, և աւելի քան երբէք պաշտող իր վարպետին։

Իսկ նա երբ քաշուեցաւ իր սենեակը, ծերպերից Խաչելութեան մեծ՝ պատկերին առջեւ, որը իր մահճակալին ճակատը կը զարդարէր, և գլուխը՝ ծածկած երկու ձեռքերուն մէջ;

— Աստուա՜ծ իմ . . . մրմնջեց արցունքներով, ուժ տուր ինձ տանելու այս երկաթէ խաչը։

Ու երկա՜ր աղօթեց ծունկի վրայ։

*
* *

Մեկնեցաւ այն քաղաքէն ուր արդէն յաջողեր էր տիրել տալու Սէրն ու Խաղաղութիւնը, ատելու մեծ թշուառութիւնները։

Դպրոցներ, ընթերցարաններ էր բացեր, բարեգործական մէկէ աւելի ընկերութիւններ էր կազմակերպեր, կանանց համար աշխատանոցներ էր հիմներ, որպէսզի զրկանքէ ու անօթութենէ թուլացած՝ չըլլայ որ ինկած կեանք մը ապրին։ Հոն կաշխատէր և՛ իր անկումէ փրկած կինը։

Իր գործը վերջացած կը համարէր հոն. ալեւոր իրեն պէտք չունէին, և, հակառակ ժողովրդեան թախանձանքին ու արցունքներուն, օրին մէկը թողուց քաղաքը ու մեկնեցաւ։

*
* *

Կարեց ծով ու ցամաք, քալեց դաշտ ու ձոր, մագլցեցաւ լեռ ու սար և հասաւ հոն՝ ուր կ՚ուզէր հասնիլ . . .։

Սիրեց, հաւատաց, յուսաց և գործեց։

Աշուղները իրենց ամենէն գեղեցիկ երգերը նուիրեցին անոր, և ժողովուրդը իր սրտին ու բաղձանքներուն է՛ն մօտիկ հէքիաթներու մէջ խառնեց, հիւսեց անոր կեանքը, ցոյց տալով զայն փոխն ի փոխը մերթ մարմնացեալ գեղեցիկ հրեշտակի մը, մերթ ճերմակ մօրուս հրաշագործ տէրտէրի մը, մերթ քաղցը, արդարատէր և ողորմած թագաւորի մը պաշտուած կերպարանքին տակ։

Եւ սակայն խաւարի որդիքը կը թափառէին անոր շուրջը։

Եւ եղաւ որ ուզեցին սեւցնել անոր գործքերը։

Միթէ՞ լոյսը կը սևնայ։

Նա շարունակեց գործել, և գիւղացիներէն մէկ մաքրագործումի և յառաջդիմութեան պայքարը լուսոյ թշնամիներուն դէմ։

Նա քարոզեց շարունակ և ամեն տեղ բարին, ճշմարիտը, գեղեցիկը։

Մի՛շտ ու ամեն տեղ նա բարեկամը մնաց աղքատին, պաշտպանը՝ ղրկուածին, մխիթարիչ հրեշտակը՝ տառապեալին։

Ու երբ կը խօսէր անառակին, գողին, ոճրագործին հետ նոյնքան քնքշութեամբ, իր անուշ նայուածքը յառած տոնոց կարմիր աչքերուն, կը բամբասէին զինքը իր թշնամիները թէ՝ չարերն են իր ընկերները։

— Բարիները ինծի պէտք չունին, կը պատասխանէր ան, և կը շարունակէր իր ճամբան։

Նա Մեծ Վարդապետին կեանքը կ՚ապրէր։

*
* *

— Գողցա՛ւ ... սպաննե՛ց ... կը պոռար ամբոխը, բռնեցէ՛ք ... բռնեցէ՛ք ...։

Եւ քանէ աւելի կտրիճներ կը հալածէին թշուառականը, որը գլուխը բաց, քրտնաթոր շապիկը կռնակին փակած, ոտքերը բոբիկ, արիւնոտ մերկ դաշոյն մը ձեռքերուն մէջ պինդ սեղմած, խելայեղ վազք մը կը տուրար աջէն ձախ ոլոր մոլոր ճամբաներով։

Հայոց եկեղեցւոյն անկիւնէն դարձած պահուն՝ կուրծք կուրծքի զարնուեցաւ Վեղարաւորին հետ, որը վազեր էր դուրս, փողոց, աղմուկին պատճառը իմանալու։

— Մէկդի՛ ... գոչեց փախստականը իր դաշոյնը սպառնալից վերցնելով անոր վրայ։

Վեղարաւորը տեղէն չշարժեցաւ. նայեցաւ ուշադիր թշուառականին այլայլած երեսին։

— Եկո՛ւր, ըսաւ պարզապէս թեւէն բռնելով, և չնայած որ կը դիմադրէր ան, գրեթէ բռնի քաշեց տարաւ իր սենեակը։

Դուրսը աւելի՛ և աւելի ուժգին կը լսուէր ամբոխին աղաղակը։

— Գողցա՛ւ ... սպաննե՛ց ... բռնեցէ՛ք ... բռնեցէ՛ք ...։

— Չխ պիտի բռնե՞ն, մրմռաց ոճրագործը, որուն ակ-

ռանները կը կափկափէին վախէն, ինչո՛ւ զիս բերիր հոս, պիտի մատնե՞ս զիս անոնց ձեռքը, օ՛ . . . վա՜յ քեզի։

Ու դաշոյնը անգամ մըն ալ շողացուց անոր աչքերուն առջև։

Վեղարաւորը պատասխան չտուաւ. բացաւ վերարկուն, և մերկացնելով իր կուրծքը.

— Ահա՛ կուրծքս, բաւ քաղցրութեամբ, զա՛րկ . . .

Ոճրագործը սարսռաց. այդ հրեշտակային քաղցրութիւնը յանկարծակի յեղաշրջեց իր հոգեկան ներքին աշխարհը. մէկ վայրկեանի մէջ մեղմացուց կարծրութիւնը իր սրտին, հալեցուց առնութիւնը իր հոգւոյն, ամոքեց օրերէ՛ ի վեր իր սրտին մէջ կուտակուած ատելութեան լեղին, տառապանքներէ պրկուած ջղերը թուլցան և չոր ու տենդավառ աչքերը յեղակարծօրէն թրջուեցան։

Արցունքի խաշոր կաթիլներ բարերար ցօղերու պէս առատօրէն թափեցան իր մացառուտ մօրուքին վրայ և զովացուցին իր այրած սիրտը։

— Դուն բարի ես, Լաւ անոր դողդոջուն ձայնով մը, դուն ներել գիտես. բայց ես ալ գէշ մարդ մը չէի. եղած են առիններ երբ «բարի մարդ է» կըսէին ինծի համար ալ. զիս գէշ ըրին . . . գող ու ոճրագործ ըրին. մեղքը իրենց վիզը. իմ արդար իրաւունքս ձեռքս յափշտակեց այն գազանը . . . արիւնս քամելէ ետքը օջաղս քանդեց. զիս մոխիրի վրայ նստեցուց. ասոնց ձեռքէս քաշեց առաւ. զաւկներս փողոցը մնացին, անոնցմէ երկուքը անօթութեան յուրտի չդիմանալով մեռան, խեղճերա՜յ . . . հա՜յր էի . . . գայի անոր մօտ, ողջունէի, լայի, արցունքներս ծաղրեց, և ոտքովը զիս մէկդի հրեց շան մը պէս . . . ա՛լ ինքզինքիս տէրը չեղայ . . . կարմիր տեսայ շուրջս . . . առանձին էինք . . . վրան ինկայ . . . մէկ ձեռքովս կոկորդը սեղմեցի մեռաւը զրպաններուը խուզարկեցի, գտած դրամս առի, զանկերուս կ՚ուզէի հայ տանիլ այդ օրը . . . անօթի՛ էին և ես հա՜յր էի . . . գինքը ապտնել չէր միտքս. կ՚ուզէր պատալ, վախցա՜յ . . . գանակս մէջքս էր . . . կարծեմ ապտնեցի զայն, վառելի ալ լուց ու հրամեցաւ . . . ինքզինքիս տէրը չէի . . . :

Վեղարաւորը լուռ ու խորասէս յուզուած կը լսէր արբեալ խոստովանութիւնը, զոր թշուառը ծունկի վրայ ին-

կած, յաւագին հեծկլատանքներու ընդ մէջ կ'ընէր իրեն կցկտուր, անկապ բառերով։

— Ողբի երիր, ըսաւ անոր մեղմիկ, և մի՛ վախնար . . . Գթած է Աստուած։

Այս անուշ և առոյգ ձայնը, մխիթարութեան ու քաջալերութեան այս կազդուրող բառերը, զոր առաջին անգամ կը լսէր իր չարչրկուած կեանքին մէջ, նոր հոգի տուին թշուառին։

Աչքերը վեր բարձրացուց, և տեսաւ Վեզարուորը՝ որ կուլար։

— Կուլա՞ք . . . մրմռաց խեղճ մարդը . . . ինծի՞ համար կուլաք . . . ։

— Ողբի երիր թշուա՞ռ մարդ . . . կրկնեց Քրիստոսի պաշտօնեան, դուն չե՞ս մեղաւորը . . . բռնութիւնը, անիրաւութիւնը շատ անգամ հրեշտակ մարդը հրէշ կը դարձնէ, և քեզի պէս շատե՛ր մեղաւոր դատուած անմեղներ են այսօր։ Այն օրը՝ ուր Սէրը, Արդարութիւնը, Իրաւունքը պիտի թագաւորեն վերջնապէս աշխարհի վրայ, այն օրը ոճիրներն ալ ինքնին պիտի պակսին . . . Ողբի երիր, աւա՜ղ, անոնք որ իրենց անիրաւ ու անզութ գործերով ոճիրը գործել կուտան, ոճրագործներէն աւելի՛ մեղաւորներ են շատ անգամ։

— Ոճրագո՞րծը . . . ահա՛ հոն է հոն, վերը, հայր աւրբին մօտ, բռնեցէք, կը պօռար ամբոխը զուրսէն։

— Զաւակնե՛ր ես, մրմնջեց թշուառը մօտալուտ վտանգին հանդէպ խակոյն յիշելով զանոնք. Հա՛յր կը խոստանա՞ք պաշտպանել զանոնք, եթէ գիս մեռցնեն։

— Տղա՛յ . . . ըսաւ Վեզարուորը, մի՛ վախնար։

Եւ ինքս վար խակոյն առաջնորդարանի դրանն առջև։ Ամբոխը լուեց ի տես այդ պաշտելի գլուխին։

— Զաւակներս, յարեց Վեզարուորը, ի՛նչ կ'ուզէք։

— Ոճրագործը . . . հա՛յր, ոճրագո՞րծը, նա գողցա՛ւ, ապանեցա՛ց, գոռաց ամբոխը։

— Իմ մօտս է, և ես զինքը ընդունեցի, իրեն ներեցի, շարունակեց ան, վտանգի մինակ, լքեալ ու թշուառ էր։

— Նա գողցա՛ւ, ապանեցաւ . . . մրմնջեց ամբոխը։

— Վասն զի ունեցածը գողցան, իր զաւակները ապանեցին, յարեց Վեզարուորը, և յայտնապէս արդարութեան,

օրէնքի սուրբ անուններուն եռեւ կծկուած գործեցին այդ քամնելի ոճիրը. և հիմա մեռածներէն զատ դեռ կենդանի զաւակներ ալ ունի ան. կուզէ՞ք որը թողուլ այդ թշուառ-ները . . . :

— Իրաւունք ունի, մրմռաց ամբոխը, խակոյն գրաւուած իր Վարդապետին յուզիչ պերճախօսութենէն, ապանուածը ուրիշ երկու ընտանիքներու տունն ալ աւերեր է կ՚ըսեն, արդարութիւն է որ սուրով մեռնէր :

— Գացէ՛ք ուրեմն, զաւակներս, շարունակեց Վեղարաւորը, և թողէք որ Աստուած լուսաւորէ այդ թշուառին սիրտը, որ արդէն զղջման համար բացուած է . . . մի՛ քարոցնէք զայն նոր բիրտ ու անգութ վարմունքներով, գիտցէք որ սէրը, գութը, քաղցրութիւնը միայն կրնան կակղացնել նոյն իսկ ապառաժէ սրտերը . . . :

Եւ գորովագին նայելով իր հօտին, որը տակաւ առ տակաւ կը ցրուէր իր խօսքերուն բարերար ազդեցութեանը տակ, օրհնեց զայն մառվի, ապա վեր իր սենեակն եկաւ արտօրնօք :

Ոճրագործը մնացեր էր նոյն դիրքին մէջ, և կը սպասէր իրեն դառն անձկութեամբ :

— Մի՛ վախնար, բաւ խակոյն, քեզի համար վտանգ չկայ հիմա, բայց հեռացիր շուտով այս քաղքէն, ո՛վ գիտէ կրնայ գժբաղդութիւն մը պատահիլ վաղը :

Նստաւ իր գրասեղանին առջև, յանձնարարական նամակ մը գրեց անոր համար և իր ունեցած բոլոր գրամը տուաւ անոր :

— Ա՛ռ ատանք, բաւ, ժողվէ՛ պզտիկներդ, և գնա՛ հոն՝ ուր ես էի ատեն մը. քեզի համար գրեր եմ, հոն հոգ պիտի տանին քեզի. գնա՛ և ալ մի՛ մեղանչեր. արցունքներդ քեզ մաքրեցին հիմա թափած արիւնէդ և Աստուած ներեց քեզ, վասնզի շատ տառապեցար :

Թշուառը խոնարհեցաւ, երկար համբոյր մը դրոշմեց Վեղարաւորին ձեռքերուն վրայ, և առնելով նամակն ու դրամը հեռացաւ :

*
* *

Ահագին ազմուկ հանեց այս դէպքը գիւղին մէջ։ Զարմանքներն ու բամբասանքները լայն ասպարէզ գտան դարձեալ իրենց առջև։ Կարգ մը անարդ արարածներ կառավարութեան աչքին սուրբը իբրև ոճրագործներու պաշտպան և իբրև զոզոնաթաքոյց ներկայացնելու չափ յառաջ գացին։ Եւ օրին մէկը դատարան հրաւիրուեցաւ ան։

Ահագին բազմութիւն խռնուած էր դատարանի ընդարձակ սրահին մէջ այդ օրը. ամենքն ալ իր ոչխարները, զորս այնքան գուրգուրանքով կ՚արածէր։ Անոնք եկեր էին ազատելու իրենց վարդապետը եթէ հարկ ըլլար՝ իրենց կեանքին գինովը։

Ուրաքանչիւր հարցումներուն, զորս դատաւորը կ՚ուղղէր իր պաշտելի հովիւին, ժողովուրդը ինքն էր որ միաձայն կը պատասխանէր։

— Սո՛ւտ է . . . սո՛ւտ, անմե՛ղ է ան . . . ա՛ն մեզ կերակրեց երբ անօթի էինք, մեզի ջուր տուաւ՝ երբ ծարաւի էինք, մեզ մխիթարեց՝ երբ սգաւոր էինք ու վշտացեալ։ Անմե՛ղ է ան . . . անմե՛ղ է ան . . .։

Նա պէտք չունեցաւ արդէն ինքզինքը պաշտպանելու։ Իր պատկառելի զեղեցիկ դէմքը, ուր անմեղութեան հանդարտութիւնը այնքա՛ն պայծառօրէն կը ճառագայթէր, իր ազնուական կեցուածքը, և միւս կողմէն ժողովուրդին միաբերան ու միաձայն վկայութիւնը պէտք եղաւ աւելի պերճախօսութեամբ կը հաստատէին իր արդարութիւնը։ Իսկոյն անպարտ արձակուեցաւ. և ժողովուրդը զայն գրկած, յաղթական կեցցէներով ու ցնծութեան ազաղակներով տարաւ մինչև իր բնակարանը։

Եւ սակայն ճշմարտութեան այդ փառաւոր յաղթանակէն ետքը՝ երբ առանձին մնաց ան իր սենեկին մէջ, գնաց ծընրադրել Աստուծոյ այն մեծ պատկերին առջև, որը իր մահճակալին ճակատը կը զարդարէր. և գլուխը առնելով իր երկու ձեռքերուն մէջ, «Աստուա՜ծ իմ, մրմնջեց արցունքներով, ոյժ տուր ինձ տանելու այս երկաթէ խաչը»։

* * *

Եւ նա երիտասարդն իր Տիրոջը պէս հրեշտակային համբերութեամբ և զերմարդկային սրտութեամբ վերցուց այդ երկաթէ խաչը, մարդոց ապերախտութեան, վատութեան, չարութեան խաչը և գնաց մի՛շտ յառաջ։ Մտաւ շա՛տ գիւղեր, շա՛տ քաղաքներ. և ուր որ մտաւ, իրեն հետ մտան նաև Լոյսն ու Յառաջդիմութիւնը, Երջանկութիւնն ու Խաղաղութիւնը։ Դպրոցներ բացաւ, ընթերցարաններ հիմնեց, բարեգործական ընկերութիւններ կազմակերպեց, թշուառներու, անկարներու հոգատար, ազքատախնամ մարմիններ ստեղծեց։ Սիրեց, սիրուեցաւ ամէն տեղ՝ ուր որ գնաց, ամէն տեղ՝ ուր որ գործեց։

Ամէն տեղ հանդիպեցաւ ատելի ու երես վատերու, և ցած ու գձուձ հոգիներու։ Իր բարոյական կրթովը երբէք չթուլցաւ, բայց Փիլիքսական ուժերը ապառնեցան կատարելապէս։ Զգաց մահուան մօտալուտ գալուստը, և ուզեց հայրենի հողին վրայ, իր հօրենական տունը ան՝ մեռնիլ։ Սրտի անհուն ցաւով մը թողուց այն տեղերն ու աշխարհները, որոնց նախախնամութիւնն էր եղեր։ Անցաւ անգամ մըն ալ բոլոր այն գիւղերէն ու քաղաքներէն, ուր լոյս և կեանք էր տիւեր։ Տեսաւ որ օրը օրին կը բարգաւաճէին, կը ծլէին ու կը ծաղկէին. խոպան երկրի վրայ տերմ չէր ցաներ. և անճառ ուրախութեամբ խայտաց իր հոգին։

— Փա՜ռք քեզ, Աստուած, բաւ խորունկ երախտագիտութեան շեշտով մը, հունձքը շա՜տ առատ բրիր մէկ մշակի համար։

Երբ հասաւ հոն, ուր առաջին անգամ իր գործունէութեան ասպարէզն էր ընտրեր, ա՛լ մնաց. կուրծքին ցաւը սատակցեր և տկարութիւնը հակառակելի յառաջդիմեր էր։ Ըմբռնեց թէ՝ անկարող պիտի ըլլար շարունակելու իր համբարձութիւնը. և ինքաւ անկոդին, հոն այն սենեկին մէջ ուր երազեր, խորհեր, գործունէութեան իր առաջին ծրագիրները պատրաստեր էր մեծ խոյանքներ իրականացնելու համար . . .։

Ժողովուրդը՝ զոր այնքան սիրեր էր, և որուն սիրոյն համար կը տուժէր իր թանկագին կեանքը, սենեկին դրան առջև խռնուած, սրտմաշուք անձկութեամբ, և զատն արցունքներով կը հակէր իր պաշտելի հովիւին վերջին վայրկեաններուն վրայ։ Եթէ բժիշկին խիստ պատուէրները չբլ-

լայնն, արդէն հոն, անկողնոյն շուրջը պիտի թափուէին ամենքն ալ, զրկելու համար պաշտելի ոտքերն անոր, որ զիրենք կերակրեր էր՝ երբ անօթի էին, ջուր էր տուեր՝ երբ ծարաւի էին, մխիթարեր՝ երբ ոգեւոր էին ու վիշտացեալ։

*
* *

Վերջապէս հնչեց սև ժամը... Վերարաւորը կը մտէր մահուան հետ.

— Դեռ շա՞տ գործեր ունիմ կատարելիք, կ'ըսէր, թո՛ղ զիս. դեռ շատ աշխարհներ ունիմ այցելելիք, շա՞տ արցունքներ ունիմ չորցնելիք...։

— Չէ՛ կը պատասխանէր դժնէ մահը եկո՛ւր գիրկս...։

Ու մինակ անոր չկրցաւ յաղթել ինքը մարմնացեալ գաղափարը, ինքը անմահը։

Դուրսը՝ սենեկին դրանն առջև խրատանցումը կը մեծնար...։

— Թողէ՛ք, կը գոչէր կին մը, թողէ՛ք վերջին անգամ տեսնեմ զինքը։

Ուժգին մղումի մը տակ դուռը մէկէն տեղի տուաւ և կոնակի վրայ բացուեցաւ։ Եւ մահամերձին մարելու մեռ աչքերը տեսան այն մեղաւոր կինը, որը փրկեր էր և արբացուցեր։

Հա՛յր, կը գոչէր խեղճ կինը տակաւին յուսահատութեամբ գլուխը զարնելով մահճակալին երկաթներուն, թող ե՛ս մեռնիմ քու տեղդ, ե՛ս... տեսնուտ կին մը, որ ցեխերուն մէջէն քաշեցիր հանեցիր...։

— Հա՛յր, կը մրմնջէր տարիքն առած մարդ մը մտնելով անկողնին, որը Վերարաւորը խելքն ճանչցաւ. առ այն ոճրագործն էր, որը փրկեր էր անպատուութենէ ու մահուանէ...։ Հա՛յր թող ե՛ս մեռնիմ քու տեղդ. տե՛ս, Հուսարի, Յոյսի ու Սիրոյ կեանքը՝ որը ինձ վերադարձուցիր, զաւակներս երջանի՛կ են։

— Հա՛յր, կ'ըսէր ուրիշ մը արցունքներով թրջելով անոր պաղած ձեռքերը, անօթութենէ, անպատուութենէ անկումէ փրկեցիր զիս. օրհնեա՛լ ըլլաս, օրհնեա՛լ ըլլաս։

162 - 2015
4918
39

Եւ ամէնքը միաբերան ուրցունքներու և հեծկլտանքներու մէջէն կը կրկնէին.

— Օրհնեա՛լ ըլլաս, օրհնեա՛լ ըլլաս . . . :

Եւ ինքը իր օրհնեալների տագնապներուն մէջէն կը ժպտէր ամենուն, գոհ ու երջանիկ ժպիտով մը. «Ապուա՜ծ իմ, եղաւ իր վերջին խօսքը, օրհնեա՛լ ըլլաս. ալ հիմա չեմ ցաւիր. բաւական ապրեր եմ . . . » :

*
* *

Իր դագաղը պսակներով ծածկուած էր : Պսակներ գրեր էին և՛ անոնք՝ որ վինքը հարգեր, չարչրկեր, վռնտեր ու մատներ էին

. . . . . .

Բարիներու անունը թող օրհնութեամբ յիշատակուի :

ԱՐՑՈՒՆՔԱՆԵՐ

ԻԶՄԻՐԼԵԱՆ ՀԱՅՐԻՆԻ Յիշատակին

ԲԱԶՄԱԶԱՐԶԱՐ Հայաթեան սեւ երկնքին խարերէն
Ծագած աստղը յուսալից, վառ ու պայծառ շողերով,
Ակարատի բարձունքին եւին անհնոց եղաւ արդ,
Եւ ազակիր, խարխափուն, ինկանք դարձեալ մութին մէջ . . . ։
Ճակատագիր մը դժխեմ, գրուած ձեռքով մ'անողոք
Խլեց գրկէն Հայաթեան, մէկիկ մէկիկ անտարբեր
Ալիշանն ու Խրիմեան ու Հայրապետն Երկանէ,
Գոգցես ըսել ուզելով „Հայը ալ չէ արժանի
Իր ծոցին մէջ կրելու այս հոգիներ գերազանց . . . ։„

*
* *

Ո՛վ դու, Սուրբ Հայր պաշտելի, զոր Ակարիչն ստեղծեց
Դրած մասը վեհ ճակտիդ, ուր վառեց հուր հանճարին,
Մի՞ս դիր արդ մեր ողբերուն, թեզնէ՛ յաւէ՛տ որբացած
Կը թափառինք մոլորուն քու ստուերիդ ի խնդիր,
Հարցընելով վշտագին ըզքեզ հովուն ու ծովուն.
Հովն ու ծովը սակայն մեզ պատասխանիկ մ'իսկ չեն տար . . .
Անմխիթար, լալագին, արդ կը մնանք ձեռն ի ծոց,
Ապազայէն յուսահատ, ու հանդէպ մութ ներկային
Կը գալարենք մեր ձեռքեր մեծ վշտով մը խենթեցած։

*
* *

Պատմական օր մ'տեսայ քեզ, ով Երևան Հայրապետ,
Աղէտներով լցրի օր, ուր Հայութիւնն տանջուած
Նոր դէպքերու ակընդէս կրապատէր ու կը յուսար
Կարմիր Ծովէն անցնելու քեզ հետ, Մովսէս երկնառաք . . . ։
Տըժգոյն, տրխուր տեսայ քեզ, արծուի նայուածդ պինդ գամած
Ժողովուրդի շարքերուն, նախազգալով որ, ափսոս,
Այդ շարքին մէջ պիտ' իյնար բռնի մահը սոսկալի . . . ։
Շատ արեւներ այդ օրը պիտ' մարէին յաւիտեան,
Արշալոյսը չի ծագած՝ Հայութիւնը սրգաւոր
Դամբա-անի մը հակայ վրան ինկած պիտի լար . . . ։
. . . Ու մօտեցայ քեզ, ով հայր, եւ իյնալով ոտքիդ տակ,
Ժողովուրդի Ծով Ցաւէն քեզ խօսեցայ բարախօսն,
Ակներեւալ որ երթաս, մագնիսալը նայուածքիդ
Կարմիր Գազանն ընկճել հոն՝ Եըլտըզին մէջ որջացած։
Ժողովուրդը կը լռէր . . . իր սեւ բազդը կուլար ան։
Դու խոստացար իրրեւ Հայր զորովագութ ու սիրող
Որդւոցդ համար սիրասուն, դիմագրաւել մահն անգամ,
Բայց զաւակներդ անհամբեր Պապը - Ալի դիմեցին,
Ուր սկսաւ արիւնոտ տեսին ահեղ պատմական . . . ։

*
* *

Ու այդ օրերն ալ անցան, ինչպէս կանցնի ամեն բան,
Ազատութիւն ծագեցաւ, շղթաներդ ինկան վար,
Ու քեզ պաշտող զաւակներդ, թ'զ ընտրեցին խանդագին
Լուսաւորչի Աթոռին արժանաւոր ժառանգորդ։

Այսօր ամպոյն, չկոս դուն . . . Գ.սիրդ՝ Թափուր, հոգիդ՝ ուրբ,
Կը պտտիս արդ անկինդան բիւր ջահերու լոյսին տակ,
Արցունքի տար հեղեղներ, Թափուած վրան դագաղիդ
Կենդանութիւն մեզ կեանքիդ ափսոս որ չեն կարող տալ . . . ։

ՁԵՐ ՊԱՐՏՔԸ ԿԱՏԱՐԵՑԷՔ

Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆՑ Առաջնորդաց

ԵՄԱ. որ երկար արձակուրդէ մը ետքը՝ վարժարանը իր թեւերը կը բանայ ձեզի ընդունելու համար իր գիրկը, սիրելի՛ ոգաբա, պէտք է որ գիտնաք թէ՝ ի՞նչ կը ապասէ վարժարանը ձեզմէ, թէ ի՞նչ կը ապասէ ազգը ձեզմէ, թէ ի՞նչ կը ապասեն ձեր ուսուցիչները և ե՛ւ ծնողք։

Աշխարհի վրայ պարտականութիւն բառած բան մը կայ. անոր անունը դուք լսած էք շատ անգամներ. բայց անոր ըմբռնողութիւնը գուցէ պէտք եղածին չափ չունիք, որուն ըլլալով ձեր դեռ շատ մտադիր հասակը, և խորհելու ու գաղափար կազմելու թեան դեռ ևս անկատար վիճակը։

Պարտականութիւնը խիստ և անոգոք տէր մը պէս է։

Ամեն բռնակալութիւն պէտք է ատելի, և ևս չե՛մ որ ձեզի պիտի քարոզեմ հնազանդութեան վարդապետութիւնը, բայց ոգո՛բա, կա՛յ բռնակալութիւն մը՝ որուն բանին տակ պէտք է գլուխ ծռէք, ամենե՛ն բնական, ամենե՛ն խիստ խառնուածքի տէր մարդը՝ եթէ առաքինի է ու պատուաւոր։

Այսինքն, Պարտականութեան բռնակալութիւնն է։

Դեռ Պարտականութեան գծած անգամ մը սահմանները մէջ մտնելու ժամանակը չէ՝ հասած ձեզի համար, ու կ'ե-

բեւեռկայում ալիքները՝ զոր պիտի թափէք, ստուգանք-
ները՝ զոր պիտի կրէք, անքուն գիշերները՝ զոր պիտի
անցնէք մաքառելով ձեր սրտին հետ, ձեր մտածումներուն
հետ, ձեր կամքին հետ. և ե՛ս ալ կը տանջուիմ ձեզի հետ,
իմ սիրե՛լի տղաքս, ե՛ս որ այդ ճամբաներէն անցայ, ու
ճաշակեր եմ ու գիտեմ այդ դառնութիւնները, և հև ի հև
մտածումովս կը հեռուիմ ձեր մղելիք պայքարներուն և
կ՚երեւակայեմ դարձեալ զգալիք անհուն ուրախութիւնս և
խորունկ հպարտութիւնս երբ պիտի տեսնեմ ձեր հոգիներ-
ուն մէջ Պարտականութեան տարած փառաւոր ու վերջ-
նական յաղթանակը, երբ մէկ խօսքով պիտի տեսնեմ ձեզ
տարտերժօրէն Պարտականութեան մարդը։

Եւ, մտիկ ըրէ՛ք ինծի, ե՛ս որ կը սիրեմ զձեզ, և այդ
դուք շատ լաւ գիտէք, նախամեծար պիտի համարիմ տես-
նել զձեզ ամենքդ մէկիկ մէկիկ մեռած աչքերուս առջև, և
լալ ձեր վրայ, քան տեսնել զձեզ յաղթուած այդ կռիւին
մէջ, ընկճուած, ամօթահար, անարդ կեանք մը քաշկռտե-
լով. բայց ես վստահ եմ որ ձեզնէ — իմ ամենէ՛ն շատ
սիրած էակներէս — ամէնալու տանջանքը ինծի կրել պիտի
շատք երբէք։

Մի՛ վախնաք, դուք որ բարի պատերազմը պիտի պա-
տերազմիք, ձեր տարած յաղթանակը ձեր սրտին ու ներ-
քին զգացումներուն վրայ՝ ուժ պիտի տայ ձեզի, ձեր տա-
ռապանքներուն մէջ։

Գուցէ պիտի լաք երկար առեն, գուցէ խորունկ վէրք
մը մի՛շտ բաց՝ պիտի արիւնի ձեր սրտին խորը, բայց ի՞նչ
փոյթ . . . ա՛յն մտածումը թէ՝ դուք ըրի՛ք այն՝ ի՛նչ որ
պարտական էիք ընելու, ձեզի պիտի մխիթարէ։

Համոզուեցէ՛ք որ աշխարհի վրայ բաց ճակտով և հան-
դարտ խղճով ապրելէ զատ ուրիշ երջանկութիւն չկայ, և
շիտակ է երբ կ՚ըսուի թէ՝ «ճշմարիտ երջանկութիւնը պար-
տականութիւնների կատարումին մէջ միայն կը կայանայ»։

Այն ատեն ուրախութիւնները որոնք Պարտականութեան
օրէնքներէն դուրս կը մնան, իրենց մէջ կը պահեն այն
ճակատագրական դառնութիւնը, որը կը տեւէ՝ ցորչափ կը
տեւէ կեանքը, և ամենէն քաղցր ու երջանիկ կարծուած
վայրկեանները կը թունաւորէ։

Դուք մի՛ նայիք ձեր շուրջը։

Օրինակը ձեր շրջապատէն և ձեր ապրած միջավայրէն չէ՛ որ պիտի առնէք, ապա՞ս . . . :

Նայեցէ՛ք դէպի հոս, դէպի հեռաւոր անցեալը և ձեզի օրինակ ընտրեցէք հին դարերու պատմական և դիւցազնական կիներու վարքը :

Յիշեցէ՛ք քաջը և առաքինի Հռութը, հաւատարիմ և աշխատասէր Պէնէլոպէն, պարզասէր և համեստ Անտիոպէն, պատուասէր և արի Լուքրեցիան, Սպարթացի հրանալի կիները, և ներկայ ժամանակներէն ալ, իր ընտանեկան օճախին ու կնոջական պատուոյն յարգանքին ու սիրոյն համար ինքզինքը Սասունի խրոխտ լեռներն ի վար նետող սքանչելի Շաքէն և նոյնքան պաշտելի իր ընկերուհիները :

Պարտականութեան այս դիւցազնուհիները թող ձեր կուռքերը ըլլան, անո՛նց վարքին վրայ գծեցէք ձեր վարքը, անոնց ճամբուն հետեւեցէք, և անոնց կեանքովը ապրեցէ՛ք :

Մի՛ խաբուիք նոր ժամանակներու սոփեսութիւններէն, որոնք անպատկառօրէն կը ծաղրեն, կ՝արհամարհեն և ապուշ զրկանք մը կը դատեն ինչ որ դիւցազնական զոհողութիւն մըն էր, ինչ որ բարձր ու վսեմ օրինակ մըն էր անցեալին մէջ, ինչ որ հին ազգերու մեծութիւնը և ուժը կը կերտէր, և ներկայի սանձարձակ վայելքին մէջ միայն կը գտնեն կեանքի իմաստը, ա՛յս է պատճառը ահա, որ այսօր ազգերը կը տկարանան, ժողովուրդները կը պզտիկնան, և մարդիկ կ՝իյնան . . . :

Ձեր միտքերը դէպի ա՛ւելի նորը, դէպի ա՛ւելի լոյսը թող դիմեն, իսկ ձեր սրտերը թո՛ղ որդեգրեն հին հերոսական զգացումները, վասնզի ա՛յդ է ճշմարիտը, և այդպէ՛ս՝ պիտի մնաք մի՛շտ մեծ, առաքինի և ազնուական :

Դուք տակաւին նոր կեանքի սեմին վրայ կոխած, դեռ դպրոցական, պէտք է դպրոցին մէջէն պատրաստուիք ձեր ապագայի լայն կեանքին ծանր պարտականութիւններուն :

Դուք հիմակուց ունիք իրրև զաւակ, և իրրև աշակերտ պարտականութիւններ, և ինչ չափով որ խղճմտութիւն դնէք առոնք կատարելու մէջ, այնչափով պիտի վարժուիք նաև անթերի կատարելու ձեր ապագայ աշխարհիկ կեանքի պարտականութիւնները :

Ի՞նչ է ձեր պարտքը տունին ու դպրոցին մէջ։

Արդեօք ձեր մտաւոր կարողութիւնները մշակե՞լն է, արդեօք ուսում և զարգացում ստանա՞լն է, լեզուներով ու գիտութիւններով ձեր միտքերը ճոխացնե՞լն է միայն . . . :

Ամենևին՛ ոչ .

Շատ թերի և անօգուտ պիտի ըլլային ձեր աշխատութիւնները, եթէ հաւատայիք թէ՝ ուսանիլն է միայն ձեր պարտքը :

Գիտցէ՛ք որ մեր գժբաղդ ազգը մտքի մարդոցմէն աւելի սրտի մարդոց պէտքը ունի իր այս ինկած վիճակէն բարձրանալու համար :

Այս բանը շատ անգամներ կրկնուած եմ ձեզի :

Ձեր պարտականութիւնն է ամեն բանէ առաջ սիրել ձեր ծնողքը, ձեր վարժարանը, ձեր ուսուցիչները և խստանալ յարգանքով մը շրջապատել զանոնք :

Անոնց «այո՛»ն և անոնց «ո՛չ»ը ձեր օրէնքը պիտի ըլլայ։

Երախտապարտ պիտի ըլլաք հանդէպ անոնց՝ որոնք իրենց ամբողջ սիրտը և ամբողջ կեանքը դրած են ձեր օգտակարութեան տակ :

Անոնք ձեզի համար կ՚աշխատին , ձեր կեանքովը կ՚ապրին, և իրենց երախտապարտութեան է՛ն գեղեցիկ, է՛ն խանդավառ և է՛ն յաւտլից տարիները ձեզի կը նուիրեն :

Յիշեցէ՛ք որ ձմեռը պիտի գայ նաև անոնց համար, և այսքան ձեր տեսած սև մազերը օր մը պիտի ճերմկին ձեր և ձեր պզտիկ քոյրերուն դատարկութեան գործին մէջ :

Յիշեցէ՛ք որ, անոնք իրենց ծերութեան օրերուն մէջ ճակատագրականօրէն պիտի մնան անկիւն մը լքուած, մոռցուած . . . և ո՞վ գիտէ, գուցէ անօթի, ծարաւ . . . :

Յիշեցէ՛ք ասոնք, և ձեր սէրը, ձեր գուրգուրանքը , որը անոնց միակ մխիթարութիւնն ու վարձատրութիւնն է , թող կրկնապատկուի, թող յաւէրժանայ անոնց համար :

Ամեն գերութիւն նոզկալի է և սարսռցուցիչ, և պէտք է ըմբոստանանք ասոր դէմ . բայց կայ գերութիւն մը որը պէտք է պաշտենք ծնրադիր ամենքս եթէ իրօք ունինք ազնուական և առաքինի հոգի մը, այն է՝ երախտապարտութեան գերութիւնը :

Մի՛ մոռնաք ասիկայ :

Պիտի սիրէք զիրար իբրև հարազատ քոյրեր : Երբէք չար

նախանձը, քէնը, ոխը պիտի չթունաւորեն ձեր սրտերը։ Դուք իրարու համար պիտի ըլլաք բարեկամներու է՛ն անձնուէրը, է՛ն անկեղծը և է՛ն սիրողը։

Գիտցէք որ դպրոցական գրասեղաններու վրայ սկսուած բարեկամութիւնն է որ յաւիտեան կը մնայ անշահախնդիր և անկեղծ։

Դուրսի աշխարհին բարեկամութիւններէն պիտի խաբուիք գուցէ, բայց ձեր դպրոցական բարեկամները զձեզ պիտի չի խաբեն երբէք։

Պիտի սիրէք ձեր վարժարանական պզտիկ քոյրերը ներողամիտ գուրգուրանօք և ձեր անձնական օրինակով պիտի սովորեցնէք անոնց ըլլալ բարի, աշխատասէր և կարգապահ, որովհետև խօսքը և խրատը ոչինչ են եթէ անձնական կարկառուն օրինակները չի միանան անոնց։

Քաղաքավար պիտի ըլլաք ձեզնէ մեծերուն ու ձեզնէ պզտիկներուն հետ ալ հաւասարապէս։

Քաղաքավար ըսելով սակայն, չի հասկնաք այն կեղծ պաղմանագրական երեսպաշտութիւնը, թեթեւսօլիկ ծերքծերքումներն ու շարժումները որոնք կը վախուին ժամանակին նորելուկ սովորութեանց հետ։

Ճշմարիտ քաղաքավարութիւնը կը կայանայ պարզ ու վայելուչ շարժուձեւերու, փութկոտ ու հաճոյակատար վարուելոյզութեան, ժպտերես ու սիրալիր կերպերու մէջ։

Կարգապահ պիտի ըլլաք, թէ տունը և թէ դպրոցին մէջ։

Պիտի յարգէք և նախանձոտ գուրգուրանքով պիտի պահպանէք վարժարանին կարգն ու կանոնը։

Ով որ կանուխէն կը վարժուի կարգապահութեան, անիկայ կը յաջողի իր ապագայի ամէն ձեռնարկներուն մէջ։ Եւ ով որ չի գիտեր կարգ դնել իր մտածումներուն ու գործերուն մէջ, անիկայ չի կրնար ձեռք բերել ոչ բարոյական և ոչ նիւթական յաջողութիւն, ինչքան ալ յամառ աշխատող մը եղած ըլլայ։

Հաւատք ունիմ ձեր վրայ, տղա՛քս. — և այդ հաւատքը իմ երջանկութիւնս է — թէ դուք անթերի կատարելով վերի յիշուած ձեր դպրոցական պարտականութիւնները, պիտի դառնաք ձեր վարժարանին և ձեր ուսուցիչներուն պարծանքը։

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ

ԾՐԱՁՆԵՐՈՒ եւ յոյսի այս աշխարհին մէջ պատիր
Միայն ըզՁեզ սիրեցի, անմեղութեան ծաղիկներ . . .
Սիրտս ու միտքս ծընան Ձեզ, երկունքով մը ցաւատանջ,
Բայց այդ ցաւոց փոխարէն, ինչ անպատում բերկրութիւն
Եկաւ ճամբուս սուր փուշերն վառ վարդերու փոխարկել,
Փոթորկայոյզ կեանքիս նաւն ով գիտէ ուր պիտ՝ կորչէր
Ձեր նայուածքին լուսաշող թէ չի կառչէր ան երբէք . . .
Դուք եղաք ինձ ափոփանք, ով իմ հոգւոյս զաւակներ,
Հալածանքէ մ՝ բարբարոս երբ թողած տուն հայրենիք,
Փախըստական ու պանդուխտ, ընտանեկան տաք բոյնէս
Անհիւրընկալ, ցուրտ ափեր ինկայ բաղդով մ՝ անաւոյգ . . .
Ամեն անոնց՝ զոր սիրտս խոր պաշտումով մը սիրեց,
Բարեկամ ու սիրելի, ազգականներ մըտերիմ,
Մէկիկ, մէկիկ աչքիս տակ, աղէտքի սեւ օրերուն
Սուրով, հուրով բընաջնջեցին ինքը տեսայ . . .
Առանց Ձեզի, ով գիտէ, զուցէ սիրտս կը մեռնէր,
Կրակ սիրտ մը, որ ափսոս, մեծ տուգերը մարեցին.
Ձեր սիրոյն մէջ արդ տաքցած՝ կը բաբախէ յուսալից . . .
Օ՜հ կուզէի . . . էութիւնս համակ Ձեր մէջը ծուլել
Որպէս զի վաղն, մահէս ետք՝ Ձեր մէջ դարձեալ վերապրիմ . . .
Աշխարհի կեղծ սէրերը, բերկրութիւններն վաղանցուկ
Ի՜նչ են արդեօք բաղդատմամբ Ձեր մէկ անուշ ժըպիտին
Ձեր մէջ միայն իրապէս ես ապրեցայ երջանիկ,
Գուրգուրանքի մը անկեղծ, ջերմ զորոյ մ՝առարկայ . . .

* * *

Այսօր Ձեր մէջ կ'ապրիմ դեռ, ու միշտ Ձեր մէջ պիտ' ապրիմ
Մինչեւ այն օրն, ով գիտէ, երբ ծերութիւնն անողոք
Գայ զիս զամել ցաւերու անկողնին մէջ, անկարող.
Բայց բերանս դողդոջուն, դարձեալ ըզՁեզ պիտ' օրհնէ . . . ։
Օ՜հ կուզէի . . . որ մահը զար առնելու զիս Ձեր մէջ.
Բայց ով գիտէ. գուցէ հոն, Հիւանդանոցը մըռայլ
Կըսպասէ ինձ, չէ որ հոն՝ վախճանն է հայ ուսուցչին.
Ե՛ս գիտեմ այդ, եւ սակայն այդ վախճանէն ահաւոր
Պատներեսիս, մինակուկ մեռնելէն չեմ վախնար ես,
Միայն վտահ ըլլայի թէ Ձեր նայուածք լուսափայլ
Պիտ' թափանցեն երբեմըն, ցուրտ պատերէն ներս, վրաս,
Ձեր ճակատներ ծիծաղկոտ, պիտի հակին տրտմանոյշ,
Ճակտիս վրայ դալկահար, ուր Ձեր հոգերն ապրեցան.
Օ՜հ, այն ատեն ես երբէք այդ վախճանէն չեմ սոսկար . . . ։

ՍԷԼԻՄ ԱՂԱՆ

[ՊԱՏԿԵՐ ԱՐԱԲԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ]

ՅԵՌՈՒԷՆ, շա՜տ հեռուէն, ամպի ու արեւի խորհրդաւոր աշխարհներէն անցեր եկեր էր մեր երկիրը այդ բարձրահասակ, խոր ու անուշ աչքերով ծերունին։

Փաթթուած իր արաբական պուրնուզին մէջ, պատահանին առջեւ ծալապատիկ նստած, նարկիլէին փողը բերնին, մտախոհ ու թախծալից, նա կը մարմնաւորէր իր անձին վրայ անապատի ժողովուրդներուն յատուկ այն մեզկ ու տխուր կերպարանքը, որ, չգիտեմ, ի՞նչ անուշ, երազուն ու բանաստեղծական բան մը ունի իր մէջ։

Իր ներքին – մարդը այդ չէր եղած ասկայն. իր բոլոր կեանքը շարք մըն էր անհարիւ կռիւներու և փառաւոր յաղթանակներու։

Հզօր ցեղապետ և ազդեցիկ իշխան, ահ ու սարսափն էր արաբական այն բոլոր վայրենի ցեղերուն՝ որոնք իրարու դէմ մղած մշտական գազանային կռիւներով արեան ու կռտրածի թատր մը դարձուցեր էին Արաբիան . . . ։

Իր օրով արդարութիւնը զեղեցիկ բան մը չէր լոկ։

Հաւատարիմ ու եռանդուն հետեւող Մեծ Մարգարէին քարոզած սկզբունքներուն, երբէք չէր ներեր ոեւէ անիրաւութեան, և երկա՛ր տարիներու արիւնէ ու արցունքէ

եռքը՝ իր տէրութեան ընդարձակ սահմաններուն մէջ խաղաղութիւնն ու Սէրը պայծառ և անուշ շողերով կը ճառագայթէին զրկուածներուն, տկարներուն ու դժբաղդներուն վրայ :

*
* *

Եղաւ սակայն օր մը որ, Սէլիմ ազան կռիւներու ամենէն սակալին, ամենէն արիւնահեղը, և ամենէն եղերականը մղեց իր կեանքի այն տարիներուն մէջ՝ յորս անհունապէս գոհ, և իր ժողովուրդին երջանկութեամբը լիովին երջանիկ՝ կը հաւատար թէ արժանաւոր և արդար հանդիսա մը ա՛լ վերջապէս կը սկսէր իր ծերութեան օրերուն համար :

Այդ օրը ամբողջ Արաբիան դողաց . . . :

Պաշտերն ու անապատները արեամբ կարմրեցան . . . :

Օ՜ . . . մէկէ աւելի բանաստեղծներ մեղամաղձիկ ու խորհրդաւոր «եա լէյլի»ներու մէջ երգեցին այդ կռիւը, և մէկէ աւելի «մէտտահ»ներ արարական նեղ ու տխուր արձարաններու մէջ, ծխախոտի և հաշիշի ամպերով վերացած՝ պատմեցին հէքեաթը այդ տխո՜ւր անցքերուն . . . :

*
* *

Սակ նախանձն էր պատճառ պատերազմին, նախանձն ու ատելութիւնը որ տարիներէ ի վեր կը կրծէին Սէլիմ ազայի վայրագ հակառակորդին՝ Սիտի – Իպրահիմի սև սիրտը :

Իր ցեղը կ՚ատէր զինքը, վասնզի բարբարոս և անգութ էր, բայց կը վախնար իրմէ, և կ՚ակնածէր, մանաւանդ ազնուր համար որ ցեղապետի տիտղոսին կը միացնէր և շէյխի նուիրական պաշտօնը :

Բնականէն նրբամիտ ու խորամանկ՝ Սիտի – Իպրահիմ կը պահէր ժողովուրդը կրօնական ծայրայեղ մոլեռանդութեան մէջ, վասնզի հոգ կը գտնէր իր ուժին գաղտնիքը, և ատով միայն հաստատուն և տեւական կը զգար իր իշխանութիւնը :

Ընթանալով միեւնոյն ժամանակ նկարագրին գերազանցութիւնն ու բարձրութիւնը Սէլիմ ազայի, որ կը պաշ-

տուէր իր ժողովուրդէն իբրև հայր գորովագութ, և որը իր ներշնչած խորունկ ու անկեղծ սիրոյն մէջ միայն կը գտնուէր ուժ, մեծութիւն և փառք, Սխտի-Իպրահիմ կը տանջուէր հոգւով . . . վրէժխնդրութեան խօլ խղճեր կը բռնկէին կուրծքին տակ, մէկէ աւելի վայրագ խորհուրդներ կ'որոճար, ծրագիրներ կը յղանար տապալելու համար իր վեհոգի թշնամին, յարմար առիթին կը սպասէր ատոնք իրագործելու համար, և առիթը ինքը ստեղծեց . այդ եղաւ պատերազմը . . . :

*
* *

Կարուած գլուխներ նիզակներու ծայր անցած իբրև յաղթութեան նշան, ջարդ ու փշուր եղած մարմիններ ցիրուցան գաշտերուն վրայ, ջախջախուած կուրծքերէ դուրս թափուած թոքեր ու սիրտեր արեւուն տակ . օ՜, ապրումի՜ անգթութիւնը բարբարոս ժողովուրդներու . . . :

Արեան գետեր կը վազէին, ու զայն-մարդուն ծարաւը չէր յագենար . . . :

Կատաղելով կը տեսնէր դիւցազնական դիմադրութիւնը Սէլիմ ազայի պատերազմիկներուն, որոնց կ'առաջնորդէր քաջարի Ալին, իր հակառակորդին անդրանիկ տղան, իր հօրը աչքին լոյսն ու բոլոր ցեղին պարծանքը . . . զայն ապանե՜լ . . . այդ էր իր երազը, իր տենչանքը, և տակէ աւելի դժոխային վրէժխնդրութիւն մը չէր կարելի երեւակայել, վասնզի Սէլիմ ազան այդ ազուն կեանքովը կ'ապրէր, անո՜վ երջանիկ, անո՜վ հպարտ, հեռուտեսար և զայն կորանցնելով ջախջախուած կ'ըլլար իր ծնողական սիրոյն և տոհմային հպարտութեանը մէջ . . . :

Գեղեցիկ, շատ գեղեցիկ էր այդ պատանին, կրակոտ, խոշոր աչքերով, հոյակապ հասակով, լայն կուրծքով, արի պատերազմիկ, արժանաւոր յաջորդ իր վեհանձն հօր :

Մէկէ աւելի շէյխեր կ'ատուանէին զայն Սրաբիոյ ամենէն ազնիւ ծագիկը :

Եւ ահա, կուգայ ամենատաք միջոցին, երբ Ալի մոռնալով խոհեմութեան յորդորները աւելի՛ և աւելի՛ կը մօտենար թշնամի բանակին, Սէլիմ ազա տեսաւ զայն, իր Բե-

նիամինը, Սրբոյ Ծաղիկը, ինկած անագորոյն թշնամիին ձիրաններուն տակ . . . ըմբռնեց այդ թանկագին գլխուն սպառնացող ահռելի վտանգը. մինչև ոսկորներուն ծուծը դողաց. և այդ հզօր մարդը ինքզինքը մոռնալով, իր հպատակներուն առջև ինկաւ գետին ու լացա՜ւ . . . :

Մէկ կողմէն ծնողական սէրը, միւս կողմէն տոհմային արժանապատուութիւնը և իշխանական հպարտութիւնը ամենէն բուռն պայքարը կը մղէին Սէլիմ ազայի սրտին մէջ :

Ծնողական սէրը յաղթանակը տարաւ տակաւին, ու տաքի տակ առնելով և՛ արժանապատուութիւն, և՛ հպարտութիւն, զիջողութեան և ապաշանքի թուղթ գրեց թշնամիներու է՛ն վառին, և շնորհ խնդրեց իր զաւակին համար . . . :

Հեռուն՝ իր արծուի նայուածքը յառած անքթիթ թշնամի բանակին, Սէլիմ ագա անձկութեամբ դողդղացող կուրծքովը կը սպասէր . . . : Կե՞անք թէ մահ վճռուած էր արդեօք իր որդւոյն . . . :

Մէյ մ՝ալ ամրոցին վրայ երեւաց Սիսի – Իպրահիմի բարձրը ու չոր հասակը՝ անկուած մերկ ծառի մը պէս :

Պաղ քրտինք մը ողողեց Սէլիմ ազայի ճակատը :

Քանի մը վայրկեաններ եւս ահեցան դարերու չափ երկար . . . ու մէկէն թշնամի բանակը պարզեց կարմիր դրօշակ մը խորհրդաւոր գրերով ծածկուած, զա՛ հաշտութեան նշան էր . . . :

Սէլիմ ագա խնդութենէն գինով, յառաջ վազեց, թեւաբաց, իր որդին գրկելու տենչովը վառուած :

Սիսի – Իպրահիմ ամրոցին վրայ լուռ ու անշարժ կը կենար արձանի պէս . . . :

— Զաւա՜կս . . . գոչեց Սէլիմ, տո՛ւր զաւակս . . . :

Սիսի – Իպրահիմ ծռեցաւ, պուրնուզի մէջ փաթթուած մարդկային կերպարանք մը վերցուց :

— Ահա՛ զաւակդ, բաւ, և նեռեց զայն անոր գիրկը . . . :

Անկման ցնցումէն, պուրնուզը բացուեր էր . . . տարաբաղդ հայրը քամնեցաւ ու մազերը ցցուեցան գլխուն վրայ, իր որդւոյն խաչուած ու քրքրուած դիակը կը սեղմէր իր թեւերուն մէջ . . . :

Լի կատաղութեամբ ու յուսահատութեամբ աչքերը դէպի ամրոց վերցուց :

Սիսի – Իպրահիմ, յագեցած վրէժխնդրութեան գազանա-

յին զոհունակութեամբ, դիւտիան թրքիչով մը կը խնդ-
դար . . . :

Սէլիմ աղա Չղային տաղնապ մը ունեցաւ և նեւազած
ինկաւ Ալիի դիակին վրայ :

*
* *

Հանդիսաւոր եղաւ թաղումը Ալիին . . . ամբողջ Սրա-
բիան ոտքի վրայ էր, շէյխերու ամենէն յարգելիները կ՝ա-
ռաջնորդէին դագաղին . սեւազգուխ եղերամայրերու զունդեր
կ՝ողբային մահը Սրաբիոյ Ծաղիկին, լայ ու կոծ մինչև երե-
կինք կը բարձրանար, և արձագանքը կը կրկնուէր դաշտե-
րուն ու անապատներուն խորերը . . . :

Սէլիմ աղա չլացաւ, այլ նա ուզեր՝ ահարկու եղաւ քան
զժոխքը . երդուընցաւ Ալլահին անունովը խլաւ ջնջել
Սիսի-Իպրահիմի ցեղը, և իր երդումը պահեց, ու

բարբառովը, և ոչան առանց հասկնալու թէպէտ, մարդ կ՚ընէր, հօրը դէմքին լուրջ ու տխուր արտայայտութիւնէն կարծես ազդուած։

Սէլիմ ոչան կը պատմէր փոքրիկ Թալաթին՝ Ալիի եղերական մահը, և օրրանէն կը սովրեցնէր ոչուն վրէժխնդիր ըլլալ իր եղբօր արեանը։

*
* *

Զմխիթարուելու երբէք ան իր ծերութեան օրերուն մէջ, ո՛չ իր Թալաթովը՝ զոր կը պաշտէր սակայն, և ոչ իր նորածին Ապտուլլահովը։

Կարօտ՝ հայրենի երկրին, ուր Ալիի մարմինը կը հանգչի, մտախոհ ու թախծալից, նարկիլէին փողը բերնին, պատուհանին առջև ծալապատիկ նստած, երազուն աչքերով կը նայի հեռո՛ւն, մտքովը սուրալով դէպի աւազի ու արեւի այն խորհրդաւոր աշխարհները՝ զորս բռնի թողեր եկեր էր մեր երկիրը, որը տառուցիկ ու տխուր կը դանէր իր ոգաւոր արտին պէս . . .։

ՎԻՐԱՒՈՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԿԸ ԽՕՍԻ

Եւ ահա՛ այս աւերակներուն մէջ . . . արիւնով ու արցունքով թրջուած սա ճամբաներուն անկիւնը միենոյն նաւած զառնութեան բաժակէն կը խմեմ . . . Եւ արցունքէն կուրցած աչուքներս, շուրջս ցրուած սա աւերակներուն մէջ, ի զուր անցագօրէն կը փնտռեն չէն քարաք մը, գիւղ մը, աւան մը . . . Չէ՛ . . . ալ ուրիշ չեմ կրնար գտնել պատրանքը ունենալ դեռ ուրիշ ապրող Հայրենիքի մը . . . Ի՞նչ . . . մեռա՞ծ է Հայրենիքը . . . :

Չէ՞ք տեսներ սա հոգեւարքները, որ ոտքերուս տակ կը գալարուին ահռելի տանջանքներով . . . Համբուրեցէ՛ք անոնց ճակատները, անոնք ինկած են հայրենի հողին պաշտպանութեանը համար :

Չէ՞ք տեսներ սա այլանդակուած մեռելները, չի յագեցած վրէժխնդրութեան մը դաժանութիւնը դեռ ուրիշ պահելով իրենց ապակիացած նայուածքին մէջ . . . Գլուխնիդ բացէ՛ք անոնց առջեւ, վասնզի անոնք մեռած են Հայրենիքի պատիւն ու մեծութիւնը բարձրացնելու համար :

Չէ՞ք տեսներ սա այրիացած հարսները, որբացած կոյսերն ու մանուկները, որոնք մայրերնին կը փնտռտեն զարհուրելի հեծեծանքներով . . . Ծնրադրեցէ՛ք անոնց առջեւ, վասնզի անոնք՝ իրենց կորսնցուցած սիրելիներէն աւելի՝ Հայրենիքի բռնաբարուած պատուոյն ամօթը կուլան . . . :

Օ՜հ, արի՜ւն . . . արի՜ւն է ամեն տեղ . . . Կարմիր են ներկուեր հպարտ լեռներուս երբեմն կանաչ կողերը . . . Կարմիր գաշտերուս ոսկեղէն գալարիքը . . . Ձէ՞ք տեսներ, կարմիր ալիքներ կը թաւալեն Եփրատի և Արաքսի երբեմն կապոյտ և յստակ ջուրերը ։

Ու գիշերները երբ ամենքը կը քնանան, ու ես մթութեան մէջ միայնակս կը հակիմ գարերէ ի վեր անքուն աչուըներովս, հեռո՜ւն սա լեռներուն ետեւէն հսկայ ստուերներ կը մօտենան կը թափառին շուրջս, իրենց երկար թեւերը ճօճելով, իրենց ժժգոյն գլուխները տրտմօրէն աջ ու ձախ շարժելով, և ականջիս կը փսփսան ցաւագին շեշտերով . . . Ո՞ւր են Հայկաշէն, Տիգրանակերտ, ո՞ւր են Արտաշատ, Անի, ո՞ւր են մեր պարտէզները, ո՞ւր են մեր թագերը, ո՞ւր են մեր յաջորդները և ո՞ւր են մեր թռուները . . . ։

Ու ես կը լռեմ, գլուխս կուրծքիս վրայ ծռած ու կուլամ . և անոնք իրենց երեսները սոսկալի վիշտով մը ծամածռած՝ տարտամ քայլերով կը հեռանան քովէս կամաց կամաց, ու անոնց հեռանալէն ետքն ալ լեռները երկար ատեն վշտագին կը կրկնեն անոնց ողբերուն ու լացին արձագանքը ։

Ամե՛ն գիշեր, ամե՛ն գիշեր իրենց գերեզմաններէն գուրս կ՝ելնեն անհանգիստ ստուերները զաւակներուս և կուլան կը հեծեծեն ականջիս տակ . . . ։

Բայց դո՛ւք ինձմէ աւելի երջանիկ էք, սիրակա՛ն ստուերներ, որ հանդչելու տեղ մը ունիք գոնէ, ըլլա՛յ այդ հողին տակ . և Ձեր արցունքները թափելու համար ունիք մայրական հարազատ գոգ մը, ըլլա՛յ ջախջախուած . . . Իսկ ե՛ս, Ձեր ծնող մայրը ո՞ւր գնեմ իմ խոնջ ու ծանրացած գլուխս, քարէ բարձ մ՝ալ չունիմ, և ո՞ւր թափեմ իմ արցունքներս, մա՜յր չունիմ. խորթ քոյրեր ամենքն ալ, որոնք իմ արցունքներս կը ծաղրեն և իմ հառաչանքներս համբերելով կը զուարճանան . . . ։

Դարե՛ր անցան գլխուս վրայէն, երբեմն թագով ու ծիրանիով զարդարուեցայ, յաճախ անմխիթար սեւերու մէջ փաթթուեցայ . . . Տեսայ զաւակներուս փառքն ու յաղթանակը, տեսա՛յ նաև անոնց անկումն ու մահը . . . Տեսա՛յ զանոնք իշխան ու թագաւոր, տեսա՛յ գերի ու աքսորական . . . Համբուրեցի երբեմն անոնց յաղթական երջանիկ

ճակատները, և աքսորի ու գերութեան երկար տաժանելի հոգեւարքը՝ քրտնելու ատեն՝ իմ տեսիլքովս զանոնք ոգեւորեցի ու մխիթարեցի, ու վերջին վայրկենին զիս տեսան ծռած անհուն զորովով մը իրենց դալկահար դէմքերուն վրայ, տեսան որ ես կ՚ապրիմ գեռ եւս, ու երջանիկ մնան . . . :

Բեղմնաւոր եղաւ արդարեւ, անթիւ հերոսներու մայրը եղայ, թէպէտ պարտուած, թշուառ ու հալածական . . . Ե՛ս ծնայ Հայկը, Արամը, Տիգրանները, Վարդանը : Ե՛ս ծնայ Գրիգորը, Յուսիկը, Ներսէսը, Սահակը, Մեսրոպը . . . Ե՛ս ծնայ ժամանակակից Վահագներ, Ժիրայրը, Թորոսը, Սերոբը, Մխոն . . . Ե՛ս ծնայ ժամանակակից Ղեւոնդներ, Մատթէոսը և Հայրիկը . . . :

Ու եթէ ունեցայ չարաշուք զաւակներ, որոնք՝ իրենց ամօթալի վատութեամբ ճակատս կարմրցուցին, ունեցայ զաւակներ ալ, և ասոնք ունէի բազմաթիւ եղան, որոնք՝ իրենց հերոսական գործերով զիրենք ծնող մայրը փառաւորեցին . . . :

Եւ ասոնք բոլորը անցա՞ն . . . Յաղթութիւններ ու պարտութիւններ, երջանկութիւն ու դժբաղդութիւն արագ արագ իրարու յաջորդեցին, չափազանց փոփոխական եղաւ բաղդս, բայց աւա՜ղ . . . դժբաղդութիւնը կարծես վերջնապէս տարաւ յաղթանակը և իմ սեւաւոր գլուխս կայ ու կը մնայ դեռ եւս, ողբալու համար ուրիշ ազէտքները զաւակներուս :

Տուզրիլ և Ալփասլան, Ճենկիզխաններ ու Ջալալէդդիններ, Լանկթիմուրներ, Շահաբբասներ և Համիտներ ծծեցին արիւնը կենդանակ երակներուս . . . : Երկինք տեսաւ կատարուող անլուր ոճիրները և լուռ մնաց . . . Արեւը ծագեցաւ գարձեալ նոյն մեծափառ վայելչութեամբ, լուսինը իր միեւնոյն ոժգոյն պայծառութեամբ լուսաւորեց մեծ եղեռնը, և աստղերը մի՛շտ ժպտուն անտարբեր հանդիսատեսը եղան ահաւոր տառապանքին, ու ես իզուր ապասեցի որ այդ կապոյտ առաստաղը փլէր անօրէններու գլխուն, որ աստղերը մէյմէկ ահարկու շանթեր դարձած՝ մոխիր դարձնեն բարբարոսներու խուժանը :

Ըսի, դարերը կ՚անցնին, ժամանակները կը փոխուին, աւելի բաղդաւոր օրեր կը ծագին իմիններուս համար ալ :

Դարերը անցան, ժամանակները փոխուեցան, բայց հին պատմութիւնը նոր մնաց ու կը մնայ դարձեալ այսօր։

Իմ խրոխտ լեռնցիներս, իմ կարիճ զինուորներս ոտքի ելան բռնակալութեան ու ոճրին դէմ ինքնապաշտպանութեան դրօշը պարզած և անգամ մըն ալ ցոյց տուին քաղաքակիրթ կոչուող աշխարհներուն թէ՝ գիտեն մեռնիլ պատուով ու քաջութեամբ։ Արիութեան հրաշքներ գործեցին. բայց ազատի ճակատագիրը զարկաւ անոնց գլխուն ալ, և ինչ որ հուրը և սուրը պիտի չկրնար գուցէ ընել, ճակատագիրը ըրաւ։

Նոր Լանկթիմուրներ ու Շահաբբասներ աւելի վայրագ և արիւնարբու սարսափելի տառապանքներու և արիւնհեղութիւններու ահաւոր դարաշրջան մը բացին... Ազատի անիծապա՛ր սատերազմներ քանդեցին նոյն հազարաւոր օճախներ. որբերու անհամար երամներ անտէր դառնուկներու պէս ապրին անցին Հայրենիքի սև հողերուն վրայ մոլորակոծ ցրուեցան դարձեալ, ու ես, թողած իմ զաւակներուս ողորմուկ դիակները ճամբաներուն երկայնքը, յաւիտենական սուգի ու վշտերու բեռը շալկած, հալածական ու կորաքամակ կը թափառիմ մոլորաքայլ օտար աշխարհներ, Սէր, Գութ, փշուր մը հաց մուրալու իմ որբերուս ու այրիներուս համար...։

Կը թափառիմ լքուած ու միմակ, և անոր ճակատագիրը կը պտտի ետեւէս, «քալէ՛... քալէ՛...» — Օ՜հ թո՛ղ, քիչ մը հանգչիմ, ոտքերս արիւնեցան ճանապարհի փուշերէն, — «Քալէ՛... քալէ՛...» — Թո՛ղ գոնէ քանի մը վայրկեան անկիւն մը կծկուիմ ազատ արտասուելու համար... — «Քալէ՛... քալէ՛...»։

Ու կը քալեմ, դարերէ ի վեր կը քալեմ, Հայաստանէն Ասորեստան, Ասորեստանէն Պարսկաստան, Պարսկաստանէն Տաճկաստան, Տաճկաստանէն Եւրոպա, Եւրոպայէն Ափրիկէ... Դարերէ ի վեր աշխարհիս չորս ծայրերը կը քալեմ գթութի՛ւն, գթութի՛ւն ազերակով, իմ անցեալ մեծութիւններս ու փառքս անարժան ոտքերու տակ խոնարհեցնելով, արիւնով ծածկուած ազատի սև պատմաճոռ ցեխերու մէջ քաշկռտելով կը քալեմ ու կը քալեմ...։

Եւ հիմա հա՛ս, Իզմիրի այս զարմի տիրերը ինկած, բազկատարած կը դիմեմ Ձեզի ալ ո՜վ իմ սիրական զաւակներս,

օգնութեան հասէ՛ք Ձեր հիւանդ, Ձեր վիրաւոր եղբայրնե-
րուն . . . Անո՛նք արեան ճապաղիքներուն մէջէն իրենց
թեւերը Ձեզի երկնցուցած օգնութի՞ւն , օգնութի՞ւն կը
պոռան . . . Ձէ՞ք լսեր, մայրերու ու մանուկներու սրտա-
պատառ ճիչերը, վիրաւորներու ցաւագին հառաչները, մեռ-
նողներու վերջին հոնդիւնները, օգնութե՞ան հասէք . . . :

Ո՞վ գիտէ, գուցէ անանք, այդ մատաղ որբերը, նոր սե-
րունդը, օր մը իր ածիւններէն վերակենդանացնէ հոգեւարք
Հայրենիքը ու ինծի չեմ ըսեր մոռցնէ, վասնզի մարդ չի
կրնար մոռնալ իր աղիքներէն փրթած էակներուն չարչա-
րանքներն ու բռնի մահը, ինծի կ՝ըսեմ, գուցէ օր մը մխի-
թարէ շուրջս պատող սա աւերակները վերաշինելով, սա
ամայի վայրերը շէնցնելով և այսքան արիւնէ, արցունքէ,
ցաւէ ու հառաչանքներէ ետքը, երջանիկ մանուկներու ու-
րախ թրվռոցը խառնուած թռչուններու անուշ դայլայլիկ-
ներուն, գան օրրելու իմ երկա՜ր խռնջէնքս . ու երբ գիշերը
իմ զաւակներուս ստուերները գան դարձեալ ինծի հարցնե-
լու «Ո՞ւր են Հայկաշէն ու Տիգրանակերտ, ո՞ւր են Արտա-
շատ և Անի, ո՞ւր են մեր զաւակները, ո՞ւր են մեր թոռ-
ները», ես կարենամ ուրախութեան արցունքներով այս ան-
գամ ցոյց տալ անոնց և ըսել . «Սիրակա՜ն ստուերներ,
ահա՛ Հայկաշէն ու Տիգրանակերտ, ահա՛ Արտաշատ և Անի,
ահա՛ Ձեր զաւակներն ու ահա՛ Ձեր թոռները :

Եւ այս անգամ լեռները պիտի կրկնեն անոնց ուրախու-
թեան աւաչներուն արձագանքը :

ԿՆՈՋ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ԿԻՆԵՐԸ

ՅԱՅՐԵՆԻՔԻ սէրը դաւանանք մըն է, կրօնք մըն է, և այն միակ կրօնքը՝ որուն միշտ կոյր ու մոլեռանդ պաշտումով մը պիտի երկրպագէ մարդկութիւնը, և որուն մէջ՝ դարերու ընթացքը, զարգացումը, քաղաքակրթութիւնը բան մը չպիտի կրնան փոխել։ Անիկայ պիտի մնայ յաւիտենական նորը, մի՛շտ ճշմարիտը, միշտ ստիպողականը և միա՛կ տիեզերականը, և այդ սէրը այնքա՛ն բնականօրէն է՛ն նախնականն է ու զօրաւորը որ կարելի է ըսել թէ՝ ծնողական սէրէն ալ առաջ կ՚անցնի, որովհետև մենք գիտենք շատ մարդիկ, որոնք մեռած են հայրենաբաղձութեան ցաւէն, բայց չի յիշուիր բնաւ մարդ մը որ մեռած ըլլայ իր ծնողքը կորանցուցած ըլլալու վիշտէն։

Հայրենասիրութեան կրօնին պաշտամունքին մէջ սակայն քանի կինը հեռահեռէ տեղ ու դիրք կը բռնէ, հաւատքը աւելի՛ կ՚ամրապնդուի, և կրօնքը կ՚աստուածանայ ու կը մշանջենաւորուի։

Եւ ասի թող զարմանալի չի թուի, վասնզի մենք պատմութենէն գիտենք որ այն ամէն գաղափարները, դատողութիւնները, շարժումներն ու զգացումները որոնք կնոջ մասնակցութեամբն ու աջակցութեամբը՝ մէկ խաւքով կնոջ

շունչն են ոգեւորուեր, անո՛նք միշտ մե՛ծ, հերոսական ու տիրական եղեր են։

Քրիստոնէական կրօնը պիտի չգտնէր ապահովաբար այն զրեթէ տիեզերական ընդունելութիւնը և պաշտումը, եթէ կին մարտիրոսուհիներ իրենց դիւցազնական արիութեամբը չի խանդավառէին ժողովուրդը և իրենց անկուն հաւատքով անոր չի ներշնչէին Հաւատարութեան, Եղբայրութեան ու Սիրոյ խորհուրդին մեծութիւնն ու սրբութիւնը։

Եւ դարձեալ Քրիստոնէութիւնը գուցէ երկար չապրէր, եթէ կին մը, սրբուհին Հեղինէ իր ազդեցութեամբ չի յաջողէր ձեռք բերել այդ նոյն կրօնքին ազատ պաշտաման իրաւունքը։ Եւ նոյնիսկ ա՛յսօր քրիստոնէութիւնը իր բացարձակ հոգեւարքին մէջը կ՚ըլլար, եթէ կինը չի պահպանէր զայն նախանձոտ գուրգուրանքով ու երկիւղածութեամբ իր ընտանեկան յարկին ու ապրած միջավայրին մէջ։

Կնոջ ազդեցութիւնը, — լաւ թէ վատ — ոչ միայն այսօր՝ ուր կինը յառաջդիմած, զարգացած և իրրև մարդէակ իր բնական և արդարացի իրաւունքները ձեռք բերած է, այլ նախնական դարերու մէջ ալ երբ անիկայ գերի, ստրուկ էր նկատուած — մի՛շտ մեծ ու տիրական եղեր է ընտանեկան կեանքի վրայ, ընկերական կեանքի վրայ, ինչպէս նաև իր ապրած միջավայրին վրայ։

Մեր նախամայրը Եւա իր ազդեցութեամբ կրցաւ խախտել Ադամի կամքը և անոր կերցնել տալ արգիլեալ պտուղը, և Սառա, Աբրահամու կինը կրցաւ ազդել իր ամուսնոյն վրայ և յաջողեցաւ վռնտել տալ անոր սիրելի հարճը՝ Հագարը և որդին՝ Իսմայէլը։

Եսթեր հրեայ գերուհի մը կրցաւ ազդել զօրաւոր Ասուերոսի վրայ և իր ցեղը ազատել անխուսափելի ոչնչէն։

Ալանաց գեղեցիկ օրիորդը, Սաթենիկ, յաջողեցաւ իր ազնուշ լեզուին ազդեցութեամբ համոզել հպարտ Արտաշէսը որ ազատէ իր եղբայրը գերութենէ. և Խոսրովիդուխտ հայ իշխանուհին կրցաւ վերջապէս համոզել պարսկական իշխաններն ու նախարարները որ երթան վիրապին մէջ փնտռեն կենդանի Ս. Գրիգորը, որուն երեւումը բոլորովին յեղաշրջեց այն ատենուան հայ կեանքը։

Եւ կիները ըմբռնած ըլլալու էին իրենց այդ խորունկ և անդիմադրելի ազդեցութիւնը, քանի որ իրենք կ՝ոգեւորէին, կը խրախուսէին իրենց ամուսինները, եղբայրները, զաւակները պատերազմի առեն։

Ո՞վ չի յիշեր Սպարտացի այն դիւցազն կիները, որ իրենց սիրելիները պատերազմի դրկած պահուն վահանը ցոյց տալով կ՝ըսէին. «Կա՛մ տակը, կա՛մ վրան»։

Ո՞վ չի յաւիտենական յիշելով Հռովմայեցի այն սքանչելի մայրը, Կուռնելիան, որ իր զաւակները ժողովուրդի բարօրութեան ու երջանկութեան համար զոհուելու ու մեռնելու յորդորած առեն կ՝ըսէր անոնց թէ՝ իր միակ առնչալի բաղձանքն էր գերեզմանին վրայ իրր տապանագիր ունենալ միայն «Կրաքեանների մայրը»։

Շա՜տ համառօտ ու միեւնոյն ժամանակ շատ պերճախօս տապանագիր մը, որը իր մէջ կը բովանդակէ հայրենիքի, ցեղի սիրոյն գերազանց բարձրութիւնը, ու միանգամայն փառասիրութիւններու ամենէն ազնիւը ու ամենէն սուրբը...։

Ո՞վ չի յիշեր պատմութիւնը ասպետական դարերու, ուր ասպետը իրական կամ նոյնիսկ երեւակայական գեղուհւոյ մը սիրոյը ոգեւորուած, անոր սիրոյն արժանի ըլլալու համար կ՝երթար հերոսական արկածներ փնտռելու և շատ անգամ իրօք հերոս կը դառնար մի՛շտ այդ ներշնչող ազդեցութեան խթանին տակ։

Ուրեմն կինը ամեն դարերու և ամեն ժամանակներու մէջ սիրեր է արին, կորիւնը, և անոր դիւցազնական գործերը վարձատրեր է ամենէն բարձր շնորհներով։

Եւ այսօր նոյն բանը չէ՞, դարձեալ...

Ո՞ր սրտով ու հոգւով ճշմարիտ հայ աղջիկը իր անտիական հասակին երազները չտակեցներ հայ կորիւնին խոյալ պատկերով, հայ կորիւնը, վեհ և սքանչելի նկարագրով մը օժտուած, որ ամեն գրկանք ամեն տառապանք կը տանի անտրտունջ հանելու համար իրեն պարտականութիւն դաւանած սուրբ նպատակին...։ Եւ ո՞ր լուրջ, ճշմարտապէս զարգացած հայ աղջիկը զգուանօք երես չի դարձներ այն փափկասուն ինքնակոչ-կենցաղագէտ երիտասարդներէն ուրոնք վարպետ են միայն ճարպիկ հաճոյախօսութիւններ՝ անոր ականջներուն մօտ սահեցնելուն մէջ...։ Մինչդեռ

խամաճիկներ, որոնք արժանիքը կը տեսնեն միայն իրենց վայելուչ ամօթիլներուն և կամ մի քանի արուեստական նրբացած ծեքծեքումներուն մէջ :

*
* *

Ամեն ժամանակներու մէջ կիներու գնահատումը, կիներու գովեստը մեծապէս փնտռուած և անհունապէս ազդեցիկ էր, ըլլա՛յ պատերազմական, ըլլա՛յ հասարակական զանազան գործերու մէջ . անիկա խթանը եղած է ամեն յառաջդիմութեան ամեն յաջողութեան :

Հրէից պատմութենէն գիտենք որ երբ Սաւուղ և Դաւիթ յաղթական կը վերադառնային Փղշտացւոց դէմ մղուած պատերազմէն, կիները ծնծղաներով ու երգերով դիմաւորեցին զանոնք գոչելով . «Սաւուղ հազարաւորները զարկաւ, իսկ Դաւիթ՝ բիւրաւորները» :

Սաւուղ սատիկ նախանձեցաւ և խորապէս տխրեցաւ, գուցէ անտարբեր մնար եթէ այդ գովեստները այր մարդոցմէ հասած ըլլային, և այն օրէն թշնամացաւ Դաւիթի հետ, իսկ Դաւիթ բարձրացաւ և հետզհետէ մեծցաւ :

Կինը՝ պաշտելով հանդերձ դիւցազնը, քաջը, ինք անձամբ ալ դիւցազնական գործեր կատարելու ընդունակութիւն ու կարողութիւնը մի՛շտ ցոյց է տուեր, հակառակ իր փափուկ և երկչոտ երեւցող բնաւորութեանը :

Յուդիթ, փափկասուն հրէուհին, բեհեղներու, անդուսներու մէջ ծնած ու ապրած, կրցաւ սակայն իր սիրտը պընդացնել այր մարդու յատուկ վճռողականութեամբ, երբ հարկ եղաւ իր ցեղի փրկութեան համար դանակը մխել Հոլոֆեռնէսի կոկորդը : Եւ Հարաւային Ամերիկա, Ամազոնի եզերքներուն վրայ եղան կիներ՝ որոնք այրերու հաւասար քաջութեամբ գիտցան պատերազմիլ, և որոնք կոչուեցան Ամազոն, հին առասպելական անունով :

Ամենէն հին դարերու և նոյնիսկ ներկայ ժամանակակից պատմութիւնը մեզ կուտայ անհերքելի ապացոյցները կնոջ հերոսական հոգիին :

Դեռ շատ հեռու չէ այն ժամանակը երբ նշանաւոր Իտալացի հայրենասէր Կարիպալտիի կինը՝ Անիթա, իր ամուս-

նոյն հետ կողք կողքի պատերազմելով, անոր գլխուն վրայ կախուած հազարաւոր վտանգները բաժնելով ապրեցաւ։ Անիկա մխիթարիչ հրեշտակը կ՚ըլլար պատերազմի մէջ մեռնողներուն, քրոջ մը գուրգուրանքով կը դարմանէր վիրաւորեալները, ամենուն և ամեն տեղ կը հասնէր, և ինքն ալ մեռաւ վերջապէս յոգնութենէ ու զրկանքէ։

Հանրի Դ.ի օրով մատաղատի աղջիկ մը իր նշանածին՝ զօրավար Լաշէնէի հետ մտաւ պատերազմին մէջ և երկուքն ալ ինկան քաղաքը պաշտպանելով։

Հապա Պարատիկի (La Fronde) ատե՞ն . . . Ո՞վ կրնայ առանց հիացումի յիշել անունները այն ամեն կիներուն, որոնք այդ յեղափոխութեան շրջանին մէկէ աւելի անգամներ արիութեան ու անձնուիրութեան այնքան գերազանց օրինակներ տուին։

Երկար կ՚ըլլայ մի առ մի թուելը կին սեռին այդ պանծալի ներկայացուցիչներուն իւրաքանչիւրին անունները. բայց չենք ուզեր փակել յիշատակութիւններու այս էջը, առանց Հայ անցեալ ու ներկայ պատմութենէն ալ տալու մի քանի նմոյշներ միայն, որոնք կ՚ապացուցանեն թէ Հայ կիներն ալ հերոսութեան մէջ կրնայ յաջողութեամբ մրցիլ իր օտարազգի քոյրերուն հետ։

Վարդանանց պատերազմին՝ Հայ փափկասուն տիկինները երեսի վրայ թողած տուն ու տեղ, իրենց ամուսիններուն, եղբայրներուն, զաւակներուն օգնականը, մխիթարողը, խրախուսողը կ՚ըլլային և միանգամայն վիրակապներ կը շինէին պատերազմին մէջ վիրաւորուողներուն համար։

Աւելի ուշ, Թաթարաց արշաւանքներէն առաջ, երբ Բագրատունեաց Անի փառաւոր մայրաքաղաքը այլազգիներու կողմէն պաշարուեցաւ, Անեցի կիները իրենց ներկայութեամբ կը խրախուսէին իրենց ամուսինները, և քաջասիրտ կին մը՝ Այծեամն անունով, պարիսպին վրայ կեցած քարերով կը հալածէր թշնամիները և անոնց արձակած նետերը վէրքերէն հանելով նորէն անոնց կը նետէր։

Լանկթիմուրի օրով, Մշեցի կին մը թշնամիներու ձեռքը չիյնալու և իր պատիւը, ազգութիւնը ու կրօնը պահպանելու համար, չի վարանեցաւ անոնց աչքին առջև սուրը ցցել իր եօթնամեայ որդւոյն սիրտը, և ինքն ալ ժայռի մը վրայ բարձրանալով ինքզինքը վար գլորեց և մեռաւ քաջերու մահով։

Ու դեռ երէկ չէ՞ր հերոսական Շաքէն, այդ նոր Մշեցի Քաջուհին, որ պատուաւոր մահը՝ անպատիւ կեանքէն նախադաս համարելով իր հերոս ընկերուհիներուն հետ ինքզինքը նետեց Սասունի հպարտ լեռներն ի վար և Սէրոբ բաշայի կինը՝ Սօսին և մեր Զէյթունի և Սասունի քաջամարտիկ կիները, որոնք իրենց ամուսիններու կողքին առիւծի պէս կռուեցան, և Կ. Պոլսոյ փոքրիկասուն հայուհիներէն շատեր, որոնցմէ ոմանք ռումբեր և արձանակներ փոխադրելու պահուն ձերբակալուեցան, և ոմանք յեղափոխականներ և զէնքեր պահելու ոճիրովը բանտարկուեցան ու չարչարուեցան . . . :

Վերջապէս դեռ մէկ քանի տարի առաջ անգլիական թերթերը չէի՞ն ծանուցաներ մեզ թէ՝ Կովկասեան Զին անուն գիւղակին մէջ եօթը Հայ կիներ պաշտպանած են իրենց գիւղը ընդդէմ քսան զինեալ թաթարներու յարձակման, մինչ իրենց ամուսինները դրացի գիւղացոց օգնութեան գացած էին :

Այս հարեւանցի թռուցիկ ակնարկը Հին և Նոր Պատմութեան վրայ կնոջ բարոյական ու գործնական ազդեցութեան ու կարողութեան մասին մեզ մտածել կուտայ իրատմբ թէ՝ ի՞նչ ահագին նշանակութիւն կրնայ ունենայ նաև իր ազդեցութիւնը ընկերական և հասարակական ապագայ նոր բարեշրջումներու ճակատագրին վրայ ալ, և ի՞նչ գերազանց դեր կրնայ խաղալ ան ոնձամբ այդ բարեշրջումներուն մէջ :

* * *

Քիչ անգամներ անբարոյականութիւնը, ստութիւնը, մատնութիւնը ապրդեր են ոևէ կազմակերպութեան մէջ, երբ կինը ներկայ եղեր է հոն :

Քիչ անգամներ կռուող զինուորը կռնակը դարձուցեր է թշնամիին, երբ կնոջ աչքերը տեսեր է իր վրայ սեւեռուած:

Քիչ անգամներ հարուստը մերժեր է իր գրամը, շատ թէ քիչ, երբ կին մը ներկայացեր է իրեն :

Քիչ անգամներ, պիտի ըսեմ գրեթէ, երբէք ոևէ նպատակ բացարձակապէս վիժեր է, երբ կինը հոգւով մարմնով մասնակցեր է գործին :

Գրանցայի Մեծ Յեղափոխութիւնը յաղթանակից գլխաւորաբար իր Տիկին Ռօլաններով։

Կիւլիւզարի մը դիւցազնական արիութիւնը բռնկցուց հայ յեղափոխութիւնը և Զէյթունի ու Սասունի յեղափոխութիւնը բարոյական ահագին յաղթանակներ տարաւ իր կռուող յեղափոխական կիներով, և քաղաքակիրթ աշխարհներու ուշադրութիւնը գարձուց մինչև ցարդ անտեսուած հայ ցեղին վրայ, որ այդպիսի հերոսներ ու մանաւանդ հերոսուհիներ կրնար ծնիլ դեռևս իր այդ ընկճուած ու տանջուած վիճակին մէջ . . . ։

Պօէր կիներու դիւցազնութիւնը յաւէրժացուց Պօէր յեղափոխութեան պատմութիւնը։

Մարիա Սպիրիտոնովաներ և Զինաիդա Քոնոպլինիքովաներ, այդ գերազանցօրէն բարձր հերոսուհիները, այդ նոր Շարլոթ Քորտէները ռուս յեղափոխութեան յաղթանակը ապահովելու համար չարչրկուեցան, հանուր աշխարհի հիացումը, պաշտումը, օրհնութիւնը ընդունելով իրենց զացած աքսորի ու մահուան ճամբաներուն վրայ։

Եւ ո՞վ կրնայ չի պաշտել այդ հրաշալի աղջիկները, տանեւհինգամեայ պատանուհիներ շատ անգամ, որոնք հայրենիքի ճշմարիտ սիրովը վառուած, յեղափոխութեան պէտքը իրենց տատապեալ երկրին համար լիովին ըմբռնած և անոր հաւատքովը գերազանցօրէն զօրացած, չի վարանեցան հրապարակու իրենց գաշոյնները մխելու վառելու սիրտը, կամ իրենց տարձանակները պարպելու անօրէններու ճակտին, և մահէն աւելի տակալի տանջանքներ կամովին կրեցին իրենց որդեգրած գաղափարին տարածմանը համար, և ահա յեղափոխական Ռուսիան իր կիներուն գործունէութեան և գլխաւորաբար անոնց ազդեցութեան պիտի պարտի իր ապագայ յաղթանակը։

Անոնք գիտցան ազդել մինչև իսկ ամենէն տգէտ ու մոլեռանդ մուժիկներուն վրայ, ամեն գնով գիտցան խանգավառել բռնակալութեան է՛ն հաւատարիմ գինուորները ապատութեան գաղափարով և ապստամբական շարժումներ պատրաստել Ռուսաստանի ամեն անկիւնները, ծովու թէ ցամաքի վրայ։

Այսօր բարեբաղդաբար Հայուհին պէտքը չունի կռուելու, հայրենիքը ազատ է . . . Բայց ինչե՞ր չի կրնար ընել

ան ազգային ու կրթական ամեն հաստատութիւններու օգտին համար, եթէ խնդրէս Մարիա Սպիրիտոնոսյանների հաւատքովը փարի գործին։

Իսկ անցեալին մէջ եթէ ան հաւատքական ուժերով պատկառելի մեծամասնութիւն կազմած Հայ Յեղափոխութեան մէջ բանէր իր որոշ տեղը, հայ յեղափոխութեան ճակատագիրը այլապէս վճռուած կ՚ըլլար գուցէ, սակայն հայ կիներէն շատ աննշան մաս մը բաղդատաբար խանդավառուեցաւ ազատութեան սիրովը։ Այսօր բռնակալութիւնը վերցած է. հայրենիքը ազատ է. բայց հայ տատապանքը կա՛յ ու կը մնայ . . .։

Հերի՛ք արեւելեան կակուղ բարքերու անկիւնը թոյլօրէն ընկղմանած մեռաքի կամ թաւիշի կտոր մը երագելով անցնենք թանկագին ժամանակը, կամ ազամանդեայ մատնիի կամ քայլի մը տիրացմանը մէջ ապուշօրէն երջանիկ մռայլութեան տանք հայ տատապանքը . . .։

Հերի՛ք չնչին մտածումներ, ոգեղ նախապաշարումներ մեզի տաջնորդեն կեանքի մէջ։

Պարտականութեան ձայնը ամենուս ալ կը խօսի բարձրագոչ, ո՛վ որ ականջ ունի թող լսէ։

Ժողովուրդ մը յարուցանելու, ժողովուրդ մը փրկելու, նորոգելու պարտականութիւնը դրուած է մեր վրայ և մենք կարող ենք այդ բանը ընելու։

Թող մեր արտերը ուռենան ազնուական հպարտութեամբ այն փրկարար ազդեցութեան և գերագանց կարողութեանը համար, որով բնութիւնը օժտեր է մեր սեռը ի բնէ։

Ցիշե՞նք որ մենք պիտի ըլլանք ազգը բարձրացնողը կամ ձգողը, քանի որ ազգերը իրենց կիներով կը բարձրանան, ու դարձեալ իրենց կիներով կ՚իյնան։

Հայ ցեղը իր այսօրուայ ապրարիելի տատապանքներուն մէջ ուժով և յաղթական մնալու համար մեր օգնութեան կը կարօտի . . .։

Անիկայ կը սպասէ լաւ դաստիարակուած կիներու, անձնուէր մայրերու և գործօն ու ժրաջան աղջիկներու։

Պէտք է որ գործենք, և ասի՛ բնական է և իրաւացի, անբնական է միայն ճահիճի ջուրերուն պէս անշարժութեան մէջ մնալ, ուր մեր բոլոր բնածին կարողութիւններն ու յատկութիւնները կը նեխին, կը փտին ու կ՚ոչնչանան։

Մենք կրկին դեր ունինք կատարելու հայ ընտանեկան, հասարակական ու ընկերական կեանքին մէջ.

Ա. Բարոյական.

Բ. Գործնական.

Մեր բարոյական դերն է, քաջալերել, խրախուսել, խրատել, սիրել, գթալ, ներել, օգնել, խնամել, իսկ գործնական դերը՝ զժուարին է ու պահանջող։

Գործնական դերը մեզմէ կը պահանջէ աշխատիլ, տալ մեր ժամանակը, մեր միտքը, մեր դրամը, եթէ հարկ ըլլայ, որպէսզի այս թշուառ ու չարչրկուած ցեղը վերապրի։

Պարտականութեան ձայնը թող համոզեմ ուրեմն բոլոր Հայուհիները այս վսեմ նպատակին շուրջը։

Ցեղի գոյութիւնը պէտք է որ ապահովենք, բնաջնջումի դէմ պէտք է որ մաքառինք, ասի բնական է և օրինաւոր։

Կեանքի մէջ մեր խեղճուկ անձը պահելու համար ամեն օր հազար զժուարութիւններու դէմ կը կռուինք. որչա՜փ աւելի ուրեմն պարտաւոր ենք կռուիլ պահպանելու համար այն ցեղը՝ որ մեզի ծնունդ տուած է և որմէ կը քաղենք մեր կեանքի ամենէն անուշ և ամենէն բարձր ոգեւորութիւնները...։

Զարգացած միտք ունեցողը՝ թող իր զարգացումը ծառայեցնէ անոր օգտին, տաղանդ ունեցողը՝ իր տաղանդը, դրամ ունեցողը՝ իր դրամը, իսկ անոնք որ բան մը չունին և գուցէ այդ պատճառով ալ կը վարանին գործին մասնակցելու, անոնք ալ թո՛ղ իրենց ազնիւ ու շիտակ սիրտը տան գործին։

Անկեղծ ու զօրաւոր սրտերու բանակը շատ աւելի տիրական գործեր կարող է կատարել ցեղի մը ընկերային ու հասարակական կեանքին յառաջխաղացութեան մէջ քան մեծամեծ տաղանդներն ու հսկայ հանճարները։

Ո՛վ դուք, որ գործին մեծութեան առջև տկար, ոգէտ և անկարող կը զգաք ինքզինքնիդ, յիշեցէ՛ք որ Ժան տ'Արք նոյնպէս տկար ու ոգէտ աղջիկ մըն էր, և սակայն Ֆրանսան փրկե՛ց...։

* * *

Եթէ պատերազմը գոյութեան իրաւունքը ունի դեռ ներկայ ժամանակներուն մէջ ալ, եթէ արիւն թափելը դեռ ներելի կը նկատուի այսօր, պատճառն այն է որ դեռ կը գտնուին ազգեր ու ժողովուրդներ, որոնք ուրիշ ազգերու և ցեղերու հայրենիքը կողոպտելու, իւրացնելու կը ձգտին, և իրենց շահերուն համար չեն խղճահարուիր ուրիշներուն շահերը զոհելու . . . :

Հայրենիքը ամենուն համար ալ նուիրական ու սուրբ է, և անոր փրկութեանն ու պաշտպանութեանը համար մղուած կռիւը միայն արդարացի է և օրինաւոր :

Պէտք է յարգել ազգերու այդ իրաւունքը :

Եւ ցորչափ այդ իրաւունքը չի յարգուի՝ կնոջ ալ պարտականութիւնն է մասնակցիլ հայրենիքի պաշտպանութեան գործին, ի՛նչ միջոցներով որ կրնայ, բարոյական ու միւսնոյն ժամանակ գործնական դեր առնելով պատերազմներու մէջ :

Դժբաղդաբար, հակառակ քաղաքակիրթ կոչուած այս դարուն, մենք դեռ կ՚ապրինք բարբարոս ժամանակ մը, ուր իրաւունքը և արդարութիւնը երեւի թէ արիւնով պէտք է ձեռք բերել :

Դեռ հասած չէ երազուած այն բաղձալի օրը՝ յորում խաղաղութիւնը միայն պէտք է թագաւորէ աշխարհի վրայ, և ազգերու եղբայրակցութիւնը նուիրագործուի համերաշխութեան և սիրոյ օրէնքովը :

Դեռ հասած չէ՛ ժամանակը՝ յորում աշխարհակալութեան ձգտումները մէկ կողմ թողած, ժողովուրդներու իրական երջանկութեան պայմաններուն վրայ միայն խորհին կառավարութիւնները :

Աշխարհակալութեան ձգտումները հին բարբարոսական դարերու գործն էր :

Այն առեն ատոր մէջ փառք կը փնտռէին :

Այդ նպատակին համար կռիւը ներելի չէ՛ այսօր :

Ներելի չէ՛ երբէք երիտասարդ կեանքերու զոհաբերութիւնը շահագործել այնպիսի տեսակէտի մը համար՝ որուն ուղղակի և միակ նպատակը չէ՛ ժողովուրդներու ապագայ երջանկութիւնը և բարօրութիւնը :

Ոչ մէկ քաղաքակիրթ մարդ, ոչ մէկ անկեղծ և ազնիւ զինուոր իր արիւնը պէտք է թափէ իր եղբօր երջանկութենէն՝ ու ազատութենէն և հայրենիքի պաշտպանու-

թեմէն դուրս՝ ուրիշ ո՛և է նպատակի համար։

Ո՛չ մէկ զինուոր իր փառքը պէտք է փնտռէ ուրիշին հայրենիքը նուաճելու, ուրիշները չարչարելու, մեռցնելու տխո՛ւր յաղթանակին մէջ, ամօթալի՛ յաղթանակ արդարև, զորութեան, բռնութեան, անիրաւութեան եւ բիծովը մը-ըռուած, թէպէտ ատեն մը դափնիէ պսակներով փա-ռաւորուած ըլլար այն . . . ։

Ներկայ դարը ալ եւս շատոնց հեռու եղած ըլլալու էր մարմնական ուժի, ֆիզիքական քաջագործութիւններու դա-ը ըլալէ։

Բարոյական և մտաւորական քաջութիւնը միայն արժանի համարուած ըլլալու էր այսօր փառքի և մեծութեան։

Ֆիզիքական կորիզութիւնէ աւելի՝ նկարագրի կորիզու-թիւնը թագաւորելու էր այսօր։ Անցած ըլլալու էր մէկ խօսքով պատերազմներու ժամանակը։

Եթէ քիչ մը հող աւելի ունենալու համար իրար ոչն-նելը, իրարու արիւն խմելը բաւականութիւն կը պատճա-ռէր ատեն մը, այսօր՝ ապրելի պատճառելու էր միայն։

Մինչ խա՞ղ նկատելու է մարդու մը մահը . այդ մարդը իր եւս չի՞ թողուր մայր մը, քոյր մը, կին մը, սիրելի մը, որոնց սիրտը պիտի բզկտուի, ապագան պիտի խորտակուի, արեւը պիտի մարի . . . ։

Կարդացէ՛ք Օսիանի երգերը։

Բարբարոսական դարերու մէջ ապրող Սկովտիացի մեծ բանաստեղծը յափշտակութեամբ կ՝երգէ Բինգալի մղած պատերազմները և ամենամեծ շունչով մը կը պանծացնէ իր ցեղ հերոսներու քաջագործութիւնները, բայց և այնպէս երբ կը նկարագրէ ահաւոր վիշտը այն տարաբաղդ ազգիկ-ներուն, որոնք իրենց երկար, գեղեցիկ մազերը հովուն տուած, գիշերանց կ՝ելնեն լեռները թափառական, պատե-բազմի մէջ իր ցեղ իրենց սիրելիներուն ատուերները փնտռե-լու, երբ կը հնչեցնէ անոնց ազեկէզ ողբերը, իր քնարը այնպիսի մորմոքիչ նօթեր կ՝առնէ որ անկարելի է կարդալ զանոնք առանց արցունքներու։

Կը յիշեմ որ Օսիանի մէկ քերթուածը ամբողջ գիշեր մը ան-ով տուաւ ինծի։

Ի՞նչու ստեղծել այս տառապանքները, ի՞նչու մարդ մը դժբաղդացնել ուրիշ մարդու մը ձեռքով, երբ այդ երկու

մարդիկը զիրար սատելու ոչ մէկ պատճառ ունին, և ո՞վ գիտէ, գուցէ կեանքի մէջ եթէ իրարու հանդիպած ըլլային, ճակատագրուած էին զիրար սիրելու ։

Հասարակական ապագայ բարեշրջումներու կարգին կը պատկանի նաև պատերազմի բարձումը և սատր մէջ կինը ահագին դեր և նշանակութիւն ունի, քանի որ ամենէն աւելի ինքն է տառապողը պատերազմներու հետեւանքէն, քանի որ ի՛նքն է զինուորին ծնունդ տուողը և ինքն է զինուորը պատերազմի զրկողը ։

Անիկա իրաւունք ունի իր ձայնը լսելի ընել տալու կառավարութիւններու մօտ, խորհրդարաններու մէջ, և նոյն իսկ մերժել անօգուտ մահուան մը զրկելու իր ազիքներէն փրթած այդ սիրասուն էակները, իր արտին և հոգիին այնքա՜ն թանկագին մասունքները ։

Տիկին Հէնրի Պիչըր Սթօու, ինքը առանձինն վերցուց գերեվաճառութեան սոսկալի առուտուրը աշխարհի վրայէն իր սքանչելի «Աղբար Թոմմս» ովը . ինչո՞ւ նոր Տիկին Սթօու մը, օժտուած նոյնքան հեղինակաւոր և հզօր շունչով մը պիտի չվերցնէ պատերազմը, քաղաքակիրթ աշխարհի այս սարսափելի չարիքը, որը դարերէ ի վեր այնքան երիտասարդ կեանքեր տուած է հուրին ու սուրին բերանը և սոխակել կառավարութիւնները որ յարգեն իրարու փոխադարձ իրաւունքները, և ճշմարիտ մեծութիւնն ու փառքը փնտռեն ոչ թէ ուրիշներու սորկութեան՝ այլ իրենց սեփական ժողովուրդներուն մատուր, հոգեկան ու տնտեսական յառաջդիմութեան ու բարգաւաճմանը մէջ ։

ՏԱՆՋՈՒԱԾԵԼՈՒՆ

ԶԵՐ գեղեցիկ բայլերուն Գողգոթայէն վերելքին
Կը հետեւիմ զոպալով ընչուսացման ասուռով,
Գողգոթա մը՝ զոր խուժդուժ բաղդն ստեղծեց Ձեզ համար,
Փուշէ պսակ Ձեր ճակտին դրաւ մարդը անիրաւ,
Եւ բացախէ ըմպելին Ձեր շուրթերուն մօտեցուց . . . ,
Թշուառութեան ծանր խաչը Ձեր ուսերուն դոզոջուն,
Կը դիտեմ Ձեր վերելքը Գողգոթայի բարձունքին .
Ձեր ոտքերը արիւնոտ ճանապարհի խութերէն
Ա՛լ կը մերժեն բայլ առնել, եւ նայուածքնիդ տանջուած
Ճակատագրէն անիրաւ զուր գթութիւն կ՚ապերանեն . . . ,
Կը հրէ Ձեզ ձեռք մը բիրտ, դաժան ձայն մը կը գոչէ՝
„Քալէ, քալէ . . . „ եւ խաչը Ձեր ուսերուն կը սեղմէ .
Սայթաքելով կ՚ելնէք վեր, եւ բռնութի կայլակներ
Կաթիլ, կաթիլ, Ձեր ճակտէն գետնին վրայ կը թափին ,
Կիւրենացի մ՚ զքեզ բիրտ չի հանդիպիր Ձեզ ճամբան
Որ զէթ կիսով չափ օգնէ ծանրը խաչը բառնալու .
Արեմաթեան Յովսէփ մը չկայ հոն, Ձեր խաչին ետեւ
Որ դամբանի հանգիստը տայ Ձեր մարմնոյն անէրունջ . . . ,

*
* *

Ըմբոստացման սարսուռը էութեանս մէջ բաբախուն,
Կը հարցընեմ ես ինծի՝ թէ ո՞ր ծեռքերն Էանըզգամ
Պատրաստեցին Ձեզ համար՝ կեանքի լեղին մահացու,
Մինչ շատերուն պահեր են անուշն անչափ, անսահմանն . . . ։
Եւ թէ ո՞ր կամքն անողորմ, ա՛խ, վճռեց որ ծըռին վար
Ազնուական գըլուխներ, անազնիւին ոտքին տակ,
Եւ վերի արտեր ըսխալուին աղերսանօք խնդրելու
Յաց արտերէ Սէր եւ Գութ, փըշրուր մը հաց շատ անգամ . . . ։
Կը փորձուիմ ես ինծի հարցընելու դառնագին
Թէ՝ թշուառը աշխարհի օրէնքներուն դէմ անգութ
Պիտ՝ ծառանայ բընաւին եւ առնական խոյանքով
Պիտի շրջէ երբէք օր մ՝ այդ օրէնքներն անիրաւ.
Թէ ինչպիսի զոհ կ՝ուզէ ներկայ կեանքը, որ ծընի
Արդարութիւն, Իրաւունք, իր չոր ամուլ արգանդէն,
Եւ մարդկութիւնն ճանչցուի բաղդին առջեւ հաւասար։
Եղաւ ատեն՝ ուր Աստուած մ՝ Սիրոյ համար զոհուեցաւ,
Ի՞նչ զոհ արդեօք պահանջէ մեզնէ այս դարն անիրաւ
Որպէսզի մարդ վերջապէս ըլլայ մարդուն հաւասար . . . ։

ՉԻՒՊԷՅՏԱ

[ԱՐԱԲԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ]

Գ ԻՇԱՂՈՅՍԸ նոր կը ծագէր, խաւարին ատուերները հեռզհեռէ իրարու ետեւէ կը փախչէին, կը չքանային հեռուն լեռներուն ետին և անապատին վրայ ցիր ու ցան սփռուած ճերմակ վրանները կը դողդողային առաւօտեան մեղմ հովուն հպումէն։

Այդ պահուն ահա, ուժեղ ձայն մը դաշնակաւոր ղրոլումներով կը բարձրանար փլփլկած մինարէթի մը գագաթէն, «Ալլա՛հ . . . Ալլա՛հ . . .»

Եւ հաւատացեալները քնաթաթախ աչքերով մէկիկ մէկիկ կ'երեւնային իրենց վրաններուն առջև, փաթթուած ճերմակ պուրնուզներուն մէջ . ու երեսի վրայ ինկած՝ երկրպագով աջէն ձախ, ետեւէն առաջ այլանդակ շարժումներով ու գլխու խորհրդաւոր ճօճումներով կը մոլային . «Ալլա՛հ . . . Ալլա՛հ . . .»

Փառաբանութեան երգին վերջին նօթերը դեռ առկախ օդին մէջ՝

— Զիւպէյտա՛ . . . հնչեց յանկարծ բարձր ու իշխող ձայն մը։

Կրօնային յափշտակութեամբ վերացած այդ մարդիկը սարսռացին . . . ամենքը միահոգոյն ոտքի ելան, և գլուխ-

նին դարձնելով դէպի մօտակայ վրանը, որը միւսներէն կը զանազանուէր իր մեծութեամբն ու ճոխութեամբը, երկիւղած պատկառանքով լուիկ խոնարհեցան մինչև գետին ձեռքերնին կուրծքերնուն վրայ դրած :

Բարձրահասակ ծերունի մը կեցեր էր հոն, վրանին առջև :

Իր խրոխտ ու ազնուական կերպարանքը, կեցուածքին վեհութիւնը արդէն որոշակի ցոյց կուտար թէ՝ նա ամբոխին պատկանող հասարակ մարդ մը չէր :

Նա՝ Խուաններու ցեղապետ՝ Մալտար իշխանն էր, որուն առջև, Ալլահէն ետքը, կը խոնարհէր հիմա իր ամբողջ ցեղը ...:

— Զիւպէյտա՜ . . . կրկնեց իշխանը .

Դեռատի արաբուհի մը դուրս ցատկեց վրանէն և վազելով ծերունիին մօտ իր փայլուն աչքերը բարձրացուց անոր վրայ :

— Հրամայէ՛ Տէր . . .

— Եկո՛ւր սիրելի՛ կին, ըսաւ իշխանը քաղցրութեամբ, թուչուններու դայլայլներէն շա՜տ աւելի անուշ է ինծի լսել քու ձայնիդ դայլայլը :

Եւ ցեղապետը նոսա ծալապատիկ թանկագին գորգին վրայ, զոր սև ատրուկ մը արտօրեօք փռեր էր ոտքերուն տակ:

Զիւպէյտա ինկաւ անոր ծունկերուն և իր երկու ազուոր ողորկ թեւերը անցուց տիրոջը վզին շուրջը :

Իշխանը երկար ու խորունկ հառաչ մը արձակեց և յեղակարծօրէն մթնցաւ իր պարզ ու պայծառ ճակատը :

Զիւպէյտա գլուխը բարձրացուց ու երկչոտ նայուածքով մը դիտեց զայն :

— Իմ տէրս տխուր ու մռայլոտ է այս օր, մրմնջեց :

Ծերունին մատները անցուց անոր խիտ խոպոպներուն մէջ:

— Լսէ՛ ինձ ազա՛յ, յարեց մեղմիւ . իրա՛ւ է, ժամանակէ մը ի վեր մահու չափ տխուր կը զգամ հոգիս . . . դժբաղդութեան մը նախազգացումը ունիմ, և չգիտեմ ինչո՛ւ ամեն վայրկեան միտքս կը չարչարէ այն տհաւոր գուշակութիւնը զոր մարգարէին շատ սիրելի շէյխ Ապուլ Ահմէտը ըրաւ ինծի Սուրը քաղաքէն մեկնելիք օրս :

— Իմ տէրս աւելի՛ սիրելի է Ալլահին ու իր մարգարէին քան բոլոր աշխարհի շէյխերը, ընդմիջեց արտրուհին, վասնզի ոչ ոք իմ տիրոջմէս աւելի՛ բարի, գթած ու ողորմած է :

— Լսէ՛, սիրելի կին, շարունակեց ցեղապետը . մարգա-

ին Սպուլ Ահմէտին տուեր էր ասպերու մեծ գիտութիւնը. ուշ գիշեր էր, նստեր էի վրանին առջև, Սպուլ Ահմէտ քովս էր. նա խորունկ ուշադրութեամբ կը դիտէր երկինքը, յափշտակուած էր զննութիւնով։

Յանկարծ ուժով բռնեց թեւէս... «Ո՞վ Խուանների իշխան, լսու այնպիսի ձայնով մը որ գողացի. լսէ՞ թէ ի՞նչ կը խօսի երկինքի մեծ գիրքը քեզի համար։

— Դուն որ իշխեցիր ու կ'իշխես ցեղերու և ժողովուրդներու ճակատագրին վրայ, կեանքիդ վերջին օրերուն մէջ տկար կին մը պիտի իշխէ քու ճակատագրիդ ու դուն պիտի ընկճուիս ու լաս ազգ մը պէս, վանդի կեղծիքի ու սուտի ոգին պիտի մտնէ անոր սրտին մէջ ու ան պիտի խաբէ իր տէրն ու ամուսինը։

Զիւպէյտա գոչաց։

— Այս գուշակութիւնը մառամբ կատարուած է այսօր, սիրելի՛ կին, շարունակեց ծերունին, քանի որ Մալտար իշխանը, Խուանների հզօր ցեղապետը, քու հօրդ մեծն Սպատէլ Գէրէմի յաղթողը, կնոջ մը գերին է այսօր, քու գերիդ, ազա՛յ...։

— Տէ՛ր, Տէ՛ր... այդպէս մի խօսիր, մրմնջեց աղջիկը, և յանկարծ բռնելով իշխանին մէկ ոտքը, դրաւ իր վզին վրայ, համբուրեց զայն։

— Զիւպէյտա՞ն է քու գերիդ, լսու խանդաղատանօք։

— Կը վախնամ յարեց Մալտար, այնքա՞ն ցած ձայնով որ Զիւպէյտա հազիւ լսեց... կը վախնա՞մ այս տակալի գուշակութիւնը ամբողջովին կատարուած տեսնել։

Արաբուհին գլուխը վեր առաւ, և սիրով ու երախտագիտութեամբ լեցուն այնպիսի նայուածք մը նետեց անոր, որ Մալտարի մռայլ դէմքը զուարթացաւ խիզոն։

— Կը սիրե՞ս զիս, Զիւպէյտա, հարցուց խանդաղատանքով։

— Ինչպէս մարդ կը սիրէ Աստուած։

Եւ այս ձայնը խորապէս անկեղծ թուեցաւ իշխանին։

— Զիւպէյտա՛ կրկնեց դարձեալ, ինչպէ՞ս պէտք է պատժուի անհաւատարիմ ու կեղծ կինը։

Արաբուհին գլուխը ծռեց.

— Պէտք է որ մեռնի, պատասխանեց թեթեւակի դողդոջուն ձայնով մը։

— Ապրի՛ս, գոչեց Մալտար, որուն ճակտին վրայէն կաթկածի վերջին ստուերները անհետացան, ապրի՛ս սիրելի կին, և երկարօրէն համբուրեց անոր ճակատը :

*
* *

Ու մտեցաւ Սէլիմ, իշխանին անդրանիկ որդին . նա՝ իր հօրը ճշգրիտ պատկերն էր . նոյն ուղիղ ու բարձր հասակը, նոյն խրոխտ ու վեհ կերպարանքը, նոյն խորունկ և աղուո՛ր նայուածքը :

Խոնարհութեամբ ծռեցաւ իր հօրը առջև, երկու ձեռքերը միացուցած կուրծքին վրայ, և ստերութեամբ բացուեցաւ նայուածք մը նետելով Զիւպէյտային՝ եկաւ նստաւ իշխանին մօտ ծունկի վրայ :

Ցեղապետին զուարթ ճակատը ամպոտեցաւ, ակներև դժգոհութիւնով մը նայեցաւ իր որդւոյն . և սակայն կը պաշտէր այդ որդին, որը իր փառքն ու պարծանքն էր :

Այս վերջին տարիներուն մէջ շատ չար ու բարի էր տեսեր, շատ կռիւներ էր մղեր, շա՛տ վտանգներու էր դիմագրաւեր, բայց իր իւրաքանչիւր հակայ յաղթանակը կը պարտէր այդ որդւոյն, այդ յանդուգն մարտիկին, որը ինչքան քաջ՝ նոյնքան խորագէտ, կրնար է՛ն վճռական բոպէներուն մէկ անգամէն խանգարել թշնամւոյն ռազմական ծրագիրները, մէկ ճարպիկ հարուածով խորտակել անոր ուժը և փրկել իրենները :

Արդեօք քանի՞ քանի անգամներ պահապան հրեշտակի մը պէս հասնելով, յաւիտենական էր եաթաղանը որը ապառնալից կը բարձրանար հօրը գլխին վերև և մխեր էր թշնամւոյն սրտին . . . :

Ժողովուրդը կը գուրգուրար անոր վրայ, նկատելով զայն իբրև Ալլահէն ընտրուած առաջնորդ ասող մը, որը ապահովաբար պիտի տանէր զինքը դէպի փառքի ու յաղթանակներու գագաթնակէտը :

Յորմէ հետէ Սէլիմ տեսեր էր իր հօրը բուռն ու կոյր տարփանքը Զիւպէյտային համար, գերուհի մը՝ որ եկեր էր իրմէ գողնալու հօրը բացարձակ սէրը ու մօրմէն ամուսնական գորովը, տեսակ մը դժգոհանք զգացեր էր նախ, և այդ

դժգոհանքը տակաւ առ տակաւ փոխուեր էր մահացու ատելութեան այն օրէն՝ երբ գերուհին հզօր՝ իր անդիմադրելի հրապոյրներուն գիտակցութեամբն ու իշխանին վրայ իր ունեցած խորունկ ազդեցութեամբը, սկսեր էր արհամարհոտ ու անպատկառ վարմունք մը ցոյց տալ դէպի իր մայրն ու դէպի ինքը։

Երդում ըրեր էր սոսկալի պատիժով մը քաւել տալ ատոր իր մօրը թափած ծով արցունքը, իր կրած բոլոր նուաստացումները և վերատին ծնունդ տալ իրենց ընտանեկան երբեմնի այնքա՜ն անուշ կեանքին։

Վերին ատիճանի հպարտ՝ Սէլիմ գանգատի ոչ իսկ բառ մը արտասանած էր հօրը առջև, որը այդ կնոջ աչքերովը կը տեսնէր ու անոր ականջներովը կը լսէր, և յայտնապէս աչք կը գոցէր անոր բոլոր լրբութիւններուն, բայց այդ լռութիւնը շա՜տ աւելի պերճախօս էր իշխանին համար, ուր կը տեսնէր յանդիմանութիւններու է՛ն դառնը։

Երջանիկ կը զգար ինքզինքը, իրա՛ւ, այդ ազջկան թեւերուն մէջ, բայց այդ երջանկութիւնը խառնուած էր զինքը շարաչար անհանգիստ ընող տեսակ մը խռովքով, երկի՞ւղ թէ խղճի խայթ, չէր կրնար բացատրել։

Սէլիմի անհաշտ տեսակը Զիւպէյտային դէմ, ոչ եւս գաղտնիք մըն էր իրեն համար, արդէն երիտասարդը չէր ծածկեր զայն. իր նայուածքը, իր կեցուածքը, իր շարժուձեւերը պէտք եղածէն աւելի բացորոշ ցոյց կուտային ատիկայ։ Ահա թէ ինչո՛ւ իշխանը կայլայլէր, ամեն անգամ երբ Զիւպէյտայի հետ եղած պահուն Սէլիմ կը մօտենար իրեն։

Ծանր ու նեղացուցիչ լռութիւն մը տիրեց այս երեք անձերուն մէջ։

Նախ իշխանը խզեց լռութիւնը։

— Զիւպէյտա՛, բաւ, հրամայէ՛ որ սուրճ բերեն մեզի։

Դեռատի կինը ցատկեց ոտքի, կատուի մը շարժումներով, և թեթեւ ու ճկուն, ոտտատելով մտաւ վրանը։

Հայր ու որդի առանձին մնացին.

— Սէլի՞մ... հարցուց հայրը։

— Հրամայէ՛ Տէ՛ր։

— Ուրեմն հաշտութիւնը երբէք պիտի չկնքուի՞ ձեր երկուքին մէջ, բաւ ծերունին, առաջին անգամ մտնելով ուղղակի այդ խնդրին մէջ, որը ահագին բեռ մըն էր իր սրտին

վրայ. Կ'ուզե՞ս ուրեմն հօրդ ծերութիւնը թունաւորել, որդեա՛կ։

Երիտասարդը խոնարհեցաւ, և գորովանօք համբուրեց իր հօրը ձեռքերը.

— Սէլիմ կը յարգէ իր հօրը ճերմակ մազերը, պատասխանեց քաղցրութեամբ, և պատրաստ է իր կեանքը զոհել ապահովելու համար անոր երջանիկ ու անդորր կեանք մը, այնքա՞ն մեղմ, այնքա՞ն անուշ կեանք մը՝ որ չտեսնէ մահուան գալը, և յաւիտենական քունովը ննջելու վայրկենին՝ դեռ կարծէ թէ պիտի արթննայ առաւօտ, ապրելու համար առջի օրուան կեանքը... բայց երբէ՛ք... հա՛յր... երբէք կը նեղէ կնոջ մը՝ որ զգուելի կեղծաւորութեամբ սիրոյ խօսքեր շրթունքներուն վրայ, ծաղրը ու հեգնութիւնը սրտին մէջ՝ ջանայ գողնալու սիրտ մը՝ որ ա՛լ եւս պէտք էր բաբախէր իր հայրենիքին, ցեղին ու ընտանիքին համար միայն, և ծով արցունք թափել ասոյ սիրտերուն մօտ դիշեր ու ցերեկ. կին մը՝ որ ամեն դիշեր ցած ատրուկի մը թեւերուն մէջ կը խնդայ այդ արցունքներուն վրայ, և վայրապօրէն կը հրճուի դիտելով մեր ընտանեկան անուշ կեանքին մէջ իր գործած ապականելի ուներները. կին մը՝ որ ամեն օր և ամեն վայրկեան կը խաբէ իր բարերարը, իր Տէրն ու ամուսինը...։

— Սո՞ւտ կը խօսիս, թշուառակա՛ն, պոռաց Մարտար դիակի մը պէս առելով, առելութիւնն ու նախանձը կուրցուցեր են քեզի...։

— Ոչ Տէ՛ր, Սէլիմ երբէք սուտ չէ խօսեր կեանքին մէջ։ Ժամանակէ մը ի վեր իմ գործս ըրի ասուելը գտնել այդ կնոջ, դիտել, քննել իր ամեն մէկ վարմունքը, ամեն մէկ ընթացքը, ապահով ըլլալու համար թէ՝ գոնէ արժանի՞ էր այն կոյր սիրոյն զոր ի՛մ հայրս նուիրեր էր իրեն. գորեկները հետեւեցայ իրեն գաղտնապէս, դիշերները չքնացայ ու լրտեսեցի, ինչպէս կը լրտեսէի պատերազմի ատեն մեր թշնամի բանակները, որոնք ամայն նուազ վտանգաւոր էին քան այդ իժը, և մարգարէն վկա՛յ... սեռա՛յ զինքը հա՛յր... սեռա՛յ զինքը այդ ատրուկին գիրկը...։

Ցեղապետը երկու ձեռքերովը երեսը ծածկեց։

— Սուտ կ'ըսես, գոչեց յուսահատաբար, ըսէ՛ ինծի թէ սուտ կ'ըսես։

— Այդ կինը կը խաբէ իմ տէրս, կրկնեց երիտասարդը անողոք, և ես՝ կրնամ ապացուցանել իրեն. թո՛ղ իմ հայրս առնու ինձմէ այս կեանքը եթէ ըսածներուս մէջ սուտ կամ սխալ կէտ մը տեսնէ, միայն խոհեմութեամբ և անվրդով թող սպասէ մինչև որ արեւը քուն մտնէ, և ինքը արթուն մնայ խորունկ քուն կեղծելով, և պիտի տեսնէ իր աչքերով . . . :

Սէլիմ չկրցաւ խօսքը լմեցնել, այս միջոցին մօտեցաւ Զիւպէյտան. անոր կը հետեւէր Ալին, իշխանին անձնական սպասաւորը, որը գերի ինկած էր Զիւպէյտային հետ վերջին պատերազմի ատեն :

Արծաթէ խոշոր մատուցարանի մը վրայ սուրճ կը բերէր իր տէրերուն :

Զիւպէյտայի աչքերուն մէջ ատրճանակ բաց մը կ'այրէր :

Երբ սուրճը խմեցին, Ալի ժողվեց գաւաթները մատուցարանին մէջ, և դուրս ելնելու պահուն՝ երկար նայուածք մը նետեց Զիւպէյտային, անհնազանդելի կերպու բարձրացնելով աջ ձեռքին ցուցամատը : Սէլիմ որ վայրկեան մ'իսկ աչքէ չէր փախցուցեր անոր ոչ մէկ շարժումը, տեսաւ այդ, և շրթունքները բացուեցան լայն ժպիտի մը մէջ . . . :

Ոտքի ելաւ ու խոնարհեցաւ մինչև գետին :

— Այս գիշեր, մրմնջեց հօրը ականջին ու մեկնեցաւ :

*
* *

Ուշ գիշեր էր, ազատ լիալուսին մը մեղմօրէն կը լուսաւորէր ընդարձակ, մերկ տարածութիւնը. հոս ու հոն ցանցնուած ճերմակ վրաններուն տակ խոր լռութիւն կը տիրէր :

Օրուան կեանքէն յոգնած այդ մարդիկը կը քնանային աշխատողներու հանգարտ ու խորունկ քունով :

Յանկարծ ցեղապետին վրանը կամացուկ մը բացուեցաւ. գեղատի կին մը զգուշութեամբ դուրս հանեց գլուխը, և իր անհանգիստ նայուածքը գնաց թափառիլ ճամբուն էն հեռաւոր անկիւնները :

Եւ անոնք բուի երկար ու սուր վայրն մը խառնեց անապատին հանդիստը :

— Ան է, մրմնջեց գեղատի կինը, ու ամապարանոք դուրս նետուեցաւ վրանէն :

Քանի մը քայլ անդին, լուանի շողերուն տակ որոշակի կը գծագրուէր մարդու մը հակայ սիլուէթը։

Կինը մօտեցաւ։

— Ալի՛, մրմնջեց մեղմիւ.

— Զիւպէյտա՛, կանչեց միւսը։

Եւ երկուքը իրարու գիրկ նետուեցան։

— Եկա՞ր վերջապէս, բաւ Ալի, նատեցնելով Զիւպէյտան իր քովը աւազին վրայ, ուրեմն քնացա՞ւ քաւթառը։

— Այո՛... քնացա՛ւ. եթէ գիտնայիր ինչ անհամբերութեամբ կը սպասեմ գիշերուան, որպէսզի կարենամ սրտիդ վրայ իյնալ։

— Խե՜ղճ Զիւպէյտա։

— Ի՜նչ երջանիկ էինք հոն, մեր ովասիսներուն մէջ, ո՞վ Ալի, կը յիշե՞ս, ինչքա՜ն անուշ էր կեանքը հոն մեզի համար. խե՜ղճ հայրս դեռ կ՚ապրէր, ու մենք վարդ յոյսերով կը սպասէինք այն օրուան՝ ուր նիքահը պիտի նուիրագործէր մեր Սէրը... Եւ ահա՛, սև օր մը անսպասին զաղանները յարձակեցան մեր վրայ, սպաննեցին իմ խեղճ հայրս, սպաննեցին, հալածեցին, ցրուեցին մեր ցեղը, և մեզ բռնի բերին ձգեցին այս դժոխքը, եթէ գիտնային որ նշանուած էիր, Ալի՛, քեզի ալ անշուշտ սպաննած կ՚ըլլային. ու ես՝ չէի սպրեր քու մահուանդ եռքը։

— Այո՛, բարեբաղդաբար Սպտիւլ Փէրիմի ատրուկը կարծեցին զիս. յուսա՛ Զիւպէյտա՛, դեռ ամեն բան կորսուած չէ. երէկ լուր առի ազա Սպտուլլահէն։

— Հօրեղբօրմէ՞ս...։

— Կ՚ըսէ թէ քիչ օրէն ամեն բան պատրաստ կ՚ըլլայ, և թէ՝ զարհուրելի կերպով պիտի լուծուի Սպտիւլ Փէրիմի վրէժը, արեան հեղեղներ պիտի թրջեն անսպասին աւազները, Զիւպէյտա՛ և դուն քու ձեռքերդ պիտի լուաս հօրդ դահճին արեանը մէջ...։

Վայրենի ցոլք մը վառեցաւ դեռատի կնոջ աչքերուն մէջ։

— Երդում ըրի, մրմնջեց, ես իմ ձեռքերովս մխել դաշոյնը Մալատիի սիրտը, ինծի կ՚իյնայ իմ հօրս վրէժը լուծել. ո՞վ հայր իմ, երբէք պիտի չմոռնամ թէ ինչպէ՞ս մեռար դուն...։

Երիտասարդը պաւրնուզին տակէն հանեց արծաթէ կոթով կարճ ու կեռ դաշոյն մը և երկնցուց Զիւպէյտային.

Ա՛ռ, բաւ, հօրդ դաշոյնն է՝ ասի, հապիւ յաջողեցայ մէջ-քէն քաշել առնել երբ իր արեանը մէջ կը լողար իմ մօտս, ա՛յս դաշոյնով պէտք է մեռնի իր սպանիչը . . . :

Զիւպէյտա համբուրեց դաշոյնը :

— Թո՛ղ Ալլահը ինծի ոյժ և քաջութիւն տայ արդարութեան այս մե՛ծ գործին մէջ :

— Վաղ գիշեր կը լմնցնես այդ քաւթառին գործը, և կուգաս հոս, ես ամէն բան պատրաստեր եմ, կը փախչինք մէկտեղ մեր ոխամիտները . պատերազմը պիտի հրատարակուի մեր փախուստէն ետքը, որպէս զի մեզի վտանգ մը չհասնի հոս :

— Ի՞նչ երջանկութիւն . . . յարեց Զիւպէյտա ցնծուն . տեսնե՛լ մեր հայրենիքը, մեր վրանները . . .

Ու սեղմուելով սիրելւոյն կուրծքին .

— Հապա մեր հարսանիքը՞ . . . մրմնջեց .

— Փառաւո՛ր պիտի ըլլայ յաղթանակէն ետքը, պատասխանեց երիտասարդը, համբուրելով անոր աչքերը :

Ցանկարծ չորս երիտասարդներ ձեռքեր լսեցի պէս ինչպէս սիրտհար զոյգին վրայ, և ձայն մը հանել, կամ շարժում մը ընել կարենալէ առաջ, ակնթարթի մը մէջ կապեցին անոնց ձեռքերն ու ոտքերը, ու ծրարի մը պէս վերցնելով տարին . . . :

*
* *

Արշալոյսը նոր կը ծագէր, խաւարին ստուերները հեռացեր էր երարու ետեւէ կը փախչէին, կը չքանային հեռուն, լեռներուն ետին, և անապատին վրայ սփռուած ճերմակ վրանները կը գողդոջին առաւօտեան մեղմ հովուն հպումէն:

Այս պահուն ահա՛, ուժեղ ձայն մը դաշնակաւոր որոտումներով կը բարձրանար փլփլկած մինարէթի մը գագաթէն :

— Ալլա՜հ . . . Ալլա՜հ . . .

Եւ հաւատացեալները քնաթաթախ աչքերով կ՚երեւէին իրենց վրաններուն առջև մէկիկ մէկիկ, փաթթուած ճերմակ պուրնուզներուն մէջ, ու երեսի վրայ ինկած՝ երերալով աջէն ձախ, ետեւէն դէպի առաջ այլանդակ շարժումներով

ու գլխու խորհրդաւոր ճօճումներով կը կրկնէին միւէզզինին հետ. — Ալլա՜հ . . . Ալլա՜հ . . . :

Փառաբանութեան երգին վերջին նօթերը դեռ տակաւ օդին մէջ :

— Հո՛ն բերուին ամբարիշտներն ու շնայողները, գոռաց Մալտարի ուժեղ ձայնը :

Եւ այնքա՜ն տխրիւ էր շեշտը այս ձայնին՝ որ ժողովուրդը տխմեռած մնաց չհամարձակելով աչք բարձրացնել իշխանին վրայ :

Երկու սարուկներ երեւցան հրելով Ալին ու Զիւպէյտան կապուած :

Մարմնակ սարսուռ մը կը ցնցէր գեռատի կնոջ ամբողջ մարմինը, և սարսափէն լայնցած բիբերը խենդի նայուածքներ կը նետէին իր շուրջը :

— Փաղութի՛ւն, Զիւպէյտա՛, կը մրմնջէր Ալի անոր առկանջին :

Երբ յանցաւոր կինը տեսաւ իշխանը, յոգի տրօտ ճառագայթ մը լուսաւորեց թեթեւակի իր ճակատը. և իջնալով ծունկի վրայ անոր առքերուն տակ .

— Տէ՛ր . . . գոչեց, Տէ՛ր . . . շնո՜րհ . . .

Մալտար հրեց զայն առքովը, և երեսը անդին դարձուց .

Քրտինքի խոշոր կայլակներ մարգարտի պէս կը շարուէին իշխանին ճակտին վրայ, զոր կը սրբէր իր ձեռքին յետնակողմովը :

Այս միջոցին Սէլիմ կը մօտենար ծանր ծանր, անոր կը հետեւէին իշխանական ընտանիքը, պատերազմիկները, սպասաւորները, սարսուները և կուգային շարուիլ երեսց տիրոջը քովը :

Խորունկ լռութիւն կը տիրէր խռնուած ամբոխին մէջ :

— Լսեցէք, գոռաց Մալտար իր բարձր ու ազդու ձայնով, պիղծ շնութիւն մը կը մրտէ այսօր իշխանական անարատ պատիւը, ու սև մատնութիւն մը կը վառնէ ցեղին անդրդրութիւնն ու սպառմութիւնը . ուզեցի որ իմ ժողովուրդս տեսնէ թէ ի՞նչպէս կը պատժէ Մալտար շնացողներն ու մատնիչները . . . :

Ու նայելով իր առքերուն տակ ագեռող Զիւպէյտային .

— Ուրախացի՛ր, ըսաւ, սիրտարիդ հետ պիտի մեռնիս :

Նշան ըրաւ գահիճներուն . անոնք բերին հակայ կոճղ մը, դրին գետին, ու սկսան արել տապարը :

— Շնո՜ր հ Տէ՛ր, գթութի՛ւն . . . կը պոռար արաբուհին, ապաստիելով մահուան այս ահեղ պատրաստութիւններէն . ու տեսնելով իշխանը անողոք, քաշկռտուելու ծունկերուն վրայ դէպի Սէլիմը .

— Անյիշաչար եղի՛ր, կը պաղատիմ, բաւ, ներեցէ՛ք ինծի .

— Զի՛ք թողութիւն պառնիկին, մռնչեց Սէլիմ .

— Օ՜հ գթա՛ . . . :

— Զի՛ք գթութիւն ամբարշտին .

— Մա՜հ պառնիկին . . . մա՜հ մառնիչին գռաց ամբոխը :

Արաբուհին երկու ձեռքերովը երեսը ծածկեց ու սկսաւ գառնապէս լալ . . . :

— Զիւպէյտա՜ . . . հնչեց յանկարծ Ալիի ձայնը :

Ամենքը զարմացմամբ դարձան դէպի դատապարտեալը :

— Զիւպէյտա՛, կրկնեց երիտասարդը, անհուն տխրութեամբ, ատուկի մը պէս կը մեռնիս . . . Ապրիլ Փէրիմի գեղարը չե՛ս գուն :

— Կը վախնա՜մ . . . կը վախնա՜մ . . . մրմնջեց գեղատի կինը . . . :

— Վա՜ռ . . . թքաւ Ալի անոր երեսին . և ծնրադրելով խակոյն, գլուխը դրաւ կոճղին վրայ .

— Օ՜ն, վերջացուցէք, բաւ դահիճներուն :

Ակնթարթի մէջ տապարը իջաւ գոհին վզին :

Արեան հեղեղ մը պռոթկաց կտրուած վիզէն, ու կարմիր ներկեց դահիճներուն ձեռքերը :

Տապարի երկրորդ աւելի ուժգին հարուած մը բաժնեց գլուխը մարմինէն :

Այն առեն դահիճները մօտեցան Զիւպէյտային որը արդէն ինքզինքը կորանցուցեր էր, ու գրեթէ գրկած տարին մինչև կոճղը :

Իր ապուր գլուխը գլորեցաւ Ալլին գլխուն քով :

Դահիճները գազաթի մազերէն բռնեցին երկու գլուխները, ու բարձրացուցին վեր . . . :

— Այսպէ՛ս կը պատժուին ահա՛, գոռաց Մալտարի ահեղ ձայնը, ցեղին թշնամիներն ու ամբարիշտները . . . :

ՊԱՐԿԵՑՏ ԵՂԻՔ

Ս. ՀՈՎՓՍԻՄԵԱՆՑԻ Երջանկաբանութիւններուն

ՏՂԱ՛ՔՍ, երբ կը տեսնեմ ձեր ճակտին վրայ շողացող շուշանային ամբծութիւնը, երբ հիացումով կը դիտեմ ձեր պայծառ աչքերուն խորը փայլող անմեղութեան երկնային ճառագայթը, կ՚ըսեմ ես ինծի՝ «Երջանիկ եմ», ու կ՚ըսեմ Աստուծոյ՝ «Աստուած իմ, պահէ այս հրեշտակները մի՛շտ այսպէս ամբիծ և անարատ . . .» :

Իմ ուրախութիւնս է մի՛շտ նայիլ, երկարօրէն նայիլ, խորապէս նայիլ ձեզի և ամէն օր հաստատել թէ՝ այո՛, այդ նո՛յն ճակատներն են մաքուր ու գեղեցիկ, զորս ոչ մէկ ամպամած խորհուրդ մռայլած է դեռ, այդ նո՛յն աչքերն են բաց ու համարձակ, որոնց ջինջ պայծառութիւնը ո՛չ մէկ ամօթալի զգացում պղտորած է դեռ . . . :

Դուք չէք գիտեր տակաւին գերագանց արժէքը այդ մաքրութեան և ամբծութեան, երջանի՛կ տղաք, և ինչպէ՛ս պիտի կարենայիք գիտնալ, զո՛ւք որ չէ՛ք ճանչնար անմաքրութիւնը, զո՛ւք որ չէ՛ք ըմբռներ աղտոտութիւնը և ձեզի բնական կ՚երևի ու կը հաւատաք որ ամէնքն ալ կ՚ապրին ձեզի պէս, ձեր հրեշտակի կեանքով :

Եվ ոչ, տղա՛ք, ժամանակ պիտի չլայ, և այդ ժամանակը մօտաւոր է, քանի որ մէկ քանի ամիսէն թողած ձեր սիրելի դպրոցը պիտի մտնէք կեանքի մէջ, ուր պիտի տեսնէք թէ՝ կեանքը վարժարանական դրասեղաններու վրայ ապրուած սուրբ կեանքը չէ՛ եղեր միայն, և դպրոցէն դուրս՝ կայ եղեր ուրիշ կեանք մը ալ, որը ոչխա՞ս ձեզի համար օրինակելի ըլլալէ շա՞տ հեռի է, և եթէ դուք ձեր մէջ չի գրտնէք առնական կորով և խիստ առաքինութիւն մաքառելու համար այդ մոլութիւններով լեցուն կեղծ ու թշուառ աշխարհին դէմ, պիտի կրնաք ապթաքիլ . . . :

Եւ այս մտածումը դիս չարաչար կը տանջէ, և սիրտս կը զգայ ձեզի համար ո՛վ իմ սիրելի տղաքս, ու կը տարակուսիմ, խղճի խայթեր կ՚ունենամ, մտածելով թէ՝ արդեօք պէտք եղածին չափ կրցա՞յ ձեր հոգւոյն խորքերուն մէջ քանդակել առաքինութեան ու ճշմարտութեան սկզբունքները թէ՝ բաւականաչափ խօսեցա՞յ աշխարհային ապականութեանց և անմաքրութեանց մասին և անոնց դէմ տիրակալելու միջոցները ձեզի ցոյց տուի՞ . . . :

Կը վախնամ որ այդ վերջին կէտին վրայ շատ չի ծանրացայ պատկերելով ձեր սրբութիւնէն, չուզելով ապտակութիւնը բրուբէն մատնանշել մաքրութեան այնքա՞ն քոմֆիկը, և պղտորել այն ջինջ, լուսաւոր հաւատքը որ ձեր խանգիտա գպրոցականի հաւատքն էր կեանքի մասին, և հիասթափութեան մատնել ձեր երջանիկ պատանեկութիւնը :

Իմ պտիս մէջ բաւականաչափ ուժ չի գտայ ձեր մէջ անդթօրէն մեռցնելու համար կարգ մը պատրանքներ, որոնք պատանեկութեան բանաստեղծութիւնը կը կազմեն և որոնք՝ անոր ոյժը, ուրախութիւնը, և փառքը ըլլալու սահմանուած են :

Եւ ձեզի պատկերացուցի կեանքը այնպէս՝ ինչպէս որ պէտք է ըլլայ, և ոչ այնպէս՝ ինչպէս որ է իր մերկութեան ամբողջ ոգեղութեանը մէջ :

Սխա՞լ ըրի արդեօք :

Ես ուզեցի որ դուք խանգիտալ կեանքը ընէք ձեր կուռքը, ձեր պաշտամունքի առարկան և անոր յաղթանակին համար միայն տրամադրէք ձեր բոլոր ուժերն ու կարողութիւնները :

Շատ բաներ խօսեցանք իրարու հետ, բայց պէտք եղածը խօսեցա՞նք արդեօք : Այս հարցն է ահա որ զիս կը տանջէ

քանի կը տեսնեմ որ օրերը կ՚անցնին և ժամանակը կը մօտենայ յորում պէտք պիտի ըլլայ որ բաժնուինք ի-րարմէ ։

Եւ կը յիշեմ Քրիստոսի սիրելի աշակերտը ծերութենէ դողդոջուն, անկարող ալ ևս երկար խօսելու և սակայն յաճախ կրկնելով իր սիրած ժողովուրդին մէկ խօսք միայն՝ ուր կը խտացնէր տիեզերական բարոյականութեան գլխաւոր սկզբունքը . «Որդեա՛կք իմ, սիրեցէ՛ք զիրար ։»

Ու ես, թերեւս այս վերջին անգամը ըլլալով երբ կը խօսիմ ձեզի, մէկ բան միայն պիտի ըսեմ, ուր ամփոփուած է կենսական կեանքի, այսինքն ձեր ապագայ կեանքին ամբողջ բարոյականը, «Տղա՛քս, պարկեշտ եղէք» ։

Դուք գիտէք որ կը սիրեմ զձեզ այնպէս՝ որպէս թէ ես ծնած ըլլայի զձեզ, և իմ թեւերուս մէջ օրօրած ըլլայի ձեր մանկութիւնը ։

Դուք գիտէք որ իմ ամբողջ կեանքս եղաք հոս, և ուր որ եղայ՝ իմ կեանքս եղան ինձ աշակերտող ձեր հեռաւոր քոյրերը ։

Ձեզնէ դուրս ոչ մէկ զբաղում, ոչ մէկ հոգ, ոչ մէկ ցաւ երբէք կ՚ամպռաւեն ճակատս, ձեզնէ դուրս՝ ոչ մէկ ընկերութիւն, ոչ մէկ զուարճութիւն կրնան երբէք տալ ինծի այն հաճոյքը՝ զոր կը զգամ ձեր մէջ, ձեզմով և ձեզի համար աշխատելով, և կը վախնամ որ այնքա՞ն անձնազոհութեամբ, այնքա՞ն սիրով ու զուրգուրանքով իմ թեւերուս մէջ մեծցուցած սիրուն գառնուկներուս լուսափայլ ապագութիւնը չըլլայ թէ ճանապարհի ցեխերը արատաւորեն ։

Կ՚ուզեմ որ ձեր անունը, ձեր համբաւը ըլլայ անարատ՝ ինչպէս սա լեռներուն վրայ երեւցող անարատ ձիւնը ։

Աղջկան մը համբաւը կը նմանի այն հրաշալի մանիշակին որը թարմ ու մշտաբոյր է ցորչափ հոտուելու համար շատ չենք մօտեցներ մեր քթին, ու եթէ ուզենք մօտէն հոտուել, թերթիկները կը սեւնան, և անիկայ թառամած կը կախէ վար իր լուսաթոյր գլուխը ։

Այսպէս է, սիրելիներ, ձեր միակ ճշմարիտ զարդը, ձեր միակ իրական փառքը ձեր պարկեշտ և անարատ անունը պիտի ըլլայ ։

Այդ գիտակցութիւնը դուք ունիք, և ասոր համար պատրաստուեցաք, սակայն չգիտեմ թէ՝ ի՞նչ միջավայրերու մէջ

պիտի ապրիք ու գործէք և միջավայրը յաճախ կը փոխէ նկարագրով ամենէն տկուն մարդիկն իսկ, ապահո՞ւ . . . իսկ դուք, դեռ այդքան մատաղ, ի՞նչ պիտի ըլլաք . . . :

Բայց մտիկ ըրէ՛ք ինծի, մտի՛կ ըրէք տղաքս, զիս ճերմակ մազերով չի տեսաք, և այդ իրաւունքովը չէ՛ որ պիտի խօսիմ ձեզի, բայց ինչ փոյթ, ես շա՜տ ապրած եմ, տարիներէ ասելի փորձառական կեանքով, ժողովուրդի ամէն խաւերու հետ մօտէն շփումով նկարագիրներու ուսումնասիրութեամբ :

Կրնամ ըսել թէ՝ կը ճանչնամ աշխարհը, կը ճանչնամ մարդը իր ամէն տկարութիւններուն և ամէն պզտիկութիւններուն մէջ, մտիկ ըրէ՛ք ինծի :

Ես տեսայ նորատի տղէկներ, ձեզի պէս պարկեշտ ու սիրուն :

Անոնք ասեն մը քալեցին պարկեշտութեան ու պարտականութեան ճամբուն վրայէն քաջալերեալ և ապնուօրէն :

Օրին մէկը տեսան իրենց կողքին ուրիշներ, լպիրշ, գարշելի էակներ որ լկտի գնացքով մը կը քալէին իրենց քովն ի վեր :

Անոնք զլուանօք մէկ կողմ դարձուցին իրենց երեսները . . . բայց տեսա՞ն . . . զարմանքով, ապշութեամբ, խորունկ ցաւով տեսան շատեր, նոյն իսկ անոնցմէ՝ որոց մասին ունէին ամենէն խորունկ յարգանքը և ամենէն հիացիկ պաշտամունքը որ փոխանակ իրենց արդար արհամարհանքը և անարգանքը թքնելու այդ ինկած արարածներու երեսին, ընդհակառակը յարգանքի ցոյցերով քաջալերեցին զանոնք անառակութեան ճամբուն մէջ անպատկառօրէն անցնելով առաքինութեան քովէն . . . :

Եւ գայթակղեցան և յուսահատեցան այդ տղջիկներէն ոմանք . «Ա՞յս է, ըսին, առաքինութիւնը, ո՞ւր է յարգանքը՝ որուն իրաւունքը ունէինք մենք, որո՞նց գնաց անիկայ . . . ուրեմն սո՞ւտ է մեզ խաբեցին, առաքինութիւն չկայ, անիկայ պատրանք մը, բառ մըն է լոկ . . . : »

Եւ չիտակ ճամբէն չեղեցան, իսկ անոնք որ հաստատ մնացին իրենց սկզբունքներուն վրայ, ըսին իրենց մտերիմ քոյրերուն :

«Կեցէ՛ք, մի՛ երթաք, վաղը յաղթանակը մերը պիտի ըլլայ : »

Անոնք չի լսեցին, ու կորուսեցան կեանքի ծուռ ու մուռ ճամբաներուն մէջ։

Իսկ մնացողները շարունակեցին քալել շիտակ ճամբան ժպտուն և հանգարտ ապրելով կեանք մը սուրբ և օրինակելի։

Ու եղաւ որ լպիրշ էակներու եռուէն գացող թշուառանքը յոտից ցգլուխ տիղմերու մէջ թաթխուած եկան օր մը յոգնած և յուսաբեկ և ինկան անոնց ոտքերուն, կաթիլ մը ջուր խնդրելով իրենց զզուանքէ չորցած շրթունքներուն, և ճշմարիտ անկեղծ ու սուրբ սիրոյ ծարաւէն տանջուող իրենց սիրտերուն համար . . .։

Եւ այն ատեն շիտակ ճամբուն վրայ քալողները տեսան թէ՝ առաքինութիւնը այն զովարար ջուրն է եղեր, որուն պիտի դիմեն ամենէն ինկած մարդը, և ուշ կամ կանուխ պիտի մօտենայ անոր զովանալու, մաքրուելու ու փրկուելու համար։

Այսպէս և դուք, տղաքս, դուք ալ ամեն օր ձեր կողքին պիտի տեսնէք լպիրշ ու զզուելի էակներ, որոնցմէ պիտի ամչնաք, որոց շարժուձեւերը, ապրելակերպը պիտի գայթակղեցնէ ձեր փափուկ հոգին. հեռո՛ւ տարեցէք, անոնք մարդկային ընկերութեան կանկրէններն են, իսկ դուք պիտի ըլլաք զովարար և առողջացնող բալասանը։

Մի՛ յուսահատիք անոնց երեւութական յաղթանակը տեսնելով։

Համոզուեցէ՛ք թէ մարդիկ ինչքան ալ ինկած ըլլան, իրենց սրտին խորը նոյն իսկ անգիտակցաբար կը պահեն խորունկ ու երկիւղած յարգանք մը պարկեշտութեան համար, ու եթէ ուզեն օր մը իրենց կեանքին ընկեր մը ընտրել, իրենց զաւակներուն մայր մը տալ, պիտի փնտռեն միշտ և. ամե՛ն տեղ պարկեշտ ու առաքինի աղջիկը։

Հեռո՛ւ կեցէք անպարկեշտ ընկերութիւններէ, ընտրեցէ՛ք ձեր բարեկամները, քիչ ու լա՛ւ բարեկամներ ունեցէք։

Ձեր սիրտը մի՛ մսխէք անդին ասդին անարժան տեղեր, և անարժան անձերու նուիրելով այդ անգին գանձը։

Նախանձոտ գուրգուրանքով պահպանեցէք զայն մինչև այն օրը՝ յորում պիտի կրնաք հանդիպիլ անոր արժէքը լաւ գնահատողի մը։

Ու երբ ձեր երիտասարդութիւնը անցնի, ու ծերութիւնը գայ ձերմակ մազերու լուսապակը բոլորելու ձեր ճակտին շուրջը, դիտեցէք զձեզ հայելիին մէջ, և դիտեցէ՛ք նաև անոնք որոնք անպարկեշտ աղջիկներ, անպարկեշտ կիներ, և անպարկեշտ մայրեր եղան։

Եւ պիտի տեսնէք ձեր դէմքը զուարթ, պարկեշտութեան ճառագայթներովը լուսափայլ, և անոնց դէմքը տխո՞ւր՝ մահուան պէս, և յուսահա՞տ դժոխքի պէս։

Այն ատեն պիտի ճանչնաք առաքինութեան և պարկեշտութեան գերազանց արժէքը և պիտի ըսէք. «Արդարև յաղթանակը մերը եղաւ»։

ԷՋ ՄԸ ԱՊԱԳԱՅ ՀԱՅ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

ԻՑՆՈՂ ԳԱՆՁԵՐՈՒՆ

Յո՛վ դուք, հայրենի երկրին լեռներուն կողքին ինկած նահատակ քաջեր, դո՛ւք ինքնապաշտպանութեան համար զէն ի ձեռին կռուող մատաղ առիւծներ, դո՛ւք ցեղին պաւոյն ու փրկութեանը համար մեռնող կարիճ զաւակներ, մտիկ ըրէ՛ք թէ՝ ի՞նչ կ՚ըսէ ձեզի համար ապագայ պատմութիւնը, մտիկ ըրէ՛ք, և թո՛ղ ձեր ոսկորները խաչտան ձեր անցեալ գերեզմաններուն մէջ . . . :

*
* *

Ու եղան օրեր, գազանութեան վայրագութեան ապրապիսի՜ օրեր, ուր անլուր ոճիրներ գործուեցան Քրիստոնեայ զօրաւոր ազգերուն աչքերուն առջև :

Կաթընկեր մանուկներ ճըճըալէն մարթուեցան, հերարձակ կոյսեր քաշկռտուելով տարուեցան լեռներն ի վար, ամուսիններ ու հայրեր կտոր կտոր ջարդուեցան, երիտասարդներ ու ծերեր խորովուեցան մարմոր կրակի վրայ . . . Օ՜ քանիներ տեսարաններ, ապրատիելի՜ բաներ տեղի ունեցան այդ օրերուն մէջ, Քրիստոնեայ զօրաւոր ազգերուն աչքերուն առջև :

Պատկառելի եկեղեցական ծերունի հայրեր իրենց ճերմակ մազերը փռեցին անոնց ուքերուն տակ. պաղատեցա՜ն, լացի՜ն, գթութի՜ւն աղերսելով։

Անոնք արհամարհեցին այդ պաղատանքները, ծաղրեցին արցունքները ու կոխոտեցին ճերմակ մազերը։

Երիտասարդ ուսումնականներ իրաւունքի և արդարութեան ձայնը բարձրացուցին ստորագրուած խոսումներուն գործադրութիւնը պահանջելով։

Ուսերնին թօթուեցին անոնք, ու երեսնին մէկ կողմ դարձուցին։

Կիներ... երկչոտ կիներ իսկ համարձակեցան դիմել անոնց ազաչելով. «Ահա՛ կը մեռնինք մենք ամենքս ալ, օգնեցէ՛ք Քրիստոսանո՛ւր, օ՜հ օգնեցէք...»։

Դիւային ժպիտով մը խնդացին անոնք թշուառուհիներուն երեսին և կատակելով ու անոնց ուսերը մտրմօրէն ծեծելով.

— «Մի՛ վախնաք, ըսին, դուք չէ՛ք հասնիր»։

— Անիծեա՜լ ըլլաք, պօռացին կիները, այս շնական հեղնութեան դէմ զայրոյթէ խելքաց, անիծեա՜լ ըլլաք յաւիտեան, թո՛ղ մեր ու մեր զաւակներուն արիւնը ձեր վիզը ըլլայ...։

*
* *

Նահատա՜կ կարիճներ, մտիկ ըրէ՛ք թէ ի՞նչ կ՚ըսէ ապագայ պատմութիւնը ձեզ համար, մտիկ ըրէ՛ք, և թող ձեր ոսկորները խոյսան ձեր անցեալ գերեզմաններուն մէջ։

*
* *

Արեան ձայնը արձագանգ գտաւ ամբոյն ցեղին արի զաւակներուն սրտին մէջ, և խումբ խումբ կարիճ տղաքներ գինուեցան, ո՛րը բահով, ո՛րը կացինով, ո՛րը թուրով և ո՛րն ալ հրացանով։

Շատ սև ու կապոյտ աչքեր լացին այն օրը, շա՜տ սուր հառաչներ ու ցաւագին պաղատանքներ բարձրացան մինչև երկինք և արիւնեցին այդ երիտասարդ սրտերը. բայց անո՛նք միշտ զօրաւոր ու վէս, քակեցին իրենց վիզը շրջա-

պատող շուշան թեւերը, երեսին գարձուցին չի տեսնելու համար լայող սև ու կապոյտ աչքերը, և վազեցին տառապանքի երկիրը . . . :

Իրենց աչքերուն տակ կը փռուէր աւերակ անհունութիւն մը տեղ տեղ արեան լիճերով կարմրցած, և ամեն կողմ անտէր դիակներ որ ճամբաներուն երկայնքը կը փռէին, և անգղներ ու ագռաւներ, որոնք իրարմէ կը յափշտակէին մարդկային սիրտեր, թոքեր, լեարդներ, աղիքներ. . . :

Սարսռացին կարիճները, և այս արիւնի ու մահուան տեսարանին առջև բարբարոսներու և մարդասպաններու կատարած վայրենի խրախճանքը տեսնելով ապշուական ու տարտափելի բարկութեամբ մը վառուեցան, ու շալկած իրենց բահերը, կացիններն, թուրերն ու հրացանները անհնարին կատաղութեամբ նետուեցան անոնց վոհմակներուն մէջ, զարկի՛ն հա՛ զարկին . . . :

Հազարաւոր գանկեր ջարդ ու կտոր փշրեցին, սիրտեր ու թոքեր վայրագօրէն պիղծ կուրծքերէ դուրս քաշեցին, փորեր պատռեցին, աղիքներ դուրս թափեցին և զանոնք նետուելով ճամբաներուն երկայնքը ինկած ողորմելի դիակներուն .

— Ահա՛, ըսին, ահա՛ արենակից եղբայրներ, աչքի տեղ աչք՝ և ակռայի տեղ ակռայ . հանգի՞ստ ձեր ստուերներուն...:

*
* *

Նահատա՜կ տուիծներ, մի՛կ ըրէք թէ ի՞նչ կ՚ըսէ դեռ ապագայ պատմութիւնը ձեզ համար, մի՛կ ըրէք, և թող ձեր ոսկորները խայտան ձեր անյայտ գերեզմաններուն մէջ . . . :

*
* *

Եւ ան տղաքները իրենց թափած վրէժի արեան մէջ յոտից ցգլուխ թաթխուած, կատ կարմիր և չարագուշակօրէն պեղեցիկ յառաջ անցան, քալեցին, քալեցի՜ն երկար ճամբայ մը քալեցին . . . :

Այդ ճամբաներուն վրայ հանդիպեցան երբեմն շէն քաղաքներու, որոնք հիմա կը հեծէին փլատակներու տակ, և գիւղերու՝ որոնք կը մխային բոցերու մէջ, տեսան փողոց-

ներու վրայ մանուկներ ինկած, անմե՛ղ, հրեշտակային դէմ-քեր արիւնլուայ, բաց, սարսափահար աչքեր, որոնք կարծես դեռ եւս գթութի՛ւն կ՚աղերսեն, երբեմն ալ խոժոռ նայ-ուածքներ պինդ գամուած իրենց աչքերուն, կարծես թա-փուած արեան վրէժը կտակելով. ցաւէ պրկուած շրթունք-ներ, կիսաբաց բերաններ իրենց կրած տանջանքները դեռ եւս պոռալով . . . : Օ՜ սարսափելի բաներ տեսան, և ան-դին՝ բարբարոսներու խուժանը որ նոր կոզոպուտներով կը յղփանար և ծակ ու ծուկ ինկած նոր զոհեր կը փնտռէր . . . :

Նեռուեցան առաջ այդ կարիճները, պատռեցին խուժա-նը, վերցուցին իրենց բահերը, բարձրացուցին իրենց կա-ցիններրը, պինդ սեղմեցին իրենց թուրերուն ու հրացանե-րուն բունները և զարկին հա՛ զարկին, իրենց շուրջը պիղծ դիակներու կոյտեր բարձրացան :

— Եկէ՛ք պոռացին անոնք անասելի զուարճութեամբ, եկէ՛ք անգղեր, ագռաւնե՛ր, գիշակեր թռչուններ, ամենքդ ալ եկէ՛ք, երամներով եկէ՛ք, ահա՛ ձեզի համար շատ ճոխ, շա՛տ պարարտ, շա՛տ ազուր խնճոյք մը պատրաստեցինք . . . :

Եւ ոտքով հրմշակելով դիակները ճամբուն մէջտեղը, թող-ուցին բաց երկինքին տակ. և իրենք ինկան դեռին ծունկի վրայ, զրկեցին իրենց կորովի բազուկներուն մէջ խոշ-խոշուած մանուկները, կոյսերն ու պատանիները, ծերերն ու երիտասարդները, համբուրեցին գորովանօք ու երկիւ-ղածութեամբ անոնց մարած աչքերը.

— Ձեզի չե՛նք թողուր, ըսին, չե՛նք թողուր որ այս գարշելի դիակներուն քով երկննաք, և թռչունները ուտեն ձեր սուրբ մարմիններրը, ձեզի պիտի պահենք շա՜տ խորունկ հայրենի հողին տակ, մեր թանկագի՜ն զոհեր . . . :

Եւ իրենց այնպէս թուեցաւ որ այդ մարած աչքերը կը փայլէին և պրկուած բերաններրը կը ժպտէին :

* * *

Նահատա՜կ քաջեր, մո՛ռ ըլլ.ք դեռ ի՞նչ կ՚ըսէ ապագայ պատմութիւնը ձեզի համար, մո՛ռ ըլլ.ք, և ձեր ոսկորները թո՛ղ խաղան ձեր անցեալ գերեզմաններուն մէջ :

* * *

Եւ իրիկուն մը այն ոգաքները ինկան քաջերու մահովը հայրենի լեռներու կշռին։

Արեւը ժպտունեցաւ ու կամաց կամաց քաշուեցաւ ամպերու ետին, անպզերը չի մօտեցան անոնց և ո՛չ ալ ագռաւները. հակայ արծիւներ իջան երկինքէն և իրենց թեւերը անոնց մարմիններուն վրայ տարածած, հակեցին մինչև առաւօտ։

Եւ ընկերները փնտռելէն յոգնած, ա՛լ չէին գիտեր ո՛ր կողմը դարձնել իրենց տարտամ քայլերը. յանկարծ զգացին անոնք խունկի ու զմուռսի սրբազան անուշահոտութիւն մը որ իրենց շուրջը կը ծաւալէր զարմանալի քնքշութեամբ։

Անոնք ապշած նայեցան իրենց չորս կողմը. ո՛չ տաճար կար, ո՛չ մատուռ, ո՛չ վանք և ո՛չ ճգնարան։

Ահա՛ նշմարեցին հեռուն թեւաբաց հակայ արծիւները անշարժ արձաններու պէս։

Իրենց քայլերը երագեցին, ու գտան վերջապէս նահատակ քաջերը տարածուած գետնին վրայ լուսափայլ ու ծիծաղկոտ . . .։

Ծունկի վրայ ինկան ձեռնամած, և ահա՛ արծիւները իրենց թեւերը բացելով ծանր ծանր հեռացան ու անհետացան երկնքի բարձրութիւններուն վրայ . . .։

Ընկերները զանոնք պատեցին համբոյրներու և արցունքներու մէջ ու թաղեցին հոն, հայրենի հողին տակ։

Հանգի՜ստ ձեր ոսկորներուն, հայրենիքի թանկագի՜ն զաւակներ, թո՛ղ յաւիտեա՜ն օրհնուի, յաւիտեա՜ն ապրի ձեր պաշտելի յիշատակը։

*
* *

Ո՜վ դուք հայրենի երկրին լեռներուն կողքին ինկած նահատա՜կ քաջեր, դո՛ւք ինքնապաշտպանութեան համար զէն ի ձեռին կռուող մատա՜ղ տղաներ, դո՛ւք ցեղին պատուոյն ու փրկութեանը համար մեռնող կարիճ զաւակներ, մարի՛կ ըրէք թէ ի՞նչ լաւ ապագայ պատմութիւնը ձեզ համար. մարի՛կ ըրէք, և թո՛ղ ձեր ոսկորները խայտան ձեր անցեալ գերեզմաններուն մէջ . . .։

ՔԱՆԴՈՒԱԾ ՕՃԱԽՆԵՐ

Սա քանդուած օճախները հեռուն տեղ տեղ կը մխան,
Մեր քանդուած արտերուն պէս, որոնք ախոռս դեռ կ'ապրին,
Իրենց յոսին ու սէրերուն խոյանքին մէջ բարձրաթռիչ
Թռչնաթափ օր մ' ինկան յանկարծ գետնին վրայ ջախջախուած,
Ակիւններու մէջ բարախուն, մեռնիլ սակայն չեն կրնար . . . ։
Սա քանդուած օճախները, ամ աւելի երջանիկ,
Որ զէթ իրենց փլատակաց տակ կը թաղեն կեանքն ողջոյն .
Մեր քանդուած արտերն ախոռս, անոնք մեռնիլ չեն կրնար . . . ։

*
* *

Անհետացած կեանքերու շուրջն ինչ ահաւոր լռութիւն . . .
Դեռ երէկուան ցնծուն բաղաքն հսկայական գամբարան .
Խոր գիշերին մէջ միմիայն բուին վայիւն չարագոյժ
Երիտասարդ հսկաներու հոգեվարքը կ'աւաղէ . . . ։
Սա քանդուած օճախներուն սեւ քարերը բրգացած,
Ճամբաներու երկայնքն ի վար շրջած պատեր կիսաւուլ,
Մեզ կը պատմեն ինչ եռուզեռ կեանք մը կ'ապրէր իրենց մէջ,
Կարմիր օրեր, խաղ ու ծիծաղ օտար չէին հոդ բնաւ,
Չուխտ օրրաններ զուարթօրէն կը ճօճուէին պատն ի վար,
Ապագայի նոր խորհուրդներ փնտռան հարսին ականջին
Սիրագորով կը մրմնջէր, ու երկուքն ալ խանդաղատ
Պերճ ու փայլուն նոր օրերու կը սպասէին ակնդէտ .
Ճերմակ մազերն ուսին փռած նահապետը ծերունի
Աղօթելով եւ օրհնելով շէն օճախին կը ժպտէր ։

Օ՛ պատկերը սարսափելի օձախներուն քանդուած . . .
Ի՞նչ անհաւոր անյուսութիւն արդ կը պատէ մեր հոգին
Ի տես ամեն այս քայքայուած, անվերադարձ բաներուն . . . ։

*
* *

Կ՚անցնին օրեր ու տարիներ այս քանդումին վրայէն,
Կեանքն աղէտքին միշտ կը յաղթէ, կը մոռցուի ամէն բան,
Ու կը տեսնենք որ նորերը կուգան կանգնիլ հինին տեղ,
Կեանքով զեղուն նոր բունիկներ հինին վրայ կը շինուին,
Երիտասարդ, շքեղ հարսներ գրկերնուն մէջ ջուխտ մանկունք,
Իրենց հարուստ կուրծքերուն դէմ՝ հպարտօրէն կը սեղմեն .
Աղէտքին դէմ կը ծառանան, ոչնչացումն կը ծաղրեն,
Ցամառօրէն պահպանելով ցեղին սէրը թանկագին
Իրենց արգանդն արգասաւոր դեռ շատ կեանքեր պիտ՚ երկնեն .
Հայրենիքը կը վերածնի՝ այդ կեանքերով նորաբոյս .
Անյուսութիւնն ոնտակոխած նոր նոր յոյսեր յաղթական
Մռայլ ճակատն Հայրենիքին վառ վարդերով կը պճնեն ։
Եւ քանդուած օճախները վերականգնած խնդալից,
Երջանկաբեր ապագայի մ՚ արշալոյսին կը ժպտին ։

*
* *

Իսկ քանդուած տներն ափսո՛ւ, կը մնան միշտ քանդուած,
Իրենց յոյսին ու Սէրերուն փլատակին տակ թաղուած ։

ԵՐԿՈՒ ՍԷՐ

Ա.

ԿԵԱՆՔԻ ՍԷՐԸ

ԱՊԵՐ հոգւոյն խորը երկու սէր կայ թաղնուած, կեանքի Սէրը և Եսի Սէրը։

Անոնք այնքան խորունկ արմատ բռնած են մեր ներսիդին որ մինչև մահ մեր հետը կ՚ապրին և մեզի հետ գերեզման կը մտնեն, մինչդեռ միւս Սէրերը ժամանակի ընթացքին դէմ թոյլ ու տկար՝ կա՛մ բռնօրէն արմատախիլ կ՚ըլլան, կա՛մ կը մեռցնեն և կա՛մ կը մեռնին։

Նկարագրով տկար, հասարակ մարդոց քով, այս Սէրերը շատ հզօր են, այնքա՜ն հզօր որ միւս բոլոր զգացումներուն վրայ տիրաբար և միահեծան կ՚իշխեն, ո՛չ մէկ զոհողութեան ընդունակ կ՚ըլլան, ո՛չ մէկ նուիրական բան կը ճանչնան, ո՛չ պարտականութիւն, ո՛չ օրէնք և ո՛չ իրաւունք։

Կեանքի Սէրը բնազդական է մեր մէջ. ո՛չ ոք կ՚ուզէ մեռնիլ ըլլա՛յ ծեր, հիւանդկախ, դժբաղդ, անօթի։

Եսի Սէրը նոյնպէս բնազդական է, բայց ոչ առաջինին չափ զօրաւոր և տարամերժ, քանի որ Եսը զոհաբերողներ բաւական թեւով զոյութիւն ունին պաշտելի էակի մը սի-

ոյն կամ ո՛և է նպատակի մը յաղթանակին համար. մինչ-դեռ գիտակցաբար կեանքը զոհաբերող մարդիկ մատներու վրայ կը համրուին։

Պէ՞տք է որ այս երկու Սիրերը զարգացնենք ու զօրացնենք մեր մէջ, կամ պէ՞տք է որ խեղդենք զանոնք դեռ իրենց սաղմին մէջ։

Այս հարցին պատասխանելէ առաջ, նախ պէտք է բացատրենք մենք մեզի թէ՝ ի՞նչ է կեանքը, ինչո՞ւ համար գոյութիւն ունի ան, և ի՞նչ է անոր նպատակը։

Բանաստեղծը կը դաւանի կեանքը իբրև արտասուց հովիտ մը, ուր մարդ գիպուածին մէկ անգութ խաղովը կ՝իյնայ լալու, ցաւելու և տառապելու համար միայն։

Դուրեան աշխարհը և կեանքը կ՝ընդունի իբրև Աստուծոյ մէկ ծաղրը։

Շնական փիլիսոփայութիւնը կեանքը կ՝ընդունի իբրև «կի՛ր, տ՛ուր և ուրախ լի՛ր»ի վարանցուկ շրջան մը՝ ուր կարելի եղածին չափ անուշը պէտք է ընդունիլ և լեղին մերժել։

Յառաջդիմական խորհողները, ինչպէս Շօպէնհաուէր, Տէմիրճիպաշեան, կ՝ընդունին կեանքը իբրև բացարձակօրէն անիմաստ մէկ վիճակը քաղին, որուն վրայ կը թարգմանէ Նիրվանան։

Քրիստոնէութիւնը կ՝ընդունի զայն իբրև մաքրագործումի և արքութեան փորձաքար մը, որմէ ետքի և յաղթական դուրս եկողը պիտի ժառանգէ յաւիտենական կեանքը։

Կեանքի նպատակը ատիպն, լաւ տեսողին համար, աքանչելիօրէն պարզ է, և անհունապէս վսեմ իր այդ պարզութեան մէջ։

Կեանքի նպատակն է՝ կատարելագործումը մարդ էակին մտաւոր, հոգեկան ու բարոյական կարողութիւններուն, և կեանքը միմիայն ատոր պիտի ձգտի։

Արարիչը իր անհուն իմաստութեամբ կեանքը արթնցուց տիեզերքին վրայ, որպէսզի անիկայ ծառայէ ճշմարիտին ու վսեմին յաղթանակին։

Բնութեան մէջ տիեզերքը իր սկզբնական անորոշ դիմակէն լաւագոյն ու կատարեալ վիճակի մը վերածուելու համար հազարաւոր տարիներու աշխատութիւնը քրտնեցաւ։

Կենդանականութիւնն ու բուսականութիւնը, սկիզբէն ճըզճիմ ու տկար, անհամար տարիներու ընթացքին մէջ փոխե-

ցին իրենց ձևերն ու կազմութիւնները և հետզհետէ զօրացան ու զեղեցկացան։

Արդ, երբ բնութեան մէջ կը տեսնենք դէպի լաւագոյնը, դէպի կատարեալը ձգտելու ոգին, ինչո՞ւ մարդ-արարածը, բնութեան ստեղծագործութեանց մէջ է՛ն կարողն ու մտացին, որ ֆիզիքական ու նիւթական կեանքէն դուրս, բարոյական կեանք մըն ալ կ՝ապրի և կոչուած է այդ նո՛յն բարոյական կեանքին ծառայեցնելու իր ֆիզիքական կեանքը, իր մէջ չի կրէ ա՛յդ նոյն ոգին, և լաւագոյն բարոյական կեանք մը ստեղծելու համար չի գործածէ իր ուժերն ու կարողութիւնները։

Չէ՞ որ ահա կապ մը կայ ֆիզիքական ու բարոյական կեանքի մէջ, ու եթէ ֆիզիքականը դէպի կատարեալը կը ձգտի մտածող, խօսող և զգացող էակին, այսինքն մարդուն մէջ, ինչո՞ւ բարոյականն ալ չի ձգտի դէպի կատարեալը։

Ու եթէ ան ուզէր իսկ մնալ իր նախնական-անասնական կեանքին մէջ, պիտի կարենա՞ր, քանի որ բնութեան անդիմադրելի օրէնքներուն, որոնց ենթակայ է ամենուն պէս ինքն ալ, անոր մղիչ ոգւոյն հետ մտքի լոյսը կը ծագէր, գիտակցութեան ուժը կ՝արթննար իր ուղեղին մէջ և զայն կը մղէր յառաջ, միշտ յառաջ անդիմադրելի ուժգնութեամբ։

Կանուխէն ուրեմն ըմբռնելով կեանքի գերագոյն ու սուրբ նպատակը, մենք կեանքը պիտի գործածենք անվերապահօրէն անոր փառաւոր յաղթանակին, ինչպէս կը գործածենք մեր միտքը, մեր ուժը, մեր կորովը մեր առօրեայ գործերուն յաջողութեանը համար։

Կեանքի Սէրը, ապրելու տենչանքը արդարացի է, բնական և օրինաւոր, սակայն եթէ հարկը պահանջէ՝ մարդ պիտի գիտնայ տալ զայն գիտակցաբար, և ոչ թէ պարապանելու կամ դէպքերու ազդեցութեան տակ գերազրգռուելով...։

Պիտի գիտնայ մեռնիլ և ապրիլ՝ կեանքի գիտակցութիւնը լիովին ըմբռնած ըլլալէ կախումն ունի. և որքան կանուխէն ու շիտակ ըմբռնենք այդ գիտակցութիւնը, այնքան քիչ պիտի վախնանք մահուանէ և մահը այլեւս պիտի դադրի մեզի սարսափ ու սոսկում պատճառելէ։

Պահպանել կեանքը, տարամերժ սիրով մը գուրգուրալ անոր վրայ, երբ մեր բարոյական կատարելագործման յաղ-

թանակը անոր զոհաբերությունը կը պահանջէ, ասի՛ վաստութիւն է պարզապէս :

Դժբաղդաբար շատ ցանցառ, բայց և այնպէս սքանչելի օրինակները ունինք մեր աչքին առջև կեանքի նշանակութիւնը ըմբռնողներու . . . :

Գիտենք գիտութեան մարդիկ, բժիշկներ, որոնք իրենց կեանքը տուած են որպէս զի գիտութիւնը ապրի, և գիտութեամբ մարդկութիւնը բաղդաւորուի :

Իրենց անձին վրայ կատարած են տակալի փորձեր . թոքախտի միքրոպներ ներարկած են իրենց արեան մէջ, էլէքտրական ցնցումներու ենթարկած են իրենց մարմինը, որպէս զի մարդկութիւնը չարչարող զանազան հիւանդութեանց գաղտնիքներուն թափանցեն, և մարդկային կեանքը փրկեն :

Գիտենք անվեհեր մարդիկ, որոնք ծովուն կամ կրակին մէջ նետուած են քաջաբար մարդկային կեանք մը փրկելու համար զարձեալ . . . :

Գիտենք ազնուական ազգաքներ, որոնք հուրին ու սուրին բերանը կեցած են անվախ, որպէս զի հայրենիքը ապրի . . . :

Սոկրատ կամովին մահը գրկեց իր սկզբունքներուն յաղթանակին համար :

Ցալ կեանքը, ամեն զեղեցիկ ու նուիրական բաներու համար, տա՛լ հայրենիքին, տա՛լ եղբօրը, տա՛լ պատուոյն, տա՛լ սկզբունքին, տա՛լ գաղափարին, տա՛լ գիտութեան, կը նշանակէ յաւիտենապէս ապրեցնել հայրենիքը, պատիւը, սկզբունքը, գաղափարը, գիտութիւնը և այսպէս՝ մահկանացու կեանքը անմահացնել, մշանջենաւորել, յաւէրժացնել պաշտելի զգացումներու համար մղուած պայքարին և տարուած յաղթանակին մէջ . . . :

Ուրեմն կեանքի իրական նշանակութեանը և իրական արժէքին մասին, ա՛յս գիտակցութիւնը պէտք է ներշնչենք մեր զաւակներուն, մեր մատաղ սերունդներուն, երբ անոնք դեռ եւս անգիտակից իրենց աչքերը խաչով և զարմացկոտ կը բանան առաջին անգամ կեանքին և տեսնելը, ծաղիկը ու թռչունը կը տեսնեն դեռ միայն . . . :

Ը.

„ԵՍ„Ի ՍԷՐԸ

ԱՅԵԱՆԸԸ եղած է որպէս զի Գաղափարը ապրի, մտքի և հոգիի կատարելագործումը հասնի իր բարձրագոյն աստիճանին. ուրեմն կեանքը ուրիշ բան չէ՛ բայց եթէ միջոց մը, գործիք մը մեր ձեռքին տակ, որուն յաջող և խելացի գործածութիւնը մեզի պիտի մօտեցնէ Արարչին՝ հոգեկան բնութեան տեսակէտով։

Ս. Գիրքը կ՚ըսէ. «Աստուած մարդը ստեղծեց իր պատկերին նման», ուրեմն եթէ պատկերով կը նմանինք Արարչին, պէտք է որ մեր հոգին ալ համաչափ լինի աստուածային պատկերին։

Մտաւոր և հոգեկան կատարելագործման թշնամին Եսի սէրն է, և եթէ կայ պայքար մը կեանքի մէջ որ է՛ն ցաւատանջն ու դժուարինն ըլլայ, այդ՝ Եսին դէմ մեր մղելիք պայքարն է։

Եսի սէրը զարհուրելի բռնաւոր մը՝ն է, և քիչեր համեմատաբար կրցած են անոր լուծէն ազատագրուիլ։

Եսի սէրը կը հրամայէ, կը պահանջէ, կը ստիպէ, և մարդը խոնարհաբար գլուխը կը ծռէ անոր հրամաններուն տակ։

Ինչքա՜ն զժբաղդ գերի մըն է սակայն մարդը այդ լուծին տակ, լուծ մը՝ զոր ինքն իր ձեռքով դրեր է վզին և որմէ չի կրնար ըմբոստացումի բուռն խոյանքով մը մէկ անգամէն ազատիլ, պրծիլ։

Երանի՛ անոր որ կրցած է ջախջախել այդ բռնակալ տիրոջ իշխանութիւնը. իրապէս և բացարձակապէս ազատ է անիկա և կարող՝ իր ճակատագիրը վարելու։ Եւէն անկախ, և ընդունակ՝ ազնուական ժէսթերու, վասնզի Եաը կը կաշկանդէ մարդը իր մտածելակերպին և գործելակերպին մէջ. և կ՚արգիլէ արտէն բղխած վեհանձն զգացումները գործնական հողի վրայ դնելու, եթէ առանց իրագործումը իր հաշիւներուն պիտի չի յարմարի . . . ։

Ի՞նչ պէտք է ընել այս սոսկալի բռնաւորին դէմ, ի՞նչպէս յաղթել անոր . . . ։

Եթէ ազգերու մղած պատերազմներուն մէջ ամբակուռ պարիսպները, հրացանները, թնդանօթները դեր մը կը խաղան յաղթութեան ի նպաստ, Եսին դէմ մղուելիք պայքարէն յաղթական դուրս գալու միակ միջոցն ալ է կամքի ուժով զինուիլ, և շարունակաբար տեսակ մը վարժութիւն ընել անոր գլուխը ճզմելու։

Մարդս պարտական է շարունակաբար մինչև իր կեանքի վախճանը իր բնաւորութիւնը կրթել, տաշել անոր անհարթ երեսները, զօրացնել անոր տկար կողմերը և ապա՝ վարժութեամբ միայն ձեռք կը բերուի։

Եւ որովհետև մարդկութեան ամենէն տկար կողմն է իր Եսին համար ունեցած տարապայման պաշտումը, ատոր դէմ մարդը պարտական է զինուիլ կամքի գերագոյն ուժով մը, և ջախջախել, փշրել անոր տիրապետութիւնը։

Առաջին անգամ սոսկալի կերպիւ պիտի տառապի գուցէ, վասնզի դիւրին չէ՛ իր միսին, իր արիւնին մէջ արմատ բռնած այդ ամենահզօր ախոյեանին հետ կռուիլը . . . երկրորդ անգամ քիչ մի աւելի նուազ, երրորդ, չորրորդ անգամներուն ա՛լ աւելի նուազ, և պիտի տեսնենք որ հետզհետէ վարժութեամբ ալ հետքն իսկ չպիտի մնայ տառապանքին և շատ բնական բան մը պիտի երեւի այն՝ ինչ որ անհանդուրժելի, սոսկալի տանջանք կ՚երեւէր առեն մը։

Եսին բռնակալ սէրէն ազատագրուող մարդը կը վայելէ այնպիսի բարձր և գերազանց հաճոյք մը, քան ինչ որ պիտի

չմանչնար բնաւ անոր տարած յաղթանակներուն վայելքին մէջ. այդ յաղթանակները շատ հատարակ, շա՞տ կոպիտ հաճոյքներ միայն կրնան տալ, մինչ առաջինը իր մէջը կը պահէ աղնուական, վեհ և հրաշալիօրէն գեղեցիկ փափկութիւն մը։

Այս հաճոյքը սակայն անհասչելի է հատարակ հոգիներու. և ընտրեալ հոգիները միայն կրնան ըմբռնել թէ՝ ի՛նչ անհուն քաղցրութիւն կայ սա մտածումին և զգացողութեան մէջ.

— «Ես զրկուեցայ, իրա՛ւ, բայց իմ զրկանքս ընկերոջս երջանկութեան հիմնաքարը դրաւ։

— «Ես անօթի մնացի, իրա՛ւ, բայց իմ ընկերս կըշտացաւ։

— «Ես կեանքի մէջ չի յաջողեցայ, որովհետև չուզեցի իմ եղբայրներուս արիւն քրտինքը շահագործել իմ շահերս համար, բայց անոնք երջանիկ ապրեցան։

— «Ե՛ս չի վայելեցի իմ սիրելիս, բայց անիկայ ա՛լ աւելի երջանիկ կ՚ապրի հիմա ուրիշին հետ։

Եւ որչա՜փ աւելի կը կրկնապատկուի քաղցրութիւնը այս մտածումներուն և զգացումներուն, երբ մարդուն իրեն միայն ծանօթ կ՚ըլլան իր բրած զոհողութիւններն և կրած զրկանքները, դարձեալ մարդուն համար։

Հատարակ հոգիներու ունեցածն է որ փոքով թմբուկով ոմանց կարգացուի իրենց կատարած ոեւէ մէկ բարի գործին. ընտրեալ հոգիները ընդհակառակը, քանի անծանօթ մնան ուրիշներուն իրենց գեղեցիկ ժէսթերը, այնքան աւելի կարծես հաճոյքը կը բիւրեզանայ իրենց ներսիդին։

Եսին սիրովը տարամերժօրէն ապրուած, և անարմոյ ապրող մարդը «ինձմէ ետքը ջրհեղեղ»ի սկզբունքովը կ՚առաջնորդուի, և ասիկայ անբարոյական սկզբունք մըն է. այո՛, անբարոյականութեան է՛ն պժգալին է իր Եսին հանգիստն ու հաճոյքները ամէն բանէ գերագանց համարել և անտարբեր հանդիսատեսը ըլլալ միայն իր ընկեր-մարդուն ցաւերուն և արցունքներուն։

Երանի՜ անոնց որ իրենց անհատականութիւնը մեռցուցած, «Ամէնքը մէկի և մէկը ամէնքի համար» գաղափարը կը գրոշակրեն և անով կը քալեն կեանքի մէջ...։

Եւ ինչքա՞ն պիտի փոխուէր աշխարհի բաղդը, եթէ վերջիններուն պէս մտածողները մեծամասնութիւն կազմած ըլլային մարդկութեան մէջ. ի՞նչ երջանկութիւն, ի՞նչ խաղաղութիւն, ի՞նչ անդորրութիւն... ինչքա՞ն արցունքներ պիտի չորնային, ինչքա՞ն ցաւեր պիտի դարմանուէին, ինչքա՞ն տառապանքներ վերջ պիտի դնէին։

Դժոխքէն եռաքը դրախտը պիտի բացուէր դարերէ ի վեր չարչարուած մարդկութեան առջև։

ՍԵՐ

[ԱՐԱԲԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ]

Մի եղաւ որ երկուքն ալ սիրեցին զ՝Ան, գեղեցիկ և այրող աղջիկը։

Անդրանիկը՝ իր կայտառ, վառվռուն ու բուռն բնութեան ամբողջ հրայրքովը, իսկ կրտսերը՝ բանաստեղծական, մելամաղձիկ ու խանուտ զգայութիւններու ամբողջ փափկութեամբն ու շիկնումներովը։

Աղջիկը սիրեց Հասանը, վասնզի գեղեցիկ ու կրակոտ էր. ու մերժեց Նէճիպը իր նուազկոտ աչքերուն և դողդոջ կերպարանքին համար։

Եւ այդ ծայրայեղութէն զգայուն, ատելու բոլորովին անընդունակ սրտին մէջ, առաջին սոսկալի վիշտը սկսաւ իր խորունկ խոցը փորել։

Բերանը ժպտեցաւ՝ մինչ հոգին կ՝արիւնէր. և իր բոլոր ցաւերը ամփոփեց հոն, իր բարի՞ սրտին մէջ, որ աշխարհի մը չափ լայն էր, համակ գութ ու սէր։

Ոչ ոք գիտցաւ իր գաղտնիքը, բայց միայն Ան՝ որ խըմցուցեր էր իրեն դառնութեան բաժակը. և Հասան երդուն, սիրով արբշիռ, չնչմարեց տխրութեան այն թեթև ծալքերը որոնք սակայն օրէ օր կը փորուէին ու կը խորունկնային իր եղբօր ճակտին վրայ։

*
* *

Առատն կանուխ, շա՜տ կանուխ, երբ թեթև հովիկը մեղմիւ կը շարժէր ծառերու կատարները, թռչունները կը թռչտէին օդին մէջ ուրախ ճռուողիւններով, և ատոգերը ուժգունած կը փախչէին արշալոյսի առաջին շողերէն, Մէճէ և Հասան կը գտնէին գիրար, հոն, անտառին խորը, ծառի մը թաւուտ հովանիին տակ. և անձնատուր իրենց երջանկութեան, մոցած աշխա՛րհն ալ, մարդի՛կն ալ, թռչուններէն աւելի զուարթ, և արեւէն աւելի փառաւոր կը զգային զիրենք :

Նոյն պահուն մօտակայ ծառին ճիւղերը կը շարժուէին լռիկ, և երկու տենդավառ աչքեր, խիտ տերեւներուն մէջէն կը նկատէին սիրահար ոգոյքը, անպատմելի յուսահատութեան և անհուն ցաւի նայուածքով մը :

Նէճիպն էր, որ ամեն առաւ հոդ կը պահուըտէր զոդի պէս, և վայրապ հեշտութիւն մը, սոսկալի վայելք մը կը զգար, դիտելով անցագ երկու սիրահարներու այրո՞ղ զգուանքները, լսելով անոնց պաշտումի փոխադարձ յայտարարութիւնները, սիրոյ երդումները . . . :

Խուլ հեծկլտանք մը երբեմն կը պոռթկար կուրծքէն դուրս, ու կը մարէր շրթունքներուն վրայ, և ագի ու լեղի արցունքներ հեղեղի պէս կը վազէին իր ոժգոյն երեսներն ի վար :

Եւ սակայն առելու անընդունակ, սիրող սրտի մը բոլոր գուրգուրանքովը կը սիրէր իր եղբայրը, բաղդաւո՞ր ընտրեալին . . . և աւելի քան երբէք կը պաշտէր Մէճէն, որ մերժումի արհամարհանքին տակ խորտակեր փշրեր էր իր փափո՞ւկ հոգին :

*
* *

Եղաւ սակայն օր մը, որ այդ սիրոյ խորանին մէջ կատարուեցաւ ամենէն ահեղ և վսեմ տեսամը, որը կարելի ըլլայ երեւակայել :

Արշալոյսին էր դարձեալ . . . Հասան ու Մէճէ հոն, ծառին տակն էին, աչք աչքի, ձեռք ձեռքի . խօսելով անհատնում սիրոյ լեզուն :

Ցանուցիր, անկապ, երազի մը պէս անոյշ բառեր, որոնք սկեսրիկներու խնդուքը զուցէ շարժեն, և խոհական ու լուրջ մարդոց մէկ թեթեւ ժպիտը, և որոնք ունին սակայն խորհուրդներու է՛ն մեծագոյնը, է՛ն խորիմաստը . . . :

Իր թաքստոցին մէջ Նէճիպ կծկուած, կը դիտէր զանոնք։

Ախ, որքա՜ն գեղեցիկ էին . ինչո՞ւ չէր ինքն ալ բարձրահասակ, առողջ, վառվռուն, սիրուած ըլլալու համար ասնորմէ, կիներու է՛ն պաշտելիէն :

Ցանկարծ սոսկալի մռնչիւն մը զոռացուց անտառը . . .

Նէճիպ դողաց :

— Արիւծը՜ . . . , զոչեց Հասան վախէն մեռելի պէս սառելով, արիւծը՜ . . . :

Եւ ահա երեւաց, անտառներու թագաւորը, արիւծը, մեծափառ, ահաւոր իր յաղթ մարմնով ու անկուած բաշիրով , իր կրակէ նայուածքը պինդ գամած երկու աղոց սարսափէն լայնցած բիբերուն :

— Հասա՛ն . . . մրմնջեց աղջիկը աչքերը գոցելով, որպէսզի չտեսնէ ահեղի գազանը, Հասա՜ն, փրկէ՛ զիս . . . և պինդ փարելով սիրելւոյն վզին, իր սիրուն թուխ գլուխը ծածկեց անոր գրկին մէջ :

Արիւծը կը յառաջանար ծանր, ծանր :

Մէկէն Հասան, կարծես խենդեցած, գրկէն նետե՛ց Մէճէն, և խօլականի պէս սկսաւ վազել ծառերու մէջէն, թողլով որ կախուած ճիւղերը պատռտեն իր պուրնուզը, ճանկռտեն իր երեսներն ու ձեռքերը, և քաշկռտեն ու փետռտեն իր մազերը :

Արիւծը կը մօտենար . . . :

— Հասա՜ն, զոչեց եղկելի աղջիկը, ողորմելի ու սրտապատառ ձեշտով մը, Հասա՜ն, փրկէ՛ զիս . . . :

Մտաւոյ պուրակէն երիտասարդ մը դուրս ցատկեց . բայց Հասանը չէ՞ր . . . :

*
* *

Նէճիպ հակոյ էսթաղանը ձեռքին, յուշիկ կը մօտենար արիւծին, պիշ պիշ նայելով անոր հրաշէ՛կ աչքերուն մէջ :

Արիւծը այդ անակնկալ երեւումէն յանկարծակիի եկած,

իր որսը վայրկեան մը թողեր, և երկար բաշերը հովուն տուած լուռ կը նկատէր թշնամին։

Շփոթութեան այս վայրկեանը յարմար առիթ սեպեց Նէճիպ. մէկ ոստումով ցատկեց առիւծին վրայ, և մտածումէ աւելի արագ շաժրումով մը, եաթաղանը մխեց անոր կոկորդը։

Գազանը տապալեցաւ արիւն փսխելով իր վիրաւոր կոկորդէն, և պոչովը ուժգին գետինը ծեծելով։

Իր մէկ թաթովը յաջողեր էր բռնել Նէճիպի ձախ թեւը, զոր կը տրորէր իր հոգեվարքի ճգնաժամին մէջ։

Կրած սոսկալի ցաւէն կատղած, Նէճիպ աջ ձեռքով եաթաղանը քաշեց վէրքէն դուրս, և ուժգին մխեց գազանին փորը։

Առիւծը այս անգամ թուլացած թեւը թողուց։

Այն ատեն Նէճիպ ծռեցաւ, խոտի փունջեր փրցուց գետնէն, և անոնցմով փաթթեց իր արիւնաթաթաւ փշրուած թեւը։

Ապա մէկ ոտքը դրած առիւծին մարմնոյն վրայ, որը դեռ խորունկ սարսուռներով կը դողար, առաջին անգամ նայուածքը դարձուց Մէնէին . . .։

*
* *

Դեռատի աղջիկը կրած սոսկալի յուզումէն դողդոջուն, կը խորհէր, ի՛ր մեծաբաց գեղեցիկ աչքերը սեւեռած անթարթ Նէճիպի վրայ։

Երիտասարդը մեծցեր էր իր աչքերուն այն համեմատութեամբ՝ որով Հասան ինկեր էր, և բարձրացեր մինչև դասը ա՛յն քաջերուն՝ որոց գործերը կ՚երգուէին արտաքսման ժողովրդային դիւցազներգութիւններուն մէջ։

Չէ՛. այն ճղճիմ, տխեղծ Նէճիպը չէր Ան, որը մերժեր էր առեւօք սիրել գերագոյն արհամարհանքով մը։

Նա դիւցազուն էր, առիւծէն աւելի հզօր, որուն յաղթեր էր, ծանօթ Խուան ցեղապետներէն աւելի՛ տոկուն, որը գիտցեր էր արհամարհել խորտակուած ու փշրուած թեւին տհաճելի ցաւը, և կը ժպտէր մեղմիկ, մոցած կարծես քիչ մը առաջուայ մղած սոսկալի պայքարը, և անխռով,՝ կարծես ոչինչ պատահած ըլլար։

Եւ կ'աւէնար աղջիկը, ու կը կարմրէր հիմա իր ըրած ընտրութեան համար. ի՞նչ պիտի մտածէր Նէճիպ . . . :

Դիւցազնի սիրտ մը ոտքերուն տակ առեր կոխտեր էր, և որո՞ւ համար . . . :

Սիրեր էր այդ տղայէ մը աւելի թոյլ ու երկչոտ էակը, որ զինքը գրեթէ նեռեր էր առիւծին ճիրաններուն տակ և ինքը փախեր էր իր կեանքը փրկելու համար. օ՛ վա՜ տը . . . :

Եւ արեւելեան ընութիւններու յատուկ, վայրկենական բուռն խանդով և յափշտակութեամբ վառուած, ոտքի ելաւ ան, և իր յաւերժահարսի քալուածքով մօտեցաւ Նէճիպի.

— Դուն որ առիւծին յաղթեցիր, և Մէճէն փրկեցիր, ըսաւ իր անուշ և հնչուն ձայնով, առիւծէն աւելի՛ մեծ և հզօր տղայ, թո՛ղ Ալլահը սա աւազի հատիկներուն պէս ան՜համար տարիներ պարգեւէ քեզ. և ծնրադրելով անոր առջև.

— Թո՛ղ իմ Տէրս ներէ, մրմնջեց, առնական գեղեցիկ ու կորովի կերպարանք մը աւելի՛ ազդեց Մէճէի վրայ, քան աղնիւ ու վեհ սիրտ մը. Մէճէ ճանչցաւ իր սխալը, ըմբռնեց իր յանցանքը, խօսէ՛, Տէր, կ'ուզե՞ս որ կինդ, գերիդ ըլլայ Մէճէն . . . :

Եւ իր անձկութեամբ լի ու սիրով բոցավառ գեղեցիկ նայուածքը վերցուց տղուն վրայ :

Նէճիպ սարսռաց, անճառ ուրախութիւն մը ճառագայթեց իր նիհար երեսներուն վրայ, նայուածքը դարձուց դէպի այն պուրակը՝ ուր քանի մը վայրկեան առաջ դժոխքի տանջանքներով կը տապկուէր :

Տերեւներուն մէջէն երկու հրավառ աչքեր կը նայէին իրեն, Հասանի աչքերը :

Ցաւը, կսկիծն, ու ամօթը վայրենի ցոլքեր կը նետէին հոն :

Տղան աչքերը դարձուց, գլուխը ծռեց կուրծքին վրայ, չափեց մեծութիւնն ու խորութիւնը տառապանքին անոր որ իր եղբայրն էր, գութի արցունք մը դողդողաց իր արտեւանունքներուն ծայրը, և կամքի հրաշալի ուժով մը, ակնթարթի մէջ վռնտելով մաքէն ու սրտէն զգլխիչ մտածումը ապագայ դրախտի երանութեան, ա՛յն էակին հետ, որուն կը տենչար, և որմէ կը պաշտուէր հիմա, գլուխը

բարձր բռնեց. և թոթափելով ճակտին վրայ կուտակուած սե՛ւ ամպերը, ժպտեցաւ, և հանդարտ, գրեթէ բոլորովին անխով ձայնով.

— Չէ՛, պատասխանեց անոր, ալ չեմ սիրեր քեզ... քեզ եղբօրս կուտամ...:

*
* *

Արեւը կը ծագէր հիմա...

Իր առաջին ճառագայթները շեշտակի կ՝իջնէին Նէճիպի գլխուն վրայ, լուսեղէն պսակ մը բոլորելով երիտասարդին ճակտին շուրջը, այդ վայրկենին իտէականօրէն գեղեցիկ, և սրտի գերագոյն զոհողութիւնովը մեծավառ:

Ա Ն Է Ծ Ք

Ո՞ՒՐ Էր . . . համակ կըրակ զարմած վառէի . . .
Քեզ բոցերովս այրէի . . .
Ու կըլնէի լոյս մարմնով տաք տաք մոխիր,
Այապէս՝ զէթ մէջս հալուէիր։

❧

Կամ դառնայի ես բոյակէզ արեգակ
Սեւցնէի դէմքդ ճերմակ,
Ճառագայթներս շեշտ աչքերուդ նետէի,
Լոյսն ու բոցը մարէի . . .։

❧

Եւ կամ ախտ մը յամր ու մաշող ըլլայի,
Կուրծքիդ տակ պինդ զամուէի,
Տարիներով քեզ կըրծէի ես անյագ
Դարձընէի քեզ կըմախք . . .։

❧

Երեսիդ վառ վարդերն թոշնած տեսնէի,
Ու հաճոյքէս ղողայի,
Եւ կորուսած գեղ, հըրապոյր, պատիւ, յարգ,
Ա՛խ, ինչպէ՞ս ոտքիս տակ . . .։

❧

Ճակտիդ վրայ՝ մազերուդ տեղ ոլորուն,
Իսկ իժերն ղնեն բոյն,
Ու տեսնէի օձեր կախուած գլխէդ վար
Եւ սոսկումէդ կըծուած քար . . .

❧

Արիւն լայիր, ու միս մինակ երերուն
Թափառէիր օրն ի բուն,
Զոնենայիր բնաւ հոգի մ' քեզ սիրող,
Եւ ոչ իսկ սիրտ մ' զթացող։

❧

Շուրջդ թափուր, իսպառ լքուած բու խոնարհ
Պաշտողներէդ անհամար,
Ա՛խ նեռէիր անունս հովուն ու ծովուն
Եւ յիշէիր սէրս անհուն։

❧

Ու տեսնէի քեզ, ամենէն մերժուած
Ինծմէ, սակայն միշտ սիրուած,
Ո՛ ոիշներուն՝ հրէշ, ինձ համար հրեշտակ
Ա՛խ ըլլայիր իմս մինակ . . .

❧

Եւ մոռցուած ամենէն՝ զիս սիրէիր,
Ու ինծ միայն խօսէիր.
Կեանքիս մռայլ գիշերն տեսնէր արշալոյս
Ու երեսիս՝ ժպտէր յոյս . . .

Մանկավարժական

ՎԻՆԸ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻՆ ՄԷՋ

ՉԿԱ՛Ց ապարէզ մը կեանքի մէջ, որը ապահովաբար աւելի յարմարի կնոջ բնաւորութեան, կազմուածքին ու խառնուածքին՝ ինչպէս կրթական ապարէզը։

Դաստիարակութիւնը այնպիսի գործ մըն է, որուն յաջողութեան գլխաւոր ազդակներն են՝ սիրող, գորովալի սիրտ, համբերող ու քաղցր հոգի, նախազգացողութիւն, որը արդիւնք է չափազանց զգայնութեան, ամենաուր հոտառութիւն (flair), նուրբ բնական դատողութիւն (tact), և կարգ մը ուրիշ բնաւորանիշներ, օրինակի համար՝ կամակատարութիւն, հեռաքրքրութիւն, մտքի փոփոխականութիւն, այսինքն մի՛շտ նորը, հետաքրքրականը դիւրութեամբ որդեգրելու ընդունակութիւն, մինչև իսկ լաւ ու՛ զուարթ հագուելու տարամերժ փափաք, որոնք կնոջ նկարագրին տկարագոյն կողմերը կը նկատուին, և որոնք սակայն պիտի ըսեմ և պիտի հաստատեմ թէ՝ անհրաժեշտ են դաստիարակութեան և մանաւա՛նդ բարոյական դաստիարակութեան գործին մէջ կատարեալ յաջողութեան իբրև պայմաններ, եթէ ատոնք չափաւորուին, ազնուացուին ու նպատակին համար միայն իսպառ գրուին։

Կինը՝ մարդուն առաջին բնական զատարակն է արդէն. բնութիւնը այդ պաշտօնին կոչած է զինքը աշխարհի սկիզբէն ասոր թեւերուն մէջ գնելով մանուկը։

Կինը իրնէ աւելի կը սիրէ մանուկները. ապագայ մայրութեան բնազդը իր մէջը կը խօսի մանկութեան առաջին տարիներէն, և Հիւկօ շատ գեղեցիկ կերպով կը հաստատէ ատի, այնքան կենդանի նկարագրելով գերազանց հաճոյքը՝ զոր կը զգայ մանուկ-աղջիկը համբուրելով, գգուելով, կուրծքին վրայ սեղմելով, օրօրելով, քնացնելով իր պէպէքը, էգ մանուկին այդ անհրաժեշտ պէտքը, մինչ արու մանուկը ընդհակառակը անտարբեր է պէպէքին համար և նախամեծար կը համարի արընթաց վազող կատաք մը, ձի մը, ատրճանակ մը և մէկ խօսքով այն ամենը որ պիտի պատշաճի իր ապագայ հատնութեան տարիներուն ճաշակին ու բնաւորութեանը։

Եւ արդէն կինը իր բնական կոչումին, այսինքն մայրութեան, և դարձեալ ոչ նուազ բնական իր զատարակի պաշտօնին մարդը չէր կրնար ըլլալ եթէ մանուկները չի սիրէր, եթէ անոնց համար չի զգար այն գորովագին խանդաղատանքը, որ իր մէջը անդիմադրելիօրէն կը յարթէ յոգնութեան, ձանձրոյթի, վհատութեան, և կ՚ոգեւորէ զինքը նո՛ր ուժով, նոր եռանդով շարունակելու այդ դժուարին ու փափուկ գործը։

Սէրը իրեն կը ներշնչէ համբերութիւն, մանուկ բնաւորութիւններու մէջ շարունակաբար երեւցող չարութիւններու ու խեռութիւններու դէմ և զանոնք ուղղելու համար անայլայլ քաղցրութիւն, վասնզի նկատուած է որ առհասարակ քաղցրութեան ազդեցութիւնը անդիմադրելի է է՛ն խեռ ու անուղղայ բնաւորութիւններու վրայ։

«Աւելի շատ ճանճ կը բռնուի մեղրով քան թէ քացախով» կ՚ըսէ առածը. և բարոյական զատարակութեան յաջողութեան մէջ մանաւա՛նդ քաղցրութիւնը առաջին ու միա՛կ պայմանն է, վասնզի անի կը շինէ զգայուն, փափուկ, սիրող հոգիներ. անի կ՚օգնէ գլխաւորաբար խիզձը զարգացնելու ու կազմակերպելու և մանուկ սրտերու մէջ քիչ քիչ տեղ կը բանայ այն ամեն ազնիւ ու առաքինի զգացումներուն, որոնք անհրաժեշտ են իբրև ճշմարիտ բարոյական մարդ ապրելու համար աշխարհի վրայ։

Իսկ խաղութիւնն ու ապառնալիքը, կրկնուող պատիժները կը չորցնեն մանուկ սիրտերը, անգութ և անխիղճ բնաւորութիւններ կը շինեն։

Խաղութիւնն ու ապառնալիքը շատ շատ կրնան խրտչեցնել մանուկները և առանց հիմնապէս ուղղելու երեւցող թերութիւնները կրնան գուցէ ժամանակաւորապէս զսպել զանոնք, և այդ դրութիւնը ուրիշ արդիւնք չունենար բայց եթէ կեղծիքի վարժեցնել տղան, որը իր դաստիարակին կամ դաստիարակուհոյն ներկայութեանը երկիւղի ազդեցութեան տակ ուղղուած կը ձեւացնէ ինքզինքը, և այդ ազդեցութիւնէն զուրա՛ կը դառնայ նո՛յն մարդը և գուցէ աւելի վատը, իւրացուցած ըլլալով նաև կեղծաւորութիւնը։

Խաղութիւնը սրտի հետ չի՛ կրնար խօսիլ, մինչ անպատճառ սրտի լեզուն խօսելու է բարոյական դաստիարակութեան գործին մէջ։

Հապար պատիժ չիկրնար տալ այն բաղձացուած արդիւնքը, ինչ որ տխուր նայուածք մը, թեթեւակի այլայլուն ձայն մը և երբեմն ցաւի արցունք մը կրնայ քաղել։

Քաղցրութիւն ըսելով սակայն մենք չենք ուզեր սանձարձակ ներողամտութիւն հասկցնել, սրի՛ թուլութիւն կ՚ըլլայ, ինչ որ նոյնքան վտանգաւոր է դաստիարակութեան գործին։

Քաղցրութիւնը, ինչպէս նաև դաստիարակութեան գործին յաջողութեանը համար վերև յիշուած իւրաքանչիւր պայմանները պէտք է դնել որոշ ուղղութեան մը վրայ։

Առ հասարակ կինը բնաւորութեամբ զգայուն ու փափուկ, արցունքի ու հեծկլտանքներու դէմ տկար՝ չի կրնար չափ մը, սահման մը դնել ներողամտութեան, բայց պարտաւոր է հարկը պահանջած ժամանակ, քիչ մը առնական խրատութիւն խառնելով իր այդ կարգի զգացումներուն, չափաւորել զանոնք եթէ կուզէ շիտակ նպատակին հասնիլ։

Խաղութիւն կայ սակայն և խաղութիւն ալ կայ. կը կրկնեմ։

Կա՛յ վշտագին խաղութիւն մը, որ տղուն կը զգացնէ բուռն ցաւը՝ զոր կը զգայ դաստիարակ կինը կամ մարդը, զինքը յանդիմանելով կամ պատժելով, ինչ որ խորունկ զղջումի արցունքներով շատ անգամ տղան կը նետէ ուղղութեան ճամբուն վրայ. և կա՛յ խաղութիւն մըն ալ, պաղ, անկարեկիր և բռնաւորական, ինչ որ տղան պաղ ու ան-

գիրք կը թողու իր կարգին, նոյն իսկ տեսակ մը ազգ վրէժխնդրութիւն ալ վառելով անոր սրտին մէջ, և կ՚առաջնորդէ զանի պաղ յամառութեամբ մը կրկնելու իր յանցանքները պարզապէս իր դատարակը աւելի՛ գայրացնելու, տանջելու դիտումով։

Տգան շատ շուտով կրնայ զանազանել այդ երկու խառնութիւններուն մէջ եղած տարբերութիւնը, վասնզի մանուկները ամենամեծ հոգեբաններն են, և ոչ ոք կրնայ անոնցմէ աւելի ուղիղ ըմբռնել մարդոց սրտերուն մէջ անցածը . . . ։

*
* *

Կնոջ բնական հոտառութիւնը ու նախազգացումը, որ առնական պաղ ու լուրջ դատողութենէն աւելի անախալական է, իր հաւատարմագոյն առաջնորդը կարելի է նկատել ապահովաբար, մանուկներու բնաւորութիւնները, միտումներն ու ձգտումները տեսնելու, զգալու և ըստ այնմ իր բռնելիք ուղղութիւնը որոշելու համար, վասն զի սխալ է կարծել թէ՝ մէկ ընդհանուր ուղղութիւնը բաւ է մանաւանդ բարոյական դաստիարակութեան գործին մէջ, քանի որ մանուկներն ալ ինչպէս և չափահասները, առանձին բնաւորութիւններ են, զորս կրթելու համար պէտք է ստեղծել առանձին ուղղութիւններ։

Առարկուի գուցէ թէ՝ մանուկներու բնաւորութիւններուն մէջ երեւցող թերութիւնները միեւնոյն հանգամանքը ունին կամ միեւնոյն երեւոյթը կը կրեն, մինչև մէկ ատիճան սխալ չէ՛ ասիկայ, բայց այդ հանգամանքներուն կամ երեւոյթներուն մէջ այնպիսի նուրբ զանազանութիւններ ու բարդութիւններ կան, զորս պէտք է ուսումնասիրել և ուշադրութիւն դարձնել անոնց վրայ, վասն զի այդ աննշան երեւցող զանազանութիւնները ժամանակի ընթացքին հետ կրնան զարգանալ, և նկարագրի թերութիւններ դառնալ։

Այդ ուղղութիւնները ի՞նչ ըլլալու են։

Դժուար է, կամ աւելի ճիշտը՝ կարելի չէ՝ ընդհանուր օրէնքի մը կամ կանոնի մը տակ դնել զանոնք, և պէտք է գիտնալ որ դաստիարակութեան օրէնքները ինչքա՛ն ալ մանրամասնուած ըլլան մանկավարժական դասախօսութիւն-

ներու, գիրքերու կամ ծրագիրներու մէջ, դարձեալ գործին խոշոր գիծերն են ատոնք ու կը մնան, վասնզի երբեմն նոյ-ուածքի մը, շարժումի մը, խօսքի մը մէջ է որ կը քովանդակուին ամբողջ ուղղութիւններ, զորս չէ՛ կարելի բացատրել, կը կրկնեմ. և ատոնք ստեղծողը կ՚ըլլայ քաջը, կնոջական այդ թանկագին յատկութիւնը :

Եթէ նախազգացումը և հուսալութիւնը իրեն կը զգայնեն մանկական բնաւորութիւններու նրբին զանազանութիւններն ու թերութիւնները, քաջը զանոնք ուղղելու միջոցներն ու կերպերը ցոյց կուտայ անվրէպ :

Ահա՛ կը տեսնենք թէ՝ ինչքա՞ն զժուարին ու տժգունելի է դաստիարակութեան գործը՝ պարտաճանաչ դաստիարակին համար անշուշտ, և թէ ինչպէս խառնիճն կը պահանջէ միշտ և հանապազ ամփոփ միտք, բարձր ուշադրութիւն «Ես»ի բացարձակ մոռացում, սուր դիտողութիւն, քանի որ մէկ քանի վայրկեանի մոռցիր վիճակը երբեմն կրնայ մեծ սխալներու պատճառ դառնալ և նոր զժուարութիւններ ստեղծել գործին ճամբուն վրայ :

Հեռաքրքրութիւնը, կասկածոտութիւնը ու նախանձը ինքն ըստ ինքեան ընկերական ու ընտանեկան կեանքի մէջ դատապարտելի թերութիւններն են կնոջ, և շատ անգամ անոր զժբաղդութեան գլխաւոր պատճառները կը նկատուին, բայց այդ թերութիւնները տարամերժելն դաստիարակութեան գործին համար մշակելով ու մարդելով, թանկագին յատկութիւններ կը դառնան :

Տղուն իւրաքանչիւր գրգռումներուն վրայ — ըլլա՛յ այդ աշխատութեան թէ գրօսանքի ժամերուն — կասկածանօք հսկել, անոր իւրաքանչիւր մտածումներուն հետաքրքրութեամբ հետեւիլ, անոր առաջին նորածիլ զգացումներուն, մանուկ սէրերուն ու ատելութիւններուն վրայ նախանձառ գորովով մը հսկել որ չըլլայ թէ՛ քարուտ ու փշոտ ճամբաներու վրայ ցանցնուին այդ թարմ ու թանկագին սերմերը, կը նշանակէ մէկէ աւելի ապահով ու անվրէպ միջոցներ ունենալ մանուկ բնաւորութիւններու ու նկարագիրներու մէջ թափանցելու և նկատուած թերութիւններն ու մոլութիւնները ուղղելու :

Հագուելու խնդիրն ալ ոչ նուազ անհրաժեշտ է բարոյական դաստիարակութեան գործին մէջ :

Նկատուած է որ մանուկ, ինչպէս նաև հասուն երեւակայութիւններու ու ընտրութիւններու վրայ գոյները մեծ ազդեցութիւն ունին։

Սև ու մթին գոյները տխուր ու մելամաղձոտ տրամադրութիւններու ու մտածումներու կ՚առաջնորդեն, դիւրագրգիռ ու զայրացկոտ միտումներ կը ստեղծեն, մինչդեռ զուարթ գոյները աչքերը կը զուարճացնեն միտքն ու սիրտը կը լուսաւորեն կը զուարթացնեն և ըմբռնողութեան կարողութիւնները կարծես կը սրեն, և ահա՛ ճիշդ այդ պատճառով է որ կ՚ըսէի թէ՝ դաստիարակուհիները պէտք է զուարթ ու ազատ գոյներ ընտրեն իրենց զգեստներուն համար, ճաշակաւոր ու սիրուն հագուին, հոգ տանելով բարեձև ու հաճելի երեւնալու իրենց տներուն, վասնզի մանուկները մանաւոր սէր մը, յարում մը կ՚ունենան իրենց այն դաստիարակուհիներուն համար որոնք լաւ հագուած են, և կարծես կը խորշին իրենց շատ մութ ու տխուր հագուած դաստիարակուհիէն, և սակայն պէտք է ամէն գնով նախ շահիլ մանուկ համակրութիւնները, եթէ կ՚ուզուի իսկապէս օգտակար դառնալ դաստիարակութեան գործին։

Սակից զատ, սիրուն հագուստները, ինչպէս նաև լաւ ու մաքուր կարասիներով ու գեղեցիկ պատկերներով զարդարուած սենեակները մանուկ ճաշակները կը կրթեն, կազնարուցնեն ու կը բարձրացնեն։

Սակայն լաւ հագուիլ ըսելով չեմ ուզեր երբէք պճնասիրութիւն հասկցնել. այսինքն այն հազարումէկ ոչինչները. որոնք արդի նորաձեւութեան անհրաժեշտ լրացուցիչներն են, ինչ որ մտքի ու սրտի բացարձակ դատարկութիւն ցոյց կուտայ. բայց ներելի ալ չէ՛ երբէք որ դաստիարակուհին սեւերու մէջ փաթթուի առանց ո՛և իցէ վայելչութեան, ձեւաւորութեան ու ճաշակի, ներելի չէ՛ որ իր մազերը անշնորհք, տասիակ, անխնամ ու թափթփած պահէ։

Մեր մէջ դեռ սա զարմանալի հասկացողութիւնը կը տիրապետէ թէ՝ դաստիարակուհին պէտք է խիստ և չոր հագուի այն միակ պատճառով որ իր պաշտօնը այդպէս կը պահանջէ։

Սա՛ բացարձակապէս արդի մանկավարժական սկզբունքներուն և օրէնքներուն հակառակ ըլլալէ զատ՝ ամենամեծ յանցանք է նաև բնութեան դէմ. վասնզի երբ բնութիւնը

ջնորհքը ըրած է քիչ շատ սիրուն և հրապուրիչ դէմքով և միլիպիսան վայելուչ կազմով օժտել կին մը, կնոջ պարտականութիւնն է զայն դնել պատշաճ շրջանակի մը մէջ։

*
* *

Բարոյական դաստիարակութեան ապահով և յաղթական յառաջացմանը համար անհրաժեշտ է որ վարժարանի շէնքը ըլլայ փառաւոր և գեղեցիկ, սրահները՝ ընդարձակ ու օդասուն, դասարանները՝ կանոնաւոր, վայելուչ ու մաքուր։

Տղուն աչքերը միշտ պէտք է գեղեցիկը, վայելուչը տեսնեն, ասով կը կազմակերպուի ճաշակը, ասով է որ ան կը սկսի սիրել գեղեցիկը և ազնիւը։

Երաժշտութեան ազդեցութիւնն ալ ահագին նշանակութիւն ունի բարոյական դաստիարակութեան գործին մէջ, վասնզի երաժշտութիւնը կը փափկացնէ, կ՚ազնուացնէ մանուկ սիրտերը, անուշ և շիտակ հոգիներ կը պատրաստէ։

Եթէ դաստիարակուհին երաժիշտ է քիչ շատ, միջոց մը աւելի ունի հրապուրելու համար մանուկները, որոնք երգի ու պարի խենդ են։

Անհրաժեշտ է օրուան գոնէ մէկ ժամը տալ երաժշտութեան. բայց միայն երգեր սորվեցնելը բաւական չէ՛, այլ երգեցիկ աշակերտներու տարիքին ու երաժշտական հասկացողութեան յարմար կտորներ ալ առանձին նուագելու է, վասնզի միօրինակութիւնը ձանձրոյթ կը պատճառէ և փոփոխութիւն մտցնելով է որ հաճելի ու օգտակար կ՚ըլլայ բան մը։

Մտաւոր դաստիարակութեան համար կարելի է սահմաններ որոշել և ընդունակութիւններու ու յարմարութիւններու համեմատ կարգադրութիւններ ու ընտրութիւններ ընել։

Ամէնուն տրուած չէ՛ անշուշտ սուր ու կարող միտք. իմաստասէր մը, գիտուն մը կամ գրագէտ մը ըլլալու ջերմ ցանկութեան հետ՝ նաև տաղանդ, բայց բարոյական դաստիարակութիւնը իր ամբողջական առումով պարտաւորիչ է և պէ՛տք է ըլլայ ամէնուն համար ալ առ հասարակ։

Այսեն մանուկի մէջ — ըլլա՛յ այն փարթամ կամ անշուք

ման գաւակ — պէտք է որոշ մարդը պատրաստուի անպառճառ և գպրոցին է՛ն առաջին ու արբանեակոյն կոչումը արդէն ստիպոյ է։

Կնոջ վերև յիշուած բնական յատկութիւնները բաւական չեն կրնար ըլլալ անշուշտ բարձրագոյն կրթական գործին համար, եթէ անոնց չի միանան նաև մասնաւոր ճոխ զարգացման հետ գաստաւորութեան նոր եղանակներու կատարեալ տիրացումը։

Ներելի չի՛ կրնար ըլլալ դաստիարակուհիի մը, ինչքան ալ ան օժտուած ըլլայ բարոյապէս ու զարգացած մասնաւորապէս, եթէ չտիրանակէ իր դաստիարակչական կամ ուսուցման եղանակը այնպէս՝ ինչպէս ինքը տեսեր է իր ժամանակին գպրոցէն և ուսուցիչներէն։

Ժամանակները կ՝անցնին, նոր ուղեղներ, նոր մտքեր կը ծնին, գիտութեան ոգին, մանուկները ճանչնալու կարողութիւնը հետզհետէ կը զարգանայ ու կը նրբանայ և ահա երեւան կուգան Բէստալոցցիներ, Ֆրէօպէլներ, Պէռլիցներ, որոնք ալ իրենց կարգին օր մը պիտի հիննան և տարիներ ետքը նոր Ֆրէօպէլներ կամ Բէստալոցցիներ պիտի երեւան կրթական ու դաստիարակչական հորիզոնին վրայ որոնք անշուշտ պիտի յաջողին աւելի կատարեալ ու գիւրամատչելի ուղղութիւններ ստեղծելու։

Կեանքի մէջ ամէն բան այսպէս է, նորը կը յաջորդէ հիներին և կեանքի օրէնքին համաձայն հինը տեղի պիտի տայ նորին ուրեմն, և դաստիարակուհին պէ՛տք է քալէ ժամանակին հետ, պէտք է թօթուէ վրայէն հին ուղղութիւնները, ընդունուած հին գաղափարներն ու սկզբունքները, պէտք է հետեւի, քալէ, կ՝ըսեմ, նորին հետքերուն վրայէն եթէ կ՝ուզէ դաստիարակութեան գործին իսկապէս օգտակար դառնալ, վասն զի դաստիարակութիւնը իր նպատակին այն ատեն միայն կը հասնի երբ ժամանակի ոգիին ու պահանջումներուն համեմատ մարդիկ կը պատրաստէ։

Մտքի փոփոխականութիւնը, այսինքն միշտ նորը ընդունելու հակամիտութիւնը, այս պարագային կնոջ ամենէն մեծ զօրավիգը կը դառնայ։

Ան առանց ո՛ և է վարանքի, ըսեմ նոյն իսկ տեսակ մը խղճմտանքի, շատ աւելի դիւրաւ կրնայ թօթուել հինին ազդեցութիւնը վրայէն, մինչ այր մարդուն դժուարին կու-

գայ գուցէ մէկդի նետել իր սիրած ուղղութիւնները, որոնց վարժուած է վաղուց։

Իրեն կը թուի թէ՝ տեսակ մը ուրացում կայ ըլլալիս մէջ. ինչպէ՞ս թողուլ, մոռնալ իր որդեգրած սկզբունքները նոր խորթ մարդեր ընդունելու, նոր անծանոթ ուղիէ մը քալելու համար . . .։

Բարոյական դատախարակութեան գործին մէջ՝ ուր որ յաղթուած է այր մարդը, հոն կինը յաղթանակած է շատ անգամ, իսկ մասնաւորական դատախարակութեան մէջ այր մարդը աւելի յաջողութիւններ հնար բերած է վասնզի մասնաւորական դատախարակութիւնը կը պահանջէ տեսակ մը խիստ ու ստաւորիչ խօսուածք, տիրական շարժուածք, որմէ զուրկ է կինը բնութենէն։

Բնութիւնը կնոջ տուած է սիրոյ ու քաղցրութեան անդիմադրելի հրապոյրը, իսկ այր մարդուն՝ այն խրոխտ առնականութիւնը, որ իր ուժին և ազդեցութեան միակ զարդն է։

Բայց մասնաւորական դատախարակութիւնն ալ սերտ կապակցութիւն ունի բարոյական դատախարակութեան հետ։

Եթէ դատախարակուհին իր տանտերուն հետ երած ընթերցանութիւններուն և խօսակցութիւններուն մէջէն բարոյական դասեր հանելու պատեհութիւնը ունի, իրաքանչիւր նիւթերու դատաւանդութեան մէջ ալ կրնան հանդիպիլ առիթներ, որոնցմէ ուսուցիչը կրնայ օգտուիլ բարոյական դաս մը հանելու համար իր կարգին։

Սակայն դատ՝ եթէ ուսուցչին վարուելու կերպերը աշակերտներու հետ՝ ներդաշնակ չըլլան դատախարակուհուոյն վարուելակերպերուն հետ, եթէ երկուքին ազդութիւնները իրարու համերաշխ չըլլան, գործը անպատճառ կը վնասուի։

Դատախարակութեան գործին յաջողութեան գլխաւոր մէկ պայմանն ալ, վերի յիշուածներէն զատ, աշակերտին վրայ ազդել գիտնալն է։

Ազդելու գաղտնիքն ալ աշակերտին բացարձակ հաւատք ու պատկառանք ներշնչելու կարող ըլլալն է. հաւատք՝ զէպի իր բարոյական ու մասնաւորական կարողութիւնները և պատկառանք զէպի իր անձնաւորութիւնը։

Աշակերտը խորապէս հաւատալու է թէ՝ իր դատախարակուհին կամ ուսուցիչը ամէն բանի կարող է, ամէն բան

գիտէ, ան անսխալական է, և ամեն մարդէ գերիվեր, այդ հաւատքէն ահա արդէն ծնունդ կ՝առնէ պատկառանքը։

Բայց վա՜յ եթէ ուսուցիչը կամ դաստիարակուհին ո՛և է առիթով մը դժբաղդութիւնը ունեցած են անգամ մը խախտելու աշակերտին այդ երկիւղած հաւատքը, այն ատեն իսպառ կորսնցնելու է զայն ուղղութեան բերելու, անոր բան սորվեցնելու յոյսը։

*
* *

Դաստիարակ կինը կամ ուսուցիչը ջանադիր ըլլալու է նաև որ իրեն յանձնուած մանուկները ապագային համար վերացական էակներ չի պատրաստուին, այլ դրական – գաղափարական մարդիկ ըլլան անոնք։

Տղայ մը վերացական կը դառնայ այն ատեն՝ երբ դըպրոցին մէջ հոգ չի տարուիր իրեն ճանչցնելու կեանքի իրականութիւնը, որով օր մը իր բոլոր յղացումները, բոլոր մտածումները անիրականալի երազներ, ցնորածի ձափրուտուքներ մնալու դատապարտուած կ՝ըլլան լոկ։

Մինչ ճշմարիտ գաղափարական մարդը շատ կանուխէն պատրաստուած պիտի ըլլայ դիտելու, սերտելու կեանքը մես – մերկ իր տգեղութիւններուն՝ ինչպէս նաև իր գեղեցկութիւններուն մէջ իր բարութիւններուն ինչպէս նաև իր չարութիւններուն մէջ, կազմ ու պատրաստ, ապառաջինուած կեանքի կռիւին համար, այնպէս որ ան դեռ կեանքի մէջ չի մտած՝ խորապէս համոզուած ըլլալու է թէ՝ իրրև ճշմարիտ մարդ ապրելու համար ինչքա՜ն ահագին գործեր, ինչքա՜ն հսկայ պարտականութիւններ կան կատարելիք, ու երբ օր մը նետուի կեանքի ասպարէզը, դրականօրէն խորհելով ու գործելով կատարէ իր պարտականութիւնները, վեհանձնաբար ու առնականօրէն։

Բարոյական դաստիարակութիւնը իրեն նպատակ պիտի ունենայ ուրեմն, կեանքի դասը խօսիլ մանուկներուն, հեռզհեռէ անոնց տարիքին ու հասկացողութեան չափովը ընթանալով, զգուշանալ մանաւանդ ինչպէս ըսինք, կեանքի գեղեցիկ ու գուարթ կողմերը միայն ցոյց տալէ. ատիր շատ վնասակար կ՝ըլլայ տղուն ապագային համար։

Անիկայ թող չի հաւատայ բնաւ թէ՝ կեանքը վարդերով ծածկուած ճամբայ մըն է, որուն վրայէն ինքը պիտի քալէ անվրդով, անոր պէտք է ցոյց տալ թէ՝ ի՞նչ փուշեր կան ծածկուած այդ վարդերուն տակ, որոնք օր մը կրնան իր ոտքերը վիրաւորել և արիւնել։

Ըսելու չէ՛ բնաւ «Թո՛ղ կեանքի մէջ մտնեն, փորձառութիւնը իրենց ցոյց կուտայ կեանքի իրականութիւնը»։

Չէ՛, եթէ կեանքի իրականութիւնը կանուխէն նշմարել չտանք, օր մը յանկարծ անոր հետ դէմ առ դէմ եկած ատեն՝ կ՚ընկճուի, կը վհատի և տանջող յուսահատութիւնը բոյն կը դնէ ուղուն նկարագրին մէջ, և արդէն յուսահատ բնաւորութիւններու մեր մէջ բազմանալը՝ կեանքի իրականութիւնը կանուխէն ըմբռնուած չըլլալուն արդիւնքը չէ՞...։

Կեանքի փորձառութիւնը, շատ շատ կը զօրացնէ երիտասարդը կեանքի կռիւին մէջ, բայց երբէք չի՛ կրնար իրեն արիութիւն տալ, զինքը քաջալերել, զինքը առաջնորդել վեհագոյն ձգտումներու, եթէ առաջուց առողջ դաստիարակութեան մը հզօր ներշնչումը իր մէջը չէ՛ արմատացուցեր կեանքի գիտակցութեան սկզբունքները։

Ըսել չեմ ուզեր սակայն թէ՝ կեանքի դասը խօսելու ատեն՝ ոչ մէկ պատրանք թողելու չենք ուզուն քով։

Կան պատրանքներ, որոնք գերազանցօրէն քաղցր են, ատոնք թողունք, վասնզի պատանեկութիւնը կը բանաստեղծեն, և այդ երազներուն ետքի ցրումը կենսական վնաս մը չի կրնար պատճառել անոր ապագային։

Մենք այս անգամ ծանրացանք աւելի բարոյական դաստիարակութեան վրայ, առաջին տեղը տալով անոր, վասնզի մտքի մարդէն աւելի՝ սրտի մարդերու պէտքը ունի կեանքը իր նպատակին հասնելու համար, ուրիշ ասթիւ պիտի խօսինք մասնաւորական դաստիարակութեան և ուսումնական եղանակներու վրայ, միայն հոս տեղն է նկատելու թէ՝ մենք ունինք, մանաւա՛նդ կովկասահայերու մէջ, մէկէ աւելի այլ դաստիարակներ և դաստիարակուհիներ, որոնք Եւրոպայի լուսաւորեալ կեդրոններուն մէջ կատարեալ մանկավարժական ընթացք մը ստացած կը ներկայանան և որոնց կրնանք վստահիլ յանձնել կրթական գործը։ Իսկ չունինք, առաջահայերուս մէջ կին-դաստիարակներ, որոնք լրջօրէն հետեւած ըլլան մանկավարժական նորագոյն ուղղութիւններ-

բու կամ գոնէ եւրոպական համալսարաններու մէջ լսած ըլլան ծանօթ բռօֆէսէօռներու դասախօսութիւնները։

Անշուշտ կամքը չէ՛ որ պակսած է իրենց, և ոչ ալ կրթական գործին համար իրենց ունեցած բնական յարմարութիւնները զարգացնելու և դաստիարակչական արուեստին ամենանուրբ գաղտնիքներուն տիրանալու փափաքը, այլ միջոցներն են որ իրենց պակսած են ու ցարդ կը պակսին։

Մեր մէջ կը գտնուին ցանցառ մեկենասներ, որոնք ազքատիկ ուսանողներ Եւրոպա դրկելու պատրաստակամութիւնը կ՚ունենան, որպէս զի անոնք իրենց սիրած ո՛և է մէկ ճիւղը մշակեն ու կատարելագործեն, բայց — իբաց առեալ Իզմիրցի բարեհամբաւ Պաքրճեան հանգուցեալ Նազարէթ էֆէնտիէն — ցարդ չէ՛ տեսնուած Հայ հարուստ մը որ մտածէր ազքատիկ ուսանողուհիներու վրայ ալ. անոնց վրայ մանաւանդ, որոնք ուսման մէջ իրենց ցայտուն յարմարութեամբն ու յառաջդիմութեամբը մեծ յոյսեր կը ներշնչեն, և մանաւոր հակում մը ցոյց կուտան կրթական գործին համար։

Կը սիրենք հաւատալ թէ՝ պիտի երեւնան օր մը Հայ հարուստներ ալ, որոնք ըմբռնելով գործին պահանջը, իրենց ոսկիներէն մաս մը տրամադրեն ճշմարիտ ուսուցչուհիներ, գիտակից դաստիարակուհիներ հայցնելու համար, որպէս զի փոխանակ օր մը վարպետ-տուտուներու կամ ինչ որ աւելի՛ զէշն է՝ օտար դաստիարակուհիներու ձեռքով կառավարուելու Հայ աղջկանց վարժարանները, և այսպէս՝ օտար միջավայր մը ստեղծուելու Հայ գպրոցներու շուրջը, Հայ խակամն դաստիարակուհիներու ձեռքով կառավարուին անոնք, Հա՛յ զգացումով, Հա՛յ ներշնչումով, Հա՛յ բարքերով ու սովորութիւններով, միայն եւրոպական դաստիարակութեամբ, եւրոպական քաղաքակրթութեամբ, ազնուացած, նրբացած, ու կարգ մը տգեղ նախապաշարումներէ ազատագրուած։

* * *

Քանի որ օտար դաստիարակութեան միջոցաւ, օտար, խորթ ապրելակերպ մը մեր ազգայնական կեանքին ու բարքերուն մէջ ապրելու կարելիութիւնը մեզ կը ապառնայ,

կը կարծենք թէ՝ հոս տեղն է, մեր տեսութիւնը վերջացնելէ առաջ, արագ ակնարկ մը նետել մեր վարժարանական ծրագիրներուն վրայ ալ, քանի որ ատոնցմէ կախումն պիտի ունենայ գլխաւորաբար մանաւա՛նդ արտասահմանի Հայ գաղութներուն մէջ, ազգայնական ոգիին անաղարտ պահպանութիւնը :

Այդ ծրագիրը կազմելը՝ իրաւ որ դժուար է, վասն զի գործին մէջ գերազանց ձեռնհասութիւն մը ունենալը չի բաւեր, պէտք է նաև խորապէս ուսումնասիրած ըլլալ տեղւոյն կեանքը, պահանջքները, յաջողութեան գաղտնիքը, և ծրագիրը մասամբ յարմարեցնել այդ պահանջքներուն, քանի որ առանց ատոնց՝ նիւթական ապահովութիւն ու յառաջդիմութիւն չէ՛ կարելի ձեռք բերել այդ անհիւրընկալ երկիրներուն մէջ :

Ի՞նչ պէտք է ընել . . . :

Հիւսել ազգային դաստիարակութիւնը օտար դաստիարակութեան հետ :

Առ հասարակ արտասահմանի հայ վարժարանները կ՚որդեգրեն տեղւոյն կառավարութենէն վաւերացուած ծրագիրները, բայց ատոնց բացարձակ կիրառութիւնը չի կրնար ճշմարիտ հայ սերունդ պատրաստել :

Բացատրենք :

Ֆրանսական, անգլիական կամ գերմանական դաստիարակութիւնները իրենց ուղղութիւնը կը գծեն իրենց ազգային կեանքին պայմաններուն ու միջավայրին համեմատ, անոնք կը կրեն ազգային սեփական բնաւորութիւն, շատ բնական է ուրեմն որ այդ ուղղութիւնները չի կրնան բացարձակապէս յարմարիլ մեր հայ ազգային կեանքին, քանի որ մերն ալ ունի իր որոշ բնաւորութիւնը, եթէ զանո՛նք չի պատուաստենք հայ սեփական դաստիարակութեան մէջ :

Հայ ցեղը բաժան բաժան ցրուած օտար աշխարհներ, թէպէտ տեղական, օտար դաստիարակութիւն մը ընդդիմելու ստիպուած՝ պիտի չմոռնայ նաև զարգացընել ազգայնական յատկութիւնները, զօրացնել հայ նկարագիրը, պիտի պահէ ցեղին որոշ գոյնը և պիտի չթողու որ անիկայ ազօտանայ, ջնջուի ժամանակի, տեղի, պարագայի, միջավայրի այլազան ազդեցութեանց տակ :

Այն ազգը որ իր ծնող ցեղը պահպանելու մարդավայել

հպարտութիւնը չունի, ապրելու արժանի չէ՛։

Ա՛յդ պարապային ան իրաւամբ կը ճանչցուի իբր պիտակ ժողովուրդ մը, ամօթապարտ յանցանքի մը պտուղը կարծես, ճամբաներուն անկիւնը նետուած, ստարներէ որդեգրուած և ստարին կաթովը սնած ու մեծցած։

Դարերէ ի վեր, յորում հայ ցեղը ստրուկ է և աքսորական, հայ մանուկին վրայ դրուած է նուիրական պարտականութիւնը՝ իր ցեղը ճանչնալու, զայն գուրգուրանքով սիրելու ու պահպանելու, և այսօր դարձեալ իր հայրերուն, մայրերուն, քոյրերուն ու եղբայրներուն դեռ ևս մխացող տաք տաք արիւնը սրբազան կտակ կը թողու իրեն նուիրուիլ ազգային վերածնութեան գործին, քալելով հետքերուն վրայէն անոնց՝ որոնք այդ նպատակին համար դիւցազնաբար ցմահ կռուեցան։

Եւ այդ սրբազան կտակին ամբողջական գործադրութեանը վրայ խղճամիտ խստութեամբ մը հսկելու ծանր պատասխանատուութիւնը մեր դատախազներուն և դատաբրակուհիներուն վրայ կը ծանրանայ մեծ մասամբ, քանի որ անոնք պիտի ըլլան պահպանողն ու զարգացնողը ազգային ոգին մատաղ սրտերու ու մտքերու մէջ, անո՛նք պիտի ըլլան հայ նոր սերունդը առաջնորդողը դէպի պարտականութիւն և յոյց պիտի տան ճշմարիտ ազատութեան ճանապարհը։

Մայր Երկրին մէջ ազգայնական ոգին կը պահուի շատ բնականօրէն, քանի որ օտար ազդեցութիւններ շատ չեն սպառնար զանի ջնջելու, և ինչ որ աւելին է, Հայ Տառապանքը կայ ու կը մնայ հոն ցցուած, բնիկ հայութեան աչքերուն ու սրտերուն այնքան մօտիկ։

Բայց օտար հողերու վրայ, ուր կը պանդխտի հայ ցեղը հարիւրներով ու հազարներով, պէտք է ջանալ որ Հայրենիքն ու Հայ տառապանքը ըլլան նաև նոյնքան մօտիկ անոնց աչքերուն ու սրտերուն։

Ի՞նչ ընել պէտք է։

Մինչ վարժարանին մէջ հայ լեզուն և հայ հին պատմութիւնը որոշ ժամերու մէջ իբրև դաս աւանդելը բաւական՞ է հայ մանուկը պարտականութեան ու զոհողութեան մարդը ընելու համար. բաւակա՞ն է անոր սիրտը խանդավառելու և զանի նետելու դիւցազնօրէն անձնուիրութեան ճանապարհին վրայ...։

Չէ՛ . . . մէկէ աւելի Հայ երիտասարդներ ու երիտասարդուհիներ ունինք, որոնց համար հայ լեզուն ոչ մէկ գաղտնիք չունի, անոնք հայ հին պատմութիւնը լաւ սերտած են, ոչ մէկ անուն, ոչ մէկ դէպք, ոչ մէկ թուական չեն մոռցած, անոնց միտքը լաւ մշակուած է, դրամ վաստկելու ճամբան լաւ գիտեն, և իբրև galant մարդ կը յարգուին ամենէն, և սակայն ի՞նչ օգուտ երբ ցեղին ձայնը լուռ է անոնց սրտերուն մէջ, և իրենց մազերէն մէկ թել, և իրենց դրամէն մէկ միլիմ չեն զոհեր ազգային վերածնութեան գործին համար։

Հայ լեզուի գոհարները մեզ կը սքանչացնեն, մեր աչքերը կը շլացնեն, հայ հին պատմութիւնը մեզ կը հիացնէ, պզատոնական հիացում մը սակայն, շատ հանդարտ ձգելով մեր սիրտերը։ Ան ալ ևս չի կրնար ոգեւորել, խանդավառել զմեզ այնպէս՝ որ մոռցած բացարձակապէս մեր «Ես»ը մեր միակ ու տարամերժ սէրը, բաղձանքը ընենք Հայրենիքը ու ցեղին փրկութիւնը։

Արտասահմանի հայ վարժարանաց ծրագիրներուն մէջ ուրեմն, առաջին տեղը տալու է հայ լեզուին, հայ ընկերակցութեան ու նկարագրին ուսումնասիրութեանը և հին պատմութենէն զատ ու նոյն իսկ աւելի՛ հայ նոր պատմութեան դրուագները ծանօթացնել հայ պատանեկութեան և անոր ցոյց տալ նոր հայ հերոսներն ու հերոսուհիները։

Միթէ հին Հայկերու, Արամներու, թէպէտ սիրելի բայց շատ առասպելական պատմութիւններէն աւելի նոր ու իրական Հայկեր Արամներ չունի՞նք . . . նոր Տիգրաններ, Արտաշէսներ և Այծեմնիկներ որոնք ժամանակակից հայութիւնը փառաւորեցին։

Հինը չի՛ կրնար ալ ևս ոգեւորել, խանդավառել, կը կրկնեմ, այլ նոր, օրը օրին ապրուած հայ կեանքն է որ թև ու թռիչք պիտի տայ հայ մանուկ մտքերու ու սրտերու ու պիտի մղէ զանոնք դիւցազնական գործերու։

Հինը՝ նուիրական, վեհապանծ յիշատակարան մըն է, որուն մարդ կը մերձենայ երկիւղած յարգանքով մը միայն, իսկ նորը, կենդանի աչքերուդ առջև կատարուած գործն է որ արիւնիդ մէջ կը վառէ սրբազան կրակը ու սիրտդ թունդ կը հանէ։

Թող չառարկուի թէ՝ Հայոց ժամանակակից պատմութիւ-

նը դեռ լուսաբանուած չէ՛, թէ պատմութիւնը դեռ իր վերջին խօսքը չէ՛ ըսած ներկայ ժամանակներու գործերուն ու գործիչներուն վրայ։ Ի՞նչ փոյթ մեզ։

Միթէ պէտք եղածին չափ դատողութիւն չունի՞նք լաւը՝ վատէն զանազանելու, ճշմարիտը՝ սուտէն, իրական հերոսը՝ սուտ հերոսէն տարբերելու։

Միթէ աչքեր չունի՞նք տեսնելու համար դիւցազնութիւնը և ականջներ՝ լսելու համար ճշմարտութիւնը։

Միթէ հայ տառապանքը և անոր պատճառները հայ նոր սերունդին ճանչցնելու համար պիտի սպասե՞նք, որ ո՞վ գիտէ քանի տարիներ ետքը, գրուած պատմութիւն մը երեւան գայ . . .։

Անձնուիրութեան, զոհողութեան, քաջութեան գործերը ինքնին չե՞ն խօսիր արդէն մեր սրտին ու մտքին։

ՀԻՆ ՕՐԵՐԷՆ

ԿՈՒԻԻԻՇ ՍԷՐԸ

Ա.

ՉԵԶՆԷ եւեղ զօրեղ սէր մը չեմ ճանչցեր ես,
Դեռ եւս մանուկ քու գրուագներդդ լսեցի
Մեծ մօրս բերնէն, որ կը պատմէր հին օրերէն,
Իմ մանկական արտասուքներս չորցընելու,
Կամ պուպրիկիս ինձ առՁած վիշտն ամոքելու,
Կամ իբր օրօր իմ մանկական անուշ նինջիս
Նա կը պատմէր ինծի երկար հին օրերէն,
Եւ կը չարնար արցունքն իսկոյն իմ աչքերուս,
Դեռ կը յիշեմ . . . օ գիշերներ ձմրան երկար . . .
Բազուկներովս գրկած ծունկերն մեծ մօրս անուշ,
Կը կախուէի շրթունքներէն մեղրածորան,
Ու կը պատմէր կերկեր ձայնովն իր ծերունւոյ,
Վէս կռիւներն անոնց որոնք ալ չի կային.
Անոնք՝ որոնք եղբարքն էին իր հարազատ,
Ցանդուգն բաջեր, որոնք այսօր մոռցուած են.
Լեռան պէս բարձր, կաղնի ծառին պէս անյողդողդ,
Սարսափն համակ իրենց դարուն բընաւորին,
Փոյթ չէր Թէ ան Քուրդ էր, Թուրք Թէ Հայ ամիրայ,
Թաղական էր, Թէ Պատրիարք կամ Առաջնորդ,
Վայ Թէ անոնք ժողովուրդի սուրբ իրաւունք
Դրամի, դիրքի ուժով եւ կամ վատ մատնութեամբ
Ցանկընէին պիղծ ձեռքերով յափըշտակել . . . ։

Ա.

Լեռան պէս բարձր, կաղնի ծառին պէս անյողդողդ,
Իսկէնտէրն էր ահա կանգնած, հոն, Ա Թ - Մէյտան,
Իր առիւծի բաշերն տնկած եւ ահաւոր,
Իր առնական խրոխտութեան մէջ գեղեցիկ,
Աչքերուն մէջ արդարութեան հուր սրբազան,
Հաւատքովը իր ստանձնած դատին՝ հրզօր.
Նուիրական իր պարտքերուն բաջ գիտակից,
Ժողովուրդին գլխուն անցած դիւցազնօրէն,
Նա կը սպասէր ճամբուն վրայ մեծ Սուլթանին,
Ձեռքը բռնած բողոքագիր մ' ուր պերճօրէն
Գաղմեր էր ան բռնաբարումն ժողովուրդին
Սուրբ իրաւանց, ու զրկումներն օրը օրին
Այն ամիրայ կոչուած կարգ մը ճիւաղներէն՝
Որոնք երկար տեն արիւնը քամեցին
Խեղճուկ Հայուն, Թաղականի դիմակին տակ.
Երկար տեն որ բանտը, ոն ալ աքսոր
Անոնց շնորհիւ տուայտեցան, արիւն լացին,
Եւ որ մէկն ալ անոնց ճանկէն ազատելու
Համար, բարւոք դատեց, աւնդ, փոխել իսկոյն
Ցիսուսի Խաչն Մուհամմէտի Ղուրանին հետ . . .
Ու երբ օր մըն ալ զրոյցացած փափաքեցաւ
Հայրենի կրօնն ջերմ կարօտով վերընդգրկել,
Անբանդ գլուխն դահճին ատրին տակ ինկաւ, ոխ . . .

Բ.

Սուլթանն անցաւ Ա Թ - Մէյտանէն ու երբ տեսաւ
Լեռան պէս բարձր հըսկայ կտրիճը գեղեցիկ,
Արքայական ձեռքն երկարեց, անձամբ առաւ
Բողոքագիրն այն պերճախօս եւ ազդեցիկ.
Ու Պատրիարքն ըլլար գուցէ շուտ գահընկէց
Իբրեւ միակ պատճառ չարեաց, շատ իրաւամբ,
Քանի իր հօտն անօգնական կեր գայլերուն
Թողած՝ ինքը գեղխութեան մէջ կը յըղփանար,
Բայց մասնութեամբ մը դաւաճան Սուլթանն ահեղ,
Խըռովելով հրամայեց շուտ աքսորել
Իսկէնտէրը, իբրեւ գրգռիչ, խըռովարար,
Իրաւունքի այդ վեհ պաշտպանն հայրենիքէն
Քըշեցին դուրս, երկիր մը ցուրտ, անհիւրընկալ,
Ուր շընորհիւ ամիրայից սեւ մասնութեան
Մընաց երկար։ Վերադարձաւ նա հուսկ յետոյ,

Մինչ անողոք, անվախ ու մինչ վրէժխնդիր,
Մինչ կազմ, պատրաստ մղել կռիւ բռնութեան դէմ,
Ու կը պատմէր մեծ մայրս դարձեալ, ինչպէս օր մ' ալ
Թուրք պաշտօնեայ մ' յանդգնելով հայուն քրքրել,
Իսկէնտէրի պողպատ ձեռաց տակ կիսամեռ
«Մեղմ, մեղմ . . .» կանչուըռտելէն հոգին տուաւ.
Զի բարկութիւնն ահաւոր էր այն առիւծին,
Ու անգամ մ' ալ վաւաշոտ Թուրք մ' եաթաղանով
Երբ կը ապառնար Հայ պատանւոյն կամ հետեւիլ
Իրեն եւ կամ պատրաստ ըլլալ հոն մեռնելու,
Հասաւ Արթինն, եղբայր դիւցազն Իսկէնտէրի.
Դիւցազն մ' ալ ինք, անոր պէս վէս ու գեղեցիկ,
Եւ առնելով եաթաղանը Թուրքին ձեռքէն,
Երկու կրտոր ըրաւ փխրուն կաւի մը պէս.
Պինդ երկաթը իր ձեռքերուն մէջ փըշրեցաւ,
Ու պատանին ազատ թըռաւ թըռչնոյ մը պէս.
Մինչ Արթինը բռնած Թուրքը պինդ մօտուքէն,
Ապտակներու տեղատարափ սկսաւ երեսին
Տեղացընէր, յետոյ բըռնած երկու ոտքէն,
Անպէտ բեռի մը պէս հեռուն կը նետէր զայն,
Եւ դեռ որ մէկն թուեմ այս տեղ . . . Իմ մանկութիւն
Դիւցազնական այս դէպքերուն պատմութիւնով
Շատ կանուխէն ազդուեր էր. ոչ չի սիրեց
Խարտիշահեր պուպրիկ. պէսպէս խաղալիքներ,
Միակ տենչը, սէրը, կեանքը մանուկներու,
Եւ գիշերներն երբ փակէի աչքերս ի քուն,
Երազներուս մէջ հոկաներն այն փառաւոր,
Իմ նախահարցս կերպարաններն դիւցազնական,
Կը թուէին ինձ բարձրանալ մինչեւ երկինք,
Ոտքերնուն տակ շանթեր առած իբր պատուանդան,
Գլուխներնուն վրայ բոցէ ամպեր բարդ, բարդ
Ցոյց կուտային ինծի հեռուն կռուոյ դաշտեր,
Կարմիր դաշտեր . . . խումբ խումբ աղուոր թեկնեղ տղաք
Փաթթոցաւոր ու ֆէսաւոր գանգաններու
Վրայ ինկած, վայրագօրէն վրէժխնդիր
Սուրով, բիրով անոնց արեւն կը մարէին։

Դ.

Օ՛, բռնութեան, հալածանքի դէմ մինչ կըռիւ . . .
Ակէ, եւել զօրեղ սէր մը չեմ ճանչցեր ես
Հէնց առաջին տարիներէն իմ մանկական . . .
Պատանութի՛ դարձեալ ուրիշ տենչ չունեցայ.
Քեզնէ եւել զօրեղ երբէք սէր չի ճանչցայ.

Ո՛վ սուրբ կըռիւ հալածանքի բանուԹեան դէմ . . .,
Զի սիրեցի քեզ, սընդուս ու տանԹէլներ
Որոց տենջան երիտասարդ սրտերը միշտ.
Զի սիրեցի մեռնել երբէք պերճ սրահներ՝
Ուր կը յածին **ամոքիչներ** պաշտօնական,
Ջեռնոցապատ ձեռքեր, աչքեր **մօնօկլաւոր**,
Ուր կը խորհին ինչպէս պատշաճ **գօտրիմաճ** մը
Օրիորդի մ՝ ականջին տակ տեղաւորել,
Զի սիրեցի երբէք ատոնք . . . Օ՜ կոշտ ձեռքեր
Եղբայրներուս, զձեզ միայն սիրեցի ես.
Թէպէտ ձեռնոց հագնիլ գուցէ դուք չէք գիտեր,
Թուր, հրացան գործածելու վարժ էք սակայն.
Անուշ ձայներ . . . հըզօր ձայներ . . . ինչպէս ազդու
Ի՞նչ ճշմարիտ, անկեղծ էին ձեր շեշտերը
Երբ խօսէիք կռուոյ դաշտէն, արեան ծովէն,
Յաղուկ ու նեղ այն սենեկին մէջ աղբատիկ,
Քանի բաղդ է ինձ հոս յիշել այն անցեալը
Ուր կը տեսնեմ ձեզի դարձեալ խորհրդաւոր,
Ձեր պարզ ու թիրտ կերպարանքին տակ գեղեցիկ,
Եւ առնական ու կորովի ձեր ժէսԹերը
Երբ Մայր Երկրի տառապանքէն կը խօսէիք . . .
Օ՜ . . . դուք որքան կը մեծնայիք աչքերուս տակ,
Ինչպէս իմ սիրտս կը բաբախէր ձեզի համար,
Իմ կոյս սիրտը, որ կռուէն զատ սէր չի ճանչցաւ . . .
Օ՜ . . . դուք որքան կը մեծնայիք աչքերուս տակ,
Կերպարանքին մէջ ձեր պարզուկ, անվայելուչ
Ցայտ բերելով սիրտ մը անհուն, աշխարհի մ՝ չափ . . .

Այսօր՝ մայր եմ. ու չեմ խորհիր Ի՝ արդեօք ջրպաս,
Պիտի կանգնի օր մ՝ վայելուչ ու գեղեցիկ,
Համազգային հանճար մ՝ հսկայ որուն համար
Համայն աշխարհ ըլլայ խորունկ երկրպագու . . .
Կը մտածեմ միայն Ի՝ արդեօք պիտի սիրէ
Սուրբ կռիւը հալածանքի բանուԹեան դէմ,
Պիտի սիրէ կռիւը՝ զոր մայրը սիրեց . . .,

Ե.

Ինչեր ունիմ քեզ պատմելու, իմ սիրելիս,
Նոր օրերէն, որոնք հինցած պիտի ըլլան.
Հայ ցաւերէն, Հայ աղէտքէն, ծով արիւնէն
Որը, յուսանք, արդէն չորցած պիտի ըլլայ . . .
Քեզ պիտ՝ պատմեմ, ինչպէս արի այն կըտրիճներ
Ժըպիտ ի շուրթն կախաղանը ելան անվախ,

Կախաղանէն խըղդուկ ձայնով դեռ պօռալով,
«Դուն շնչ ապրիս, մեր կեանք, մեր սէր, ախ Հայաստան...»
Օ՜հ Թէ ինչպէս... հերոս զարմիկդ Վըռամշապուհ,
Փըրկարար ռումբն ահեղօրէն նետած պահուն
Հալածանքի ու բռնութեան ճամբուն վրայ
Դիպուածական դարձաւ ինքը զոհ շանթերուն...
Եւ Թէ ինչպէս, ուրիշ զոհ մ'ալ, դարձեալ մեզնէ,
Սահարայի անհունութեանց մէջ միս մինակ
Տառապեցաւ, ու պրեղեաց ջերմ կարօտը՝
Անապատի հոր արեւէն ալ աւելի
Վառեց, այրեց իր հէգ կեանքը, մոխիր դարձուց...
Եւ դեռ... տըղան, թեզ պիտ պատմեմ դեռ շատ դէպքեր,
Պատմութիւնը ամեն անոնց՝ որ հայ ծընան,
Հուրի, սուրի դար մը աւանդ, ուր կռուողը՝
Ազատ կեանք մը կամ պատուաւոր մահ մ'ունեցաւ...

*
* *

Այսօր՝ քու մայրդ չի մտածեր Թ'արդեօք տըղան,
Պիտի կանգնի օր մ'վայելուչ ու գեղեցիկ,
Համազգային հանճար մ'հսկայ, որուն համար
Համայն աշխարհ ըլլայ խորունկ երկրպագու.
Կը մտածէ միայն Թ' արդեօք պիտի սիրէ
Սուրբ կըռիւը հալածանքի, բռնութեան դէմ,
Պիտի սիրէ կըռիւը՝ զոր մայրը սիրեց,
Կռիւը՝ զոր իր նախահարքը սիրեցին...

Փառքը սիրեցէք

Ձեր համեստ գպրոցական ներքին հանդէսներուն մէջ կ՚արժէ որ երբեմն բարոյական դաս մը ալ լսէք, ապա՛քա։ Ցաւախ երկար խօսելու ժամանակ չեն ունենար ձեզ ձեր դասախօսակուհիները, որովհետև դուք զբաղուած էք շատ, և իրե՛նք ալ զբաղուած։

Այս անգամ թող մեր դասախօսութեան նիւթը ըլլայ այն թէ՝ պէ՞տք է սիրել փառքը . . .։

Գուցէ ըսած ըլլան ձեզի՝ «փառասիրութիւնը լաւ բան չէ՛» . բայց ես կ՚ըսեմ ձեզի, փառասէր եղի՛ք, որովհետև առանց փառասիրութեան յառաջդիմութիւն չկա՛յ . միայն պէտք է որո՛շ գիտնալ թէ՝ ո՞ւր է ճշմարիտ փառքը . ո՞րն է օգտակար և ազնիւ փառասիրութիւնը։

Փառասիրութեան շիտակ և ազնիւ ահմանը պիտի ըլլայ ետքը միայն պիտի կրկնեմ դարձեալ ձեզի, «փառասէ՛ր եղիք»։

Ազնիւ ու օգտակար փառասիրութիւնը, ապա՛քա, դիրքի և ճոխութեան մէջ չէ՛ . դիրքը և ճոխութիւնը շատ շատ մեր աչքերը կը շլացնեն ժամանակի մը համար և անհատին հետ կը մեռնին . դո՛ւք հետամուտ եղիք այ՛նպիսի փառքերու, որոնք յաւիտեան կ՚ապրին, անհատին մահէն ե՛տքն

ալ անթառամ պսակ բոլորելով անոր յիշատակին շուրջը։

Ձեր անձին սրտաքին փայլին, ձեր գեղեցկութեան և երիտասարդութեան մէջ փառք մի՛ փնտռէք, որովհետև ատոնք անցաւո՛ր են. օր մը կը ծերանաք, կը խամրիք, ձեր գեղեցկութիւնն ալ կը թառամի, և ո՛չ ոք օր մը կը յիշէ թէ՝ դուք երիտասարդ եղաք ու գեղեցիկ։

Ցեղի ազնուականութեան, մեծ ու համբաւաւոր ընտանեկան անունի մէջ մի՛ փնտռէք ձեր փառքը, վասն զի ցեղի ազնուականութիւնը ոչինչ է առանց սրտի ազնուութեան, ցեղը ապագայ չունի, որովհետև ան ա՛լ ուշ կամ կանուխ կը մեռնի։

Ճշմարիտ փառքը փնտռեցէք, գործունէութեան, ստեղծագործող և յաղթական աշխատութեան մէջ։

Գործեցէ՛ք ձեզի շնորհուած կարողութիւններուն չափով, ձեր մտքո՛վ, ձեր սրտո՛վ, ձեր հոգիո՛վ, և ձեր գործին մէջ փնտռեցէք ձեր փառքը։

Փայլուն կեանք ապրելու համար մի՛ ըլլաք. օգտակար կեանք ապրելու ջանացէք։ Երկրի մը ամէնէն խուլ ու մութ անկիւնն իսկ մարդ կրնայ փառք վաստակիլ, եթէ միայն գործել գիտէ։

Փայլուն ու ճոխ քաղաքներու մէջ ապրելու համար մի՛ ըլլաք անպատճառ, եթէ բազդը այնպէս անօրիներ է որ դուք ապրիք համեստ անկիւն մը. բայց ուր որ ալ ըլլաք, ստեղծեցէք ձեզ համար գործունէութեան ասպարէզ մը, թո՛ղ ըլլայ անոխաունակ, և հոգով փարեցէք այդ գործին, ու պիտի տեսնէք որ գործը ինքն ըստ ինքեան, ինչքան ալ ըլլայ համեստ, ձեզի պիտի փառաւորէ։

Եթէ բազդը ձեզի ժպտի, տղաքս, և հարուստ ըլլաք, ձեր փառքը մի՛ փնտռէք ձեր ժանեակները և թաւիշները ցուցադրելու մէջ, այլ ձեր շուրջը վխտացող անհամար թշուառութիւնները տեսնող եղիք, և ատոնք դարմանելու մէջ փառք փնտռեցէք։

Եթէ երկինք ձեզի տուած է շնորհք խօսելու և գրելու, ճշմարիտը և արդարը խօսելու մէջ փնտռեցէք ձեր փառքը, թո՛ղ ձեր խօսքերը շողոքորթ չըլլան, թո՛ղ ձեր գրիչը արդարութեան, իրաւունքի ախոյեանը դառնայ միայն։

Բարի, անկեղծ, ազատասիրտ և ներողամիտ եղիք, հպա՛րտ՝ ձեր արժանապատուութեան զգացումին մէջ։

Թո՛ղ ձեր նկարագիրները, յարգանք ու պատկառանք ներշնչեն ձեզի մօտեցողներուն։

Հեռո՛ւ, մակերեսութեան կրթութենէ, հեռո՛ւ թերթեւոսիկ վարմունքներէ, և ծեքծեքումներէ. խորունկ աղբիւրներ եղիք, լուրջ, մտածող, համեստ և քաղաքավար. արմատական զարգացում, հիմնական կրթութիւն ունեցէք. թո՛ղ ձեր խօսքերը ըլլան կշռուած, ձեր վարմունքը ու շարժուձեւերը՝ չափաւոր, ձեր հագուստները՝ մաքուր և պարզօրէն վայելուչ։

Լաւագոյն համարեցէք որ ձեզի տան «Վեհանձն և ազնուասիրտ» մակդիրը, քան գեղեցիկ և հարուստ տիտղոսը, որովհետև առաջինը անթառամ պսակ է ձեր անուան համար, իսկ երկրորդը՝ անցաւոր գովեստներ։

Ու եթէ ըլլայ որ ձեր մէջէն կոչուին դաստիարակութեան Ս. գործին, անոնք թող իրենց միակ փառքը փնտռեն՝ իրենց կրթած սերունդներուն գործքերուն մէջ. յիշեցէ՛ք Կրաքեաններու մայրը, որ իր ամենէն թանկագին փառքը իր զաւակներուն բարոյական արժանիքները կը նկատէր, և ազնիւ հպարտութեամբ կը շեշտէր ատիկայ, յիշեցէ՛ք որ դաստիարակուհի մը պէտք է կատարեալ մայր մը ըլլայ իր աշակերտ զաւակներուն համար, և տարամերժօրէն նախանձախնդիր անոնց մտաւորական, և մանաւանդ բարոյական բարձրութեան։

Եւ այսօր, մենք ամենքս ալ որ ձեր մտաւոր և բարոյական դաստիարակութեան համար կ՚աշխատինք, մեր փառքը ձեր յաջողութիւններուն մէջ կը փնտռենք, սիրելի՛ տղաք. մենք ալ փառասէր ենք, ու գիտնա՛ք, որքա՞ն երջանիկ ձեզ համար տրուած գովեստի մը կամ լաւ գնահատութեան մը համար, և ինչքա՞ն դժբաղդ եթէ տրուած վկայութիւնը գոհացուցիչ չըլլայ։

Դուք ձեր աչքին տակ ունիք կենդանի օրինակներ, որ յիշուած այս բոլոր տեսութիւնները իրենց անձին վրայ գործնականօրէն ու պայծառօրէն կը պատկերացնեն։

Միայն ձեզի կը մնայ, որ այդ գեղեցիկ և տիրական օրինակներէն օգտուելով և խրախուսուելով ձեր ազնիւ վարքով ու բարքով, ձեր եռանդուն աշխատասիրութեամբ դառնաք մեր ամենուս ճշմարիտ փառքն ու երջանկութիւնը։

ԿԵՍՈՒՐԸ

[ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ]

Քի թարմ ու ծիծաղկոտ, իր տասներկու գարուններ-ով, գուրգուրանքի ու խանդաղատանքի ջերմիկ մթնոլորտէն ինկեր էր ան, գահավէժ անկումով, խոժոռ տուն մը՝ ուր խիստ նայուածքներու, կոպիտ վարմունքներու միայն հանդիպեր էր . . . ինքը՝ որ մինչև այդ օրը համբոյրի, գլգուանքի, մշտական ծիծաղի մէջ ապրեր էր . . . :

*
* *

Արդարև ինչպէ՞ս կատարուեր էր այս յեղակարծ, դառն փոփոխութիւնը իր անո՛ւշ կեանքին մէջ . հապա՛ ապա՞ յիշատակը պահեր էր այդ դէպքին, թէպէտ երկար ժամանակներ ալ անցած չըլլային այն սե՛ւ օրէն ի վեր :

Այո՛ . . . կը յիշէր թէ՝ օրին մէկը մայրը զինքը համբուրեր էր, շա՜տ յուզուած, ակամէն ի վար սահեցնելով կարգ մը խորհրդաւոր խօսքեր, ու խրատներ՝ զոր անկարող էր ըմբռնելու և հասկնալու այն տարին . հայրը՝ ձեռքը գրեր էր գլխին, օրհներ և գրկեր էր զինքը արտասուալից աչքերով . . . :

Կը յիշէր թէ՝ իրեն հագցուցեր էին սիրուն կարմիր զգեստներ, և ինքը՝ մանկական կայտառուն հրճուանքով, բոլորովին գրաւուած այդ նոր ազուոր հագուստներուն պերճանքովը շատ քիչ ուշադրութիւն ըրեր էր իր հօրն ու մօրը արցունքներուն, ու չէ՛ր հարցուցեր նոյնիսկ թէ ինչո՞ւ և ի՞նչ բանի համար կը զարդարէին զինքը այսպէս։

Մէկ ալ գլխէն վար ձգեր էին աւանդական հատ ու ծանր քօղը, և տարեր՝ մեծ սենեկին մէկ անկիւնը, պատուիրելով որ հանդարտ ու լուռ կենայ հոն։

Եւ ահա քիչ ետքը սկսեր էր խուռն բազմութիւն հաւաքուիլ իրենց տան մէջ. ազգականները, բարեկամները, դրացիներ. անոնք մօտեցեր էին իրեն, և իր ականջին փսփսացեր էին խորհրդաւոր ու կէս շարաճճի շեշտով մը. — «Աղջի՛կ, հարս պիտի ընենք քեզի...»։

Եւ ահա, սա պարզ խօսքը, մէկէն ի մէկ լուսաւորեր էր այդ օրուայ սարսափելի գաղտնիքը...։

Ահռելի իրականութիւնը մերկապարանոց ոնկուեր էր իր աչքերուն առջև...։

Հա՜րս պիտի ըլլար... ատո՞ր համար էր ուրեմն որ զինքը զարդարեր, պճներ, և հոգ՝ այդ անկիւնը կեցուցեր էին... ատո՞ր համար մայրը կ՝ուլար իրեն նայելով, և ամենքը տան մէջ, տարօրինակ վարմունք մը ունէին իրեն հետ. խանդագին գորով մը, անսովոր ըլլալու չափ կրկնուող հանդուրժ գգուանքներ, խառնուած ցաւագին յուզմունքի մը, զոր մարդ կ՝ունենայ իր մէկ սիրականէն բաժնուելիք պահուն...։

Հա՜րս... շա՜տ տարտամ միւնոյն ժամանակ շա՜տ տըխուր գաղափար մը ունէր ինք հարսնութեան վրայ...։

Ինքը կը ճանչէր դրացի Խեչօէնց հարսը, քեռի Մրտօին հարսը...։ Իրմէն քիչ մը մեծ էին անոնք տարիքով, բայց որքա՜ն տխուր, որքա՜ն լուրջ կ՝երեւէին...։ Շատ անգամ տեսեր էր որ կ՝ուլային, երբ ինքը կ՝լսէր զանոնք իրեն հետ խաղալու...։

Երբ անոնց մօտ կը վազէր, կը քաշկռտէր անոնց մազերը, հագուստները... անոնք կը վախնային, ու կը փախչէին, մատերնին դնելով իրենց շրթունքներուն վրայ. «Հապա թէ տատը տեսնէ՞... հապա թէ մամը տեսնէ՞...» կը մրմնջէին մեղմիւ, աչքերնուն մէջ ունենալով սակայն

խաղալու, վազվռտելու, գզուլտելու տենչանքին բոցը, խառնուած մամուն ու տատին տոթած ահարկու սարսափին . . . :

Օր մըն ալ ճամբուն վրայ տեսեր էր Խեչօէնց հարսը, որ կոնակը փայտի խուրձեր բեռցած, տուն կը դառնար . վազեր էր անոր մօտը, ինքը չարտաճճին, և տեսեր էր որ վազվռտուք խաղայ իրեն հետ :

Հարսը հրապուրուեր էր :

Վախուն՝ նախ ուզեր էր դիմադրել այդ հրապուրանքին, ապա պատանեկան աւիւնը այս անգամ յաղթելով խոհեմութեան յորդորներուն, մէկ կողմ թողեր էր խուրձերը, և սկսեր էր իրեն հետ վազվզել բաց դաշտին վրայ . . . :

Մէկ ալ յանկարծ ճամբուն անկիւնէն երեւցեր էր կեսարը . դաժան նայուածքով, բարկութենէն կապարմիր կարած . և յարձակելով, անշարժ ու սարսափէն մեռելի պէս սառած հարսին վրայ, ձեռքի փայտովը ուժգին խփեր էր անոր գլխին :

Եւ Սմառա տեսեր էր, ի՞նչպէս անոր ճակտին սպիտակ մորթը ճեղքուելով, յանկարծ կարմիր արիւնը ցայտեր էր դուրս . և ի՞նչպէս խեղճ աղջիկը բարձրաձայն լալով, արիւնը արցունքին խառնուած, կարմիր սկսեր գծելով երեսներն ի վար, խուխուերը շալկեր՝ և կեսրոջը առջեւն ինկած՝ դարձեր էր տուն . . . :

Իր մանկական վառվռուն երեւակայութեան վրայ ահռելի կերպով ազդեր էր այդ տեսարանը . և շատ գիշերներ ընդոստ արթնցեր էր քունէն, լսելով դեռ կարծես խեղճ աղջկան յաւագին հեծկլտանքները, և աչքերուն առջեւ կենդանի պատկերացած անոր արիւնով ու արցունքով թրջուած մարմրոսի դէմքը . . . :

Այն օրէն, խորունկ սարսափ մը ունեցեր էր հարանութենէ . և երբ ա՛յդ օրը, ի՛ր հարանիքին օրը իրեն ըսեր էին, «Աղջի՛կ, հարս պիտի ընեենք քեզ .» Սմառա սարսռացեր էր եր կարմիր քօղին տակ, և յանկարծ սկսեր էր բարձրաձայն ճչալ .

«Մայրի՛կ . . . ո՜խ . . . մայրի՛կ . . . դեռ հարս մի՛ ընէք»:

Մայրիկը վազեր էր քովը, զինքը գրկեր, շաքար ու պըտուղ տուեր էր իրեն, համբուրեր էր զինքը անուշ բառերով . «Աստուծոյ կամքը ա՛յս է որդի՛» ըսեր էր . և Սմ-

մասա կէս մը համոզուած աւելի՛ շաքարին ու պտուղին վայելքէն, քան մօրը խօսքերէն ու խրատներէն, թողեր էր որ զինքը հարս ընեն . . . :

Քիչ ետքը եկեր էր և՛ փեսան իրեններովը . տանուէ տարուան կարիճ տղայ մը, սեւակն, սեւայօն, պարթև հասակով :

Որոշեալ ժամուն գնացեր էին տունորդօք, հարսնեւորներով, եկեղեցի, գիւղին միակ քահանան, ծերունի Տէր Մարտիրոսը պատկեր էր զիրենք, որմէ ետքը ի դարձին, տավուղն ու զուռնան զաւառական տաղեր ու խաղեր սկսեր էին հնչեցնել . . . :

Երիտասարդները պար էին բռներ, հարսաւ եկողները գինիին ազդեցութեան տակ, քիչ մը տաքցած գլուխներով, սկսեր էին հարսին ուղղեալ տաղեր երգել :

«Ծերմակ ճակտիդ կարմիր ոսկի
Շարեմ նապերո՞վ . . . նապերո՞վ . . . »

Եւ իրօք ալ շարք մը կարմիր ոսկիներ քօղին վրայէն կապեր էին Ալմաստի ճակտին վրայ :

Հարսը տանելու ժամը հասեր էր . այն խորունկ յուզմունքներով ու մեծ խռովքներով փոթորկուող ժամը . . . ուր մէկ կողմէն բաժանումի դառն վիշտը, միւս կողմէն բացարձակ և օրինաւոր տիրացումի ուրախութիւնը, մէկ կողմէն արցունք, միւս կողմէն ժպիտ, այնքա՛ն հակասական օրէն զիրար կը խաչաձեւեն . . . :

Հարսնեւորները մօտեցեր էին հարսին միաբերան երգելով .

«Աղջի՛կ, քեզ ո՞ր մարն է բերեր . . .
Այն սեւ աչուի մարն է բերեր .
Մարն է բերեր մեզի համար,
Մենք ենք եկեր քեզի՛ համար » :

Եւ կարիճները զրեթէ քաշելով Ալմաստը իրեններուն գրկերէն, կը տեղաւորէին զայն ձիուն վրայ, մինչ նա կը ճչար, «Մայրի՛կ . . . մայրի՛կ . . . » :

Եւ մայրիկը այդ պահուն նուազած ինկեր էր արդէն գետին, և հայրիկին ալեխառն պեխերուն վրայ խոշոր արցունքներ կը գլորուէին մարգարիտներու պէս . . . :

Այո՛ . . . կը յիշէր այդ իրեն համար սե՛ւ օրը՝ ուր տարեր, նեռեր էին զինքը հոդ, հիմակուայ այդ մռայլ տունը, ուր խօլականի պէս դաժան կեսուր մը կը ցցուէր իր դէմ, ծայրայեզօրէն պահանջկոտ ու անտանելի, անժպիտ ծերունի տատ մը, որ իր սեւեռուն, զննող ու ցուրտ նայուածքներով կը խրտչեցնէր զինքը, կը սառեցնէ՛ր իր մանուկ սիրտը . տալուբտանք ու տագրտիք, որոնք իր այդ տունը մըտնելէն ի վեր, գէթ անգամ մը չէին խնդացեր երեսին . . . :

Հիմա հարս էր . ամուսին ունէր առանց գիտնալու տակայն թէ ի՞նչ է ամուսինը . . . իր կեանքը փոխուած կ՚ըզգար, առանց որոշ ու ճշգրիտ գիտակցութիւնը ունենալու այդ փոփոխութեան . տա միայն կ՚ըմբռնէր որոշակի թէ՝ ամուսնութիւնը գերեզմանը եղած էր իր զուարթ տարիներուն, և այդ՝ բաւ էր որ անիծէ՛ր զայն . . . :

Կ՚զգար թէ՝ ամուսնութեամբ՝ տանջանքներու նոր ու անծանօթ աշխարհ մը թեւակոխեր էր, իրեն համար դառնութիւններով լեցուն կեանք մը . . . :

Դեռ տասներկու կամ տասներեք տարեկան մատղաշ հասակին մէջ, ուր ժպտիլ, երգել, կայտռել միայն կը խնդրէ մանուկը, կը գտնէր ինքզինքը այդ մռայլ տան մէջ, ուր պիտի մարզուէր միայն լաւ հարս ըլլալու, խատաբարոյ կեսուրի մը հսկողութեան տակ, լաւ աշխատելու, առտուն ամենէն կանուխ ելնելու և իրիկունը ամենէն ուշ քնանալու, այդ տարիքին մէջ՝ ուր անուշ ու խոր քունը միայն պիտի կազդուրէ, ուռճացնէ, բազմացնէ իր մատա՛ղ մարմինը . . . :

Եւ իրերու բնական հետեւանքով, դժբաղդ աղջիկը, անգիտակից բոլորովին նշանակութեանը այն կապին՝ որ զինքը զուգած էր յաւիտենապէս անոր որ իր ամուսինը, իր կեանքի ընկերն էր, կ՚ատէ՛ր զայն հոգւով, իր ամենէն մեծ թըշնամին նկատելով . վասն զի ան՝ զինքը բաժներ էր ծնողաց գրկերէն, և նեռեր էր այդ սառուցիկ տան մէջ, շարչարելու համար իր մանկութիւնը, և բանտարկելու համար իր անմեղ ու երջանիկ տարիներու ազատութիւնը . օ՜, անգութը՜ . . . :

*
* *

Եւ հիմա հարս էր. վզին դրուած էին ծանր պարտակա-նութիւններ, իր ուժէն շա՜տ վեր, զորս պէտք էր տանէր լռին, առանց հառաչի մը, առանց նոյն իսկ արցունքի մը...։

Եւ իրիկունը հպիւ ազատուած իր չարչարանքներէն, գե՛տինը ծունկի վրայ նստած, երբ մանկական անդիմադրե-լի քունի մը ծանրութեան տակ կը փակուէին իր խոնջ ար-տեւանունքները, գլուխը կը տարուբերէր մէկ ուսէն միւսը, և անուշ երազի մը թեւերուն վրայ կը թռչէր դէպի իր մօր տունը, իր եղբայրներուն ու քոյրերուն գիրկը, ա՜ա՛ ոտքի խիստ հարուած մը կը մշտէր իր կողը, և ընդոստ կ'արթնը-ցնէր զինքը քունէն։

Ի՜նչ... երբ կեսուրը արթուն էր, երբ տատին չպուխին կրակը կը հանգչէր, ինքը կը քնանա՞ր...։ ու չէ՞ր փութար կրակը վառելու...։ Ի՞նչ պիտի ըսէին հարեւան Մկօէնք, եթէ տեսնէին իրենց հարսը այդպէս անպատկառ իր մեծե-ղուն առջև... պիտի ձաղկուէ՞ր իրենց պատիւն ու ար-ժանապատուութի՞ւնը. պիտի ծաղրուէ՞ր իրենց տունը...։

Եւ Ալմաստ կ'ելնէր ոտքի ամօթահար, տակուին կէս քունի մէջ, երերալով իր ոտքերուն վրայ, շշմած, յանդի-մանութիւններու ու մեղադրանքներու տարափի մը տակ. և կը վազէր տատին չպուխին կրակը արծարծելու, ապա կ'ուզար կը նստէր ծունկի վրայ, մինչև որ մեծերը երթա-յին ննջելու։

Այո՛... պէտք էր ապասեր մինչև որ անոնք բարեհա-ճէին թոյլտուութիւն ընելու որ երթայ հանգստանայ ինքը...։

Օ՜... ախո՜ւր օրեր էին ասոնք.

«Ա՜խ, մայրիկ, կը մնչէր Ալմաստ, գիշերները երբ ա-ռանձին կը մնար. և անկողնին մէջ, գլուխը գարձուցած դէպի այն կողմը, ուր գիտէր թէ լեռներու ու տարերու ե-տին հեռաւոր մշուշներու մէջ կորսուած, կը մխար իր հո-րենական տան օջաղը, կը քնանար արցունքներով։

Այսպէս կ'անցնէր տհա Ալմաստ կեանքի առաջին գեղա-ծիծաղ տարիները, որոնց յիշատակը ինչքան անուշ է մեզի՝ նոյնքան և՛ դառն է դաւառացի հարսներու համար։

Ցորչափ ազատ են անոնք, ազջիկ, իրենց ծնողաց թեւե-րուն տակ, ազատ թռչնիկներ են, անտառներու, լեռներու ու ծառերու վրայ թռչտկող, բայց որ անգամ մը ամուսնա-կան կեանքը կը սկսի, ա՛լ խօսել չկայ, երգել, խնդալ, խա-

դալ ամօթ է հարսին համար, նա պարտաւոր է խեղդել իր մէջ պատանեկան տենչանքներն ու բնազդները. նա լուռ, հնազանդ, հլու, պէտք է տանի իր բեռը, փոյթ չէ՛ թէ ուսերը կքին, կորանան. տքալը իսկ արգիլուած է...:

Տակաւին մանուկ՝ չհասկցած, չըմբռնած թէ՝ ի՞նչ բանի համար կը պատրաստուի, ի՞նչ է իր կեանքի կոչումը. ահա՛ յեղակարծօրէն կը տեսնէ ինքզինքը իր կոչման ու պարտականութիւններուն մէջ:

Շուարած ու տատամսոտ կը սպասէ որ իրեն խօսին: Կին է, ու կը սպասէ որ իրեն հրահանգներ տան, իր պարտականութիւնները իրեն ճանչցնեն: Մայր է, ու կը սպասէ որ իր մանուկը խնամել սորվեցնեն իրեն: Ընտանիք մը ունի, և այդ ընտանիքը կառավարելու համար կը սպասէ որ ճար մը, ճամբայ մը ցոյց տան իրեն:

*
* *

Արդէն երկու տարուան հարս էր Ալմաստ, երբ յղացաւ իր առաջին զաւակը:

Բայց իր այդ փափուկ վիճակը երբէք ո՛և է փոփոխութիւն չբերաւ կեանքին մէջ: Ըստ սովորականին պիտի ելներ առտուն ամենէն կանուխ, հաւախօսի պահուն, օրն ի բուն չարաչար պիտի աշխատէր, և պիտի քնանար ամենէն ուշ:

Օրէ օր կը նիհարնար ու կը ժդունէր:

Առտու մը ինքզինքը շա՜տ ուժասպառ զգաց. Ջուրի սափորը իրեն այնքան ծանր թուեցաւ որ գեռնէն վերցնելու ճգնած պահուն, ձեռքերէն սահեցաւ և ահագին շառաչմամբ կոտրեցաւ:

— Շա՛ն աղջիկ, գոռաց կեսուրը զայրագին, աչք չունի՞ս... և ուժգին ապտակ մը խփեց անոր երեսին:

Ալմաստի ամուսինը, Գրիգոն հոն մօտը կը լուացուէր, տեսաւ կնոջը արցունքները, անիրաւ ու դառն նախատինքին տակ անոր սարսռացող մարմինը. և չդիմացաւ:

— Մա՛յր, ըսաւ մեղմիկ, ինչո՞ւ կը զարնես. գիտութեամբ չըրաւ անշուշտ:

Եւ կարծես այս անսովոր ու յանդուգն միջամտութենէն

ի՛նքն ալ շուարած, մեծ յանցանք մը գործածի պէս, աչքերը խակոյն խոնարհեցուց . . . :

Իսկ մայրը, զարմանքէն բերանը լայն բացած, մեայլ դէմքով, և չարագուշակ նայուածքով .

— Ա՜յ հողը գլխիդ, գոչեց, ավոր նայէ՞ . մօրդ դէմ կը խօսիս հա՞, չա՛ն լակոտ :

Այս միջոցին սակայն Ալմաստ վերցուցեր էր իր արտասուալից աղուոր աչքերը ամուսնոյն վրայ, որը յանդգներ էր ընել այն՝ ինչ որ աննեղելի արբապզծութիւն մը կը նկատուէր գաւառի աւանդական բարքերուն ու սովորութիւններուն համար . այն է՝ պաշտպանել կինը՝ մօրը դէմ . . . :

Սիրտը ակներ էր ուելի արագ բաբախել կուրծքին տակ, թեթեւութիւն մը, յանկարծական սիրտանք մը, տեսակ մը անճառ ու խորունկ ուրախութիւն կը ճառագայթէր իր հոգւոյն խաւարին մէջ :

Ի՞նչ էր ատոր պատճառը . ինքն ալ չէր գիտեր տակաւին : Այդ յանկարծական զգայութիւնը դեռ անծանօթ էր իրեն :

*
* *

Օրերը կ՚անցնէին անուշ երազի մը պէս Ալմաստին համար : Գրեթէ ա՛լ չէր զգար իր տառապանքները :

Աղջկնութեան երգերն ու պարերը կը յիշէր, ու եթէ չքաշուէր կեսրոջմէն, առջի աշխոյժ ու վառվռուն աղջիկը պիտի դառնար դարձեալ :

Երկունքի դժնդակ ցաւերը, ծննդաբերութեան վտանգաւոր ժամը զինքը չէին վախցներ ալ եւս . ընդհակառակը ուրա՜խ կը զգար ինքզինքը . ուրա՜խ ու երջանիկ . . . :

Իր հոգեկան այս զուարթ վիճակին ազդեցութեանը տակ, ինքզինքը տրամադիր կը զգար սիրելու ամենքը . մինչև իսկ բռնաւոր կեսուրը, և նեղոդամիտ զրեթէ ժպտուն համբերութեամբ կ՚ընդունէր անոր տուած ամեն մէկ վէրքերը, զրկանքներն ու ցաւերը :

Երբ կը տեսնէր իր ամուսին Գրիգորին հոգածու և զգուշաւոր նայուածքը հանգչած իր վրայ, ամեն բան կը մոռնար Ալմաստ, և իր հոգւոյն ու արտին մինչև խորերը կը

ապրանքը նոր, անծանօթ, բայց և այնպէս անբացատրելի կերպիւ անուշ զգացումի մը ապրանքներով։

Այն օրէն, երբ Գրիգոն զինքը մօրը անիրաւ ու գազանական վարմունքին դէմ պաշտպանելու դիւցազնութիւնը ունեցեր էր, ինչ որ, ոչ ոք իր շուրջը իր ծանօթներուն մէջ համարձակած էր ցարդ. իր կուրծքին տակ յեղակարծօրէն բռնկեր էր տեսակ մը անգիտակից յարգանքի ու պատկառանքի խառնուած այն բուռն ու ջերմիկ զգացումը, որը տակաւին չէր կրնար որոշել, այնքան տարբեր էր սա առաջին օրերուն մէջ, իր ամուսնոյն հանդէպ ունեցած սուր ու դառն զգայութիւններէն։

Հիմա երջանիկ կը զգար ինքզինքը. և կ՚ըմբռնէր թէ՝ ա՛լ երանութիւններով զեղուն կեանք մը պիտի սկսէր իրեն համար, իր ամուսնոյն ու ծնելիք մանկան միջև. ու կը խայտա՞ր...։

*
* *

Այս տարի հողը արգասաւոր չէր եղեր. գրեթէ ոլոգիւնք չէր տուեր, և Գրիգոէնք պարտական մնացեր էին գիւղին Ռէս Խէչօին։

Տունորդօք տխուր էին. և կեսուրը աւելի՛ մռայլ ու դաժան դարձեր էր այն օրէն՝ երբ Ռէս Խէչօն եկեր էր վերջնապէս իրենց յայտնելու որ, եթէ երեք ամսուայ ժամանակամիջոցին մէջ պարտքը չհատուցանեն, պիտի գրաւէ անմիջապէս իրենց արան ու այգին։

Իրիկուն էր. անեցիք սեղանին շուրջը բոլորուած կը ճաշէին. Ալմաստ կ՚ապասաւորէր։

Ծերունի տատին դէմքը սովորականէն աւելի տխուր էր։

— Տգա՛յ, բաւ նա յանկարծ Գրիգոին դառնալով, ճար մը մտածեցի՞ր մեր օձիքը սա շանորդի Խէչօին ձեռքէն ազատելու համար։

— Ի՞նչ մտածեմ, հա՛յր, դուն ինձմէ լաւ կը խորհիս, թոթովեց Գրիգոն։

— Ես մէկ ճար միայն գիտեմ, որդի՛, պատասխանեց ծերունին դողդոջուն ձայնով մը. դուն ուժով ու կարիճ ես. վազուընէ մայրդ թող կապէ անկողինդ, պանդխտութեան

Երբեմն քանի մը ամսուայ համար. աշխատէ՛, ջանա՛ դրամ շահիլ, և մեր արան ու այդին ազատել Խէչօին ճանկերէն...։

Գրիգոն դեղնեցաւ և անգիտակցաբար աչքերը դարձուց Ալմաստին վրայ, որը այդ միջոցին հաց կը կտրէր։

Մէկէն արեան լայն շիթեր թրջեցին հացին շերտերը...։

— Աղջի՛կ, ի՞նչ եղար, գոչեց տատը, արիւնը տեսնելով։

Դժբաղդ աղջիկը, յուզումէն ու արտաղոդէն հացը կտրելու պահուն՝ ձեռքը կտրեր էր։

Ահա ծունկերը դողդողացին ու չոքեցաւ գետնին վրայ...։

Այդ երիկունն իսկ երկունքի տագնապներուն մէջ ինկաւ ան. և մեծ դժուարութեամբ ծնաւ իր առջինեկ զաւակը. աղուր ու քաջառողջ աղջիկ մը...։

Աղջի՛կ... օտարի մայ. ուրբոր ուտող բերան...

Եւ կեսուրը զայրոյթէն խենդի պէս վազվզելով սենեակներուն մէջ.

— Քա՜ծ է բերեր, քա՜ծ... կը զոռար, սեւանա՛յ օրը... ճինաը կտրուի, ջահիլ տղուս օրը սեւացուց...։

— Է՛հ, բան չկայ, որ մի անգամ ալ քաղ բերէ, տունէն դուրս կ՚ընենք զինքը — կ՚ըսէր տատը իր կինը հանգարտեցնելու համար — այնպէս չէ՞ Գրիգո։

— Ես գոհ եմ Ամուծոյ պարգեւածէն, աղջիկ կամ տղայ ինձ համար նոյնն է, կը պատասխանէր Գրիգոն. և այդ առն ու լուրջ պատասխանը տալի՝ ան կը հրահրէր իր մօրը կատաղութիւնը։

Մի քանի օր ետքը Գրիգոն դողդողջուն համբոյր մը դրոշմելով իր մանկան ճակտին վրայ, և գաղտագողի սիրավառ նայուածք մը նետելով իր կնոջ, ձեռք կ՚առնուր պանդխտութեան գաւա՛զանը, ու կը հեռանար տունէն...։

* * *

Վիշտը, տագնապը, և ամուսնէն բաժնուելու ցաւը — այն ամուսնէն՝ որը սկսեր էր սիրել դեռ նոր արթնցող կոյս սրտի մը բոլոր ուժգնութեամբն ու գուրգուրանքովը, և որը իր պաշտպանը, իր բարեկամը, իր սիրելին էր միւնոյն ժամանակ — կսթը ցամքեցուցեր էր Ալմաստի ատինքներէն։

Մանուկը այծի կաթով անանելու դատապարտուած էր։

Գաւառական բարքերու ու սովորութիւններու համեմատ, նորահարս մայրը պիտի քաշուի իր մանկանութեամբն ու հոգածութիւնը ստանձնելէ, զա՝ հայ կնոջ աւանդական պարկեշտութեան արատ՝ հետեւաբար և սոսթ է համարուած։

Նա՝ բոլորովին չէզոք դիրք պէտք է բռնէ ընտանեկան կեանքի մէջ և հանդէպ անոնց՝ որոնք իր կեանքին է՛ն սրբազան մասնիկներն, իր հոգւոյն է՛ն թանկագին հատորներն են։

Ուստի և Ալմաստ ստիպուած էր գլուխ ծռել այդ անիրաւ ու անբնական պահանջքին առաջ, և իր սիրական մանուկը թողուլ խստաբարոյ կեսրոջը անտարբեր ու կամայական խնամքներուն . . . ։ Ու արդարև ի՞նչ են սէրը, խնամքը անոնց՝ որոնք իրենք չեն ծներ զաւակը . . . ։

Ապոնք ինչքան ալ գորովալի ինչքան ալ խղճմտալից ըլլան, միթէ կրնա՞ն հաւասարիլ մօր մը խորունկ անձնուիրութեանն ու զերագոյն խանդաղատանքին։

Ալմաստ կը տեսնէր որ մանկան մաքրութեանը հոգ չէր տարուեր . մանուկը բաւարար սնունդ չէր ստներ, վասն զի կաթը հարկաւոր քանակութեամբ չէր տրուեր անոր. այնպէս որ խեղճը անօթի, և թաց ու ոտոտ շորերուն մէջ անհանգիստ, օրն ի բուն կը ճչար . . . ։

Եւ Ալմաստ կը զգար թէ՝ մանկան կրած զրկումներուն ու չարչարանքներուն պատճառը՝ աղջի՛կ ըլլալն էր . . . անո՛ր մեռնի՛լը կ՚ուզէին . . . օ՜հ, ա՛յդ ըսեր էր իրեն կեսուրը կատաղութեան վայրկենի մը մէջ . . . Ինչո՞վ էր նա մեղաւոր միթէ աղջիկն ալ Աստուծոյ ստեղծածը չէ՞ . . . ։

Անգամ մը, երբ կեսուրը նեղացած տղուն անդադրում ճիչերէն, կը պոռար ու կը գոռար . Ալմաստ զղջոյնն ձայնով մը վերջապէս յանդգներ էր ըսելու թէ՝ տրուած կաթին անբաւականութիւնն է տղուն լացին պատճառը, թէ մանուկը անօթի է։

Կեսուրը՝ վիրաւորուած իր մեծի, ու բանպէս տանտիկնոջ արժանապատուութեան մէջ։

— Շա՛ն աղջիկ, գոռացեր էր, զո՞ւն եղար այսքան տարուայ կնկան խելք տրվեցնողը . ես իմ ըրածս չե՞մ գիտեր . ավո՛ր նայէ . . . կեսրոջը խրատ տալու հլեր է — յետոյ զայրացին նայուածքով մը — ահ՛ւ է եղեր այն օրը որ գրան

սեմը ուք կոխեր է քեզի պէս լկրտած հարսը։

Խեղճ ոդջիկը նախատինքներու այդ տարափին տակ սառանած լռեր էր . . . և ոգան միշտ կը ճչար . . . :

Ո՞ւր էր նոր ծնած օրերուն այն ազնիւ ու լեցուն դէմքը, նիհարցե՞ր, գունատե՞ր, ոգեղցեր, կիսա՞խք էր դարձեր իր ճերմակ հացի պէս ճերմակ ու փափուկ մարմնիկը։

— Աստուա՜ծ իմ . . . կ՚ապօթէր թշուառ նորատի մայրը . Աստուա՜ծ իմ, գոնէ ա՛ռ հոգին, որ այսպէս, աչքերուս առջև անօթի, չարաչար տանջուիլը չտեսնեմ իմ խեղճ զաւակս . . . ու կուլա՜ր, կուլա՜ր . . . ծուած մանկան օրօրոցին վրայ . . . Արցունքները կը թրջէին ոգուն դէմքն ու բերանը, որը կը ծծէր այդ ոգին ու լեղին անյագաբար, կաթի տեղ . . . :

*
* *

Գիշեր էր . . .

Ամենքը քնացեր էին տանը մէջ։

Մանկան օրօրոցին քովիկը, Ալմաստ երկնցած կապերտին վրայ, բայց աչքերով կ՚երազէր . . . :

Մոքովը զէպ ի Գրիգոն կը թռչէր այս պահուս . . . : Ա՜խ . . . ի՞նչ կ՚ընէր արդեօք ան հիմա. յաջողե՞ր էր ձեռնարկներուն մէջ, պիտի գա՞ր շուտով . . . :

Կ՚երեւակայէր զայն օտարութեան մէջ, միա միենակ, արխո՜ւր . . . ծանր աշխատութիւններու բեռին տակ կորաքամակ, ուժասպառ . . . :

Իրա՛ւ անցեալ օր նամակ մը առեր էր տարը անտրմէ, բայց ինքը ամօթխած հարսի պարտաւորիչ նկատումներով չէր համարձակեր մանրամասն տեղեկութիւն հարցնել . . . :

Որչա՜փ կը տանջէր զինքը անտարգութիւնը, սիրելոյն վիճակին մասին . . . :

Տկար ճիչ մը սթափեցուց զինքը իր թմրութենէն . իր զաւկին ճիչը . . . :

Ծունկերուն վրայ եկաւ ան . մոռնալով Գրիգոն . և զգալով որ սիրոյ կին ըլլալէ առաջ մայր է ինքը . և ծռեցաւ մանկան վրայ . . . :

Ազնիւ լիալուսին մը իր տխուր ու անուշ շողերով կը

լուսաւորէր օրօրոցը։ Մանկան աչքերը բաց էին, շրջանակուած լայն սեւ ծիրով մը։

Հապիւ շունչ կ՚առնէր ան։

Անբաւական անուշով նուազած այն գեղեցիկ աչքերը, անօթութեան սոսկալի տանջանքը այնքան սուր ու կենդանի արտայայտող այդ խեղճ աչքերը, մինչև հոգւոյն խորը սարսռացուցին Ալմաստը։

Խենդի մը պէս ցատկեց ոտքի։

Ականջ տուաւ։

Խորունկ լռութիւն կը տիրէր տան մէջ, ընդմիջուած միայն քնացողներուն երբեմնակի խորդիւններով ու հառաչներով։

Ցանդուզն որոշում մը երկիւղով ու անձկութիւնով խառնուած կը լուսաւորէր իր մռայլ դէմքը։

Տրան անդամ մըն ալ ճչաց . . . ուելի՜ նուազ . . .։

Ալմաստ տենդոտ շարժումով մը մարդերը ժողվեց. հանեց ոտքէն մուճակները, ոտնաձայնը լսելի ընել չտալու համար, առաւ սեղանին վրայէն կաթին դատարկ գաւաթը և բոպիկ ոտքերով սահեցաւ սենեակէն դուրս ինչաւ վար, սողոսկեցաւ մինչև ախոռը, ուր եղներուն ու կովերուն մօտ, իր գաւակը սնուցանող այծը ուլիկները չորս կողմը առած կը հանգչէր . . .։

Անոր սաթնագները առաւ ձեռքերուն մէջ, և սկսաւ սեղմել։

Տաք ու թարմ կաթը առատ փրփուրներով կ՚ինչնէր գաւաթին մէջ . . .։

Ա՜խ . . . ինչպէ՜ս կը նախանձէր, ինքը, բանաւոր մայրը, նայելով անբան մօր վրայ . . . զգալով որ իրմէ՛ն աւելի ճշմարիտ մայր էր նա, իրմէ՛ն աւելի բուն իր գերին մէջ . . . մայրութեան է՛ն տարրական, է՛ն անհրաժեշտ պայմանը, ձագերուն սնունդը, առատօրէն մատակարարելով անոնց . . . Իսկ ի՞նչ էր ինքը . . . մայրութեան անարժան էակ մը, որը բնութիւնը մայր ըրած էր, անօթի զաւկին հոգեվարքին միայն սկսանատես ընելու համար զինքը . . .։

Ցաւի ու զայրոյթի արցունքներ կ՚ողողէին իր դէմքը, երբ ոտքի ելաւ ան, կաթով լեցուն ամանը ձեռքը, և շունչը բռնելով, մտաւ իր սենեակը . . .։

Նոյն խորունկ լռութիւնը կը տիրէր տան մէջ . . .։

Մանուկը լայն բացած աչքերովը կը նայէր իրեն սեւեռուն։

Ծնրադրեց Ալմաստ օրիորդին մօտ, կաթով լեցուն գաւաթը պինդ սեղմած, անճառ երջանկութիւն մը ունենալով իր հալումաշ դէմքին վրայ ։

Վերջապէս պիտի կշտացնէ՞ր զաւակը . . . վերջապէս առնոր բերանին մէջ պիտի վայլցնէ՞ր կենսատու հեղուկը, լայն շիթերով, առատօրէն մինչև որ ա՛լ յագեցնար ան ։

Յանկարծ սառեցաւ Ալմաստ իր յափշտակութեանը մէջ ...։

Լուանի մեղմիկ շողերովը տեսեր էր կեսուրը, ուրուականի մը պէս ճեպ ճերմակ, ցցուած մօտակայ սենեկին կիսաբաց դրանն առջև ։

Զայրոյթն ու կատաղութիւնը ահելի արտայայտութիւն մը տուեր էին անոր արդէն դաժան դէմքին ։

Ամէնի կը սուլէր, քան կը շնչէր ։

— Սե՛ւ երես . . . շշնչաց ան սեղմուած ակռաներուն մէջէն . և մօտի աչտանակը յափշտակելով նետեց հարսին գլխին ։

Խուլ հեծկլտանք մը միայն եղաւ դժբաղդ աղջկան պատասխանը ։

Ու կեսուրը իր դիրքը, տիրականութիւնը, իր արհամարհուած դերն ու նշանակութիւնը ա՛յս արժանաւոր կերպովը յարգել տուած ըլլալուն համար հպարտ ու բարձրագլուխ, մտաւ գարձեալ անկողինը, և քնացաւ արդարներու քունով . . . ։

Առաւն, երբ տնեցիք սովորական ժամուն արթնցան, նախ զարմացան չտեսնելով հարսը, որը շատ կանուխ ամենէն առաջ ոտքի վրայ կ՚ըլլար, գրաղուած իր տօրեայ գործերովը ։

Մտան իր սենեակը, և գտան դայն թմրած, մանկան օրրոցին վրայ, կարկամած մատներուն մէջ դեռ պինդ սեղմած կիսով չափ թափուած կաթին գաւաթը ։

Մանուկը մեռա՞ծ և արդէն սառա՞ծ էր . . . իր մեծամեծ աչքերը ահարկու սեւեռումով մը գամած իրենց աչքերուն, և իր մանուկ-հոգեւարքի այդ խոժոռ ու տանջուած նայուածքին մէջ ունենալով կարծես սա՛ դժնդակ հարցումը .

«Ինչո՞ւ կը տանջէք մայրս» ։

ՊԷՏԷՎԻՆ

[ԱՐԱԲԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ]

Ծրկայն պուրնուկ մ' ծըգած իր լայն ուսերուն,
Ոտքը բոթիկ արագ արագ կը գընայ.
Աջ ձեռքն պահած մէջ պուրնուգին ծալքերուն,
Զախովն ջրոյս շարժէ եղէգ մը հսկայ։

Աչքերն յառած անծարթ կէտի մ' անորոշ,
Անուշագիր ու երազուն նա կ'անցնի.
Թուի լըսել իրեն ծանօթ ձայն մ' անուշ
Որ կը խօսի անտառներէն հայրենի...։

Եւ ով գիտէ... ինչեր կ'անցնին իր մտքէն.
Երբեմն ուժգին կը սեղմէ բունն եղէգին.
Ու կ'երեւի սեւ նայուածքին կրակէն,
Դառն գաղտնիք մը ծածուած կայ խորն իր կեանքին։

Գեղեցիկ է անապատի այդ ուղին...
Բարձր հատակով, հպարտ նոճոյ մը հանգոյն,
Խոշոր աչքերն ունին նայուածք խոր, մթին
Որ սարսափի պոռ մը կուտայ թեզ խակոյն։

Իր պուրնուգին կէս մը բացուած ծալքերէն
Կ'երեւայ թուխ, հուժկու, մազոտ կուրծքը լայն.
Գրուագ մազերն դուրս են կախուեր փաթթոցէն,
Ի' անոր ճերմակ ծոպերուն հետ կը խաղան։

Խորհրդաւոր երկու նըշան ասդաձեւ,
Վրգին մօտիկ՝ աղօտ հետքեր են ծողեր,
Եւ արեւէն խանձած դէմքին վրայ սեւ
Նոր ծրլեր են մորուաց ցանցառ նուրբ թելեր։

Թուխ գանգուրներն հոսուն տուած, վայրենին ։
Զեռքը պահած միշտ պուրնուզին ծալքին տակ ։
Նման այն կոյս անտառներու առիւծին ,
Կրնայ կատղած մերթ ակռաներն ապիտակ ։

*
* *

Ժամանակ մը, չի հեռացած դ'ու երկրէն ,
Կ'ապրէր անհոգ, այդ բընութեան սէգ տղան ։
Հըպարտ ու բաջ, սիրուած երկրին բաջերէն,
Իրեն ցեղին փառքը, պարծանքն էր իր տան ։

Լարած աղեղն, ծրգած կապարճն ուսերուն ,
Իր նըժոյգին վրայ ճերմակ կը սուրար ։
Պատերազմի վէս ա.տուածի մը հանգոյն
Եւ անտաւաց բաջին յաղթած կը դառնար ։

Եւ իր երկրին գեղուհիներն երազուն ,
Կը նայէին իրեն, խոնաւ աչքերով ։
Կոյս արտերնէն կ'ելնէր հառաչ մը թագուն ,
Երբ կ'երեւէր ան, իր կրակ նայուածքով ։

Բայց ինք կ'անցնէր, արքայի մը պէս հըպարտ ,
Անտարբեր այդ հուրիներու պչրանքին ։
Ճերմակ ձիուն վրայ վրսեմ ու հանդարտ
Կ'երգէր մեղմիւ տրտում երգերն իր երկրին . . . ։

Եկաւ օր մը . . . հնչեց իրեն ալ ժամը . . .
Մարմինն ամբողջ խոր ասրտուռով մը դողաց ,
Երկրին այրող արեւուն պէս աղջիկ մը
Ցափշտակեց , գողցաւ իր սիրտն ու զինաց . . . ։

Եւ կորսընցուց քունն ու հանգիստն ալ խղճաւ ,
Մոռցաւ անտառն . նետեց նետերն ու աղեղ ։
Եւ Թափառիկ , դէս դէն, տղան ուխտաւոր
Կը փնտրէր իր գեղուհւոյն ծունն ու տեղ ։

Եկաւ օր մը, գըտաւ հետքը աղուորին ։
Նա՝ բարբարոս, անգութ ցեղի մ' աղջիկն էր ։
Իրեններուն խուլ, դարաւոր Թշնամին ։
Արեան ծով մը զիրենք յաւէտ կը բաժնէր ։

Դողաց հէքը . . . ուզեց խոյս տալ իր երկրէն ։
Բայց գըժոխքը բանկեր էր կուրծքին տակ ։
Եւ ուր փախչիլ զինքը լափող կըրակէն ։
Եւ ուր մոռնալ այն խոր աչքերն անուշակ ։

*
* *

Իրիկուն մը, ուշ էր ժամը, նոյ անցաւ.
Իր սիրելւոյն վրանին մօտ ծին քշեց.
Մելամաղձիկ ծայնովն անուշ, տրտագրաւ
Դողդոջ շեշտով, սիրոյ անվերջ երգն երգեց...։

Մնչեց իր ցաւն, գոչեց իր սէրն ու գոռաց.
Եւ անտառներն ալ գոռացուց իրեն հետ.
Մինչ թռչուններն ծառոց վրայ, լուռ, ապշած,
Կ'արձակէին հազիւ տրկար ձիւ մը մերթ։

Մէյ մ' ալ տեսաւ, վրանը կէս մը բացուած...
Երազ մ' արդեօք խօլ կը պարէր գանկին տակ
Երկու թոմիչ աչքեր, ջահեր զոյգ վառուած,
Կը նեռէին մութին՝ ցոլքեր, շողեր տաք։

Ան էր... նախ իր ոտքը ճանչցաւ զան խակոյն.
Խենդի մը պէս ինկաւ անոր ոտից տակ.
Մինչ մէկ մասը դրած կարմիր շուրթերուն՝
Կ'ուղղէր իրեն գեղանին քաղցր մի նայուածք։

Եւ պատանին տժգոյն, երկար մազերով.
Իր սիրելւոյն առջեւ խոնարհ ծնրադրեց.
Իրենց երկրին խորհրդաւոր բարբառով
Ստին էն խոր ծալքերն մէկ մէկ բրբրեց...։

Քանի ժամեր տեւեց այսպէս՝ ով գիտէ...
Զեն համրուիր երջանկութեան հիշտ ժամեր,
Արեւն սոնա, առջի շողերն կը նետէ.
Հեռուն՝ ծայրը լեռանց՝ կարմիր է ներկեր...։

Եւ զատուեցան երկու ջղաքն սիրահար,
Տըխուր նայուածք մը նետելով արեւուն.
Իրենց շուրջը խցիւ ցիրէր միշտ խաւար.
Զիրենք ծածկէր... սպահէր աչքէն ամենուն...։

Եւ սիրեցին այնպէս՝ ինչպէս կը սիրեն
Կրակ թափող արեւուն տակ երկրին այն.
Աէրը մաշող է. փշրող է հոն, կ'ըսեն.
Հոն չեն մնար, կ'ապրին, մոխիր կը դառնան...։

Եւ յիշելով հին վրէժը ցեղային.
Կը խորհէին խոյս տալ տունէն հայրենի.
Իրենց աէրը ծածկել խորերն անտառին,
Ապրիլ ազատ, զգաստաց հեռ՝ վտրենի...։

Զի ոմիր մ' էր իրենց սէրը, գիտէին,
Ցաչս այդ մարդկանց արիւնարբու, մոլեռանդ.
Փոյթ չէր թէ այդ՝ իրենց արեամբ քաւէին,
Աշխարհն ողջոյն իցիւ չըլլար քար ու քանդ։

*
* *

Իրարու մօտ նուտած գիշեր մը լըռիկ,
Կը դիտէին ցաք նայուածքով մը զիրար.
Ամպ մ' է գոցեր լուսինը, մութ են երկինք
Քանի մ' աստղեր կը վառին դէս դէն, ցանցառ...։

Ցանկարծ ստուեր մ' իրենց մօտիկ կանգ առաւ,
Դիտեց անշարժ երկու տղաքն մի վայրկեան.
Ժպտով մը լայն, սուր ակռաներն ցոյց տուաւ
Խածատելու մօս՝ գազանի մը նման...։

Եւ գայրոյթի մուունչ մը խռիլ ու երկար
Հեռուն՝ լեռներն քիւր անգամներ կրկնեցին...
Ու դեղնեցան հէք տղաքը սիրահար,
«Գորանք» ըսին, եւ ողջ մարմնով դողացին...։

Եւ ալ կարծես մութին մէջ շատ մ' ստուերներ
Դեռնին տակէն դուրս կ'ելնէին մի առ' մի.
Եւ վայրենի աղաղակներ մըռունչներ,
Կը պոռթկային բիւր կուրծքերէ կատաղի։

Եւ յայտնի էր, մի ահաւոր բարկութիւն,
Գը զոռար այդ վայրի մարդոց կուրծքին տակ.
Այս նախատինքն ցեղային Մեծ, Սուրբ պատուոյն
Պէտք էր քաւուէր հեղեղներով արեան տաք։

Բայց մտածման պէս շարժումով մը արագ,
Դրկեց տըղան, իր սիրելին դողահար.
Ցատկեց թեթեւ, վրայ ծիուն իր ճերմակ,
Ուզեց կտրել դաշտը, մտնել ի յանտառ։

Ահա նեռ մը եկաւ սուլել իր շուրջը,
Ու երկաթի յորդ անձրեւ մը սկըսաւ.
Մէկէն ցաւի խորունկ ու սուր հառաչ մը
Իր սիրելւոյն վարդ շրթներէն դուրս թռաւ։

Ու նայեցաւ տղան խենդի աչքերով,
Այն ցակտին՝ ուր մահն իր դալուկ կը դընէր.
Կ'իջնէր արիւնն վըզէն վար, լայն շիթերով,
Սիրած անունն՝ շրթանցն վրայ կը մեռնէր...։

Եւ սպաննողն հոն էր, ժպտով մը վայրագ
Արեան հոտէն գինով, մօտիկ հէգ զոյգին
Կուշտ կը դիտէր մնռնող աղջկայ հոգեվարք,
Եւ կը հրճուէր ի տես թափուած արցունքին։

Մէկէն, լացող տըղան աչքերն վեր առաւ,
Տեսաւ ժպիտն ղէմը կեցող ճիւաղին։
Վրիժու կայծը նայուածքին մէջ վառեցաւ.
Քաշեց խանչարն, պատռեց կուրծքը գազանին։

Եւ ա՜ուր... թօթուեց մազերն սեւ արծակ.
Սիրականին դիակն գրկած պինդ սրտին,
Շուրջը նետեց նայուածք մը սէգ համարձակ.
Ցառաջ քշեց, անտառներու խորն իր ծին։

*
* *

Եղէգներու պուրակին մէջ, հոն, շինեց.
Իր սիրելւոյն համար հանգիստ անկողին.
Հոգը տըխուր, խոնարհ գըտաւ եւ չուզեց
Յանձնել մարմինն սիրականին սեւ հողին...։

Գերեզման չէր. օրօրան մ'էր դա ընքուշ.
Զոր զեփիւռին թեւերն մեղմիկ օրէին.
«Ննջէ մինակ, իմ աչքիս լոյս, քունդ անուշ
— Հառչեց խորունկ — մինչեւ ննջենք միասին...։»

Վերջին համբոյրն տուաւ սառած շուրթերուն,
Կեանքին ընկեր՝ ընտրեց եղէգ մը մինակ.
Եւ հեռացաւ նա քայլերով երերուն.
Այդ վառ սէրէն՝ տարաւ չոր փայտ մ'յիշատակ։

Այսպէս թողով քաղցր հայրենիք, տեղն ու տուն,
Կը թափառի դէս դէն, սրտէն զարնուած.
Լուռ, չխօս իր. կ'ըսես քոյն է թէ արթուն.
Աչքերը բաց՝ կարծես ըլլայ ինացած...։

*
* *

Աչքերն յառած անթարթ կէտի մ'անորոշ
Եղէգը պինդ ձեռքին սեղմած, նա կ'անցնի.
Թուի լսել սիրականին ձայնն անուշ,
Որ եղէգնեայ գերեզմանէն կը խօսի...։

ԴԱՐՁԵԱԼ ԵՐԿՈՒ ՍԷՐ

Ա.

ՀԻԻԱՆԴ ՍԷՐ

ԱՌԱՋԻՆ առթիւ «Երկու Սէր» խորագրին տակ մենք խօսեցանք կեանքի սիրոյն, կեանքի նշանակութեան, կեանքի նպատակին մասին, և այդ առթիւ՝ մանրամասնօրէն պարզեցինք մեր տեսութիւնները։

Մենք տեսանք որ, կեանքը որքան ալ հրապուրիչ և հեշտալի պարգև մը թուի՝ անոր վրայ աւելորդօրէն նայողին համար, շատ դժուարին և տանջանալից ճամբայ մըն է սակայն անոնց համար ալ՝ որոնք պարտաճանաչ և գերազանցօրէն ազնիւ ու տոկուն նկարագրով մը օժտուած, կ'աշխատին կեանքը իր բուն նպատակին ծառայեցնելու, և ոչ թէ կ'ապրին սոսկ ապրելու հաճոյքին համար։

Եւ սակայն Նախախնամութիւնը կեանքի այս դժուարութիւնները դիւրատար և քաղցրօրէն հաճելի ընծայելու համար, մարդուն սրտին մէջ դրած է սատուածային կոչ մը, Սէրը, որը միահեծան կը տիրապետէ կեանքին վրայ Ադամէն ի վեր, և անվրէպ մահուան դառն մտածումն իսկ չի կրնար վայրկեան մը սքօղել անոր պայծառութիւնը և ամպռտել անոր մշտածիծաղ և ջինջ երկինքը . . .։

Եթէ կեանքը ըլլար նոյն իսկ քառսին մէկ անիմաստ վիժուածքը, ըստ յոռետես իմաստասէրներու, դարձեալ կ՚արժէր ծնիլ՝ Սէրը ճանչնալու համար միայն։

Եւ կ՚ենթադրեմ թէ՝ Սէրը, Քրիստոսի այնքան սքանչելիօրէն տարփողած երկնաւոր վայելքներուն մէկ շատ տրժգոյն ցոլքը, մէկ շատ նուազկոտ նշոյլը ըլլալու է արձակուած երկրի վրայ, մեզի տալու համար նախահամը յաւիտենական Սէրերու գերազանց քաղցրութեանը։

Երբ Աստուած մը կ՚ըսէ, «Աստուած Սէր է» կը նշանակէ թէ՝ անանց և բաղձալի երջանկութիւնը մահկանացուներու պիտի տայ Սէրը միայն . . .։

Եւ ուրիշ ի՞նչ երջանկութիւն կրնայ տալ արդէն մեզի երկինքը։

Ի՞նչ բան կրնայ այնքա՞ն յուզել, խռովել, հրդեհել, յեղաշրջել յանկարծ մարդու մը հոգեկան աշխարհը, և մէկ անգամէն տիրապետել անոր կամքին, ճակատագրին, մէկ խօսքով բոլանդակ էութեանը վրայ։

Ուրիշ ի՞նչ բան կրնայ այնքա՞ն զօրացնել, ազնուացնել, բարձրացնել, կատարելագործել, պիտի ըսեմ աստուածացնել մարդը։

Դժբաղդ է ան՝ որ անընդունակ է սիրելու, և կեանքի մէջ քիչ չէ նմանօրինակ դժբաղդներու թիւը, նոյն իսկ եթէ աշխարհ մը վայելք ունեցած ըլլան։

Անոնք ամենախեղճօրէն աղքատ են, գեղանաքաղցօրէն թշուառ են, քանի որ սիրել չեն գիտեր։

Առանց սիրոյ, իրական վայելք չկա՛յ բնաւ։

Իրապէս երջանիկ է այն մարդը միայն, որը թէպէտ բաղդին խորթ զաւակը աշխարհային մեծութեանց և ճոխութեանց տեսակէտով, իր սրտին մէջ կը կրէ սակայն աստուածային կրակը։

Ինչքա՞ն խորունկ վշտեր, ի՞նչ անդարմանելի դժբաղդութիւններ մուցուած են, ինչքա՞ն մեռած սրտեր վերակենդանացած են այդ աստուածային կրակին մէկ կայծէն միայն . . .։

Ո՞վ է այն մարդը, որը իր ամենէն յուսահատ և ընկճուած վայրկեանին գլուխը չէ՛ բարձրացուցեր յանկարծ հրապարտութեամբ, իր տխուր մտածմանց ամպերուն մէջ տեսնելով յեղակարծօրէն փայլատակիլը իր սիրելւոյն պաշտելի պատկերին։

Ո՞վ է այն մարդը, որ ինքզինքը Աստուծոյ մը չափ յաղթական չի զգար, երբ իր ձեռքին մէջ սեղմած կը պահէ իր սիրելւոյն ձեռքը։

Եւ ծերութեան տխուր օրերուն մէջն իսկ, ուր մարդ յիշատակներով կ՚ապրի միայն, արդեօք մեր միտքն ու սիրտը ամենէն աւելի գուրգուրանօք կանգ չե՞ն առներ այն ժամանակներուն վրայ՝ ուր սիրեր ու սիրուեր ենք, և ուր խանդավառուեր ենք սիրեցեալ էակի մը պաշտելի աղդեցութեան տակ։

Ուրեմն կեանքի շարժիչ զօրութիւնը, ամէն յառաջդիմութեան, ամեն գեղեցիկ ու վսեմ բաներու, ամեն գերազանց ուժերու, ամեն խանդի ու եռանդի աղբիւրը, Սէրը, պէտք է ընդունինք որ երկինքէն եկած է մեզի, քանի որ ունի աստուածային բնութիւն։

Սակայն ինչպէս ամեն երկնային պարգև երկրի վրայ իջնալուն պէս կը խաթարուի, կ՚այլափոխուի, կը կորանցնէ իր երկնային բուրմունքը, այնպէս և Սէրը, երկնային այդ գերազանց շնորհը կը փոխէ օրը օրին իր հրաշալի բնոյթը։

Ինչո՞ւ։

Որովհետև չենք գիտեր սիրել։

Ի՞նչ կը սիրենք առ հասարակ այսօր սիրեցեալ էակին վրայ. չէ՞ որ ֆիզիկական շնորհները ամե՛ն բանէ առաջ, և ամե՛ն բանէ աւելի կը գրաւեն մեր աչքերը, մեր միտքը, մեր սիրտը։

Ասիկա ահա հիւանդոտ Սէրն է. Ասիկա՛յ մեղաւոր Սէրն է. ասիկա՛յ լպիրշ Սէրն է, որը իր մէջ ոչինչ ունի մաքուր ու գեղեցիկ։

Ու բնական է որ տեւական չկրնայ ըլլալ Սէրը, եթէ միայն հիմնուած ըլլայ մարմնական առաւելութիւններու վրայ, ատկից ահա կը ծագի սխալ վարդապետութիւնը թէ՝ «Սէրը տեւական զգացում մը չէ՛ երբէք»։

Գեղեցիկ մը կրնայ ուրիշ գեղեցիկ մը գերազանցել, հետեւաբար և մարդ կրնայ միշտ ձանձրանալ ամենէն մարմարեղէն, ամենէն փարթամ և հոյակապ գեղեցկութենէն քանի որ միօրինակ է ան և ուրիշ նոր գեղեցկութիւններ ամեն օր կրնան յանկուցանել իր աչքերը։

Ֆիզիքական գեղեցկութեան հրապոյրները, որոց տիրանալու համար հազար ու մէկ խենդութիւններ կ՚ընեն մար-

դիկ, կը տեւեն այնքան՝ որքան կը տեւէ վայելքը. տիրաց-ումի յաղթանակէն ետքը՝ ալ սէրը իր վերջակէտը դրած է հոն։

Ահա թէ ինչպէս, Սէրը, այդ երկնային հրաշալի ծաղիկը կը փեթռտուի հոս, երկրի վրայ, սխալ ըմբռնողութիւններու և սխալ փիլիսոփայութիւններու հետեւանօք։

Չեմ ըսեր թէ՝ ֆիզիքական շնորհները չունին իրենց նշանակութիւնը Սիրոյ մէջ. գուցէ փոխադարձ համակրու-թիւնը առաջին անգամ դրսերեւոյթը կըստեղծէ. բայց հա-մակրութենէն դէպի Սէր ահագին անջրպետ կայ. եւ ֆի-զիքական շնորհները չեն կրնար երբէք խորունկ ու տեւա-կան Սէր ներշնչել ցորչափ կը մնան միայն ֆիզիքական շնորհ։

Ֆիզիքական շնորհներու վրայ հիմնուած Սէրը, մարմնա-կան Սէր միայն կրնանք կոչել, և յաւիտենութիւնը չուշա-նար։

Ե.

ԱՌՈՂՋ ՍԷՐ

ՍԻՐԵԼ գիտնալը սքանչելի յատկութիւն մըն է, զուցէ ըսուի թէ՝ զգացումներու մէջ գիտութիւն չի՛ սեղմիր, և թէ զգացումները որոնք կեանքի բանաստեղծութիւնն են, կը կորսնցնեն իրենց փափուկ շնորհը, եթէ փորձենք զանոնք սանձել, և անոնց ուղղութիւն տալ պաղ բանականութեան մը հրամայած խարհելակերպով։ Բայց չենք ալ կրնար մենք զմեզ բոլորովին թոյլօրէն թողուլ զգացումներու ձեռքը, որոնք շատ յաճախ պատրանքներու կառաջնորդեն մեզ, և դաւնադաւն յուսախաբութիւններու մէջ օր մը կը չարչարեն մեր սիրտը . . .։

Որպէս զի մեր Սէրը առողջ ըլլայ, որպէս զի մեր սիրած անձը, որուն կուտանք ամէն կատարելութիւն. ամէն գեղեցկութիւն, ամէն շնորհ, մնայ մի՛շտ մեր պաշտելի կուռքը կանգնած բարձր և վսեմ իր պատուանդանին վրայ, պարտաւոր ենք իջնել անոր հոգիին ամենէն խորունկ ծալքերուն մէջ, քրքրել անոր ներքինը, և լուրջ ու սառն դատողութենէ մը ետքը միայն նուիրուիլ անոր մեր բոլոր հոգիով, մեր բոլոր սրտով, ապա թէ ոչ այդ կուռքը ուշ

կամ կոնուխ կը խորտակուի օր մը, և մենք ալ կը խորտակուինք իրեն հետ . . . :

Եւ անհաւոր բան մըն է ամբողջ ճակատագիր մը, ամբողջ կեանք մը զարձնել ապարդիւն բոյց և այնպէս սոսկալի տառապանքներու աղբիւր, պարզ շլացումի մը գինովութեան մէջ զայն կաշկանդելով : Կեանք մը՝ որը միմիայն մեզի չի՛ պատկանիր, հետևաբար և իրաւունք ալ չունինք զայն մեր ուզածին պէս ու մեր քմահաճոյքներուն համեմատ գործածելու քանի որ հասարակութիւնը, որուն մէկ անդամն ենք և մենք, մեզնէ իրաւամբ կը պահանջէ իր բարօրութեան և բաղդաւորութեան համար մեր աշխատութեան և ջանքերու բաժինը :

Եւ անորակելի վատութիւն մը պիտի ըլլար մեր անհատական կեանքի փոթորիկներուն դէմ մաքառելով միայն երեսի վրայ թողուլ պարտականութիւններու է՛ն նուիրականը և է՛ն անհրաժեշտը :

Դժբաղդաբար մարդիկ բարոյական արժանիքները չեն որ կը սիրեն կնոջ մը վրայ և փոխադարձաբար . և ճիշդ այս պատճառաւ հիւանդ Աէրն է այսօր կեանքի յաղթական աէրը . . . :

Ա՛յս պատճառաւ Աէրը օրը օրին կը կորանցնէ իր բարեբար ազդեցութիւնը և երկնային բարիքը դժոխային չարիք մը կը դառնայ ոխո՞ւ . . . :

Ա՛յս պատճառաւ ատոյգ ու գեղեցիկ երիտասարդութիւնէն՝ ձղճիմ ու վատոյժ բեկորներ կը մնան միայն այսօր :

Ո՞ւր է նախկին ժամանակներու երիտասարդութեան անմեղ ու սուրբ շնորհքը . . . :

Ա՛յս պատճառաւ դժբաղդութիւնները օրըստօրէ ահռելի համեմատութիւններ կ՝առնեն . . . սրտերը կը լքրճուին, հոգիները կ՝ինան, ընտանիքներ կը քայքայուին, ցեղեր կը սկսանան և կը կորսուին . . . :

Ո՞վ հին ժամանակներու Աէրը ո՞ւր ես :

Ո՞վ Ոդիսեւս, որ Պէնէլոպէի աշխատասիրութիւնը և հաւատարմութիւնը կը սիրէիր անոր գեղեցկութենէն աւելի...:

Ո՞վ Լուքրեցիա, որ նախամեծար համարեցիր սպաննել ինքզինքդ, քան անպատիւ ճակատով մը ներկայանալ ամուսնոյդ, զոր կը սիրէիր իր բարոյական արժանիքներուն համար և որը կը սիրէր քեզ :

Ով Սպարտացի կիներ, որ ձեր ամուսնոյն, եղբայրին, սիրելիին վրայ կը սիրէիք միայն անոր գիւցազնական և ապետական ոգին։

Ա՛յս պատճառով ձեր ազգը մեծ եղաւ, ձեր երիտասարդութիւնը հերոսական, և ձեր գործերը պատմական . . .

Որքա՜ն փոխուած են ժամանակները այսօր . . .

Գեղեցիկ աչքերը և «չինար բոյն» է որ այսօր կը փընտռուի և կը գնահատուի։

Ի՞նչ անկում . . . ։

Գեղեցիկ սև մազերը օր մը կը ճերմկին, խաչոր վառվռուն աչքերը օր մը կը կորսնցնեն իրենց փայլը, արձանային ձեւերը կը կորսնան, «չինար բոյ»երը կը կքին տարիներու բեռին տակ, բայց մարդուն մէջ կա՛յ բան մը որ չի՛ ծերանար. անոր երիտասարդութիւնը անանց է և հրապոյրները մի՛շտ նոր։

Ատիկա առաքինի ու գեղեցիկ հոգիի մը մշտադարար երիտասարդութիւնն է. ազնուական սրտի մը թարմացնող զգացումները, ընտիր ու մշակուած մտքի մը մի՛շտ նոր հրապոյրները, և կորովի նկարագրի մը գերազանց ուժը։

Եւ մարդ մը, ֆիզիքապէս որքան ալ քիչ օժտուած ըլլայ բնութենէն, մտքի ու հոգիի գեղեցկութիւնը այնպիսի՛ գրաւիչ շնորհքով մը կը զարդարէ, այնպիսի պայծառ լոյսով մը կը լուսաւորէ անոր գլուխը, որ ամենէն կատարուն գեղեցկութիւններն իսկ անոր շողշողուն փայլին քով կը նսեմանան, և կը հաւատամ թէ տարիները իսկուր պիտի ուզեն ձիւնել այսօրինակ գեղեցկութեամբ օժտուած գլխուն վրայ, և Սէրը երբէք պիտի չկրնայ լքել զանի։

Առոգջ Սէրը, ճշմարիտ Սէրը հիմնուած է փոխադարձ յարգանքի և փոխադարձ պարտականութիւններու վրայ։

Ի՞նչ բան պիտի կրնայ յարգանք ներշնչել մեզի, յարգանք մը խորունկ որ մնանայ պաշտումի։

Մինթէ ֆիզիքական գեղեցկութի՞ւնը . բայց գեղեցկութիւնը հիացում միայն կրնայ ներշնչել մեզի, և ոչ երբէք յարգանք։

Կին մը երբէք չի կրնար յարգել մարդ մը եթէ անիկայ տկար է նկարագրով։

Կին մը երբէք չի կրնար տեւականօրէն սիրել մարդ մը երբ անիկայ չգիտեր բարոյական ուժեղ ազդեցութեան մը շնորհիւ անոր սիրտը կապել իրենին։

Կին մը երբէք չի ներեր մարդու մը, երբ անիկայ կը վիրաւորէ իր կնոջական արժանապատուութիւնը ու չի պատրաստուիր փափկանկատօրէն վարուիլ իր ներքին զգայումներուն հետ։

Կին մը երբէք չի մոռնար կեանքին մէջ մարդէ մը կրած ո՛և է անարգանքը, նոյն իսկ եթէ անիկայ ուզէ օր մը իր արիւնովը քաւել ատիկայ։

Ու փոխադարձաբար կ՚ենթադրեմ թէ ոչնիւ մարդ մը պիտի չկրնայ սիրել կին մը որ տատքինի ու հաստատամիտ չէ։

Որուն նպատակը չէ մի՛ միայն իրեն հաճելի ըլլալ, այլ որը հաճոյք կը գտնէ նաև ամենո՛ւն ալ հաճելի ըլլալու մէջ, ինչ որ ապացոյց է թեթև մտքի ու թեթև սրտի, և կը նշանակէ նախադասելը դէպի անկում։

Էապէս մարդ մը, կ՚ենթադրեմ թէ՝ պիտի չկրնայ սիրել կին մը որ նանրասէր է, որը հոգի կուտայ պէրանքի ու զարդերու համար, և երեսի վրայ կը թողու առանին ու մասուորական օգտակար և հրահանգիչ գրագրումները։

Ահա՛ թէ ի՛նչ բնական պայմաններու մէջ կը կայանայ առողջ Սէրը։ Ահա՛ թէ ուր պիտի գտնենք մեր կեանքի տեւական երջանկութեան աղբիւրը։

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՇԻՈՅ ՄԸ ԽՕՍՔԵՐԸ

Կամեցէք եւ աշխատեցէք

Ս. ՀՈՎՓՈՒՓԵԱՆՑԻ Սանուհիներուն

Ձեր վարժարանական անդրանիկ քոյրերուն Եւրոպա մեկնած օրը խմբովին փութացիք մօտս, և անձկութեամբ դողդղացող ձայնով մը հարցուցիք ինծի

— Հապա մենք . . . մե՞նք ի՞նչ պիտի ըլլանք . . . :

Ձեր այդ հարցումը, տղաքս, խորունկ ուրախութեամբ մը լեցուց հոգիս :

Ստիկայ կը նշանակէր թէ՝ դո՛ւք ըմբռներ էք կեանքի մէջ քաւն մը ըլլալու անհրաժեշտութիւնը. դո՛ւք հասկցեր էք մարդկութեան բուն կոչումը, անոր գոյութեան իրաւունքին նպատակը :

Ինձմէ յաճախ կը խնդրէք որ խօսիմ ձեզի. խօսիմ ի՛մ կեանքէս, ի՛մ փորձառութենէս :

Կուզէք որ խորհուրդներ ու խրատներ տամ ձեր ապագային մասին, մէկ խօսքով կը փափաքիք որ ցոյց տամ ձեզ այն ճանապարհը՝ որմէ պիտի քալէք քաւն մը կարեւոր ըլլալու համար :

Ու ես կըսեմ ձեզի. «Կամեցէ՛ք ու աշխատեցէք» :

Քան մը ըլլալու միակ ու տարամերժ ազդակը՝ կամքն է, աշխատութիւնն է :

Դո՛ւք այսօր չէ՛ք մտածեր այնպէս՝ ինչպէս կը մտածէին դուցէ տարիներ առաջ ձեր վարժարանական երէց քոյրերը թէ՝ կնոջ ճակատագրուած ըլլալով ընտանեկան կեանքի ներքին զբաղումները և տնական հոգերը, աւելորդ է պատրաստուիլ տնտեսական պայքարներու և նիւթական հոգերու համար ալ։

Դո՛ւք, ըմբռներ էք, ոգա՛ էք, թէ՝ ժամանակները կը փոխուին ու պիտի փոխուին . . .։

Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, մենք կ՚ապրինք երկաթէ գարու մը մէջ, ուր կեանքի պայմաններուն շրջանակը հետզհետէ կը նեղնայ, կը սեղմէ զմեզ իր պողպատէ օղակներուն մէջ։

Դուք կը տեսնէք ձեր սիրելի ու պատուական հայրերը, որոնք հազար չարչարանքներով, արիւն քրտինք թափելով հազիւ հաց ծայրը ծայրին կը բերեն։

Դուք կը տեսնէք այն զրկանքները, որոնց կամովին կ՚ենթարկուին, որպէս զի դուք վարժարան տեսնէք, ուսանիք, մարդ ըլլաք։

Եւ ձեր խիղճը միթէ չը՞մբռատանար, ձեր որդիական սէրը չի՞ տառապիր անոնց այդ չարաչար տաժանքը տեսնելով։

Ձեր փափուկ ու գթառ սիրտերը միթէ չի՞ն բաբախեր անհուն սիրով ու ջերմեռանդ երախտագիտութեամբ հանդէպ ձեր հերոս հայրերուն, և այդ զերազանցելն վահամ զոհողութիւններուն ու տառապանքներուն ի տես, միթէ դուք ալ չէ՞ք բաղձար եռանդուն և ազնուօրէն անհամբեր թափով մը նեռուիլ աշխատութեան ասպարէզը, ջանալ, ոքնիլ, քաւեմ մը ըլլալ՝ պատիւը համար այդ զերազոյն անձնուիրութիւնները և թեթեւցնել բեռը անոր որ լուռ մարտիրոսութեամբ մը կը չարչարուի ձեր ապագայ օգտին ու երջանկութեանը, ձեր բարոյական և ուսումնական վիճակին կատարելագործմանը համար։

Ո՞վ իմ սիրելի ոգեաք, սիրեցէ՛ք, շա՜տ սիրեցէք ձեր պատուական ծնողքը։

Սակայն՝ յիմարութեան վայրկեանի մը մէջ անիծուհուրդ ու խոլ վարուելակերպով մը վիշտ պատճառելէ անոնց։

Սակայն՝ ձեր պատճառաւ անոնց թափած արցունքները տեսնելէ . . .։

Օ՜, ծնողքի մը արցունքները . . .։

Անոնք շա՜նթեր են . . . անոնք կրա՜կներ են որ կ՚այրեն, մոխիր կը դարձնեն ձեր կեանքը . . . :

Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, տարիներ եւ տարիներ անոնք ալ ոչ եւս պիտի ըլլան, անքուն գիշերներու մէջ յաճախ ձեր աչքերուն առջեւէն պիտի անցնի անոնց տանջուած կերպարանքը . . . :

Ձեր ամենէն ուրախ ու երջանիկ վայրկեանին՝ դուք պիտի տեսնէք ահռելիօրէն կենդանի, անոնց արցունքոտ աչքերը, և այդ սարսափելի տեսիլքը ձեզի պիտի հալածէ մինչև ձեր կեանքին վերջը ու ձեր ամեն մէկ վայրկենի կեանքը պիտի թունաւորէ :

Գիշերուան խորհրդաւոր լռութիւններուն մէջ դուք ընդոստ պիտի ցատկէք ձեր անկողիններէն լսել կարծելով ձեր սիրական հօր հառաչանքները և այնքա՜ն պաշտելի մօր պաղատանքները որոնց չի լսեցիք փորձութեան և յիմարութեան նոպայի մը մէջ, և այն ատեն արցունքներով պիտի ոգեկոչէք անոնց տրտում ստուերները, և ձեր ամբողջ կեանքը պիտի ուզէք տալ քաւելու համար յիմարութեան, չարութեան այդ վայրկեանը, բայց ափսո՜ս . . . ժամանակը անցա՜ծ պիտի ըլլայ . . . :

Քանի որ դեռ անոնք կ՚ապրին, քանի որ անոնք դեռ ձեր գրկերուն մէջն են, յիշեցէք միշտ, ամեն վայրկեան յիշեցէք թէ ի՜նչ անհուն զորովով ձեր մայրը իր կաթովը սնոյց ձեզ, թէ ինչքա՜ն գուրգուրանքով ձեր հայրը իր ճակտին քրտինքովը ջրեց ձեր կեանքին մատաղ տունկը, որպէս զի անիկայ ուռճանայ, ծլի ու ծաղկի :

Ջանացէ՛ք կեանքը անուշ ու երջանիկ դարձնել անոնց ձեր հնազանդ ու խոհուն վարուելակերպով, ձեր պարկեշտ և լուրջ կենցաղով :

Ջերմ սիրով և խորունկ յարգանքով շրջապատեցէք անոնց պաշտելի գոյութիւնները :

Ու երբ օր մը կեանքի օրէնքին համաձայն, անոնք ձեզմէ առաջ թողուն այս աշխարհը, ձեր անհուն վշտին մէջ գէթ կարենաք առանց խղճի սոսկալի խայթերու առանց զանոնք չարչրկած ըլլալու դառն և սարսափելի գիտակցութեան հանդարտօրէն լալ և ըսել .

— Սիրակա՜ն մեռեալներ թո՛ղ անուշ ըլլայ ձեր քունը հողին տակ . . . :

Գիտեմ, իմ սիրելա՛ն տղաքս, գիտեմ թէ դուք ինչքա՞ն կը դողաք անոնց այդ թանկագին կեանքերուն վրայ։

Գիտեմ թէ ի՞նչ անհամբերութեամբ կը սպասէք այն երջանիկ օրուան, երբ դուք ալ ձեր կարգին, ձեր սեփական աշխատութեան առաջին քաղցր վաստակը պիտի կրնաք վերջապէս դնել ձեր ծերունի հօրը ձեռքերուն մէջ և ըսել անոր.

— Ա՛լ հերիք է, հայրիկ, դուն շա՛տ յոգնեցար, դուն շա՛տ աշխատեցար։

Կ՚երեւակայեմ ի՞նչ ազնուական հպարտութեամբ պիտ՚ ուռնան ձեր սրտերը երբ զրկանքներու, զոհողութիւններու, դատանքի բեռը ա՛լ ուս ինկած պիտի տեսնէք վերջապէս ձեր երիտասարդ ուսերուն վրայ։

Եւ ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, ե՛ս իրական ու կատարեալ երջանկութիւն, գերազանցօրէն քաղցր ու սուրբ հաճոյք այն օրը միայն ճանչցած եմ, երբ առաջին անգամ զգացած եմ ինքզինքս անկախ. աշխատող ձեռքերէս և աշխատող միտքէս ապահովով միայն իմ ամէն նիւթական պէտքերուս գոհացումը։

Իմ ընտրած ասպարէզս ինձ տուած ոչ մէկ յաղթանակին, ոչ մէկ փառքին մէջ այնքան հպարտ ու գօրաւոր զգացած եմ ինքզինքս քան այն բաղդաւոր օրը ուր իմ ծերացած հօրս կրցեր եմ ըսել։

— Ա՛լ հանգչէ՛ հայրի՛կ, դուն շա՛տ յոգնեցար...։

Ու երբէք պիտի չմոռնամ, հազար տարի ալ եթէ ինծի կարելի ըլլայ ապրիլ, այն սուրբ և անոնման ուրախութիւնը որ ճառագայթեր է հոգւոյս մէջ երբ իմ պատուական հայրս զիս իր թեւերուն մէջ առնելով գորովագին համբոյրներու և արտաբուղխ օրհնութիւններու ընդ մէջ մրմնջեր է ականջիս...։

— Զաւակս, Աբրահամու՝ օրհնութիւնը թո՛ղ ըլլայ տանդ վրայ. երկնքի ատաղերուն և աւազի հատիկներուն չափ զաւակներ ունենաս...։

Եւ այդ օրհնութիւնը, հօրս այդ բաղձանքը իրականացած տեսայ ես, սիրական տղաքս, որովհետև յանձին ձեր, և յանձին ձեր հեռաւոր քոյրերուն, հարիւրներով զաւակներ ունեցայ իմ սիրոյս և խնամքներուս յանձնուած, որոնց փոխադարձ սէրը, գուրգուրանքը զիս մխիթարեցին և ինծի

ուժ ու քաջութիւն տուին ցաւոտանջ, յուսախաբութիւն-ներով և վշտերով լեցուն կեանք մը տանելու համար . . . :

Եւ քանի որ երջանկութիւնը, մխիթարութիւնը, մոռացումը աշխատութեան մէջն է միայն, քանի որ ճշմարիտ ու սուրբ հաճոյքը իրենցերուն օգնութեան հասնելու և անոնց քաղցր բեռը տանելու կարող ըլլալուն մէջն է գտնուիլ, ես կուզեմ որ, դո՛ւք, իմ սիրելիներս, դո՛ւք այդ երջանիկ-ներէն ըլլաք :

Ուրախ եղի՛ք որ գրեթէ ամենքդ ալ նիւթական հա-մեստ կացութեան տէր ծնողաց զաւակներ է՛ք :

Դուք պիտի վայելէ՛ք անոնց օգնելու, անոնց բաղդը շի-նելու գերագոյն և անոնց ուրախութիւնը :

Դուք պիտի փառաւորուի՛ք ձեր անհատական յամառ աշխատութեամբն ու յարատև ջանքերով ձերինները երջան-կացնելու և ձեր ընտանեկան քաղցր բոյնը բոլորովին նոր ու գեղեցիկ վերականգնելու արդար և վսեմագոյն փառքով :

Ամիկայ ճշմարտապէս երկնային անմահ հաճոյք մըն է, սիրելի՛ ազգաքս, զոր Աստուած կը շնորհէ միայն աշխատողներուն և որմէ առ յաւէտ զրկուած են նիւ-թապէս յաջողուածները այս գժբաղդ աշխարհին մէջ :

Ճշմարիտ ի՛նչպէս ձեզի, աշխատութենէ աւելի իրական և գերազանց ախտանք չկա՛յ բնաւ :

Ձեր արտերուն ամենէն արիւնոտ ժամանակներուն, դուք անոր գրկերուն մէջ պիտի գտնէ՛ք մոռացում և մխիթա-րութիւն :

Կեանքի մէջ ձեր կրելի՛ք իւրաքանչիւր յուսախաբու-թեան, դուք անոր պիտի փարի՛ք իրրև գերագոյն ապաւէնը, ձեր արտին բովանդակ սիրովը, ձեր հոգւոյն բովանդակ կը-րովովը, և այն ատեն պիտի մոռնա՛ք, ազգաքս, անոնք որ ձեզ չարչարեցին և ձեր արտերուն հետ խաղացին . . . :

Աշխատութեան մէջ հանգիստ ու խաղաղութիւն պիտի գտնեն ձեր փոթորկուած մտքերը, և ճշմարիտ ի՛նչպէս ձե-զի, երբ անցնի՛ք ձեր գրասեղանին առջև, ձեր գրքերուն ու թուղթերուն հետ երես երեսի ու բերան բերնի, պիտի զգա՛ք թէ՝ ձեր ճշմարիտ ու անկեղծ բարեկամներն են ա-նոնք, որոնք կը խօսին ձեզի ճշմարտութեան լեզուն, առա-քինութեան լեզուն և լուսաւորութեան լեզուն :

Դուք ամենքդ ալ ունի՛ք կոչումներ, խելացի է՛ք, ըմբռնող

և արթուն, այդ կոչումները դուք ինքներն պիտի զարգացնէք ձեր մէջ յամառ աշխատութեամբ և զօրաւոր կամքով։

Ամեն բան դպրոցէն պիտի չսպասէք։

Մի՛ կարծէք որ դպրոցը թողնելէ ետքը՝ դուք ամենագէտներ էք արդէն, հեռեւաբար և ասպարէզը բաց է ձեր առջև։

Դպրոցը ձեզի ճամբան ցոյց կուտայ. անիկայ լոկ ուղեցոյց մըն է։ Դուք պիտի յառաջդիմէք ինքնազարգացմամբ. պիտի աշխատիք, պիտի կարդաք ու պիտի մտածէք։

Ամենքդ մտքի մարդը պիտի՛ չըլլաք անպատճառ. և մի՛ կարծէք որ բան ևը ըլլալու համար, անպատճառ մտքի մարդը ըլլալու է։

Ձեր մէջ կան այնպիսիներ՝ որոնք պատուական արուեստագէտներ կրնան ըլլալ, վարժ դերձակուհիներ, նուրբ ասղանկարիչներ, ճաշակաւոր մօտիլներ, որոնք պիտի կրնան վաղը արուեստանոցներ կառավարել, և իրենց համար փառաւոր ապագայ ապահովել։

Ուրիշներէն օգնութիւն մի՛ սպասէք, դուք ձեր ջանքերով, ձեր ճարպիկութեամբ, ձեր անձնական արժանիքներով միայն ճամբայ պիտի բանաք ձեզի համար։

Եթէ դուք ձեր մէջ չի գտնէք ուժ, կարողութիւն, արժանիք, դուրսէն հասած օգնութիւնը ոչ մէկ օգտակարութիւն կունենայ ձեզի համար։

Մի՛ ըսէք թէ բաղդս չի յաջողեցաւ։

Բաղդը՝ բառ մըն է լոկ։

Բաղդ չկա՛յ։

Կամեցէ՛ք միայն և աշխատեցէ՛ք։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՐԾԻՔԸ՝

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԻՆ ԱՌՔԵՒ

ԱՆԳՈՒԹ և անիրաւ բռնաւոր մըն է յաճախ հանրային կարծիքը։

Անիկա՝ տրամադիր է մի՛շտ ղէպի չարը մեկնելու աղնուական հոգիի մը ամենէն անկեղծ խոյանքը, ընտրեալ սրտի մը արտայայտած աղնուագոյն համարձակ զգացումները, սիրալիր և ազատ վարուելակերպը ճշմարտապէս և վեհագոյն սիրող մարդուն . . .։

Օ՜ հանրային կարծիքը . . .։

Անիկա տրամադիր է անխղճօրէն զրպարտելու, ամբաստանելու, դատելու և դատապարտելու և եթէ ձեռքէն գայ՝ պատժելու նոյն իսկ ան՝ որ հանրութեան օգտին համար կը նուիրէ իր միտքը, սիրտը, հոգին, հանգիստը և ինչ որ ամենէն թանկագինն է, իր երիտասարդ կորովը, իր կեանքը։

Հանրային կարծիքը պատրաստ է երբեմն ամենէն անմեղաս և սովորական բաներն իսկ տեսնելու իբրև յանցաւոր ոճրագործ և ամօթալի արարքներ, արժանի՝ թուքով ու մուրով հալածուելու։

Ամէն ազգերու մէջ հանրային կարծիքը նո՛յն բռնաւոր և անիրաւ հալածիչն է արդարև, բայց մեր ազգին մէջ ա՛լ աւելի զարհուրելի համեմատութիւններ առած է ան, և զարմանալի չէ՛։

Տրուած ըլլալով մեր ժողովուրդին նախապաշարումներու է՛ն ազեղը, արդիւնք և հետեւանք ամենախորունկ ազգասու-

թեան, բնական է որ ազատ խորհելակերպ մը և անկաշկանդ գործելակերպ մը պիտի չի կրնար ըմբռնել անոր միտքը։

Պէ՞տք է սակայն կարեւորութիւն տալ հանրային կարծիքին։

Ազնուական և ըմբոստ հոգիները կ՝արհամարհեն զայն իրաւամբ, և պէտք է որ արհամարհեն, վասն զի մարդկային իրաւունքներուն է՛ն նուիրականն ու անձեռնխմելին է ապրիլ, մտածել և գործել իր հասկցած եղանակովը, բաւական է որ մարդ առաջնորդուած ըլլայ լուսամիտ ուղղութեամբ, կեանքի ազնիւ ու սուրբ ըմբռնումներով և զգացումներու ջերմեռանդօրէն անշահախնդիր մաքրութեամբ։

Պզտիկ հոգիներու միայն յատուկ է կեանքի մէջ առաջնորդուիլ «ի՞նչ պիտի ըսեն»ի գռեհիկ մտածումովը, երբ անհատական ու ընկերական կեանքի պատահարները գուցէ պէտքը ունենան իրենց աւելի՛ ազատ ու աւելի՛ լայն ժէսթերուն։

Մարդկային ընկերութեան մէջ կայ սակայն դասակարգ մը, որը ստիպուած է գլուխ ծռել հանրային կարծիքին առջև ինչքան ալ խիզախ նկարագրով մը և ըմբոստ հոգիով մը օժտուած ըլլայ անիկայ։

Այդ դասակարգին կը պատկանի Հանրային Գործիչը։

Սոսկալի գերութիւն մը, ահաւոր տառապանք մըն է արդարև այս ստիպումը հանրային գործիչին համար, բայց չէ՞ որ անոր կեանքին մէն մի օղակը զրկանքով ու տառապանքով դարբնուած պիտի ըլլայ . . .։

Չէ՞ որ ինքը պիտի տառապի, որպէս զի ուրիշը օր մը երջանիկ ըլլայ . չէ՞ որ ինքը պիտի մեռնի, որպէս զի այդ ուրիշը ապրի . . .։

Եւ պէտք է ընդունիլ թէ՝ հանրային կարծիքին համաձայն վարուելակերպ մը որդեգրելը, իր մտքին ու սրտին ազատ թռիչներուն սանձ դնելը և ապրիլ գործին սիրոյն համար հանրութեան ըմբռնած տափակ և հասարակ հասկացողութիւններուն համեմատ՝ ամէն մարդու գործը չէ՛, և ասոր համար է որ իր կոչման կատարելապէս համապատասխան հանրային գործիչներ շատ քիչ թուով ունինք։

Ի՞նչ ըսել է խակապէս հանրային գործիչ և ի՞նչ է հանրային գործիչին նպատակը։

Հանրային գործիչ կը նշանակէ հանրութեան շահուն և օգտին համար աշխատող մշակ։

Անոր նպատակն է բարձրացնել ժողովուրդին մտաւոր և

հոգեկան վիճակին մակարդակը, լայնցնել, ընդարձակել անոր նեղ աշխարհահայեցքը, լուսաւորելով միտքը և արմատապէս ջնջելով նախապաշարումները, և ներշնչել անոր, կեանքի առողջ և գիտակից սկզբունքներ :

Հանրային գործիչներ են նաև զանազան մարդասիրական և բարենպատակ ընկերութեանց հիմնադիրներ և աշխատաւորներ, Ազգ. ժողովականներ և լն. և լն. :

Տրուած ըլլալով Հանրային Գործիչին ժողովուրդի ամէն խաւերու հետ շփման մէջ ըլլալու անհրաժեշտութիւնը, իր ծրագիրներուն և նպատակներուն յաջող ելքին համար պարտական է իջնել անձամբ մինչև անոր հասկացողութեան աստիճանը, ընդունիլ նոյն իսկ կիրարկել անոր նախապաշարումները, յարգել անոր կարծիքներն ու զաւանանքները, մէկ խօսքով նոյնանալ անոր հետ, ապրիլ անոր կեանքով :

Մենք գիտենք որ ժողովուրդ բառածը առաջին անգամ կը խրտչի ամէն նոր և լուսամիտ գաղափարներէ, և մինչև նորը ընդունելը շատ անգամ դարեր կ'անցնին . . . վկա՛յ հին ժամանակներու զանազան փիլիսոփաներու զաւանած ճշմարտութիւնները : Անոնք ժողովուրդներու կողմէն հալածուեցան մոլեգնաբար և զանոնք զաւանողները չարչարուեցան և սպաննուեցան . . . :

Պէտք չէ՛ ուրեմն խրտչեցնել ժողովուրդը յանկարծական, յախուռն գործելակերպով մը վերիվայր շրջել փորձելով անոր հին արմատացած հաւատալիքները և զաւանանքները :

Պէ՛տք է աշխատիլ տակտիկով և խոհեմութեամբ :

Անգամ մը որ Հանրային Գործիչը յաջողեցաւ վստահութիւնը գրաւելու հանրութեան, անգամ մը որ հանրութիւնը իր վրայ հաւատք շինեց, ա՛լ գործը դիւրացած է, կը յաջողի անոր ներշնչել ինչ որ նոր է, օգտակար ու գեղեցիկ և անզգալաբար կը բարձրացնէ զանի մինչև իր ազատ և ճշմարտօրէն ազնիւ ըմբռնողութեան աստիճանին :

Եթէ պարտական ենք ազգայոց հետ ազգայ ըլլալ զանոնք մեզի մօտեցնելու, մեզի հետ ընտանեցնելու և մեր խօսածներն ու սովրեցուցածները անոնց սիրելի և դիւրըմբռնելի ընելու համար, նոյնպէս և պարտական ենք վարուիլ ժողովուրդներու հետ :

Զէ՞ որ ժողովուրդը մեծ ազան է արդէն . . . :

ՀԱՐՀԱՐԱՆՔԻ ՇԱԲԱԹԸ

ՀԱՐՀԱՐԱՆՔԻ շաբաթը կ'ապրինք ահա։

Մարմնացեալ Յոյսը կը խաբուի. Մարմնացեալ Սէրը կը մատնուի. Մարմնացեալ Հաւատքը կը խաչուի։

Եւ ահա Յարութիւնն է որ կուգայ յաղթապանծ. Յոյսի Յարութիւնը. Սիրոյ Յարութիւնը և Հաւատքի Յարութիւնը ...։

Մեր Ատուծոյն Պատմութիւնն է այս. և քիչ մըն ալ մեր կեանքին պատմութիւնը։

Կը յուսանք, կը սիրենք, ու կը հաւատանք մեր անհատական կեանքին մէջ, մեր ընկերական կեանքին մէջ և մեր ազգային կեանքին մէջ։

Ու կըլլայ որ կը խաբուինք, կը մատնուինք ու կը խաչուինք . . .։

Անձկանօք կը սպասենք մենք մեր Յոյսին, մեր Սիրոյն մեր Հաւատքին Յարութեանը։

Աղերսագին կը կանչենք զայն մեր սրտին բովանդակ տենչանքովը, սպասումի անսասդ և տանջող հատնումներովը։

Եւ անիկա կուշանա՞յ . . . կուշանա՞յ . . . կուշանա՞յ . . .։

Չի յուսահատինք սակայն։

*
* *

Զարշարանքի շաբաթին պատմութիւնը հիանալի դաս մըն է անոնց համար՝ որոնք կեանքը կըմբռնեն ուրիշներու կեանքին մէջ, և որոնք այդ ուրիշներուն համար իրենց

սրտին ու հոգիին խորը տաճարակրելով վսեմագոյն Անձնուիրութիւնը և գերագանց Հաւատքը, կապրին անոնց կեանքովը և կը մեռնին դարձեալ անոնց համար։

Երանի՜ անոր, որուն սիրտը չի խորտակուիր, որուն Յոյսը Սէրը, Հաւատքը չի՛ մեռնիր մատնութեան առջև, ապերախտութեան և չարութեան խաչին վրայ։

Երանի՜ անոր, որուն սիրտը գիտէ վերածնիլ նոր յոյսերու հանդէպ, և որը ամեն անգամ իր խաչուած Հաւատքին դեռ նոր փակուած գերեզմանին վրայ մի՛շտ կանգուն, կը ժպտի նոր Սէրերու, նո՛ր Հաւատքներու արշալոյսին։

Ա՜խ . . . այդպիսիներուն համար ահա՛ Յարութիւնը կուգայ տիրական, հոյակապ ու փառաւոր։

Որովհետև անոնք յուսահատիլ չգիտցան . . .։

*
* *

Վա՜յ անոր որ չըմբռներ կեանքը բաղդաւորեցնող, կեանքին իմաստ տուող, կեանքը լուսաւորող երկնային ճառագայթներուն, Հաւատքի, Յոյսի ու Սիրոյ աստուածային անյաղթելի ուժը։

Վա՜յ անոր որ սկեպտիկ կապրի դաւանելով կեանքը իբրև հաճոյքի աղբիւր մը միայն և մարդկութիւնը ամբոխ մը՝ որուն վրայէն բարձրանալով կարելի է հասնիլ աշխարհային յաջողութիւններու, մեծութիւններու և փառքի գագաթնակէտին։

Ու երբ վերջապէս կը տիրանայ հպատակին, որուն կը տենչար իր կամքին ու կորովին բուլանդակ թափովը, այն ատեն միայն կըմբռնէ իր սխալը, այն ատեն միայն կը զգայ թէ՝ դժբա՛ղդ է, դժբա՜ղդ՝ այդ մեծութիւններուն ու փառքերուն գիրկը և թէ՝ իր կեանքին մէջ կը մնայ ահռելի պարապ մը՝ որը ոչ մէկ բան կրնայ լեցնել . . .։

Ու Աստուածային Վարդապետը ապրեցաւ ճշմարիտ երջանկութեան պայմանները ուսումնասիրելու համար։

Անիկայ չարչարուեցաւ ու մեռաւ ճշմարիտ երջանկութեան գիտութիւնը մեզի ուսանելու, Իրական փառքի և մեծութեան գաղտնիքը մեզի ծանօթացնելու համար։

Այն է՝ Հաւատալ, Յուսալ ու Սիրել . . .։

*
* *

Զի յուսահատինք ուրեմն եթէ իրապէս օգտուած ենք Աստուածային Վարդապետին աննման դասերէն։

Աննկուն և զօրաւոր կորով մը թող բարձր ու ամուր բռնէ մեր սրտերը ամէն անգամ որ նոր Յուդա մը կուգայ զմեզ մատնել համբուրելով, ամէ՛ն անգամ որ մեր գուրգուրանքն ու խնամքները վայելող Պետրոս մը կուրանայ մեր սէրը, ամէ՛ն անգամ որ Խաւարի զաւակներուն մութ դաւերը և վատ հալածանքները կուգան խանգարել փորձելու մեր անձնուէր ջանքերը և եռանդուն գործունէութիւնը։

Գողգոթան մեզի սարսափ թող չազդէ երբէք։

Սիրով կրենք փուշէ պսակը, արիութեամբ խմենք քացախէ ըմպելին, արժանաւորապէս տանինք մարտիրոսութեան փառքը, և Գաղափարը պիտի ապրի, Հաւատքը պիտի յաղթանակէ, և Յարութիւնը պիտի երեւի վերջապէս Յոյսի պայծառ և կապոյտ հորիզոնէն իր հրաշափառ լոյսովը կուրցնելով, իր ահեղ զօրութեամբը լեղապատառ փախցնելով ճշմարտութեան քովէն ստոր հալածիչները և վատ մատնիչները։

Զի՛ յուսահատինք։

Ազնիւ ու ճշմարիտ գաղափարներու, աննկուն ու խորունկ հաւատքներու Յարութիւնը միշտ և ամէն ժամանակներու մէջ պիտի ճառագայթէ ճշմարտութեան և Արդարութեան ծարաւի ժողովուրդներուն վրայ։

Անիկայ պիտի ապրի յաղթական սերունդներու հետ, և ժողովուրդներու ճակատագիրը առաջնորդող Բեթլեհեմի աստղը պիտի ըլլայ։

Զի յուսահատինք՝

Գեթսեմանի պարտէզին մէջ մեր անձկութեան արիւն քրտինքներէն ետքը։

Մեր երեսին նետուած թուքի և ապտակներու արիւնալի հետքերէն ետքը։

Խաչին վրայ մեր փառաւոր նահատակութենէն ետքը։

Մենք պիտի ապրինք յաւիտեան մեր ճշմարիտ և լուսաւոր գաւանանքներուն հաղորդակցութեամբը մեր սիրած սերունդներուն հետ, և մեր Աստուծոյն հետ՝ մենք անոնց մօտ պիտի ըլլանք մինչև ի կատարած աշխարհի . . .։

ԵՐԿՈՒ ՍԷՐ

Աչեն մը կար, ուր մեր սրտին մէջ կ'ապրէր Սէր մը միայն.
Հուր աչքերու, վարդ այտերու, վառ ժպիտի սէրն էր այն.
Բանաստեղծը Ցունդ գինովցած Գեղեցկութեան գինիով,
Գոհար տողեր ձերմակ, մանրիկ ոտքերու տակ կը փռէր։
Աչեն մը կար, ուր մեր մտքին մէջ կը շողար մէկ պատկեր,
Որուն առջեւ երկրպագու՝ ժպտէինք կամ կուլայինք,
Ու շատ շատեր Սիրոյ այդ վառ խորանին վէմ-քարին տակ
Գարուն կեանքը ողջակիզած՝ կը սպասէին ծմեռուան . . .։
Գարուն կեանքը կ'անցնէր շուտով, մառացումը կը հասնէր,
Հին Սէրերը կը դեղնէին հմայքին քով նորերուն,
Նոր խորշումներ կը փոթթէին մարմար ճակատ գեղեցկին,
Տարիները կը ծիւնէին գանգուրներու վրայ սեւ,
Պերճ հասակներ կը ծռէին տարիներու բ'ռին տակ,
Սիրտը սակայն կը մնար նոր, մանուկ, աշխոյժ, կենդանի . . .։

*
* *

Անցան օրեր, ու նոր Սէր մը տիրապետեց յաղթական,
Ճակատագրին պէս անողոք, Սէր մը հզօր մահուան պէս,
Ա՛լ այդ օրէն Գեղեցկութիւնն հմայքին հետ սուգ մտաւ,
Ո՛չ որ ա՛լ եւս ժպտունցաւ սիրուած ծայնի մ' հնչիւնէն,
Ո՛չ որ ա՛լ եւս սարսռեցաւ հուր աչքերու նայուածքէն,
Բանաստեղծն իսկ լքեց կարծես Գեղեցիկը մոռցուած,
Իր բնարը լարեց փութով այս նոր Սէրը երգելու.
Անոր շունչին տակ հալեցաւ ինչ որ ազնիւ չէր մեր մէջ,
Անոր բոցին տակ այրեցան ամեն կիրքեր անմաքուր . . .
Օ՛ շղթայուած Ազատութիւն, քու խորանիդ առջեւ սուրբ
Մանո՛ կ կեանքեր քուլայ քուլայ միացին ու մոխրացան . . .
Շղթաներդ փշրուեցան, ոտքի ելար յաղթական,
Դուն ազատեցիր . . . բայց քու Սէրդ մեր սրտերը ապաննեց . . .։

«Մի՛ վախնար, դուք չէք հատնիր»

Ս.

ԱՅԼ յիշեմ 95ի հայկական հալածանքներու վարդապետին՝ Հնչակեան կուսակցութեան Կ. Պոլսոյ Վարչութեան որոշմամբ Անգլիական դեսպանատունը զայի բողոքելու յանուն հայ մարտիրոս ժողովուրդին հանդէպ այն նորանոր բանտարկութիւններուն և միջնադարեան չարչարանքներուն զոր կարմիր Սուլթանին և իր արբանեակներուն դժոխային երևակայութիւնը կարդէ դուրս բեղմնաւորութեամբ օրը օրին կը ստեղծէր տարաբաղդ զոհերուն համար։

Կը կարծեմ թէ՝ կեանքիս մէջ երբէք այդքան պերճախօս եղած չէի։

Հայ տառապանքը առիթ ունի իրական, առիթ ունի կենդանի գոյներով կարելի չէր երբէք ներկայացնել օտարին։

Կը խօսէի ու արցունքները կը վազէին աչքերէս միևնոյն ժամանակ։

Տրօկմանը քովս մտեցաւ և ձեռքովը մտերմօրէն ուսս գարնելով. «Մի՛ վախնար աղջիկս, լաւ գգուանոյշ ձայնով մը, մի վախնար, դուք չէ՛ք հատնիր»։

Շնական հեգնութիւն մըն էր ա՛յս։

Երեսս այրող բարկութեան կրակը վայրկենապէս չորցուց յորդահոս արցունքներս։

Աչքերս վերցուցի տրօկմանին վրայ. կը ժպտէ՞ր . . . :

Ես՝ կուլայի, ան՝ կը խնդար . . . :

Ահա թէ ինչպէ՛ս օտարը վերարերուեցաւ հայ տառապանքին, հայ մորթոտումին, հայ արիւնին հանդէպ :

Ահա թէ ի՛նչ մխիթարութիւն պտաւ տալու անիկայ հոգեվարք հայութեան, որը կը մարմնացնէի իմ անձիս վրայ :

«Մի՛ վախնար, դուք չէ՛ք հատնիր» :

Այդ օրէն՝ անհուն զառնութեամբ լեցուեցաւ հոգիս հանդէպ օտարին, և վարժարանին մէջ, օտար ուսուցիչներս զորս կը պաշտէի և որոնք գուրգուրանօք կը սիրէին զիս, ինծի երևցան խորթ հայրեր ալ և ս, որոնք կը ժպտէին երեսիս, իրաւ, բայց կեղծ իրենց սիրոյ արտայայտութիւններուն մէջ :

Անիրաւ էի գուցէ, բայց այդ եղաւ իմ կրած տպաւորութիւնս :

*
* *

«Մի՛ վախնար, դուք չէ՛ք հատնիր» :

Իրա՛ւ, սուրը, հուրը, հալածանքը պիտի չկրնային մեզի հատցնել, կը հաւատամ ատոր, եթէ մենք նախանձոտ պահպանողականութեամբ պինդ փարած ըլլայինք մեր ցեղային ինքնայատուկ բարքերուն, սովորութիւններուն և մանաւանդ մեր լեզուին :

Մեր խեղճուկ ցեղին ցայտուն թերութիւններէն մէկն ալ իր ջերմեռանդ օտարասիրութիւնն է, ասիկայ առաջին անգամը չէ որ կըսուի, բայց բաներ կան, զորս կրկնել պէտք է, եթէ հարկ ըլլայ ամէն օր :

Օտարին լեզուն, օտարին բարքերը իւրացնելու մէջ փառք կը փնտուենք և մեր կամքին ամբողջ թափովը կը ձգտինք ատոր, այն օտարին՝ որը մեր նահատակութեան օրերուն ծաղրեց մեր արցունքները, հեգնեց մեր ցաւերը, և անկարեկիր հանդիսատեսը դարձաւ մեր մորթոտումին ...:

Օ՜հ . . . ինչքա՜ն վատ ենք . . . :

Եւ ասկայն դարերէ ի վեր ստրուկ ապրող ժողովուրդէ մը, այլազան ազգերու և ցեղերու լուծին տակ դարերէ ի վեր հեծող ժողովուրդէ մը ինչ առնականութիւն, ինչ կորով, ինչ ինքնուրոյնութիւն կարելի է ապասել :

Մենք չունեցանք այնքան հզօր կենսունակութիւն որ մայր հայրենիքը մեր հոծ գաղթականութիւններով որբացը-նելէ ետքը՝ օտարութեան մէջ դէթ յամառ պահպանողական-նութեամբ ամուր փարած մեր ազգային ամէն աւանդու-թիւններուն — թո՛ղ ըլլայն անհետեթ — մեր ցեղային բարքերուն, մեր լեզուին մանաւանդ, զօրաւոր թռւմբ մը կանգնէինք այն ահաւոր հոսանքին դէմ, որը կ՚ապառնար կլլել մեզ, քշել մեզ մեր ցեղային սահմաններէն դուրս դէպի օտարութեան գիրկը . . . :

Որ ափերն ալ որ ինկանք, ձուլուեցանք ընիկ տարրին հետ, և շատ ցանցառ հայութիւն մը կը մնայ — անիկայ ալ անուանական — այն տեղերը՝ ուր ժամանակաւ հոծ հայու-թիւն մը եռուզեռ կեանք մը կապրէր :

Ո՞ւր է օրինակի համար Ռումանիոյ հայ գաղթականու-թիւնը, այդ հարիւր հազարներէն քանի՞ հայեր կը մնան այսօր . . . :

Ո՞ւր է Հունգարիոյ Հայութիւնը . . .

Ո՞ւր է Հնդկաստանի հակայ հայ գաղթականութիւնը . . .

Այսօր՝ անոնք չեն յիշեր իսկ թէ՝ իրենց պապերը ժա-մանակին հայ բարբառը խօսեր, հայ բարբառով աղօթեր, հայ բարբառով սիրեր են . . . :

Տասնեակ միլիոններու հայ ժողովուրդէն՝ չորս միլիոնի խեղճուկ թիւ մը ունինք այսօր :

Եւ վախնամ այդ չորս միլիոնէն ալ բան մը չմնայ օր մը, և Հայ ցեղը ջնջուի ապրող ցեղերու մէջէն, ինչպէս ջնջուե-ցան Հռոմայեցիները և ինչպէս ջնջուելու վրայ են Ասորի-ները և Խպտիները :

Մեր հայկական Ֆիզիքական թիւերն իսկ օտարութեան մէջ կորանցնելու վրայ են իրենց յատուկ բնագրոշմը :

Ո՞ւր են մեր քիթերուն արծուային հայկականութիւնը, թուխ դէմքը, շեշտուած գիմագծերը, սեւ, խոշոր, կրակոտ աչքերը, պարթև հասակները, հուժկու կազմուածքները :

Միջազգային ժողովուրդ մը կը դառնանք օրը օրին, և մեր ամուսնութիւններն իսկ, ժամանակին այնքա՞ն տարա-մերժօրէն հայկական, այսօր կորանցնելու վրայ են իրենց զուտ ազգային բնոյթը, և առանց խղճմտութեան չենք վա-րանիր մեր զուտ հայկական արիւնը խառնել օտար արիւ-նի հետ :

Մեր բնաշխարհին մէջ միայն ընդհանրապէս կը հանդիպինք վերև յիշուած հայ թիւերուն, վասն զի անոնց արիւնը մնացած է զուտ և հարազատ բնաշխարհի առողջ ու մաքուր կլիմային տակ, հեռու արտաքին ազդեցութիւններէ և բացարձակօրէն զերծ՝ օտար արեան խառնուրդէ։

Միջազգային բնաւորութեան տեսակէտով մեզի կը նմանին հրէաները, բայց անոնք թէև յարատև շփման մէջ օտարին հետ՝ երբէք չեն օտարացած իրենց մէջ, անոնք յամառօրէն կառչած են իրենց կրօնքին, բարքերուն, սովորութիւններուն, մինչև իսկ նախապաշարումներուն, և խիստ պահպանողականութիւն մը կը դնեն իրենց ամուսնութիւններուն մէջ, անոնք օտարէն կ՚առնեն միայն ինչ որ իրենց շահուն օգտակար է, իրենց շահուն պէտքն է, իրենք բան մը վրայ չեն տար իրենց ունեցածէն, անո՛նք կը սովրին օտարին լեզուն ո՛չ թէ փառամիրութեան, զարդի կամ փայլի՝ այլ իրենց քաջին շահուն համար միայն։

Անոնք հարազատօրէն կը պահեն իրենց ֆիզիքական առանձնայատուկ դրօշմը, և հազարին մէջէն կարելի է ճանչնալ Իսրայէլի մէկ զաւակը իր ուղիղ քիթով, ճերմակ թափանցիկ մարթով, և երազուն աչքերով։

Իսկ ցեղական, ազգայնական ու լեզուի պահպանողականութեան տեսակէտով՝ եղական ժողովուրդ մըն են յոյները։

Ա.

Ամեն ազգերու մէջ ժողովուրդը միակ հաւատարիմ ուանդապահը եղած է ցեղային բարքերուն, կրօնքին ու լեզուին, ու վտանգը այն ժամանակ միայն իրական ու երկիւղալի հանդամանք մը կ՚առնէ երբ այլասերումը կ՚իջնայ ժողովուրդին մէջ։ Ահա՛ այդ պատճառաւ ամեն անոնք որ կոչուած են ցեղի մը ընդերքը կրծող վէրքին խորութիւնը չափելու, ամենէն առաջ ժողովուրդին մարմին մէջ կը խօթեն նշդրակը քննելու համար թէ՝ ի՞նչ աստիճան վտանգաւոր է վէրքը, թէ սկսա՞ծ է արդեօք թարախառիլ։

Վա՜յ այն ժողովուրդին եթէ իր այդ վէրքը փտախտի դարձած է արդէն, ա՛լ փրկութեան յոյս չկա՛յ անոր համար, անիկայ դատապարտուած է մեռնելու։

Օտարամոլութիւնը մեր ցեղային կենսունակութիւնը ծրծող վամպիրը եղած է դարերէ ի վեր և պէտք է մաքառիլ ատոր դէմ, հաւաքական ճիգերով, գերմարդկային ջանքերով։

Մօտաւոր ժամանակներու մէջ եղան բրօբականդիստներ, որոնք փայլուն ու համոզիչ պերճախօսութեամբ տարփոզեցին ցեղերու, ժողովուրդներու, լեզուներու իւ մի ձուլուելու և մէկ ընդհանուր հակայ զանգուածի մը մէջ խառնելու, նոյնանալու գաղափարը։

Ազգերու հետ եղբայրօրէն ապրիլ, համերաշխօրէն գործել, կարելի է, եթէ փոխադարձ անկեղծութեամբ ապահովուած ու նուիրագործուած ըլլայ այդ եղբայրակցութիւնը; բայց ձուլուիլ այս կամ այն ազգին հետ, որպէս թէ իրականացնելու համար գաղափար մը՝ որ ինչքան գէղեցիկ իր

վերացականութեանը մէջ՝ նոյնքան ալ անիրականալի ու անգործնական է գէթ այս ժամանակներուն համար։

Թո՛ղ զօրաւոր ցեղերը փորձեն այդ, և առնեն առաջին քայլը, մեզի, ապ մը խեղճուկ հայերս՝ մնաց համամարդկային գաղափարի իրագործումը ապահովելը, վրայ տալով մեր ինքնայատուկ բարքերը, սովորութիւնները ու լեզուն...։

Թողո՞ւնք որ Տարվինի սկզբունքը իր յաղթանակը տանի մեր վրայ ալ, մեծը կլլէ պզտիկը, զօրաւորը ընկճէ տկարը։

Պզտիկ ու տկար ազգ մըն ենք մենք, իրա՛ւ, բայց կրնանք մաքառիլ եթէ ուզենք մեր գոյութեան ապառնացող պայմաններուն դէմ — ինչքա՛ն ալ հզօր ըլլան անոնք — բաւական է որ քչիկ մը արժանապատուութիւն ու բարոյական ուժ ունենանք։

Պահպանենք ամենաերկիւղած յարգանքով և ծայրայեղօրէն նախանձախնդիր ոգիով մեր ցեղային ամեն բարքերը, սովորութիւնները, աւանդութիւնները։

Պահպանենք մինչև անգամ մեր նախնեաց սիրած կերակուրները, աւանդական թանապուրն ու հարիսան, եթէ չկրցանք պահպանել մեր գաղթավայրերուն մէջ մեր ազգային նախշուն ու գեղեցիկ զգեստները, որոնք այնքա՜ն պիտի վայլէին ձկուն իրաններու, և փոխանակ այն անհեթեթութիւններուն՝ զոր կը կրենք մեր գլուխներուն վրայ, այն սիրուն ակեզարդ, վէտիվէտ գլխանոցները որոնք այնքան լաւ պիտի արժեցնէին կնոջական հարուստ ու գեղեցիկ մազերը։

Եթէ կ'ուզենք որ մեր ցեղը ապրի, անոր կեանքը մշտընջենաւորելու համար ծայրայեղ միջոցներու առաջն իսկ պէտք չէ՛ ընկրկիլ։

Առողջ համոզումներու, առողջ գաղափարներու յառաջխաղացութեան մէջ՝ ծայրայեղութիւնները վնասութիւններ կը ծնին, իսկ չափաւորութիւնները միջակութիւններ։

Մենք նոր սերունդէն կըսպասենք ամեն բան։

Արիւնաքամ հայութեան նուազուն նայուածքը անհուն գուրգուրանքով յուսալից կը դառնայ հայ վարժարաններուն վրայ։

Անոնք մեր ցեղին մթին ապագան լուսաւորող լուսատու ջահերն են։

Անոնց վրայ պէտք է կեդրոնանան մեր ամենէն թանգ զոհաբերութիւնները, մեր ամենէն գուրգուրոտ խնամքները

ամենէն լուրջ հոգածութիւնը և ամենէն խստապահանջ ուշադրութիւնը։

Պէտք է ծայրայեղօրէն պահպանողական սկզբունքներով վարել վարժարանները։

Անոնք պէտք է ըլլան տարամերժօրէն հայ վարժարաններ, ճշմարտօրէն հայ սերունդ տուող հայ վարժարաններ։

Պէտք է ամէն գնով փրկել զանոնք միջազգային բնաւորութենէ, միջազգային շունչէ։

Խանդավառ հոգիով մը պէտք է ներշնչել ուսանողութեան տարամերժ պաշտումը իր ցեղին, երկիրգած յարգանք ու պատկառանք դէպի իր կրօնքն իր եկեղեցին, իր ազգային աւանդութիւններն, և մոլեռանդ Սէր դէպի իր լեզուն և իր պատմութիւնը։

Ցաւախ խօսիլ անոր իր հայրերուն արիւնոտ անցեալին վրայ, որպէս զի մոռացութեան չտան երբէք հայ տառապանքը, և վերյուշելով այդ անցեալը, ներկային մէջ ապրին ճշմարիտ հայ զգացումներով, վախնալով անպատուելէ այդ արիւնը, վախնալով անարժան զաւակները ըլլալէ այն մարտիրոսներուն՝ որոնց արբազան արիւնէն ծագեցաւ այսօրուայ ազատութիւնը։

Օտար լեզուն տալիս միայն ու միայն իբրև միջոց գարգացման, իբրև նիւթական գործառնութիւններու լոկ ապրիւր։

Ո՛և է փառք ու արժանիք չի փնտռեն երբէք տառր մէջ, որովհետև հոս՝ ունայնամտութենէ տարբեր բան մը չի սրբմիր, մեծագոյն ամօթը համարեն օտար լեզուով խօսիլ հայ միջավայրերու մէջ, և զովելի նախանձախնդրութեամբ պանծացնեն իրենց մայրենի շքեղ ու գեղեցիկ բարբառը, որուն մօտէն ծանօթ օտար գիտնականներն անգամ հիացած են անոր ճոխութեան ու վեհութեանը վրայ։

Որքա՜ն քիչ արժանի են հայ անուան ամէն անոնք որոնք խորթացած իրենց մայրենի քաղցր լեզուէն, թութակի պէս կ՝արձագանգեն լեզու մը՝ որը ոչ մեր սրտին կը խօսի և ոչ մեր ներքին զգացումներուն։

Հայ ապրինք ուրեմն մտքով ու սրտով։

Հայ ապրինք մեր բարքերով ու վարմունքով։

Հայ ապրինք մեր լեզուով ու գործքերով, և այն ատեն «չի վախնանք, մենք չենք հատնիր»։

ԽԵՆԴԻ ՄԸ ՎԷՊԸ

ՅԱՆՁՈՒԱԾ դէմք մը՝ վարդահաս կնճիռներով խորշոմած . . . : Թշուառութեան գրոշմովը կնքուած մեայլ ճակատ մը՝ որը անսահման տխրութեամբ կը ճնշէ հոգիներն ամէն անոնց որոնք խորունկ դիտելու, շատ զգալու և շատ ազդուելու ճակատագրային արամադրութիւններովը առեղծուած են . . . : Աչքեր՝ որոնք նայուածք չունին, և որ մէյ-մէկ վիհեր ըլլան կարծես տոռելիօրէն պարապ . . . :

Օ՜հ, թշուա՜ռ մարդ . . . :

Գլխատակ, կրթնած գաւազանին, խենթը մեծ դժուարութեամբ կը քաշկռտէ իր հիւանդ արունքները խորանէ խորան, խաչակնքելով, երկրպագելով և անսահման գուրգուրանքով իր մէկ հատիկ մամը վառելով նախընտրած Սուրբին առջև :

Եւ ահաւոր բան մըն է իմացականութեան նշոյլներուն բացարձակ չգոյութիւնը այս գերազանցօրէն բարեպաշտիկ ժէսթերուն քովիկը :

Վարեմի ու տիրական սովորութեան մը կը թուի հպատակիլ կարծես հզօր ընազդով մը, որը իր մեռած իմացականութեան տեղը կը բռնէ :

Ու ե՛ս հիւանդոտ հետաքրքրութեամբ կը դիտեմ զինքը երկարուելն, և իր հեռանալէն ետքն ալ աչքերս դեռ կը փնտռեն եկեղեցւոյ հոծ բազմութեան մէջ իր տարտամ սիլուէթը :

Ու ենթադրութիւններու մէջ առ խարխափ, կը փնտռեմ այդ դժբաղդ կեանքը տակնուվրայ ընող եղերական տրամին հանգոյցները, ու կը ջանամ իմացական ենել զուրկ այդ անկենդան ճակտին վրայ կարդալ մանկութիւնը, պատանեկութիւնը, երիտասարդութիւնը այդ թշուառին։

Եւ ահա՛ վէպը, զոր ենթադրութիւններուս ու խուզարկութիւններուս վրայ կրթնած՝ կը հիւսեմ անոր համար։

* *

Բարեպաշտ ծնողաց զաւակն էր ան, տարամերժելն նուիրուած եկեղեցական ու կրօնական պարտականութիւններու, անոր մանկութիւնը սրբուած էր հրեշտակային աղօթքներովը Նարեկացիին և շնորհաբոյր շարականներովը Շնորհալիին։

Յովհաննու Յայտնութեան միսթիք նկարագրութիւնները յաճախանքը եղած են իր պատանեկան վառվռուն երեւակայութեան, և սրերով ու գիշերներով, աչքերը գլպի երկինք յառած, ամպերու արընթաց վազքին և արեւուն սիգաձեւ քալուածքին մէջ նա թերեւս տեսած է հրաշագործ Սուրբեր, լուսեղէն հրեշտակներ և Մարդոյ Որդին, որուն «գէմքը արեգակի պէս էր և ձայնը շատ ջուրերու ձայնին պէս»։

Եւ անիկայ ուխտած էր արհամարհել աշխարհային սէրերը և աշխարհային վայելքները երբ որ մը, դժբաղդ որ մը ճակատագիրը իր գէմը կը հանէ փորձութեան հրեշտակը։

Ու գեղեցիկ, սքանչելի էր ան իր գիշերուան պէս սեւ, խոշոր աչքերով, նուրբ ու ճկուն հասակով։

Թեւերը իրեն երկարած կը ժպտէր, և մարգարտէ ակռանները բուսած շրթունքներուն մէջէն կը փայլէին անօրինակ շողերով։

Եւ հէ՞ք ոգան ի զուր աչքերը կը կոցէր չի տեսնելու համար փորձութեան հրեշտակը։ Ի զուր կը մաքառէր անոր սիրական ու կրակոտ նայուածքին դէմ։

«Գնա՛, կը պաղատէր անոր, գնա՛ հեռացի՛ր քովէս, քեզի չեմ կրնար սիրել, խղճա՛ վրաս . . .»։

Փորձութեան հրեշտակը սակայն աւելի՛ ու աւելի՛ . կը

մտեռնար իրեն, շուշան թեւերով կը գրկէր անոր վիզը, ի՛ր շունչին, իր նայուածքին կրակովը այրելով զայն։

Եւ տղան ի զուր կը փորձէր քակել իր վիզը շրջապատող շուշան թեւերը, ի զուր այդ աղէտաւոր հմայքէն ազատելու համար իրեն օգնութեան կը կանչէր իր նախասիրած Սուրբ-քերը, կ՝աղօթէր, կ՝ուլար, կը պաղատէր, անքուն երկար գիշերներու մէջ իր սրտին կոտտացող ցաւը պօռալով։

Գրուածը սակայն պիտի կատարուէր։

Փորձութեան հրեշտակը իր մօտն էր միշտ, և մութին մէջ հէ՞ք տղան կըզգար անոր աղուոր նայուածքին մագնիսը, որ զինքը կը քաշէր կը տանէր դէպի անդունդ, դէպի դժոխք։

Եւ օրին մէկը ա՛լ յոգնած, պարտասած, ուժասպառ ան կիյնայ փորձութեան հրեշտակին գիրկը, և այդ օրէն կըսկսի իր վերելքը դէպի Գողգոթա . . .։

*
* *

Եւ փորձութեան հրեշտակը անոր կամքին ու սրտին վերջապէս յաղթած ըլլալու գերագոյն գոհունակութեամբը հպարտ, և այդ կոյս սրտէն ու միամիտ հաւատքէն տարուած, ատեն մը կը սիրէ զայն անկեղծօրէն ու խանդավառօրէն։

Ու տղան գինովցած այդ նոր օրինակ Սիրովը, կը մոռնայ ամեն բան կը մոռնայ իր անցեալը, աշխարհիկ Սէրերու հանդէպ իր հրաժեշտի Ուխտը, կը մոռնայ իր գոյութիւնն իսկ, և կը հաւատայ թէ՝ ինքը մեռած է արդէն վաղուց, և դրախտի կեանքին մէջ է որ կարթննայ ու կը վերածնի իր հոգին։

Զարթնումը մօտ է . . . ահաւոր զարթնումը և սարսափելի իրականութիւնը։

Փորձութեան հրեշտակը օրին մէկը ա՛լ ձանձրացած այդ միամիտ Սէրէն, կը թողու կը հեռանայ նոր Սէրեր, նոր յաղթանակներ փնտռելու, որովհետև անհանգիստ հոգի մը և յաւիտենական Սէրեր ըմբռնելու անկարող սիրտ մըն է ան։

Եւ իրիկուն մը հէ՞ք տղան ինքզինքը կը գտնէ միանակ իր ամայի տան մէջ, մինա՛կ յիշատակին հետ անոր՝ զոր սիրած էր ամեն բանէ աւելի, իր յաւիտենական փրկութենէն ալ աւելի, թերեւս իր Աստուծմէն ա՛լ աւելի . . .։

*
* *

Օրերը կ'անցնին և չի՛ վերադառնար անիկայ, և որովհետև չգար ան, ինչը կ'երթայ անոր ետեւէն։

Կ'իյնայ սար ու ձոր, դաշտ ու անտառ, և երին մէկը կը գտնէ զայն ա՛լ աւելի գեղեցիկ, ա՛լ աւելի հրապուրիչ, ա՛լ աւելի տենջալի։

Ոտքերուն կ'իյնայ. «Օ՜հ, եկո՛ւր, կ'ըսէ եկո՛ւր իմ սիրականս, ո՞ւր մնացիր... այսքան գիշերներէ ի վեր քեզի՛ կ'սպասեմ...»։

Եւ փորձութեան հրեշտակը կը նայի իրեն անտարբեր և անզգած աչքերով, կարծես չը ճանչնար զինքը.

— «Խսէ՛ կ'ըսէ, միթէ չե՞ս լսեր զիս, ո՜հ, այդ ի՜նչ զարհուրելի նայուածք է, այդ ի՜նչ սառուցիկ կերպարանք է... վա՜յ իմ դժբաղդութեան... վա՜յ իմ սե՜ւ բաղդիս... ալ չսիրե՛ր զիս, ալ չսիրեր զիս...»։

Ու երկու ձեռքերը կը զարնէ գլխուն, կը փնթռտէ իր մազերը։

Եւ փորձութեան հրեշտակը կը շարունակէ նայիլ իրեն մի՛շտ պաղ և անզգած, անշարժ մարմարեայ արձանի մը պէս։

Հեռուէն կ'երեւի ահա երիտասարդ ձիաւոր մը ժիգոյն ու խրոխտ, կը մօտենայ անիկայ անշարժ արձանին... և արձանը կը կենդանանայ... աչքերը կը փայլին, շրթունքները կը բացուին սքանչելի ժպիտի մը մէջ, և թեւերը կ'երկնցնէ։

Ու թշուառ լաբեալը կը կարծէ թէ՝ այդ թեւերը իրեն համար է որ կը բացուին, թէ այդ շրթունքները իրեն համար է որ կը ժպտին, թէ այդ աչքերը իրեն համար է որ կը փայլին։

Կը գրկէ անոր ծունկերը։

Իսկ ան, արհամարհանքի ու ծանծրոյթի սարսափելի ժէստով մը ոտքովը մէկդի կը հրէ դժբաղդը, ու ծաղրանքի զարհուրելի քրքիջ մը նետելով անոր երեսին իր ձիւնաթոյր թեւերը կը նետէ երիտասարդ ձիաւորին վիզը. երիտասարդը կը քաշէ զայն ձիուն վրայ, և երկուքը գիրկնոփառուն արընթաց կը հեռանան անտառին խորը...։

Եւ թշուառը կը տեսնէ այս հրէշային բանը... մազերը կը քաշմեին, անլուր տանջանքին տակ երկու ձեռքերը կը տանի քունքերուն պայթելու մօտ գանկը սեղմելով։

Կըզգայ թէ սեւ քօղ մը ծանր ծանր կ'իջնէ գլխուն մէջ իր իմացականութիւնը մթագնելով, և ալ բան մը չի յիշեր...։

*
* *

Իր ծնողքը փնտռելէ յոգնած, յուսահատ, ալ չեն գիտեր ո՞ւր երթալ, ո՞ւր նայիլ, ո՞ւր գտնել իրենց սրտին սիրական հատորը, իրենց մոլորեալ որդին։

Եւ ահա կը տեսնեն զինքը ծառի մը տակ կծկտած, երկու ձեռքերովը գանկը սեղմած, մոլորուն նայուածքով, ծերացած, անճանաչելի՜ . . . :

Կը մօտենան, կը խօսին իրեն քաղցրութեամբ, արցունքներով և ան չի ճանչնար ա՛լ եւս իր ծնողքը։

Մերթ ընդ մերթ ահռելի քրքիջներ ցաւի աղաղակներուն պէս կը պատռեն իր կուրծքը, և հեռուն լեռները կը կրկնեն սարսափելի արձագանգը։

— Աստուած իմ, կը պաղատի մայրը, միթէ պատիժը աւելի ծանր չեղա՞ւ քան յանցանքը։

— Լռէ՛, կ՚ըսէ հայրը, Աստուած գթաց իրեն, ա՛լ պիտի չի յիշէ, ա՛լ պիտի չի տառապի։

— Փա՜ռք քեզ Աստուած, կը հառաչէ մայրը։

— Փա՜ռք քեզ Աստուած, կը գոհանայ հայրը։

Եւ գրկելով մոլորեալ որդին պզտիկ մանուկի մը պէս կը քաշեն կը տանին իրենց բնակարանը։

*
* *

Տարիները կ՚անցնին ու կ՚անցնին դժբաղդին գլխուն վրայէն։

Մեռած է անիկա աշխարհին համար, ալ չի՛ զգար, չի՛ մտածեր, չի՛ տառապիր։

Սակայն ամեն կիրակի եկեղեցի կուգայ, իր մէկ հատիկ մոմը գուրգուրանքով սեղմած ձեռքին մէջ, կը խաչակնքէ, կերկրպագէ և կը վառէ զայն իր նախընտրած սուրբին առջև։

Բնա՞զդն է արդեօք որ զինքը կ՚առաջնորդէ հոն՝ ուրկէ աղեստալի Սէր մը զինքը հեռացուցած էր։

Արդեօք իր խարխլած իմացականութեան ու խորտակուած սրտին մէջ կը մնա՞յ դեռ կենդանի անկիւն մը ուր կը բարախէ իր Աստուծոյն Հաւատքը իր Աստուծոյն Սէրը . . . :

Որովհետև քու Սէրդ է միայն ճշմարիտ, կենդանի, անփոփոխ և յաւիտենական, ո՜վ Աստուած։ . .

Կանանց Բաժինը

ԿԻՆԸ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԸ

Ամեն դարերու և ամեն ժամանակներու մէջ մի՛շտ ազատ, մի՛շտ ընդարձակ ասպարէզ ունեցեր են այր մարդիկ. ասպարէզ՝ խօսելու, խորհելու, գրելու և գործելու. մինչդեռ կանանց համար — մասնաւորապէս հայ կանանց համար ըսել կ՚ուզեմ — ստեղծուեր է շատ սահմանափակ վիճակ մը. շատ կաշկանդուած կեանք մը։

Հայ կինը ազատ չէ գրելու անխտիր ամեն նիւթերու վրայ. «ի՞նչ պիտի ըսեն» ի մտածումը շատ անգամներ կը խեղդէ իր մտքին ու սրտին խորերէն թռչող ամենէն վեհ ձայնը, կը ջլատէ իր հոգւոյն ամենէն բարձր ձգտումները, և հետեւաբար կը կաշկանդէ իր գրիչն ալ . . . : Եթէ գրէ իսկ, որոշ նիւթերու վրայ կը գրէ, զորս գրեթէ կը նշանակէ իրեն համար հանրային կարծիքը, և այդ պատճառաւ, բրոնեզատուած, սեղմուած բան մը, որոշ չափէն դուրս չելնելու ջանք մը կամ աւելի ճիշդը վախ մը կայ առ հասարակ իր բոլոր գրուածքներուն մէջ։ Ազատ չէ կարծիք յայտնելու համարձակ և անկեղծ այն ամեն հարցերու մասին՝ որոց խառնուիլը անպատշաճ նկատեր է իրեն համար հանրային կարծիքը . . . : Շատ անգամներ, ընկերութեան մէջ՝ երբ

խօսակցութիւնը կը դառնայ ընկերային և հանրային խնդիրներու առանցքին վրայ և կը ծեծուին այնպիսի հարցեր՝ որոնք կենսական կը նկատուին, զգուշաւոր ու երկչոտ կը տեսնես զինքը միշտ. սակայն նա կ՚զգայ. համակ զգացում է ինքը արդէն. Սէր և Գութ է միանգամայն. անոր սիրտը միշտ վառուող կրակ մըն է, ուր կը տաքնան, ու կը բռընկին ամենէն նուիրական և սուրբ զգացումները. սակայն ատոնք իրենց մէջ կ՚այրուին, մոխիր կը դառնան, որովհետև հայ կինը ազատ չէ, ազատ հոսանք մը տալով իր զգացումներուն, վառել ու մաքրել նաև սիրտերն ամեն անոնց՝ որոնք իրեն շուրջը կը գտնուին. այդ բանը կ՚արգիլէ իրեն հանրային կարծիքը...:

Եւ ոչ միայն հայ ազգին՝ ամեն ազգերու մէջ ալ առ հասարակ կինը միեւնոյն տխուր ու կաշկանդուած կեանքը ունի հազիւ ուրեմն իրրև բացառութիւն կրնանք յիշել մէկ քանի ցանցառ ազգեր՝ ուր կինը քիչ թէ շատ կ՚ապրի իրրև ազատ խղճի, ազատ համոզման, և ազատ գաղափարի տէր էակ:

Շատ անգամ խորհեր եմ ինքնին թէ՝ երբ մեր երկիրը դուրս եկեր է վերջապէս անծանօթ խաւարներէ, թօթափեր է իր դարաւոր քունը, և ծներ՝ մարդկութիւնը, ո՞վ արդեօք առաջին անգամ յղացեր է գծել կնոջ համար կեանքի այսքան նեղ սահման մը. նա ինչո՞վ է պակաս «հզօր» կոչուած սեռէն...: Առարկուի գուցէ թէ նա պակաս է խելքով, խորհելու և գործելու կարողութիւններով, թէ զուրկ է այն որոշ տրամադրութիւններէն՝ որոնք բացարձակ ազատութեան իրաւունքը կուտան այր մարդուն. և սակայն ո՞ւր է ապացոյցը...:

Միթէ օր մը ուզեցի՞ն քննել կնոջ մտային ու բարոյական ընդունակութիւնները...:

Շատ հեղինակներ կնոջ հոգեբանութիւնը ըրին, բայց խնդիր է թէ յաջողեցա՞ն արդեօք, դարձան ու դարձան անոր հոգւոյն ու սրտին շուրջը, իսկ մինչև խորերը կամ չկրցին, կամ աւելորդ համարեցին թափանցել...: Ե՞րբ արդեօք տրուեցաւ կնոջ այն պայմանները կամ այն տեղը՝ ուր նա մերկապարանոց ցոյց պիտի տար իր բոլոր կարողութիւնները, և տրամադրութիւնները, ըլլա՛յ հանրային, ըլլա՛յ ընկերային, ըլլա՛յ նոյնիսկ հասարակական խնդիրներու մէջ:

կնոջ ըսին. «Դուն պիտի ծնիս, ամուսնանաս, քու կարգիդ ծնունդ պիտի տաս զաւակներու, ու մեռնիս, խոտի պէս, բոյսի պէս, աննշան և անշշուկ անցնելով աշխարհի վրայէն։ Ուրիշ կոչում չունիս դուն. ընտանեկան յարկի մէջ է քեզի համար բացուած ասպարէզը, հոն ալ սակայն ազատ չես ուզածիդ պէս գործելու. հրամաններ պիտի ընդունիս և անոնց համեմատ շարժիս. դուն իրաւունք չունիս քեզի աւելի լաւ ու նպաստաւոր երեւցած կերպովը գործելու, որովհետև քու մաղերդ երկայն՝ բայց խելքդ կարճ է»։

Ահա այսպէս որոշեցին, դատեցին ու վճռեցին։ Տեսակ մը մեքենայ, տեսակ մը գործիք, տեսակ մը խաղալիք դարձուցին կինը, առանց նկատողութեան առնելու թէ նա ևս կը ձգտի դէպի աւելի՛ լայն ու բարձր գործունէութիւն մը, իր խորհելու, զգալու, սիրելու, տառապելու, յուսալու բոլոր տրամադրութիւններովը, պիտի ըսեմ նաև բոլոր իրաւունքներովը...։

Անուրանալի է թէ՝ կինը ունի իր նկարագրին մէջ զոհուելու բնական ընդունակութիւն մը ո և է նպատակի համար, միայն թէ այդ նպատակը կապ ունենայ աւելի՛ իր սրտին հետ։ Նա պատրաստ է զոհուելու ի՛ր ծնողքին, ի՛ր ամուսնոյն, ի՛ր զաւակներուն համար և վերջապէս այդ խիստ մօտիկ շրջանէն դուրս ալ — վկայ մեր յեղափոխական կեանքի պատմութիւնը — դէպի Հայրենիքի ազատութեան Ս. Գործը, նա ցոյց տուաւ անհուն անձնուիրութիւն, վսեմ քաջասրտութիւն և հերոսական զոհողութիւններ... այսու հանդերձ եթէ ինքը զուրկ է ամուր նկարագրէ և առողջ կամքէ, եթէ երբեմն թուլութիւններ կ՚երեւան իր վրայ, ատոր մէջ ինքը, իր խառնուածքը կամ իր բնութիւնը չէ՛ յանցաւորը...։

Ստեղծելով կնոջ համար գերութեան ստորնացնող կեանքը, կոյր հպատակութեան և բռնի հնազանդութեան փճացնող վիճակը, և նկատելով զանիկայ իբրև շնչաւոր առարկայ մը սոսկ մարդոց հաճոյքին ու պէտքերուն համար ստեղծուած, անոր հոգւոյն մէջ մեռցուցին ինքնաճանաչութեան, իր անձի գիտակցութեան և արժանապատուութեան վսեմ զգացումները՞. և կինը՞ մի՛շտ ենթակայ դարաւոր ճընշումներու, սկսաւ ինքն ալ կամաց կամաց հաւատալ թէ՝

բնութիւնը կամ արարչութիւնը զինքը ստրուկ է ստեղծեր, թէ՝ ինքը դատապարտուած է յաւիտեան ստրուկ ապրելու։

Հին անծանօթ ժամանակներէ ի վեր, ուրիշներու կամքին ու քմահաճոյքներուն տեղի տալու վարժուած՝ իր հոգւոյն մէջ չէ կրցեր բուն դնել կամքի այն սքանչելի ուժը, որ վաեմ նկարագրի մը խորը (fond) կը կազմէ և որոյ դէմ ամենէն անյաղթելի կարծուած արգելքները, և ամենէն ամուր ենթադրուած ուժերը ապակիի պէս կը փշրուին, այդ է ահա՛ իսկական պատճառը որ նա յոդոգդ, վարանոտ, փոփոխամիտ կ՝ըլլայ շատ անգամ զանազան խնդիրներու մէջ։

Ուրիշներու կարծիքները ու գաղափարները ընդունելու և իւրացնելու սովորած՝ ինքը անկախ միտք, ազատ մտածումներ, և ինքնուրոյն գաղափարներ չէ ունեցեր մինչ ցարդ և այսպէս հանրային կարծիքը կուչկանդելով կինը իր մտածումներուն և զգացումներուն մէջ՝ անոր բարոյական կեանքի մակարդակը զգալի կերպով ցածցուց։

Նա սորվեցաւ կեղծել և սքանչելապէս յաջողեցաւ։

Եթէ կը սիրէր՝ այդ սէրը թաղեց իր հոգւոյն ու սրտին ամենէն խորունկ ծալքերուն տակ իբրև աչառ մը բարոյականի դէմ, իբրև դաւաճանութիւն մը պատուոյ սկզբունքներուն դէմ, իբրև ընդունուած սրբապղծութիւն մը, ոճիր մը վերջապէս . . .։

«Ինչ պիտի ըսեն»ի մտածումը կնոջ ամենէն մեծ սարսափն ու արհաւիրքը եղած է միշտ . նա կը տոկայ հանրային կարծիքէն, ինչպէս մարդ կը տոկայ կախաղանէն։

Երբեմն կը տեսնես աչքերը կը փայլին, սիրտը կը բաբախէ, բերանը կէս մը կը բացուի խօսելու, ազատ ասպարէզ տալու իր ներքին հոգեկան աշխարհին մէջ յուզուող ու եռացող զգացումներու բուռն հոսանքին, և տակաւին ինքզինքը կը զսպէ . հո՛ն է հանրութիւնը, որ լարուած ուշադրութեամբ մէկիկ մէկիկ կը կշռէ, կը վերլուծէ իր իւրաքանչիւր խօսքը, աչքերը շրջապատած կը քննէ իր ամէն մէկ արարքը, ամէն մէկ շարժումը, դէմքին խաղերն իսկ կը զննէ, կ՝ուզէ թափանցել անոր մտածումներուն մինչև խորերը, և շատ անգամ ինչ որ չտեսներ՝ կը կարծէ գուշակել և այդ՝ առանց կարմրելու իբրև ճշմարտութիւն հրապարակ կը հանէ։

Անպատկառ հեռաքրքրությամբ կ'ուզէ կամ աւելի ճիշդը կը տենչայ անոր հոգւոյն ու սրտին ամենէն գաղտուկ խորշերն ալ քրքրել ու զննել, և վա՜յ այն կնոջ որ անխոհեմ քայլ մը առնելով կասկածանքի տեղի կուտայ. նա գատապարտուած է արդէն անողոք ու սարսափելի վճռով :

Հանրութեան կարծիքը Տամոկլէսի սուրն է, որ ապառնալից կախուած է միշտ իր գլխուն վերև : Սակայն պիտի ծագի ցանկալի օրը՝ յորում կինը վերջապէս առողջ և հիմնական գատաբարկութեամբ լուսաւորուած ու զօրացած, պիտի կարող է այն անտանելի շղթաները՝ որով նախապաշարեալ հանրութիւն մը կը կաշկանդէ իր ամեն Ներիրական ու Սուրբ իրաւունքները. այն ատեն ցոյց պիտի տայ իր մտքի, սրտի, հոգւոյ բոլոր թագուն գանձերը . . . :

Ֆլամմարիոն կ'ըսէ թէ մեր երկրին գրացի «Մարս» մոլորակին մէջ ապրող մարդկութիւնը, ամեն բանի մէջ նախապատուութիւնը տուած է կնոջ. թէ հոն՝ կինը շատ աւելի գերազանց կը նկատուի այր մարդէն ամեն տեսակէտներով : Ի հարկէ չ'գիտենք թէ ո՛ր աստիճան ստոյգ է այդ ենթադրութիւնը, միայն թէ մեզ համար ուրախալի է որ Ֆլամմարիոնի պէս մարդ մը արդէն համոզում գոյացուցեր է կնոջ կոչման բարձրութեանը վրայ, ճանչցեր ու գնահատեր է անոր արժանիքները, և «Մարս»ի երեւակայական մարդկութեան մէջ տուեր է անոր այն տեղը՝ զոր չ'ունի հա՝ երկրի վրայ . . . :

Սակայն «Մարս»ը մեր երկրէն շատ աւելի ծեր, փորձառու, զարգացած ու նրբացած կ'ենթադրուի . ո՞վ գիտէ, երբ մեր երկիրն ալ հասնի անոր տարիքին, ի՞նչ ճակատագիր կը վիճակուի մեզ կանանց համար . բայց այդ ապագան որքան յանկուցիչ այնքան ալ հեռաւոր է գժբաղդաբար . ատիկայ՝ մեզի յաջորդող բաղդաւոր սերունդներուն վերապահուած է : Մենք ջանա՛նք ցորչափ կ'ապրինք, մեր ներկայ այս անտանելի դրութիւնը բարւոքելու, որը շատ դժուար ալ չէ :

Լսե՛նք միայն մեր խղճի ձայնին, նոյն իսկ եթէ աշխարհ մը բամբասանք ու մեղադրանք թափեն մեր վրայ . արհամարհե՛նք չարամիտ պարսաւանքները՝ որ մեր ականջները կը վիրաւորեն . խիղճը մի՛շտ ճշմարիտը, Գեղեցիկը, Բարին կը թելադրէ մարդուս :

Բարոյականի որոշ ու ճշմարիտ օրէնքները, սկզբունքները ծանօթ են մեզի. սոնք նուիրական են ու սուրբ պէտք է մնան յաւէ՛տ մեզի համար։

Բարձրացնե՛նք մեր սեռը այն ստոր վիճակէն՝ որոյ ենթարկուած է դարերէ ի վեր, հզօր զարկ մը տալով մասնաւորապէս մեր սեռի դատիարակութեան, որ դժբաղդաբար շա՛տ թերի է, և աւելի երեւութական քան իրական բնութիւն մը ունի։

Ճանչնա՛նք մեր արժանապատուութիւնը, քա՛ջ ըմբռնենք մեր բարձր կոչման գիտակցութիւնը, գործե՛նք առողջ և ամուր համոզումներէ ստաջնորդուած միայն. և մոռնա՛նք հանրութեան կարծիքը։

Արցունքներ

ՈՍԿԱՆ - ԶԱԶԱՐԻ Ցիշատակին

Լսե՞նք մենք ալ, բարեկա՛մ, քեզ համար բանաստեղծին հետ. «Վարդ էր, ապրեցաւ վարդերու նման՝ առտու մը միայն . . .» :

Չէ՛. ատիկա մեզի չկրնար մխիթարել, և արցունքները կը կաթկթին դագաղիդ վրայ ագի՜ ագի՜. տա՜ք տա՜ք :

Քեզ սիրող ընկերներդ պինդ կը գրկեն քեզ, կրակէ համբոյրներ կը հրդեհեն ճակատդ, այտերդ, աչքերդ, շրթունքներդ. ոչինչ . . . գուն դագաղիդ մէջ կը պառկի՛ս անզգայ . . . :

* * *

Դագաղդ ճերմակ էր, ճերմակ ծաղիկներ թափեր էին դագաղիդ վրայ. մառաւուններուդ պէս գեղեցիկ, զգացումներուդ պէս անբիծ, հոգիիդ պէս անուշաբոյր . . . :

Տխո՜ւր հեգնութիւն քաղաքակրթութեան . . . :

Ծաղիկը՝ երջանիկ ու նորածիլ կեանքի այդ գուարթ խորհրդանշանը, մահուան՝ այսինքն փճացած, վերջացած կեանքի մօտ . . . : Ծաղիկներ՝ որ նորապսակ հարսին ճակատը կը պճնեն, խնճոյքի, ուրախութեան օրերու սեղանները կը զարդարեն. դարձեալ ծաղիկներ՝ որ մահը կը գրկեն . . . :

Դէս դէն, ցանցառ մամերու ոժգոյն ցոլքերը կը մարին դագաղիդ ճերմակին վրայ. խառնուն ձայներ մահուան ցուրտ երգը կ՝երգեն և թախիծն ու կսկիծը հոգիս կը խանձե՛ն . . . և ոսկորներուս մինչև ծուծը կը դողա՛մ . . . :

Կը նայիմ դագաղիդ ու կ՝ըսեմ. «Ի՞նչ եղար, Ոսկա՛ն, անհուն հոգի մը ունէիր, հրաբուխ սիրտ մը կ՝այրուէր կուրծքիդ տակ. ի՞նչ եղաւ ան . . . ուրեմն ոչի՞նչ . . . ոչի՞նչ . . . ոչի՞նչ . . .» :

*
* *

Դագաղիդ խուփը բացին. տեսա՛յ քեզի . . . «Որքա՞ն զեղեցկացուցեր էր քեզի մահը.» տեսա՛յ անհունութեան պէս խորունկ նայուածքդ. կրած գերմարդկային տառապանքներդ այնքա՞ն կենդանի, այնքա՛ն վշտալի արտայայտող վերջին սե՛ւ նայուածքդ, որ մտաւ հոգւոյս մէջ ու կը մնայ . . . : Նա կը հետեւի մտածումներո՛ւս, խորհուրդներո՛ւս, վշտերո՛ւս, ուրախութիւններո՛ւս. նա կը հետեւի ինծի ամէ՛ն տեղ ուր որ երթամ. ամէ՛ն տեղ, ուր որ կենամ . . . :

Տեսա՞ծ էք խաչին վրայ Մեծ Մարդասէրին դէպի երկինք վերցուցած չարչարուողի ցաւագին բայց վսեմ նայուածքը՝ ուր արցունքը կը լճանայ . . . տեսաք ուրեմն Ոսկանը՝ իւր դագաղին մէջ . . . :

*
* *

Բարեկա՛մ, աչքերդ բաց քաջաբար մահուան գալուստը դիմեցիր. ուզելով ցոյց տալ կարծես թէ չես վախնար իրմէն . . . :

Ա՜հ . . . մենք այդ գիտէինք, բայց մահը չէր գիտեր . . . որքա՞ն սքանչացաւ արդեօք վրադ . . . :

Ինչպէս քաջ կեցար մի՛շտ կեանքի ամենագառն և ամենախուր պարագաներուն մէջ, այնպէս ալ քաջ մնացիր մահուան դէմ :

Հեռաքրքիր՝ խուզարկու աչքերդ խոշոր բացած ուզեցիր տեսնել թէ ի՞նչ կայ մահէն անդին, երբ նա քեզ ետ իր ահաւոր գաղտնիքներէն կը մերկանար . . . :

Ամէն բանէ առաջ, մենք գիտենք, քու պաշտած հայութեան անորոշ բաղդը, մութ ապագան ուզեցիր որոշ տեսնել, երբ մահը կը պատռէր վերջապէս անծանօթին քօղը քու բա՛ց աչքերուդ առջև . . . :

Ի՞նչ տեսար արդեօք, բարեկա՛մ շուտով պիտի ծագի՞ ազատութեան արշալոյսը մեզի համար . . . :

Զարշարուողի այն վանեմ ու ապուր նայուածքիդ մինչև խորերը ընկղմեցի իմ աչքերս ալ . բայց ափսո՜ս . . . չկրցի թափանցել գաղտնիքին . . . :

*
* *

Սուրբ նպաստակի՛ զոհ . . . ազնի՛ւ հոգի որ ազնիւ ապրեցար, մաքո՛ւր սիրտ որ մաքուր մնացիր . քու անձդ ի սպառ մոռցած, քայլ առ քայլ հետեւեցար թշուառ հայ ժողովրդի բաղդին, անոր խնդութիւններովը խնդացիր, անոր տառապանքներովը տառապեցար, անոր արցունքներովը լացիր . . . :

Մէկ ձեռքդ սուր՝ սատակի՛ր, զոհացուցի՛ր, պատժեցի՛ր . միւս ձեռքդ գրիչ՝ ծաղկեցիր, հարուածեցիր ու վարձատրեցի՛ր . . . :

Ատեցիր մահու չափ, բայց սիրեցիր նաև հոգւով չափ . . . :

Զրկանքները չակտրացուցին ամո՛ւր հոգիդ . տանջանքները չթուլացուցին երկաթէ կամքդ . դուն չինկար ընա՛ւ . մարդիկ չկրցին քեզ ձգել, միայն մահը տապալեց քեզ . հակա՛յ կաղնի . . . :

Եւ մենք, քեզ հասկցող ու քու վրադ հիացող բարեկամներդ, զաղափիդ մեռ տեսանք անհուն զոհաբերութեան ու պերմարդկային չարչարանքի լուսապսակը՝ որ ճակտիդ շուրջը կը շողար և մեր աչքերը չլացա՞ն . . . :

*
* *

Նպաստակիդ չհասած մեռար . աչքերդ բաց, անթարթ նայելով հեռուն՝ ուր պաշտեցեալ հայրենիք մը կը միայ . . . հեռուն՝ ուր տանջուած մայրդ արիւն կուլայ, կ՚այրի կը մրկի քու կարօտով . . . :

Բայց ի՞նչ փոյթ . . . դուն չէի՛ր այն հոգիներէն՝ որ տանջանքէ ետքը ուզեն փնտռել իրենց ինկած վայելքի բաժինը։

Դուն քեզի համար ընտրեր էիր միա՛յն տանջանքը . անուշը՝ ուրիշներուն՝ իսկ լեզին՝ քեզի, և այդ տանջանքներու գինով, ամբողջ ժողովրդի մը, ապագայի մէջ — ըլա՛յ հեռաւոր — ճաշակելիք անհուն վայելքը երեւակայելով միայն երջանիկ էիր արդէն, և այդ կը բաւէր քու մեծ հոգւոյդ . . . ։

Երիտասարդ՝ դեռ գարնան վարդը ճակտիդ՝ թառամեցար շուտով . սակայն դուն շա՜տ ապրեցար, բարեկա՛մ . . . ։

Ան որ իրեն համար միայն կ՚ապրի, միշտ քիչ կ՚ապրի, նոյն իսկ որ դարերով կեանք ունենայ . իսկ դուն այդ քանի մը տարուայ կեանքիդ մէջ միթէ վայրկեան մը քեզի համար ապրեցա՞ր . . . ։

*
* *

Ձերմակ դագաղիդ մօտ, այս մտածումները ունեցայ . ուզեցի ես ալ ձերմակ ծաղիկներ թափթփել վրադ . բայց «Ծաղիկը պաղ և անզգայ է» ։

Ես քու վրադ կը թափեմ հոգւոյս ու սրտիս խորերէն բրդած այս հառաչանքներն ու արցունքները . օ՜հ թէ զգայի՛ր ատոնց տաքութիւնը գերեզմանիդ խորէն ։

Կարծիքներ

Հայ ցեղափոխութեան վրայ

Պետք է սկսիլ էն կար յեղափոխութիւնը։

Տիեզերքը իր սկզբնական անորոշ վիճակէն՝ լաւագոյն ու կատարեալ վիճակի մը վերածուելու համար հազարաւոր տարիներու աշխատութեամբը քրտնեցաւ։

Կենդանականութիւնն ու բուսականութիւնը սկիզբէն ճղճիմ ու տկար, անհամար տարիներու ընթացքին մէջ փոխեցին իրենց ձեւերն ու կազմութիւնները և հետզհետէ զօրացան ու դեղեցկացան։

Արդ, երբ բնութեան մէջ կը տեսնենք դէպի լաւագոյնը, դէպի կատարեալը ձգտելու ոգին, ինչո՞ւ մարդ արարածը, բնութեան ստեղծագործութեանց մէջ է՛ն կարողն ու մտացին, որ ֆիզիքական ու նիւթական կեանքէն զատ բարոյական կեանք մըն ալ կ՚ապրի, իր մէջ չի կրէ այդ նոյն ոգին, և լաւագոյն վիճակ մը ստեղծելու համար չի գործածէ իր ուժերն ու կարողութիւնները. չէ՞ որ սերտ կապ մը կայ ֆիզիքական ու բարոյական կեանքին մէջ, ու եթէ ֆիզիքականը դէպի կատարեալը կը ձգտի՝ մտածող, խօսող ու զգայող էակին, այսինքն մարդուն մէջ ինչո՞ւ բարոյականն ալ չձգտի դէպի կատարեալը . . .։

Եւ եթէ ան ուզէր իսկ մնալ իր նախնական կեանքին մէջ, պիտի կարենա՞ր քանի որ բնութեան դիմադրելի օրէնքներուն — որոնց ենթակայ է ամենուն պէս ինքն ալ — անոր մղիչ ոգւոյն հետ մտքի լոյսը կը ծագէր, գիտակցութեան ուժը կ'արթննար իր ուղեղին մէջ, և զայն կը մղէր յառաջ, մի՛շտ յառաջ, անդիմադրելի ուժգնութեամբ։

Բնութեան մէջ կատարուող փոփոխութիւնները կը կոչենք յեղաշրջում, իսկ մարդ արարածին նիւթական ու բարոյական կեանքին մէջ կատարուող փոփոխութիւնները՝ յեղափոխութիւն։

Անցիշատակ ժամանակներէ ի վեր մարդ արարածը զարթած էր սակ անսանական էակ մը ըլլալէ։

Եթէ աւանդութեան նայինք, պիտի տեսնենք որ նոյնիսկ առաջին մարդուն մէջ կար յեղափոխական ոգին։

Մեր նախահայրն ու նախամայրը Աստուծոյ բացարձակ պատուիրանին դէմ ապստամբելով կերան արգիլեալ պտուղը իրենց համար աւելի՝ բարձր կեանք մը ստեղծելու, այսինքն աստուածանալու համար։

Հայկ, Հայոց նահապետը, յեղափոխեցաւ ու յեղափոխեցուց իրենները՝ Բաբելոնեան հսկայ բռնաւորին դէմ, ազատ և անկախ կեանք մը ապրելու համար . ու եթէ թղթատենք հին և նոր ժամանակներու պատմութիւնները, ամէն մէկ էջին պիտի հանդիպինք յեղափոխական պայքարներու, զորս մարդիկ մղեր են լաւագոյն կեանք մը ձեռք բերելու համար։

Նախնական դարերէն սկսելով մինչև մեր օրերը յեղափոխութիւնը շատ մը վիճակներէ ու երեւոյթներէ անցաւ, նպաստելով ազգերու լուսաւորութեան ու զարգացման աստիճանին, իսկ ուր որ ոգիտութիւնն ու խաւարը դեռ եւս կը տիրապետեն, մնաց ու կը մնայ բիրտ ուժը, որ է ժողովուրդներու յեղափոխութեան սկզբնական պատճառը . և այդ բիրտ ուժին դէմ դեռ եւս կը կռուին այն ամէն ժողովուրդները՝ որոնք դժբաղդութիւնը ունեցեր են իյնալու ոգէտ, մոլեռանդ ու բռնաւոր կառավարութիւններու լուծին տակ . այս կառավարութիւններն իրենց փտած ու որդնոտած գոյութիւնը այդ հարատահարեալ ժողովուրդներու արիւնը խմելով կը ձգտին զօրացնել . . .։

Յեղափոխական կռիւը մղեցինք և մենք, Հայերս։

Զարշարուեցանք յուսահատօրէն անլսող ու պարտուած,

մինչ մեզի բաղդակից՝ բայց մեզմէ աւելի բաղդաւոր ազգեր տարին որոշ չափով յաղթանակներ։ Բաւական է յիշել Յոյներն ու Պուլկարները, Կրետէն ու Մակեդոնիան։

Բաղաքակրթուած ազգերու մէջ, ուր կեանքի, պատուոյ և ինչքի ապահովութիւնը, այսինքն նիւթական կեանքի ամէն անհրաժեշտ պայմաններուն վայելքը երկար ժամանակներէ ի վեր նուիրագործուած իրաւունք մը դարձեր էր, բարձրացան սակայն ուրիշ ոչ նուազ օրինաւոր և ատիպողական կռիւներ — Հաւասարութեան, եղբայրութեան, սիրոյ, ազատ խօսքի և ազատ մտքի արդեգրման կռիւները. վասնզի լուսամիտ համարուող կառավարութիւններու ըլլած պատուոյ, կեանքի և ինչքի ապահովութիւնը՝ լաւ տեսնողի մը համար իրօք սակ անուանական ու երևութական հանգամանք մը ունէր. ասի փոշի փչել էր ազգերու աչքին՝ անոնց նշմարել չի տալու համար ոչ նուազ սակայն և թաքուն բռնակալութիւն մը, ուր պատուոյ, ինչքի և կեանքի բռնաբարութիւն մը նո՛յնքան և գուցէ աւելի սանձարձակ կը տիրապետէր՝ երկրին տիրող օրէնքներուն սակ հավանաւորուած ըլլալով։ Այս անգամ սուրը, հուրը՝ կամ քիրտ ուժը չէ՛ր նախճիրներ գործողը՝ ժողովուրդներու կեանքին մէջ, այլ զարիբալիներու էկեր ու գաղանական՝ շահագործումը գործաւորներու ֆիզիքական ուժերուն։

Արդարև, կա՞յ աւելի հակամարդկային վայրագ գործ քան աշխատցնել բիւրաւոր մարդիկ շարաչար, միլիոններ վատակել անոնց քրտինքով և զանոնք այնքան քիչ վարձատրել, որ չի կարենան մարդավայել կեանք մը ապրիլ, և անոնց, անլոյս տեղեր շնթռկելով և չոր հաց ու պանիր հաղիւ ուտելով կորսնցնեն իրենց մարմնական ուժն ու կորովը, մտքի ու հոգւոյ կենսունակութիւնը և դառնան կենդանի դիակներ... կամ թշուառութեան հետեւանքով թոքախտի ու նմանօրինակ հիւանդութիւններէ վարակուելով մեռնին և բիտասարդ, անօգնական թողլով մանկամարդ այրիներ ու մանրիկ որբեր...։

Դժուարին չէ՛ երեւակայել թէ ի՛նչ կ՚ըլլայ անոնց ալ ապագան... հանրակիներն ու դիւրամատոյց աղջիկները շատ անչափ զարիբալիներու անխղճութեան զոհերը չե՞ն մնար։

Իսկ անոնք որ հակառակ այնքան զրկանքներու և չարչարանքներու մինչև ծերութիւն կը հասնին, աշխատելու անկարող ըլլալուն պէս՝ կիսնան ճամբաներուն վրայ յոգնութենէ ճաթած գրաստներու նման, և կը տանին զիրենք կը նետեն հիւանդանոցի մը անկիւնը՝ ուր կը մեռնին ինչպէս որ ապրեր էին . . . :

Ուրեմն պարզ է որ սուրը չէ՛ միայն կեանքը գրաւողը, այլ սուրէն աւելի սոսկալի ու անվրէպ մահացնող զէնք մը կայ, այն է՝ անբաւական սնունդը և ոգի ու լոյսի զրկանքը:

Բիրտ ուժը չէ՛ ստայուածքը քաշող տանողը, բայց անկէ ոչ նուազ լիրբ ու մերկապարանոց գողութիւն մը կայ օրէնքի պաշտպանութեան տակ, այն է՝ տուանց օրինաւոր ու բաւականաչափ վարձատրութեան անխղճօրէն շահագործել աշխատաւորին ֆիզիքական ուժը, անոր միակ ինչքը:

Բռնի միջոցները չեն միայն կանանց և օրիորդներու պատիւը լղճողները, բայց ասոնցմէ աւելի դառն անհրաժեշտութիւն մը փոսը կը գլտորէ զիրենք՝ այն է անօթութիւնը:

Ի զուր Տիկին Հէնրի Պիչըր Սթօու իր գերազանց հանճարին և անյողդողդ կամքին ուժովը տապալեց գերեվաճառութեան հակաբնական օրէնքը. հիմա մարդիկ իրենք զիրենք, իրենց երիտասարդութիւնը կը ստիպուին կոր վաճառել պատառ մը հացի համար . . . :

Ինչքա՞ն սխալ հիմերու վրայ դրուած են ընկերական կազմակերպութիւնները:

* * *

Դարերու ընթացքին մէջ, քաղաքակրթութիւնն ու զարգացումը ստեղծեցին այնպիսի հոյակապ միտքեր, որոնք ըմբռնեցին տիրող ընկերական սխալ կարգը, մտածեցին զայն յեղաշրջել և Ազատութեան, հաւասարութեան ու Սիրոյ վսեմ իտէալը գործնական հողի վրայ դնել:

Անոնք ազատ մտածումի և ազատ մամուլի իրաւունքը խիզախօրէն պահանջեցին և կառավարութիւններէն ոմանք ստիպուած տեղի տուին: Եւ ահա, երիտասարդ եռանդուն ուժերը սկսան խմբագրել ազատ թերթեր, հոն խանդա-

վառօրէն տարփողելով ազգերու հաւասարութեան, Սիրոյ ու Եղբայրութեան սկզբունքը։

Ուրիշներ խօսեցան բեմերու վրայէն, համարձակ մատնանշելով գարիբալդիներու անպատկառ անիրաւութիւնները՝ հանդէպ հարատահարեալ ժողովուրդներու. նկարագրեցին ամենավսեմ և յուզիչ շեշտերով այն խոնաւ անօդ, անլոյս բնակարանները, անբթութենէ և զրկանքներէն առաջ եկած ֆիզիքական ու բարոյական անտանելի ցաւերը, որոնք շատ աւելի արմատական կրտրուածներ սկսեր էին ընել ազգերու և ժողովուրդներու մէջ՝ որքանը գուցէ չէին ըրած պատերազմը կամ ժանտախտը. . . ։

Արիւնոտ եղան ու կ՚ըլլան դեռ եւս մարդկային կեանքի բարենորոգման ճամբուն վրայ առնուած առաջին քայլերը։ Շա՞տ զոհեր փուռեցան այդ ճամբուն երկայնքը, շա՞տ արեր արիւնեցան, շա՞տ արցունքներ թափուեցան ու թրջեցին ուղին . . . և այս պահուս Ռուսաստանն ու Կովկասը դեռ եւս արիւնի ու արցունքի մէջ թաթխուած է . . . ։ Բայց սերմը արդաւանդ հողի վրայ ինկած է, և մարգարիտները չեն թափուած խոզերուն առջև. այդ արիւնի ու արցունքի մէջէն շուտով կը ծագի յուսոյ արշալոյսը, և յաջորդ սերունդները կը քաղեն ապահովաբար այդ ծլելու մօտիկ սերմերուն պտուղները։

Մենք պատմութենէն գիտենք որ այն ամէն դատերը՝ որոնք վերջնապէս տարեր են յաղթանակը, ունեցեր են ասանկ տագնապալի, արիւնալի շրջաններ. երբէք խաղաղութեամբ, առանց արիւն արցունք թափուելու, սկզբունք մը չէ՛ տիրապետած։

Հաւասարութեան ու Եղբայրութեան սկզբունքը, այն՝ զոր Քրիստոս քարոզած է ու նուիրագործած իր արիւնով, մին է այն սկզբունքներէն որ եկած է երկիր, նախապէս հուր և սուր շողացնելով, բայց ի վերջոյ Խաղաղութիւնն ու Սէրը թագաւորեցնելու համար ընդհանուր աշխարհի և ընդհանուր մարդկութեան վրայ։

Մանաւորենք հիմա մեր խօսքը մեզ՝ Հայերուս վրայ, և հարցնենք թէ ի՞նչ ըրինք մենք ալ մեր աչքերուն առջև կատարուող այս վիթխարի շարժումներուն առջև։

Սուրբ սարսուռով մը համակուեցանք, ազնիւ ոգեւորութեամբ մը ցնցուեցանք և արիութեան ու անձնուիրու-

թեան այդ սքանչելի օրինակները ներշնչեցին զմեզ ալ, խօսող, խորհող ու զգացող էակներուս, խորտակելու փշրելու համար զմեզ դարերէ ի վեր կաշկանդող բռնաւոր ուժը . . . :

Մենք, Հայերս, յեղափոխութեան սկզբնական պատճառին դէմ կռուեցանք :

Մեր և մերիններուն կաշին անմիջական ապահովութիւնը դեռ եւս մեզ կը բռնադատէ սահման մը դնել մեր քացարձակօրէն ազատական ձգտումներուն. անշուշտ եթէ այդ պատճառը գոյութիւն չունենար, մենք ալ, իբրև արեւելքի ժողովուրդներուն է՛ն լուսաւորեալը, խանդավառութեամբ պիտի ընդգրկէինք համամարդկային սիրոյ գաղափարը :

Այդ տիեզերական խլրտումներուն առջև, յառաջդիմութեան և իրաւունքի ճաժլուն մէջ, կը գտնուին սակայն հայ ժողովուրդէն անհատներ — և բարեբաղդաբար ատոնք աննշան բացառութիւն կը կազմեն, համեմատելով հայ յեղափոխական ուժեղ տարրին հետ — որ կը մեղադրեն հայ յեղափոխականները և զանոնք պատճառ կը բռնեն Հայ Տառապանքին :

Ժամանակը չէր, կ՚ըսեն, խոհեմութիւն չէր, եւրոպական քաղաքականութիւնը մեզի նպաստաւոր չէր, լաւ պատրաստուած չէինք, ևլն . ևլն . . . :

Անոնք կը մոռնան թէ հայ յեղափոխութիւնը ստեղծողը՝ հայ յեղափոխականները չէին, այլ դարուն ոգին, ժամանակը և ինչ որ ամենակարեւորն է՝ դիպվարը, այսինքն Տաճկահայաստանի մէջ կատարուող վայրագ բարբարոսութիւնները և բռնակալութեան տարապայման ճնշումը՝ հայ ժողովրդին վրայ :

Առանց ատոնց, գուցէ դեռ եւս Հայ Յեղափոխութիւնը սպասէր իր հասունացումն. չեմ ըսեր՝ սպասէր եւրոպական քաղաքականութեան նպաստաւոր դառնալուն, որովհետև եւրոպական քաղաքականութիւնը կը նմանի այն դիւրամատոյց կնոջ, որ այսօր երեսիդ կը խնդայ, քեզ կը խաբէ հըրապուրիչ խոստումներով և վաղը այդ խոստումները արդէն մոռցած՝ ըլլօրէն քթիդ խնդալով ուրիշի մը գիրկը կը նետուի . . . :

Ի սկզբան, մենք եւրոպական հայանպաստ քաղաքականութեան մը կրնայինք հաւատալ միամտօրէն, քանի որ յեղափոխական բաղխումներու արիւնոտ վաղորդայնի մը՛ անոր

ուղղակի միջամտութեանը դիմելու առիթը չէինք ունեցեր դեռ։

Իրա՛ւ, տարիներ առաջ, Սուլթան Ազիզի օրով խլրտում մը երևցաւ Լուսաւորեալներու ու Խաւարեալներու, այսինքն Ազատական ու Պահպանողական կուսակցութեանց միջև, բայց ատի ազգայնական ներքին բարեկարգում մըն էր սոսկ. եւ այն առենուան զարգացած ազատամիտ երիտասարդութիւնը՝ ժողովուրդին գլուխը անցած, յաջողեցաւ վերջապէս Սահմանադրութեան օրէնքին հաստատութեամբ տապալել Ամիրաներու բռնապետական սիստէմը եւ ժողովուրդին տալ ազատ ձայն, ազատ քուէ, եւ իր նիւթական, բարոյական ու կրթական շահերը կառավարելու համար արժանաւոր գործիչներ ընտրելու իրաւունքը։ Բայց սա՝ ինչպէս ըսինք, ազգայնական ներքին յեղափոխութիւն մըն էր լոկ, և պէտքը չունէինք մեր գործունէութիւնը ծածկելու տիրող կառավարութենէն և դիմելու օտար միջամտութիւններու։

Հետզհետէ սակայն արիւնոտ շրջաններ բացուեցան, և տառապող հայերը սկսան Եւրոպայի աջակցութեան վրայ յոյսեր դնել։ Օր մը լսեցինք թէ՝ Վիքթորիա թագուհին լացեր է Հայ տառապանքին պատմութիւնը լսելով . . . ։ Օր մ՚աւ լսեցինք, Կ. Պոլսոյ Ջարդերուն առնն, թէ անգլիական Ֆլոտաթիան ու ռուսական մարտանաւերը մտեր են Տարտանէլ, Պերլինի Դաշնագիրը յարգել տալու համար, և ահա, նոր ոյժ, նոր սիրտ առինք ու մեր թանկագին կորուստները մոռցած՝ հայ ազգին համար ժպտուն ապագայ մը ապահովուած տեսնելու յոյսովը մխիթարուեցանք. բայց քիչ վերջ, անգամ մըն յուսախաբ եղանք . . . ։

Եւրոպական քաղաքականութիւնը հայ յեղափոխութեան կը ժպտէր և զանի կը քաջալերէր այնքան առնն միայն՝ որքան պահանջք մը կ՚ունենար բրցնելիք Սուլթանէն. իսկ փափաքածը ստանալուն պէս՝ ըլա՛յ այդ երկրագործի մենաշնորհ մը կամ քաղաքական շահերու հետ անմիջական առնչութիւն ունեցող խնդրի մը կարգադրութիւնը, անմիջապէս երես կը դարձնէր մեզմէ։ Ուրեմն ի՞նչպէս կարելի էր ապասել Եւրոպական յեղյեղուկ քաղաքականութենէն որ մեզի նպաստաւոր դառնայ, ու այնպէս սկսիլ ապատամբական շարժումի, երբ հոն, տաճկահայաստանի խորերը հայ ընտանեկան յարկի սրբութիւնը կը պղծուի . . . հայ քրիս-

տոնական կրօնն ու եկեղեցին կը բռնաբարուին . . . հայ կոյսերը թրքական հարէմները բռնի կը քաշքշուին . . . : Ինչպէ՞ս համբերել երբ տունդ ու ընտանիքդ պահող ամէն մէկ առարկաները մէկիկ մէկիկ կը քաշեն դուրս կը հանեն . . . ահա՛ կը տանին անկողինդ, վերմակդ, մինչև իսկ վրայի ցնցոտիներդ, որոնք հազիւ արդէն մարմնիդ կը պատապարեն ցուրտին ու շիւնին դէմ . ահա կը տանին քու մէկ հատիկ կովդ ու այծդ, որ նեղ օրերուդ քեզի իր կաթովը դոնէ կը կերակրէր. ահա կը տանին քու մէկ հատիկ մանչ տղադ. միակ յոյսդ, ծերութեանդ ցուպը, բանտի ու տանջանքի մատնելու համար . . . :

Համբերե՞՞լ . . . բայց անօթի՞ ես . . . մինչ քաղաքակրթութիւն, խոհեմութիւն, ժամանակ, տեղ, պարագայ կը հասկընա՞ն բռնի խլամոլումները, կուսապղծութիւնները, աւարառութիւնները՝ սպանութիւնները . . . օ՜հ, ինչքա՞ն դիւրին է ազատ ու ապահով հողի մը վրայ խոհեմութեան ու քաղաքակիրթութեան յորդորներ կարդալը . . . :

Պէտք է կրկնել դարձեալ թէ՝ եւրոպական քաղաքակրթութիւնը չէ՛ որ առանձինն պիտի կարենայ փրկել հայերը ցորչափ Եւրոպայի՝ չահերը ատոր հակառակին :

Քաղաքակրթուած ժողովուրդներու ազգու բողոքները պիտի կարենան անշուշտ ստիպել իրենց կառավարութիւնները, այդ սառուցիկ սրտերը, որպէսզի գործնական միջոցներ ձեռք առնեն բոլոր ընկճուած ցեղերու ազատագրութեան համար. եւ շատ բնական է մեր կողմէն դիմել աւելի՝ ժողովուրդներու սրտին, քան թէ չա՛ահանդիր դիւանագէտներու, վասնզի ժողովուրդները տառապած ըլլալով ու դեռ եւս տառապելով, վիշտն ու չարչարանքը կ՚ըմբռնեն :

Ու երբ Բիէռ Քիյեառներ, Միս Սլիս Պլաքուէլներ, հայ ազատագրութեան դատին այդ նոր տիկին Հէնրի Պիչըր Սթօուն, այնքան գեղեցկութեն գրելով ու խօսելով ճշմարտութեան լեզուն, Հայ Տառապանքը կը ճանչցնեն այդ ժողովուրդներուն, կրնանք վերջապէս յուսալ թէ, հակառակ պաշտօնական Եւրոպայի անտարբերութեան, անդին քաղաքակիրթ ժողովուրդներ կան, որոնք հայութեան ցաւերուն վերջ մը տալ կը բաղձան անկեղծօրէն :

* * *

Մեր ազատագրական շանքերուն մէջ իրաւ է որ չարդուեցանք. բայց միթէ չէ՞ն չարդուիր նաև այն ամէն ազգերը որոնք՝ իբրև մարդ ապրելու կը ձգտին . . . :

Այսօր միթէ չէ՞ն չարդուիր Ռուսիոյ և Կովկասի ժողովուրդները հարիւրներով և հազարներով, տիրող բռնակալ Ռէժիմին դէմ կռուելնուն համար :

Միթէ անոնք կը սպասե՞ն արտաքին որ և իցէ միջամտութեան մը . անոնք սա նշանաբանը ունին թէ՝ մարդ կա՛մ յեղափոխական է կա՛մ ոչ, յեղափոխութիւնը երկու կերպ կամ երկու եղանակ չի ճանչնար ու չի հասկնար :

Համբերե՛լ . . . Ի՞նչպէս համբերե՛լ . . . և ժողովուրդը սարսափեցնելու համար անոր աչքերուն առջև կը ցցեն սոսկալի մահերը, որպէս թէ կեանքը արդէն նշանակութիւն մը ունենար թշուառներուն համար . . . :

Ցաճկահայաստանի հարստահարեալները, չէ՞ք տեսներ, յուսահատութենէ գրեթէ խենդեցած, մահ կը գոչեն, մահը՞ կաղերսեն . . . ի՞նչ բանի համար ուզեն ապրիլ. մենակեաց բուերու պէս իրենց հայրենիքի աւերակներուն վրայ ողբալո՞ւ, կամ իրենց կորսուած հոգեհատոր սիրելիներու դիակնե՞րը փնտռելու համար, դիակներ որոնք այդ աւերակներուն երկայնքը փռուած են անկենդան ու այլանդակուած :

Արտասահմանի ապրող հայութիւնը չի՛ կրնար երբէք գաղափար մը կազմել թէ՝ ի՞նչ ըսել է ապրիլ որբացած հայրենիքի մը մէջ, ուր իւրաքանչիւր ծառ, իւրաքանչիւր քար իրեն յիշատակը ունի, յիշատա՛կ որը մեզ կեանքի հետ կը կապէ :

Գիտէ՞ք թէ ի՞նչ ըսել է՝ տեսնել քար ու քանդ եղած այն տունը, ուր մարդ մեծցեր է, սիրեր սիրուեր, ամուսնացեր, իր կարգին ընտանիքի ու զաւակներու տէր է եղեր. ունեցեր է իր ազգականները, բարեկամները, որոնք սակայն այլեւս չկա՛ն ու չկա՛ն . . . :

Աչքերը ուր որ դարձնէ կը հանդիպի սարսափելի ամայութեան և քամնեցուցիչ լռութեան : Զէ՛ ալ անիկա չի լսեր արշալոյսի այն սիրական ձայները որ զինքը քունէն կ՚արթնցնէին, իր ոչխարներուն մայիւնը, կովերուն բառաչը, զաւակներուն սիրուն թռվռոցը :

Արտասահմանի հայերս, ինչքան ալ դիւրազգած ու թունդ հայրենասէրներ ըլլանք, կուգայ պահ մը սակայն ուր կը

մոռնանք ցեղին ցաւերը. մենք կըսեմ, չենք կրնար ըմբռնել հոգեկան այն տհաւար լքումն ու դառնութիւնը անոր՝ որ մայր հայրենիքի մէջ ապրեր է ու կ՝ապրի տակաւին, որուն շընչապատը եղեր է տարամերժօրէն հայ կեանքը ու ամէն օր տեսեր է գրեթէ միայն հայ դէմքեր, մօտիկ ծանօթ բարեկամ, ազգական ու հարազատ դէմքեր, որուն տկանջները լսեր են միայն հայ բարբառ, և որը տեսեր է տակայն այդ ամենուն մի առ մի անէացումը բռնի ու տարտարելի մահով . . . : Օ՜հ, այդ բոլորը տեսնող մարդը չի՛ կրնար կեանքը ցանկալ, և վրէժխնդրութենէ ուրիշ զգացում մը չի կրնար ալեւոր տածել իր խորտակուած հիւանդ սրտին մէջ :

Ինչո՞ւ ուրեմն մեղադրել հայ յեղափոխականները, որոնք հայ ցեղին անեռանելի ցաւերը տեսնելով, ինքնապաշտպանութեան կռիւը պատրաստեցին, և ինչո՞ւ մէկ քանի յախուռն ու անխորհուրդ շարժումներու համար պատասխանատու բռնել բոլոր յեղափոխական կազմակերպութիւնները և անոնց ոգին, և ինչո՞ւ այդ կազմակերպութիւններուն մէջ ապրած մէկ քանի անբարոյական ու դասալիք անհատներու համար անուանարկել ամբողջ յեղափոխական շարքերը. մինչ ուրիշ ազգեր իրենց յեղափոխական Մարմիններուն մէջ չունեցա՞ն բնաւ մատնիչներ, անբարոյականներ, արիկաներ . . . մինչ մենք կը մոռնա՞նք որ հայ յեղափոխական շարքերուն մէջ կռուեցան ամէն հայու համար նուիրական ու պաշտելի ժիրայրները, Ծառուկեանները, Մխոները, Զէնկիւճեանները, Արխանեանները, Բարկէնները, Սերոբները, Շաքէները, Սօսիները, եւ մանաւանդ անոնք, այն անանուն հերոսները, հայ պարզուկ զինուորները որոնք յեղափոխական շարժումներու ատեն այնքա՜ն պանծալի արիութեամբ կռուեցան և մեռան քաջերու մահովը, և որոնց անունները չունինք այսօր, ինչպէս չունինք Վարդանի հետ Աւարայրի վրայ ինկող 1036 վկաներու իրարանցիւրին անունները:

Ինչո՞ւ ողորմելի արձագանքը դառնալ պատուական ընկերներու, եռեւէ՝ ականջներու մէջ փսփսացուած սին բամբասանքներու, մինչ այնքա՜ն դիւրին է առնական խոյանքով մը նետուիլ այդ շարքերէն ներս, անձամբ քննել, քրքրել, ստուգել ամէն խնդիր, և հաւաքական ոյժ կազմելով մաքրագործել այդ շարքերը եթէ կան տակաւին անբարոյական ու կեղծ յեղափոխականներ :

Ահա ա՛յս է ամէն ազնիւ, գիտակից ու ճշմարտապէս հայրենասէր հայու պարտականութիւնը. իսկ յեղափոխութեան՝ հետեւաբար և ազգային կեանքի վերածնողական ոգերիմ թշնամիներ են անոնք, որոնք այդ բամբասանքներու ուչն թոյլօրէն ետ կը քաշուին և հեռուէն անարարներ հանդիսատեսներ միայն կ՚ըլլան ազգային այս ճրագնուժամին՝ մղուած ներքին եղերական պայքարներուն, մինչ կրնային, ոմանք իրենց խելքով, ուրիշներ իրենց սրտով, և ոմանք ալ իրենց ազդեցութեամբ համերաշխութեան ոգին ներշնչել, և գործակցութեամբ աչառութեան սրուակ ազգերու կեանքին մէջ երբեմն երեւան եկող ճակատագրական օրէն վերջնական այն կռիւը, որմէ կը ծագի կա՛մ փրկութիւն եւ կա՛մ կորուստ :

*
* *

Հայ Յեղափոխութեան ունեցած անյաջողութիւնը շատեր կը վերագրեն մէկէ աւելի կուսակցութիւններու գոյութեանը :

Կը կարծուի թէ միեւնոյն դրօշի տակ գործելով աւելի յաջող արդիւնքներ ձեռք պիտի բերէին հայ յեղափոխականները :

Բայց իսկապէս ատի՛ չէ՛ Գործին վնասողը, քանի որ այդ բոլոր կուսակցութիւններուն նպատակը մի՛ է. այն է՝ հայութեան ազատագրումը. տարբերութիւնը միայն ուղղութեանց ու ծրագիրներու մէջ կը կայանայ : Եւ տրամաբանօրէն հակառակ է արդէն միեւնոյն ուղղութեան ու միեւնոյն ծրագրի ենթարկել ուղիը՝ այլապէս համոզումներ և այլապէս մտածումներ ու կարծիքներ, երբ ատոնք ամէնքն ալ կը բղխին զարգացած ու փորձառու ուղեղներէ :

Ուրեմն, կըսեմ, մեր յեղափոխութեան անյաջողութիւնները պէտք է վերագրել ոչ թէ կուսակցութիւններուն, այլ այդ կուսակցութիւնները վարելու կոչուած անհատներու. ոմանց մէջ տիրող եսակենտրոնութեան, ու քինախնդիր ոգւոյն :

Ի՞նչ փոյթ, արդարեւ, թէ ո՞ր ուղղութեամբ պիտիք բանենք ազատութեան ճանապարհը, բայց այդ նուիրական ճամ-

բուն վրայ մղուած անհատական անհարկի կռիւները մեր ուժերը կը ջլատեն. մեր յառաջխաղացութեանը արգելք կ'ըլլան : Թո՛ղ ըլլան տասը, քսան, հարիւր կուսակցութիւններ, եթէ հարկ է, միայն թէ՝ համոզումներու, կարծիքներու տարբերութիւնները չի յանգին անհատական կռիւներու :

Թո՛ղ ամէն մէկը գործէ ի՛ր ծրագրովն և իր ուղղութեամբ, միայն իրենց նիւթական ու բարոյական ուժերը, այսինքն իրենց դրամը, զէնքը, կեանքը միացնեն ազգին ընդհանրական շահուն և ընդհանրական վտանգին առջև :

Թո՛ղ խորութիւն չի դնեն իրենց պատկանած կուսակցութիւններուն մէջ և նկատումներ մէջ չի բերեն, երբ քոյր կուսակցութիւն մը գործի մը կը ձեռնարկէ հայրենի հողին պաշտպանութեանը համար : Թո՛ղ յիշեն որ այդ հողը իրե՛նցն ալ է, հայ ժողովուրդինն է, և հոն թափուող այդ նո՛յն արիւնը իրենց երակներուն մէջն ալ կը հոսի :

Ընդհանրապէս մեր ազգային հին պատմութեան և մասնաւորապէս վերջերս մեր յեղափոխական կեանքի մէջ, մենք կը տեսնենք որ թշնամւոյն սուրէն զատ, որ հայ ժողովուրդը կը զգեստնէ կայ տակաւին ժողովրդեան մէկ քանի վարիչներուն եսամոլ քաղաքականութիւնը որ հաւասարապէս վտանգ յառաջ կը բերէ :

Ի՛նչ է արդեօք այս չարաշուք երեւոյթին պատճառը:

Կ'ըսեն թէ ատի արդէն հայութեան խմորին մէջը կար, և ժառանգականութեան օրէնքով մտեր է նաև մինչեւմեր նոր սերունդին ոսկորներուն ծուծը :

Գիտութիւնը Ֆիզիքական կեանքի համար կը հաստատէ ժառանգականութեան օրէնքը, իսկ բարոյական կեանքի համար բարեբաղդաբար չընդունիր. նա կ'ըսէ թէ՝ խմոր չկայ բնաւ, բարի և չար չկայ, այլ մարդը կը շինէ բարին ու չարը:

Եթէ թղթատենք հայոց հին պատմութիւնը, պիտի տեսնենք որ նախապէս մեր մեծամեծներուն ու իշխաններուն մէջ երկպառակութեան որոմը ցաներ են Հռոմայեցիք, Յոյներն ու Պարսիկները, որպէսզի հայ զօրութիւնը չլատեն, իրենց տիրապետութիւնը աւելի ապահովութեամբ հաստատելու համար Հայաստանի վրայ :

Այդ երկպառակութեան ոգին ժամանակի ընթացքին մէջ

որոշ բնաւորանիշ դառնալով դարէ ի դար անցեր է հայ սերունդին մէջ. բայց միեւնոյն ժամանակ քաղաքակրթութիւնն ու գիտակցութիւնն ալ զարգանալով, ինչ որ նեռելի կրնար դարձնել անցեալը, աննեռելի կը դարձնէ ներկան։

Ըսել կ՚ուզեմ թէ մեր նախնիք այդ ոգիին մեռաը կըրնային չըմբռնել, վասն զի խաւար դարու մէջ կ՚ապրէին, տգէտ մնացեր էին, իրենց զգացումներն ու մտածումները անտաշ ու վայրենի պահեր էին։ Իսկ այսօ՞ր . . . ։ Այսօր նոյն վիճակին մէջ մնալը կրնայ մեզի իրաւամբ զըրկել ազգերու ամենէն նուիրական ու կենսական իրաւունքէն, այն է՝ ազատութենէն . . . ։

Մտքի զարգացումը որով որոշ չափով օժտուած է մեր նոր սերունդը բաւական չէ՛ գիտակից յեղափոխականներ պատրաստելու համար, եթէ սրտի զարգացումն ու ազնուացումն ալ չընկերանայ անոր զուգընթացաբար. և արդէն յեղափոխութեան ճշմարիտ գիտակցութիւնը մտքի զարգացումէն աւելի սրտի զարգացման կը պատկանի։ Սրտի զարգացումը մեզի պիտի թելադրէ Արդարութիւն, Ճշմարտութիւն, Անկեղծութիւն, Ուղղութիւն, և որ աւելին է անհատականութեան բացարձակ զոհողութիւն գործին նկատուելու առջեւ։

Միտքը մեզի պիտի առաջնորդէ, իսկ սիրտը պիտի գործէ հոն։

Ազգերու յեղափոխութեան մէջ վճռողականութիւնը, յանդըգնութիւնը, քաջութիւնը, պատերազմական այդ թանկագին յատկութիւնները ոչինչ են, եթէ «Ես»ի մոռացումը այդ ամենուն վրայ չի տիրապետէ։

Եւ հայ յեղափոխութեան ընթացքին մէջ մենք տեսանք թէ՝ այս տեսակէտով հոգուապիտ եղան գիտակից յեղափոխականներ և հերոսներ. ինչքա՞ն քիչեր իրենց անհատականութիւնը զոհեցին Գործին, ինչքա՞ն քիչեր վայրկեանի, տեղի, պարագայի ազդեցութենէն դուրս ալ հերոս մնացին ու հերոս մեռան. ուրեմն և ինչքա՞ն քիչեր ըմբռներ են յեղափոխութեան իրական իմաստը . . . ։

IX

* * *

Ժամանակէ մը ի վեր սրտի զարգացումը կամ բարոյական հասկացողութիւնը շատ ինկած փիլիսոփայութեան մը վրայ կը հիմնուի։

Արդարութիւնը, ճշմարտութիւնը, ուղղութիւնը և ուրիշ կարգ մը բարոյական ընտիր յատկութիւններ, որոնք հին Յունաց և Հռոմայեցւոց այնքան թանկագին փառքը կը կազմէին, հետզհետէ դատական հնութիւններու կարգը կ'անցնին կարծես։

Կը կարծուի առհասարակ թէ՝ բարոյականութեան դարը անցած է այլևս, և թէ նիւթի, շահու դարն է հիմա։

Նուիրականութիւն, արդութիւն, խիղճ չկան խակապէս. առանք նախապաշարումներ են զորս պէտք է մարդ թօթուէ վրայէն, եթէ կ'ուզէ ապրիլ, յարմարիլ ժամանակի ոգւոյն և ամէ՛ն զէպքի, ամէ՛ն պարագայի, ամէ՛ն առիթի մէջ փնտռէ միմիայն իր եսին շահն ու օգուտը։

Սա՝ զաղափարներու անիշխանութիւն է, մարդկայնական զգացումներու այլասերում է, կեանքի կռիւին նախնական ու անասնական կողմն է. ու շատեր իշնալով ազգերու բարոյական բնաջնջումը պատրաստող այս սարսափելի բրօբականին ազդեցութեանը տակ, իրենց կարգին իրենց շահերը, իրենց դիրքը փնտռեցին շահադիտական յեղափոխութեան, այդ անձեռնմխելի արդութեան պզծումին մէջ։

Գիտակից յեղափոխականութիւնը տեղի տեղի տուաւ անհատական ստոր շահերու, և այս պատճառաւ տեսա՛ հոյ յեղափոխութիւնը վիժեց։

Իսկ ունի՞նք արդեօք դեռ եւս հոյ ցեղին մէջ բացարձակապէս հակայեղափոխական էգուումներով մարդիկ...։

Դժուար է ստոր հաւատալ, վասն զի հակայեղափոխական ըլլալ՝ կը նշանակէ հակաբնական մարդ ըլլալ. քանի որ բնութեան մէջ կայ մի՛շտ յեղափոխութիւնը։ Հակայեղափոխական ըլլալ՝ կը նշանակէ յետադիմական մարդ ըլլալ, որովհետև յառաջդիմութիւնը կը ստեղծէ յեղափոխութիւնները, և յեղափոխութիւններն ալ իրենց կարգին լայն ճամբայ կը բանան յառաջդիմութեան ու անոր կատարելագործուելուն կ'օգնեն։

Հակայեղափոխական ըլլալ՝ կը նշանակէ անբարոյական մարդ ըլլալ, վասն զի անբարոյականութիւններու է՛ն պիժգալին է իր «ես»ին հանգիստն ու հաճոյքներն ամէն բանէ

գերազանց համարիլ, անտարբեր ու անգութ հանդիսատեսը միայն ըլլալ իր ցեղին ցաւերուն ու արցունքներուն և ինձմէ ետքը «Ջրհեղեղի» ի սկզբունքովը առաջնորդուիլ, մինչ կրնար գուցէ իր ցեղին ապագայ կեանքին բարեբաստութիւնը գործին մէկ հիմնաքարն ալ ինքը դնել . . . :

Արմատապէս բարոյական մարդ չենք կրնար դատել նոյն իսկ ան՝ որ թէպէտ իր քսակը իրօք բաց կը պահէ մասնաւոր ու ընդհանուր ողորմութիւններու համար, եկեղեցիներ, դպրոցներ, հիւանդանոցներ կը շինէ, անոնց յատկացնելով միանգամայն իր սեփական միջոցներէն մասնաւոր եկամուտներ, եթէ այդ բարեգործը լուռ ու անկարեկիր մնայ ի լուր իր հեռաւոր եղբայրներուն ցաւագին հառաչանքներուն. եթէ թափուած հայ արեան ծովերուն ի տես, ցեղին ձայնը չի խօսիր իր մէջը և ըմբոստացումի ազնիւ խոյանքով մը չի նետուիր անոնց հետքերուն վրայ, ցեղին հետ ապրելու կամ ցեղին հետ մեռնելու վսեմ վճռողականութեամբ :

Դիտուած է որ հայասիրաբարոյականները ընդհանրապէս ստոր նիւթի մարդիկը եղեր են միայն :

Հայութեան մէջ քանի՞ յեղափոխականներ ունեցանք որոնք յօժարէին բաժնուիլ իրենց քաղքենի պերճ կեանքէն և նուիրուիմի ճամբէն քալել :

Տանջուած ու զրկուած դասակարգերը միշտ բարձր պահած են ապագայ յեղափոխութեան դրօշը ամէն ազգերու և ամէն ժողովուրդներու մէջ, ուրեմն և տանջուած դասակարգերու կրած երկարատև դժնդակ երկունքէն պիտի ծնի վերջապէս ազատագրութեան ու եղբայրութեան երանաւէտ օրը :

ՀԱՒԱԿԸ

ԵՐԲ բաժնուեցաւ ան իր առաջին ամուսնէն, զեռ հաղիւ տասնուվեց տարուան էր. երիտասարդութեան է՛ն գեղաձիծաղ, գեղեցկութեան է՛ն թարմ ու շքեղ փթթումին մէջ։

Ա՛լ չդիմացաւ վայրագ բնազդներուն առաջ՝ որը ճակատագրին մէկ անգութ խաղովը իր ամուսինն էր եղեր. ա՛լ չկրցաւ տակալ կոչտ ու կոպիտ վարմունքներուն անոնց՝ որոնք իր կեանքն ու տալուբառանքն էին. և յուսահատութեան մէկ դժնդակ ժամուն, տառապանքի յիմարեցնող մէկ վայրկեանին աչքերը սևցած, թողուց տուն ու տեղ, թողուց աւա՜ղ, և իր միամեայ սիրուն Էյլան, միա՛կ ծաղիկը իր կեանքի անապատին, միա՛կ սիրտանքը իր չարչրկուած սրտին, որը երկրին օրէնքը անողոք իր պաղատանքներուն ու արցունքներուն, չէ՛ոյլատրեց տանիլ իրեն հետ, և հեռացաւ գնա՜ց որոնելու նուազ խոժոռ բաղդ մը, գտնելու թերեւս աւելի՛ փափուկ ու կարեկից հոգի մը։

Իր Էյլային բաժնուելուն սուր կսկիծը շուտով դալկացուց սակայն այտերուն վառ վարդերը, շուտով փոսացան նշաձև խոշոր աչքերը. ու երկա՜ր ժամեր կիսամերկ, փաթթուած մթայն իր ցանուցիր մազերուն սև մետաքսին մէջ, կը մնար ոտքի վրայ իր խցիկին պատուհանին առջև դիտելով անթարթ հեռո՜ւն, կապոյտ ներկուած այն խոշոր տունը, իր երբեմնի տանջարանը, որուն պատերուն ետին թաղեր էր իր

է՛ն դառն արցունքը ու միևնոյն ժամանակ է՛ն երջանիկ ժպիտը։

Օ՜հ որքա՜ն կը զղջար հիմա. որքա՜ն կ՚անիծէր յուսահատութեան այդ յիմար վայրկեանը որ զինքը մղեր էր գործելու ոճիրներու անն ելի՜ն, ստնակոխ ընել տալով իրեն սըրբազան պարտականութիւնը կնոջ, մայրութի՜ւնը... նուիրուելու ու զոհուելու վսե՜մ կոչումը։

Որո՞ւ թողեր էր արդեօք այդ զաւակը. չէ՞ որ այդ տան մէջ ինքը միակ սիրտն էր զայն սիրող ու անոր վրայ գուրգուրացող. չէ՞ որ ինքը միա՛կ պաշտպանն էր այդ հէքին։

Ինչքա՜ն պզտիկ հոգի մը, ինչքա՜ն անարժան մայր մը կ՚զգար ինքզինքը, որ չէր գիտցեր համբերել ու տառապիլ սիրոյն համար անոր՝ որը իրմէն կեանք չէր խնդրած, և որուն սակայն ինքը կե՛անք տուեր էր. և ատով՝ աւելի քան երբէք իր խղճին վրայ կը ծանրանար ահաւոր պատասխանատուութիւնը անոր կրած զրկանքներուն...։

Այդ տան մէջ կը տանջուէր, իրա՛ւ, բայց միթէ հիմա չէ՞ր տանջուեր հազար անգամ աւելի՛ անգթօրէն...։ Իր մարմինը աւելի՛ պիտի խոշտանգուէր գուցէ. մի քանի լուտանքներ աւելի՛ իր երեսին պիտի նետուէին բայց ի՞նչ էին ատոնք բաղդատմամբ հիմակուայ կարօտի ու մա՛նաւանդ խղճի խայթի աւր տանջանքին՝ որը այնքա՜ն դաժանօրէն կը կրծէր իր սիրտը։

Ինկաւ անկողին, շա՛տ հիւանդ. ու երբ աղէտը օր մը բաղդը իրեն դէմ հանեց երիտասարդ Ֆուատը, որը իր հազարապետի ոսկեճամուկ համազգեստին մէջ անգամ մըն ալ սէգ ու գեղեցիկ, այնքա՛ն փարթամ գեղուհիներու և ազնըուազարմ իշխանուհիներու արտեր էր փոթորկեր, Ֆաթիմէի ստուերը միայն մնացեր էր։

Շատեր զարմացան Ֆուատի այս անկարելի ընտրութեանը վրայ. մէկէ աւելի պատուներ ճիներու մատը տեսան այս գործին մէջ։

Ի զուր անոր մայրը լալով Ալլահին է՛ն սիրելի մօլլաներուն գրած նուիրական «նուսխաները» կարեց պաղտնապէս որդւոյն վերարկուին քղանցքներուն մէջ, զայն փրկելու համար չարին հմայքէն. «նուսխաները» ցոյց չէին տար իրենց հրաշքը, և Ֆուատ անպրպուելի կը մնար մօրը պաղատանքներուն և արցունքներուն դէմ։

— Անիկայ թշուա՞ռ է, կ՚ըսէր, թո՛ղ մայր, քիչ մը գութ ու գորով, քիչ մըն ալ խնամք գուցէ կրնան դեռ զինքը փրկել։

Անկողնէն հանեցին Ցաթիմէն «նիքեահին» արարողութիւնը կատարելու համար. այնքա՞ն ուժգոյն էր ու դողդոջուն, կարծես մեռել մը ըլլար գերեզմանէն փախած։

Ցուատ այդ իրիկունը տեսաւ համարձակ անոր բաց երեսը, ու գութէն դողաց։

Երբ հարանիքի խրախճանքը վերջ գտաւ, նա բռնեց կնոջը ձեռքէն ու տարաւ մօրը քով։

— Պահէ՛ այս խեղճ կինը, բաւ մեղմիւ. խնամէ՛ իրեն հարազատ զաւակդ. երբ կ՚առողջանայ, կը գտնայ իմ խակամն կինը, իսկ եթէ մեռնի՝ թող Ալլահը իր «ճէննէթին» հուրիներուն մէջ համբէ . . .։

*
* *

Օրեր անցան. Ցաթիմէ դեռ պառկած էր անկողնին մէջ։

Իր մեայլ տխրութիւնը յաջորդեր էր անուշ մելամաղձութիւն մը։

Երբեմն խնդութեան երկչոտ ճառագայթ մը մեղմիւ կը խաղար իր ճերմակ ճակտին վրայ ու թեթեւակի կը լուսաւորէր իր ագուոր դէմքը։

Գտե՞ր էր այն սէրը, որուն կը տենչար. գտե՞ր էր այն փափուկ ու կարեկից հոգին՝ որը ելեր էր որոնելու . . .։

Ա՜խ . . . եթէ քովը ըլլար իր Լէյլա՞ն, ալ ի՞նչ կը պակսէր իր երջանկութեանը. դժոխքէն ետքը դրախտն էր որ պիտի բացուէր իրեն համար։

Օրէ օր այտերը կը հագնէին առաջուայ վառ գոյները, աչքերը՝ իրենց շողշողուն փայլը. տուները մարմին կառնէր, մարմիններու է՛ն գիրգը, է՛ն պաշտելին. դիակը յարութիւն կառնէր, յարութիւններու է՛ն փառաւորը . . .։

Եւ Ցուատի մայրը, բարի պառաւ մը ինքն ըստ ինքեան, սրտովին կը խայտար այդ հատնելու մօտ մանուկ կեանքին վերածնութիւնը տեսնելով։

Եւ սակայն Ցաթիմէի գաղտնի վիշտը մութ ամպ մը կը ձգէր իր կեանքի պայծառ երկնքին վրայ։

Իր է՛ն ուրախ վայրկեաններուն, յանկարծ հովի մը պէս

ապագ աչքերուն առջեւէն կ'անցնէր Լէյլան ճիշտ այնպէս՝ ինչպէս կերեւակայէր ինքը, ու կը տեսնէր խառվայոյզ ե-րազներու մէջ։ Լէյլան գունաւոր, հիւանդ, տառապանքով լե-ցուն աւեւ նայուածքը անկած մերը վրայ, իր արցունքներուն լուիկ ու տհաւոր յանդիմանութիւնը կը նետէր անոր երեսին զինքը մինա՞կ թողած ըլլալուն համար . . . :

Եւ ահա, Ֆաթիմէի շրթունքներուն վրայ երեւցող ժպիտը խակոյն կը տուէր և տաք արցունքներ կրակի պէս կայրէին իր աչքերը :

Կը տակար հիմա իր երջանկութենէն. ի՞նչ զարհուրելի գինով ձեռք բերեր էր զայն . . . ի՛ր զաւկին, ի՛ր աղիքնե-րէն վրիժած այդ հէ՞ք էակին մարտիրոսութեան գի՞նովը . . . ինքը՞, մայրը՞ որ ընտրեր էր անուշը իրեն համար, ու զաւ-կին թողեր էր լեզի՞ն . . . :

Ինչպիսի՞ խորունկ զզուանք մը կը զգար ինքնիրմէն, մտածելով որ ամենէն ստորին անասուններէն աւելի՛ ցած էր ինքը. վասն զի անոնք՝ իրմէն աւելի ճշմարիտ մայրեր, անսահման գուրգուրանքով մինչև իրենց վերջին շունչը կը մաքառին պաշտպանելու համար իրենց ձագուկները ցուր-տին, անօթութեան և յաճախ թշնամիին դէմ . . . իսկ ին-քը՞ . . . գրեթէ հաղիւ կեանք տուած իր ձագուկին, թողեր փախեր էր զայն, ի՛ր անձին երջանկութիւնը որոնելու հա-մար միայն. օ՜ գարշելի անձնասէրը . . . :

Ֆուատ իր կնոջ այլայլուն զիմագծերուն վրայ որոշ կը կարդար վիշտը :

Քանի՞ցս անոր աչքերուն մէջ նշմարած էր մատնիչ ար-ցունքը, թէպէտ Ֆաթիմէ խակոյն դարձուցած էր երեսը ծած-կելու համար զայն :

Ի զուր կը խնդրէր կնոջմէն պաղատանքով բանալ սիր-տը, յայտնել գաղտնիքը իր վշտին :

Չէր համարձակեր Ֆաթիմէ, վախնալով անոր մտքին մէջ արծարծելէ մուցուած յիշատակը միւթեան մը, որուն պը-տուղն էր այդ զաւակը : Անիտիկանկատ չպիտի՞ երեւէր, և նախանձու թունաւոր խայթոցը չպիտի՞ միներ անոր սիր-տը, երբ խօսէր այդ զաւակին մասին, որը այնքան որոշակի պիտի չեշտէր թէ ինքը սիրած էր ու պատկանած էր ուրիշ մարդու մը ալ . . . :

Ու Ֆուատ անգէտ իր կնոջ հոգեկան տուր-տապ-

ներուն ու անգութ վարանքներուն այս պատճառին, սոսկալի կասկածով մը կը տառապէր. «զիս չսիրէր, կլլաէր, ա՛յս պէտք է ըլլայիր վշտերուն աղբիւրը. երախտագիտութիւնն է միայն որ զինքը կապած է ինծի» . և օրըստ օրէ մեայլ տխրութիւն մը կը սեւցնէր իր զուարթ ճակատը :

Ֆաթիմէ այն հրաշալի բնազդումով՝ որը յատուկ է ջերմօրէն սիրող կիներու, զգայ խակոյն անոր կասկածիլը իր սիրոյն մասին : Դառն ու անիրաւ ցաւ մըն էր այդ իր արդէն վիրաւոր սրտին. և ա՛լ չդիմացաւ :

Օրին մէկը բացաւ իր սիրտը, յորդ արցունքներով լուանալով ձեռքերն անոր՝ որ թշուառութենէ, մահուանէ փրկեր՝ ու սիրե՞ր էր հէ՞ք լքեալը . . . :

Ֆուատ լսեց անոր լռիկ, այդ խեղճ մանկամարդ կնոջ կրած բոլոր յուսախաբութիւնները, բոլոր տառապանքները մի առ մի չափեց, կշռեց, իր զաւկին համար զգացած վառ սէրը և զայն թողած ըլլալուն խորունկ զղջումը գնահատեց, և նոյն իսկ ատիկայ՝ աւելի՛ բարձրացուց զանի իր աչքերուն առջև :

Երկար սեղմեց իր կինը սրտին վրայ :

— Օ՜ . . . տէ՛ր իմ, մրմնջեց ան տեսնե՞մ զաւակս, ու մեռնի՞մ . . . :

Տղա՛յ . . . ըսաւ ան քաղցրութեամբ, մի՛ լար, մե՞ծ է Ալլահին ողորմութիւնը, համբերէ՛ և յուսա՛ . . . :

*
* *

Եւ Ալլահը ողորմեցաւ : Ֆուատի ջանքերը պսակուեր էին, յաջողեր էր ձեռք անցնելու կառավարութենէն վաւերացուած հրամանագիր մը, որով Ֆաթիմէ ազատ համարձակ պիտի կրնար իր զաւակը տեսնելու : Եւ վեհոգի երիտասարդը, հրճուելով իր կնոջ պատճառելիք այս նոր մեծագոյն ուրախութեանն համար, կը վազէր տուն հև ի հև :

Սանդուղները չորս առ չորս ցատկեց, գրեթէ շնչասպառ մտաւ կնոջը սենեակը, ու ձեռքը բռնած թուղթը յաղթութեան դրօշակի մը պէս պարզելով անոր զարմացկոտ նայուածքին առջև,

— Ահա՛, ըսաւ, ահա՛ հրամանագիրը. վերջապէ՞ս յաջողեցայ. գնա՛, տե՛ս վաղը զաւակդ . . . :

Ֆաթիմէ ձերմկեցաւ մոմի պէս, ծունկերը դողդոջեցին և պատին կրթնեցաւ չիյնալու համար։

— Տէ՛ր իմ . . . մրմնջեց. ո՞վ իմ բարի տէրս, ինչո՞վ երբէք պիտի կրնայ փոխարինել քեզ քու աղախինդ, ինչ որ դուն ըրիր ու կընես անոր համար . . . :

— Զիս չա՛տ սիրելով, և ինծի հաւատարիմ մնալով, պատասխանեց Ֆուատ անոր մազերը շոյելով։

Ֆաթիմի լուռ մնաց . բայց սիրով ու երախտագիտութեամբ լեցուն այնպիսի՝ խորունկ նայուածք մը նետեց անոր, որ Ֆուատ արդէն չա՛տ իսկ վարձատրուած զգաւ իր յոգնութիւնները։

*
* *

Հետեւեալ օրը Ֆաթիմէ կը պատրաստուէր երթալ տեսնելու իր Էյլան։

Զարս տարիէ ի վեր չէր տեսեր . արդեօք ինչքա՞ն մեծցած ու գեղեցկացած էր հիմա։

Ու դեռատի մօր երեւակայութիւնը մտածումէ աւելի աւրագ կը թուէ՛ր արդէն իր զաւկին մօտը. մտքին ու սրտին աչքերովը կը տեսնէր անոր սև, աղուո՛ր նայուածքը, խարտեաշ գանգուր խոպոպները ճակտին մէջտեղէն երկուքի բաժնուած, և այնքան սիրուն անփութութեամբ մը թափուած ուսերուն վրայ։

Ահա՛, դեռ հազիւ ոտքի ելած, աչ ու ձախ օրօրուելով կուգար Էյլան իր շուշան թեւերը փաթթելու չարչրկուած մօրկանը վզին. և Ֆաթիմէ սիրտն ուռած հեծկլտանքներէ, թեւերը կը բանար ահնուն կարօտով սրտին վրայ պինդ սեղմելու զաւակը . . . :

Ցանկարծ ամպ մը կը սեւցնէր իր պայծառ ճակատը, և բայց թեւերը թուլցած՝ կը կախուէին կողքերն ի վար։

— Հապա եթէ զիս մոռցա՞ւ . . . կըսէր, հապա եթէ զիս կատէ՞ . . . ի՞նչ գոյներով արդեօք պատկերացուցին զիս զաւակիս . . .

Ու կ՚ուզա՞ր . . . արցունքները հատիկ հատիկ կը թափուէին իր դեղնած այտերն ի վար։

Կառքը կը սպասէր իրեն։ Ֆաթիմէ երկու ձեռքերովը կը

սեղմէր կուրծքը, չանալով զսպել սրտին ուժգին բաբախումները. իշաւ վար, մաւ կառքը, և նախկին ամուսնոյն բնակարանին ճամբան բռնեց։

Ինչքա՜ն ծանր էր հիմա իրեն համար տեսնելը այն տեսիլ դէմքերը Լէյլային քովիկը. պիտի կրնա՞ր արդեօք համարձակ բանալ իր թեւերը, գրկել, համբուրել զաւակը . . . առանց զզուելի ներկայութիւնը չպիտի՞ կաշկանդէր իր սրտին թրոբիչները, իրեն չպիտի՞ տար բռնազբօսիկ կերպարանք, մինչ ինքը կուզէր ամիսներէ ի վեր սրտին մէջ կուտակուած սէրը, կարօտը ազատօրէն պոռթկալ, զաւկին հետ մի՛ս մինակ . . .։

Կառքը կանգ առաւ։

Որուն սարսաւռ մը ցնցեց Ֆաթիմէի ամբողջ մարմինը. ինքզինքը անկարող զգաց ոտքի ելնելու . . .։

Ցեղակարծօրէն տհա՛ իր աչքերուն առջեւէն անցաւ Լէյլային պայծառ դէմքը՝ որ կը ժպտէր իրեն։

Նոր ուժ առաւ. իշաւ կառքէն, և իր դողդոջուն ձեռքը կրցաւ համարձակ քաշել դրան զանգակը։

Դուռը խակոյն բացուեցաւ. կ'երեւի թէ կ'սպասէին իրեն, վասնզի սպասաւորը առանց ո՛և է ընդդիմութեան թողուց որ վեր ելնէ։

Մտաւ Ֆաթիմէ այն սենեակը՝ որը իրենն էր երբեմն . . .։

Տխո՜ւր, ցաւագի՜ն յիշատակներ խառն ի խառն կը խուժէին իր արդէն խորապէս յուզուած մտքին մէջ . . .։

Կարծես դեռ երէկ էր իր նորհարսնութիւնը, իր առաջին միամիտ ու փափուկ սէրը, անգթօրէն բզկտուած այն մարդուն ձեռքով՝ որը իր ամուսինն էր եղեր։

Իր վարդ յոյսերուն մի առ մի վայրագօրէն փեթլատուիլը՝ անոր դաժան մատներովը, իր ոսկի երազներուն խեղճօրէն ջարդ ու կտոր փշրուիլը անոր ոտքերուն տակ, թափած արիւնն ու արցունքը, ապա իր զաւկին ծնունդը, անոր առաջին ժպիտը, որը իրեն մոռցնել կուտար շա՜տ տանջանքներ . . .։

Կը յիշէր աւա՜ղ, շատ պայծառ կը յիշէր յուսահատութեան այն սեւ՜ օրը, յորում խենդի պէս թողեր էր տուն ու տեղ, թողեր էր և իր սիրական զաւակը, ու փախեր էր գլուխը բաց, ոտքը բոբիկ։

Մի՛ս մինակ այդ սենեկին մէջ, մտքովը ապրելով անցեալի այդ ահռելի վայրկեանները, կը սոսկար հիմա, երբ

տնա՛ն ներս մտաւ սեւամորթ սպասուհին պզտիկ Էլլային ձեռքէն բռնած։

Ֆաթիմէի ամբողջ արիւնը սիրտը խուժեց. և աչքերը աւելի՛ խոշոր, աւելի՛ սև դէմքին ահաւոր ժիզունութեանը մէջ, յառեց անթարթ զաւկին վրայ։

— Էլլա՜ . . . պօռաց, Էլլա՜ զաւա՛կս . . .։

Եւ տեսնելով որ տղան անշարժ ու սահմռկած կը նայէր, վախցած իր այլայլուն կերպարանքէն, ինքը ցատկեց ոտքի, խենդի պէս վազեց տղուն վրայ, թեւերուն մէջ առաւ զայն, և համբոյրներով ու արցունքներով սկսաւ ծածկել անոր կարմրուկ այտերն ու ոսկի գանգուրները։

— Զաւա՜կս, ի՛նչպէս, սիրակա՜ն զաւակս, չճանչցար ինծի, ե՞ս եմ, քու մայրդ. քու թշուա՜ռ մայրդ . . . ժպտէ՛ ինծի, անուշի՜կ զաւակս, օ՜հ, որքա՜ն գեղեցկացեր է իմ Էլլաս. . . փա՜ռք քեզ Աստուած . . . տեսա՜յ զաւակս, փա՜ռք քեզ . . .։

Ու կը խօսէր . . . բառերը յորդ կը հոսէին բերնէն անկարգ, անկապ, մերթ սեղմելով տղան ջղաձգօրէն իր թեւերուն մէջ, մերթ համբոյրներու նոր տարափի մը տակ խեղդելով զայն, և մանուկը կէս մը շնչասպառ այդ բուռն գրգռանքներէն, սկսաւ յանկարծ լալ, իր մանրիկ թաթիկներով փորձելով հեռացնել այդ անծանօթուհւոյն երեսը իր երեսէն։

Օ՜հ, զիս մուցեր է . . . մրմնջեց հէք մայրը արտասուքի նոր հեղեղ մը դուրս տալով իր աչքերէն, իրաւո՞ւնք ունի, արժանաւոր պատիժս է, վա՜յ ինձ, անիծեալ մայր մըն եմ ես։

Եւ դնելով տղան իր քովը բազմոցին վրայ, սկսաւ լռիկ դիտել, պաշտումի այնպիսի՜ խորունկ նայուածքով մը՝ ուր իր ամբողջ կարօտը կը հալուէր։

— Է՜հ, ալ ժամանակ է, հանքմ, բաւ սեւամորթ սպասուհին յանկարծ ոտքի ելնելով, մէկ ժամէն աւելի տեւեց ձեր այցելութիւնը։

— Թո՛ղ . . . վայրկեան մըն ալ թո՛ղ . . . ազերսեց մայրը, նորէն գրկելով Էլլան. թո՛ղ կշտանա՜մ զաւկէս . . .։

Սեւամորթ կինը խոժոռեցաւ, և խիստ ձայնով մը.

— Ինծի հրամայուած է աւելի երկար չթողուլ տղան ձեր մօտը, բաւ, բռնելով տղուն թեւերէն և գրեթէ. բռնի քաշելով մօրը գրկերէն։

Տղուն պզտիկ դէմքը ցաւէն կծկուեցաւ, սկսաւ լալ. և ապրաբաղդ մայրը. տեսաւ թէ ինչպէ՛ս. սպասուհին, առանց

իր ներկայութենէն քաշուելու, քանի մը անգամներ ուժգին զարկաւ անոր բերանին լռեցնելու համար զայն։

— Օ՜հ, պռաց գլուխը ծածկելով երկու ձեռքերուն մէջ, Աստուա՜ծ իմ, գթա՛ ինծի, զաւա՜կս կը չարչարեն . . .։

* * *

Ֆաթիմէ աւելի քան երբէք կը տառապէր յորմէ հետէ կ՚երթար տեսնելու Լէյլան։

Ինչ որ իրեն գերագոյն մխիթարութիւնը ու երջանկութիւնը երազեր էր, յաւերու ու տառապանքներու նոր աղբիւրներ դարձան իրեն համար։

Երբ իր աչքերէն հեռու էր զաւակը, կը յուսար թէ՝ կեսուրն ու տալուրտանքը — թէպէտ այնքա՜ն անխիղճ, այնքա՜ն անգութ դէպի ինքը — տկար մանկան վրայ դթան թերեւս, և անոր մատղաշ տարիքին պահանջած հոգն ու խնամքը տանին։

Առաջին այցելութենէն, արդէն խաբուած ըլլալը զգաց։

«Սրտի տեղ քա՛ր է դրեր Աստուած անոնց կուրծքին տակ», մրմնջեց արցունքներով։

Իր աչքերովը կը տեսնէր հիմա թէ՝ ինչքա՜ն անխնամ թողուած էր տղան վարձկան ձեռքերու տակ, ինչքա՜ն կը չարչրկուէր ու կը զրկուէր անոր մանկութիւնը։ Երբէք գութ ու սէր չէր ճանչցեր, մի՛շտ ծեծն ու լուտանքը եղեր էին իր բաժինը։

Ատելութեան նշաւակ եղեր էր այն օրէն՝ յորմէ հետէ թողեր փախեր էր իր մայրը տունէն. ինչո՞վ էր սակայն ինքը մեղաւոր . . . բացակայ մօրմէն ցածօրէն վրէժ կը լուծէին զաւակը չարչարելով, անմեղը, տկարը, որը չէր կրնար խօսիլ, չէր կրնար ինքզինքը պաշտպանել. օ՜ վատերը . . .։

Իր հօրեղբօր որդիքը շաքարով ու մեղրով, գգուանքներով ու համբոյրներով կը յղփանային, իսկ այդ հէքը, անկիւն մը կծկտած, վզիկը ծուռ, մի՛ս մինակ, կը դիտէր անոնց երջանիկ մանկութիւնը արցունքներէ ուռած ու կարմրած աչքերով։

Ինչո՞ւ էր ինքը այդպէս զրկուած . . . ինչո՞ւ զինքը չէին սիրեր, չէին գգուեր ու համբուրեր ուրիշ ամէն տղայ պէս։

Հարցում մը՝ որը իր մանկական ուղեղը կը չարչրկէր, ու չէր կրնար ատոր պատասխանը գտնել . . . :

Անգամ մը ինքն ալ սիրուելու, համբուրուելու մանկական անզուսպ տենչովը վառուած, վազեր էր հօրաքրոջը վրայ թեւաբաց, և ուզեր էր գրկել անոր վիզը :

— Կորի՛ր, գոչեր էր հրէշ կինը մէկդի հրելով զայն . կորի՛ր քածին զաւակը, և վերցնելով մօտը խաղացող տղան, համբուրեր էր զայն գուրգուրանօք .

— Ահա՛ իմ տղաս, ըսեր էր շեշտելով անգթօրէն, իմ աղէտի տղա :

Էյլա այս վայրագ մերժումէն խորտակուած, դողդոջուն, աչքերը լեցուած, սակայն արցունքը այն գազանին ցոյց չի տալու հպարտութեամբը դեռ հզօր, յուշիկ յուշիկ հեռացեր էր քովէն, ու անգամ մըն ալ չէր գայեր մօտը :

Տղայք բնականաբար անգութ կ՝ըլլան . Էյլայի հօրեղբօրորդիքը քաջալերուած իրենց մայրերուն օրինակովը, հազար ու մէկ չարութիւններով կը տանջէին խեղճուկը, և շատ անգամներ կը ծեծէին զայն անպատիժ :

Մօրը յանցանքը թանգ կը տուժէր զաւակը . . . :

*
* *

Իր մօրը երեւումը սակայն շա՛տ բան փոխեց տղուն կեանքին մէջ : Կ՝ըսկսէր ճանչնալ գորովը, որը ջերմիկ ու կենսատու արեւն է մանկան գոյութեան համար, և օրըստօրէ աւելի՛ վարժուած, աւելի՛ ընտանեցած կը խաղար անոր ծունկերուն վրայ, նոր, փայլուն խաղալիքներով՝ զորս իւրաքանչիւր այցելութեանը կը բերէր իրեն մայրը :

Առաջին ուրախութիւնն էր զոր կզգար տղան ի տես այդ խաղալիքներուն որ իրենն էին. ո՛չ ոք իրեն բան մը ընծայեր էր մինչ ցարդ :

Իր հօրեղբօրորդիքը հակառակ իր աղերսներուն, միշտ կը մերժէին փոխ տալ իրենց խաղալիքները, նոյն իսկ քանի մը վայրկենի համար. ու երբ անոնք կը խաղային, խեղճ տղան անյագ նայուածքով մը կը դիտէր այն փայլուն ու գեղեցիկ զինուորները շարք շարք բարեւի կեցած, հրացանները իրենց ուսերուն վրայ, կամ արագ սուրացող շոգեկառքերը և մա՛-

նաւանդ ճոխ հագուած դեղին մազերով ու սև աչքերով սիրուն պէպէքը՝ զոր անգամ մը գրկելու, համբուրելու համար հոգի կուտար։

Ուստի իր ուրախութիւնը չափ չունէր հիմա որ իր բացարձակ տրամադրութեանը տակ ունէր պէպէքներու է՛ն շքեղը։ Թռչունի պէս անհանդարտ մէյ մը կը ցատկէր մօրը վզին կը փարէր, մէյ մը պէպէքը կը սեղմէր կուրծքին վրայ, կ՚օրրէր զայն իր թեւերուն մէջ, քնացնելու համար օրօրներ երգելով անոր։

Իսկ գեռատի մայրը վերացած, երջանկութեամբ արբշիռ կը դիտէր զայն, կը մատնակցէր այդ մանկական խաղերուն. մերթ պէպէքը հագուցնելով, խաղցնելով, մերթ իր զաւկին խարտեաշ խոպոպները շոյելով։

Այնքա՞ն զբաղուած էր ան իր զաւակով որ չկրնար դրան բացուելուն թեթեւ շռինդը, մինչև հազի խուսար ձայն մը դարձնել տուաւ իրեն գլուխը։

Ցաթիմէ սառեցաւ։ Իր նախկին ամուսինն էր որ կը կենար հոն, իր մօտը, ժպիտը շրթունքներուն վրայ...։

Զորս տարիներէ ի վեր առաջին անգամն ըլլալով կը տեսնէր այդ հրէշը՝ որ զինքը այնքա՞ն տառապեցուցեր էր։

— Կ՚երեւի թէ շա՞տ կը սիրես զաւակդ, ըսաւ ան կնոջը, ջանալով անուշ հանել ձայնը։

Թշուառ կինը դողաց. ակնթարթի մէջ իր կրած բոլոր չարչարանքները պատկերացան մի առ մի աչքերուն առջև. իր ամբողջ ատելութիւնն ու զայրոյթը պռթիկալու, զայն է՛ն կծու բառերով նախատելու և իր ծայրայեղ արհամարհանքը անոր երեսին թքնելու անզուսպ տենչանք մը բացաւ բերանը, բայց աչքերը հանդիպեցան Էէյլային աղուոր աչքերուն, ու ինքզինքը զսպեց։

— Անիծեա՛լ ըլլաս, մրմնջեց, գո՛ւն բաժնեցիր զիս զաւկէս։

— Կրնաս անոր միանալ եթէ կուզես, տունը քուկդ է, և ամուսինդ քեզ գրկաբաց ընդունելու պատրաստ է դարձեալ։

— Երբէ՛ք, գոչեց ան գլուխը ուժգին թօթուելով, երբէ՛ք...։

Աչքերը դարձուց Էէյլային վրայ։

Մանուկը երբէ՛ք այնքա՞ն տխուր, այնքա՞ն անուշ նայած չէր իրեն։

Իր սև խորունկ նայուածքովը կարծես կ՚ազերաէր մօրը որ չբաժնուի՞ քովէն, չթողո՞ւ զինքը։

Աչքերը գոցեց չտեսնելու համար այդ նայուածքը։

— Երբէ՞ք, մրմնջեց դարձեալ, և արագ համբոյր մը դրոշմելով մանկան այտերուն վրայ թողուց այդ փոքրիկ սենեակը և դուրս վազեց առանց ետեւը նայելու։

Իսկ նա կուռփը ցոյց տալով դոց դրանը։

— Պիտի խորտակե՞մ քեզ, գոչեց, քա՞ծ . . . ծնկան վրայ շնորհ պիտի խնդրես ինձմէ . . .։

*
* *

Ցաթիմէ սոսկալի գիշեր մը անցուց։

Զարհուրելի մղձաւանջներով ընդհատուած ծանր քուն մը զինքը ուժասպառ կը դամէր անկողնին վրայ։

Ահա՛ իր աչքերուն առջև կը ներկայանար նախկին դահիճը, կեղծ ժպիտը շրթունքներուն, համոզիչ խօսքերը լեզուին վրայ, զաւկին հետ յաւիտենապէս միանալու անպատում երջանկութիւնը ցոյց տալով իրեն և խեղճ կինը կը տապալտըկէր անկողնին մէջ ջանալով մէկդի ընել ձեռքերովը դաժան ստուերը. կուզեր ոտքի ելնել, ու չէր կրնար, գլուխը կը թաղէր բարձերուն տակ, մատներովը կը գոցէր ականջները չլսելու համար անոր փոքրիկ խօսքերը։

— Թո՛ղ զիս, կը գոչէր, աչքերը գոցելով, թո՛ղ զիս։

Ատելի ստուերը քիչ քիչ կը սահէր կ՚անհետանար մութին մէջ, և յեղակարծօրէն կը պատկերանար Լէյլան, խարտեաշ խոպոպները փռած ուսերուն, արտասուալից աչքերը ապերասպին յառած իր վրայ. կարծես ըսելու համար.

— Եկո՛ւր կ՚ապաչեմ, քեզի՞ կը սպասեմ, չա՞տ կը տառապիմ։

Ու Ցաթիմէ այս անգամ թեւերը կերկնցնէր։

— Կուգա՞մ, կըսէր, կուգա՞մ, սիրուն աղջիկս։

Լէյլան կը ժպտէր, և անոր ժպտուն պատկերին մօտ ահա՛ կը մնկուէր Ցուսոյ տրտում ու խոժոռ կերպարանքը։

— Վա՞տ, վա՞տ, վա՞տ, կը սուլէր ան իր երեսն ի վեր, սեղմուած ակռաներուն մէջէն . . .։

*
* *

Տժգոյն, շա՞տ հիւանդ կ՚երեւէր Էէյլան այս անգամ. ակնարկ մ՚իսկ չէր նետեր այն աղւոր պատուղներուն ու շաքարներուն վրայ, զոր մայրը բերեր էր իրեն։

Սրտաթունդ, անհուն ցաւով մը համակուած, մայրը թեւերուն մէջ առաւ տղան։

— Ի՞նչ ունիս, զաւա՛կս, հարցուց գորովագին, ինչո՞ւ չես խաղար, ո՞ւր է պէպէքդ։

Ձեռքէս առի՛ն . . . թոթովեց մանուկը, ցնցող հեծկլտանքի մը մէջ։

— Ո՞վ առաւ աղջի՛կս։

— Անշէ՛ն . . .։

Անշէն հօրաքրոջը պզտիկ աղջիկն էր, իրմէն երկու տարով մեծ։

— Խե՛ղճ զաւակս, մրմնջեց մայրը, շրթունքներովը չորցընելով անոր այտերուն վրայ թափուող արցունքները, մի՛ լար, ես քեզի հատ մը աւելի գեղեցիկը կը բերեմ։

Էէյլան տրտմալի խոշոր աչքերը դարձուց մօրը վրայ։

— Ի՞նչ ընեմ, ըսաւ վհատութեամբ թօթուելով իր խարտեաշ խոպոպները, դարձեալ ձեռքէս պիտի առնեն։

Եւ յանկարծական շարժումով մը՝ թեւերը փաթթելով մօրը վզին։

Ինծի կըսես թէ՝ դուն իմ մայրս ես, մրմնջեց մեղմիւ. քանի որ մայրիկս ես, ինչո՞ւ չես կենար իմ մօտս. ուրիշ ամէն տղաքներու մայրիկները իրենց քովիկն են ես օր մը հարցուցի հայրիկիս, «ինչո՞ւ մայրիկս չի մնար իմ քովս,» ըսաւ, «նա չա՛ր մայր է։»

Տարաբաղդ մայրը լռիկ կը լսէր զաւկին սրտէ՛ն զարնուած։

— Զիս հոս կը չարչարեն, կը ծեծեն, կը զրկեն, շարունակաբար, մէկը ինծի չսիրեր. ամենքը Անշէն ու Ալին կը սիրեն, ամե՛նքը . . . ամե՛նքը . . . դո՛ւն մինակ կը սիրես ինծի, ու դուն քովս չե՛ս, ըսէ՛, ինչո՞ւ չես մնար իմ քովս։

Եւ տեսնելով որ կը լռէր մայրը.

— Ձե՞ս ուզեր հոս մնալ, շեշտեց մանկական անգութ յամառութեամբ, անգիտակցօրէն տանջելով իր մայրը, ուրեմն ա՛ռ զիս ալ տա՛ր հետդ։

— Հապա հա՞յրդ . . . հարցուց Ցաթիմէ։

— Օ՜հ, ա՛ն . . . ա՛ն ամենէն շատ կը ծեծէ ինծի. «քաջին զաւակը» կը պոռայ երեսիս. ես կը վախնամ . . . մայրի՛կ . . . շա՛տ կը վախնամ հայրիկէս։

Ֆաթիմէ չկրցաւ ինքզինքը զսպել, յորդ արցունքներով գրկեց համբուրեց իր աղջիկը։

— Իմ քովս կեցիր, կ'աղերսէր ողոմ, իմ քովս կեցի՛ր, մայրի՛կ։

Ֆաթիմէ վճռեց . . .։

Տենդոտ շարժումով մը սրբեց արցունքները, անդամ մըն ալ համբուրեց Լէյլան, այդ համբոյրին մէջ փնտռելով ընելիք գերագոյն զոհողութեանն համար պէտք եղած ահաւոր ուժը։

— Զաւա՛կս, բաւ հաստատուն ձայնով մը, ալ մի՛շտ քովդ պիտի կենամ։

Եւ նոյն իրիկունը իր տունը չվերադարձաւ և ուզելով անդարմանելի բան մը դնել ի՛ր և իր պաշտած երիտասարդին արտին մէջտեղ, երկտող մը գրեց անոր։

«Ա՛լ քեզի հետ չեմ կրնար ապրիլ, կ'ըսէր, ներէ՛ ինծի, առաջին սէրը միշտ աւելի զօրաւոր է եղեր, ա՛յդ զգացի, յորմէ հետէ տեսայ վերատին զաւկիս հայրը. ան սիրեր եմ միայն, և անոր մօտը մնալու պարտաւոր եմ. զո՛ւն որ իմ նախախնամութիւնս եղար, զիս մի՛ անիծեր»։

Գոց նամակ մը եկաւ իրեն պատասխան։

Գողգոջուն ձեռքերով բացաւ զայն։

Երեք բառ միայն կար հոն գրուած, երեք բառ խոշոր տառերով, որ հրեղէն շամբուրներու պէս այրելով ծակեցին իր սիրտը։

«Վա՜ռ, վա՜ռ, վա՜ռ»։

*
* *

Դահիճին հրէշային ծրագիրը կատարուեր էր, կրնար յոխորտալ. բաժներ էր վերջապէս կինը այն ողնիւ ու վեհ երիտասարդէն, որը իրա՛ւ անոր նախախնամութիւնը, փրկիչը եղեր էր։

Զարիքը գործեր էր չարիք գործելու հաճոյքին համար միայն, ո՛չ մէկ արդարացում ունէր։

Ուզեր էր վրէժ լուծել կնոջմէն նոր չարչարանքներէ փախուստ տուած ըլլալուն համար. ուզեր էր վրէժ լուծել Ցուսուէն, որը հիւրնկալեր, սիրեր էր թշուառուհին, և յա-

ջղեր էր, իր չար կամքին հակառակ, օրէնքին ուժովը, տա-
բաբաղդ մայրը արժանացնել զաւկին տեսութեանը։

Եւ առտու մը երբ Ֆաթիմէ իր Լէյլային քունը կ'օրրէր արեւելեան անուշ ու տխուր մեղեդիներով, ուր իր սրտին լացը կը խառնէր դառն շեշտերով, դահիճը մտաւ անոր սենեակը. հէգ կինը անոր վրայ բարձրացուց իր նայուածքը։

Դիւային ժպիտ մը արձակեց ան կնոջը երեսին։

— Թողուցի՞ր սիրահարդ, ըսաւ վերջապէս, յարկեցած վը-
րէժխնդրութեան այնպիսի՜ վայրագ շեշտով մը, որ նորատի կինը սոսկումէն դողաց. թողուցի՞ր զայն, և եկե՞ր ես հիմա ամուսնոյ մը հովանաւորութեան տակ նոր սիրահար մը ճա-
րելու, այն ամուսնոյն՝ որը լքեցիր ու անպատուեցիր։

— Ո՞վ էր մեղաւորը. պատասխանեց ան կիրք եղած և ներքին խորունկ յուզումէն թեթեւակի կարմրելով, անիծեա՛լ ըլլաս. ա՞րդեօք օր մը ուզեցիր նայիլ սրտիս խորը. քննել ու չափել տուած վէրքերուդ ծանրութիւնը, ու դէթ սիրալիր բառով մը, անուշ նայուածքով մը ա-
մոքել զանոնք. ա՜խ . . . ամէն վայրկեանս ամէն օրս տանջանք մը, դժոխք մը դարձուցիր, մերթ նոր սիրա-
կանի մը անդութ ծաղրանքին, մերթ առելի նախան-
ձորդի մը ցած լուսանքներուն զիս նշաւակ ընելով, և որպէս թէ բաւական չըլլային հոգիս բզքտող տա-
ռելի չարչարանքները, անտանելի ծեծի տակ մարմինս ալ չարչարելով. մինչ այնքա՛ն դիւրին էր քեզ համար զաւկիս մօտ եթէ ոչ անուշ գոնէ հանդարտ կեանք մը ստեղծել ինծի . . .։

— Կեղծաւո՛ր . . . գոչեց հրէշը զայրացած կնոջը արդար ըմբոստացումէն, քու ուզածդ սիրահար մը գտնել, իմ ուզածս ալ քեզի սիրահարէդ բաժնել էր, գանգատներ լսելու չեկայ մօտդ. կորի՛ր հիմա տունէս կորի՛ր, ոչ վայրկենիս։

— Զաւակս, մրմնջեց խեղճ կինը ձեռնամուած ծնկան վրայ իյնալով, ի սէր Աստուծոյ, զիս մի՛ բաժներ զաւկէս։

— Մի՞թէ մոռացեր զաւակդ իրմէն բաժնուած պահուդ։

Ու երբ ան արցունքներէն կուրցած կ'ուզէր գրկել վերջին անգամ Լէյլան, դահիճը մօտեցաւ. խուժդուժօրէն քաշեց տղան անոր թեւերէն, և մղեց կինը սենեկէն դուրս. դէպի սանդուղները։

— Մայրի՛կ . . . մայրի՛կ . . . կը պոռար Լէյլան եռեւէն։

Վայրենի պոռչտուք մը, մի քանի խուլ հարուածներ, մանկական խղդուկ հեծկլտանքներ, և ահա՛ անենկին մէջ տիրոց անդարմանելի տխրութիւններու յաջորդող մեծ լռութիւնը . . .։

*
* *

Թշուառ մայրը տանը մեծ դրանը առջև, կարծեց թէ գետինը խոցս կուտար իր ոտքերէն։

Ա՛լ իր խորհելու անկարող մոլորուն մտքին մէջ, մէկ գաղափար միայն որոշ ու պայծառ կը գտնար ու կը գտնար. մահուան գաղափարը . . .։

Ի՞նչ անուշ էր յաւիտենական հանգիստը կանաչ խոտին տակ. ի՞նչ բաղդաւորութիւն էր մշանջենապէս դագրիլը՝ խորհելէ, զգալէ, տառապելէ . . .։

Փայլերը ուղղեց դէպի ծովեզրը. մտածելով որ նեղ փոսին մէջ քնանալէ շա՜տ աւելի անուշ կըլլայ քնանալը հոն, կապոյտ ջուրերուն տակ. պճլտուն, զուարթ, անհուն գերեզման մը, ուր իր տանջուած մարմինը — ամբողջ կեանքին մէջ այնքան բրտորէն կաշկանդուած — պիտի կրնար ազատ համարձակ տարածուիլ և որը իր ալիքներուն միշտ շարժող օրրանին մէջ, մեղմիւ պիտի օրրէր իր մշանջենաւոր քունը։

Եւ անսահման յոգնութենէ մը ետքը, արդէն տիրացուած ցանկալի հանգիստին պէս ուրախացուց զինքը այս մտածումը։

Ցանկարծ փայլակի մը պէս աչքին առջևէն անցաւ Լէյլան։ Մանուկը արցունքոտ աչքերով, երկու պզտիկ ձեռքերը միացուցած կը պաղատէր իրեն։

— Քեզմէ ուրիշ ո՞վ ունիմ, կ՚ըսէր, զիս մի՛ թողուր, մայրիկ . . .։

— Աւա՜ղ . . . մրմնջեց թշուառ կինը, մեռնելու իրաւունք ալ չունիմ . . .։

Գնաց նստաւ ծովեզրը, և գլուխը առած երկու ձեռքերուն մէջ, սկսաւ խորունկ խորունկ մտածել, ելք մը փընտռելով այս անել դրութենէն ազատելու համար։

— Աստուա՜ծ, կ՚ըսէր, ներշնչէ՛ ինծի։

Եւ Աստուած ներշնչեց իրեն գողնալ զաւակը, և փախչիլ ի տար աշխարհ. հոն՝ կրնար ապրիլ անծանօթ. ոչ ոք կուզար փնտռելու զինքը ու խանգարելու իր հանգիստը։

Մի քանի կտոր թանկագին ադամանդներ ունէր, բաւական լաւ կար կը կարէր, կ՚ասեղնագործէր, ուստի և կը յուսար իր ձեռքերուն աշխատութեամբը ապրեցնել զաւակն ու ինքզինքը։

Ապրի՞լ էր աշխատութեամբը... ի՞նչ անուշ պիտի ըլլար այն ատեն հացը՝ որը պիտի ուտէր ու կերցնէր զաւակին։ Ամէնէն անգամն էր որ այս գաղափարը կ՚արթննար իր մտքին մէջ։ Զգաց թէ գեղեցիկ ու վեհ բան մը ըլլալու էր սեփական աշխատութեամբ պահպանելը իր գոյութիւնը, ինքը որ ցարդ ծոյլ մը, թոյլ ձրիակեր մը եղած էր միայն։ Աշխատութեան մէջ նա գտաւ պատուաւոր անկախութիւն, կեանքի ահարկու կռիւներու դէմ նոր անյաղթելի ոյժ. և իր մէջ զգալով կոչումը մղելու այդ կռիւը, ազնիւ հպարտութեամբ ժպտեցաւ։

Ալ իրեն կը մնար ծրագրել փախուստի միջոցները։ Հրամանագիրը դեռ ձեռքն էր, ուստի և կրնար միշտ իր զաւակը տեսնել։ Երբեմն մանուանդ կը պատահէր որ ոգան ամբողջ ժամ մը առանձին կը մնար իրեն հետ. ապառուհին զբաղուած կ՚ըլլար. մոռցեց առանձնութեան այդ սուղ վայրկեաններէն օգուտ քաղել և որոշեց շուտով պատրաստուիլ։

*
* *

Սեղանատան մէկ անկիւնը գետնին վրայ կծկուած, Լէյլան լուցկիներով լեցուն տուփ մը ձեռքը կը խաղար առանձին։ Հաճոյք կը զգար լուցկիները մի առ մի բռնկցնելով, և անոնց արձակած պայծառ բոցին վրայ զմայլելով՝ կը խնդար մինչև մինակ։

Ահա բռնկած լուցկիներէն մէկը ինկաւ յարդէ բազմոցին վրայ։ Տղան ուշադրութիւն չի դարձուց և շարունակեց վըտանգաւոր խաղը։

Բազմոցը կ՚այրէր սակայն ծուխը կը թանձրանար և կը ճնշէր հետզհետէ սենեակին օդը։

Տղան ամբողջ էութեամբը խորասուզուած իր սիրական

զբաղումին մէջ, բան մը չէր զգար, բան մը չէր տեսներ, երբ շղարշէ թեթեւ վարագոյրները յանկարծ կրակ առին, և պայծառ բոց մը բարձրացաւ մինչև առաստաղը։ Այս անգամ տղան ցատկեց ոտքի ապրապած. և ծուխէն կէս մը խեղդուած, սկսաւ լալ ու պոռալ։

Տղուն սուր աղաղակներէն, և մանաւանդ խանձի կծու հոտէն, որը մինչև վերի յարկը տարածուեր էր, հայրը վար վազեց։ Տեսաւ բաղմոցը կիսովին այրուած, վարագոյրները մոխիր դարձած, գետինը սեպ սև, և լուցկիներ՝ ցրուած դէս ու դէն։

Ամէն բան հասկցաւ։ Եւ մինչ ապաստարանները ներս դուրս կը վազվզուէին շուարած, ջանալով հրդեհը իր սկզբնաւորութեան մէջ խեղդել, ինքը բարկութենէն դողդղալով բռունցքը վերցուց և յարձակելով վախէն սասնած ու մեռելի պէս անշարժ մանուկին վրայ՝

— Քանին զաւակը, գոչեց, սատկէ՛։

Տղան որոգայթը ինկած թռչնիկի մը պէս կը թփրտար հրէշ հօրը թեւերուն մէջ, բայց ան կը սեղմէր զայն, բռունցքը բարձրացուցած գլխուն վրայ։

Էյլան հետզհետէ կերպարանափոխ կ'ըլլար, դէմքը ահռելիօրէն կը դեղնէր, աչքերը կը փոսանային և լայն սև ծիր մը կը պատէր անոնց շուրջը։

Ահա յեղակարծօրէն ուժգին սարսուռ մը երկա՜ր ցնցեց անոր պզտիկ մարմնիկը, աչքերը դարձան իրենց ակնապիճներուն մէջ և սոսկումի ահարկու արտայայտութեամբ մը խոշոր բացուած՝ սեւեռած մնացին իր դահճին կարմիր աչքերուն վրայ, և անշարժ ու սառած մնաց գազանին թեւերուն մէջ։

Թշուառ տղան մեռե՛ր էր . . .։

*
* *

Այս պահուն Ֆաթիմէ կուգար իր զաւկին այցելութեան. փախուստի ամեն պատրաստութիւն տեսեր էր յաջողութեամբ, և ուրախ ուրախ կը քալէր ճամբան, յուսալով որ պարագաները կ'օգնեն իրեն, ու կրնայ նոյն օրը թերեւս առնուլ տանիլ Էյլան։ Անուշ անուշ երազելով մօտեցաւ

տանը։ Դուռը բաց էր։ Անսովոր իրարանցում մը կը տիրէր ներսը։

Ցաթիմէի սիրտը յեղակարծօրէն սեղմուեցաւ, սոսկալի նախազգացում մը սարսռացուց իր ամբողջ մարմինը։

Երագեց քայլերը, մտաւ ներս, գրեթէ վազեց անցաւ մեծ բակը. տեսաւ սեղանատան մէջ խռնուած ահագին բազմութիւնը, բրտօրէն ճեղքեց այդ ամբոխը, և անցաւ առաջ։

Սարսափելի տեսարանը իր բոլոր արհաւիրքներով մէկ անգամէն պարզուեցաւ տարաբաղդ կնոջ աչքերուն առջև։

Սոսկումի ազազակ մը արձակեց, և գլուխը սեղմած երկու ձեռքերուն մէջ։

— Լ՛յլա՜ . . . պռաց, Լէյլա՜ զաւա՛կս . . .։

Տղան անշարժ, յաւիտենապէս լուռ իր բաց աչքերովը կը նայէր իրեն . . .։

Տարաբաղդ կինը մոլորուն նայուածք մը պտտցուց իր շուրջը։

— Ինացա՜ծ ըլլալու է . . . մրմնջեց տարօրինակ ժպիտով մը։

Ու սեղմելով դիակը իր թեւերուն մէջ, սկսաւ օրրել իր կուրծքին վրայ, երգելով մին այն արեւելեան տխուր մեղեդիներէն, որով սովոր էր քնացնելու ազան։

Խոր լռութեան մէջ ամէնքն ալ կ՝սրտառուէին։ Այս միջոցին որդեսպանը մօտեցաւ կնոջը։

— Մօլլաները եկան, մրմնջեց անոր ականջին, հիմա պիտի տանին թաղելու, տո՛ւր ինծի ազան . . .։

— Ի՞նչ . . . պռաց հէք մայրը, զաւակս թաղելո՛ւ պիտի տանի՞ն . . . հա՜ . . . հա՜ . . . հա՜ . . . ի՞նչ կ՝ըսէ այս մարդը. հա՜ . . . հա՜ . . . հա՜ . . .։

Եւ այս այլանդակ քրքիջը կրկնուեցաւ այնպիսի՜ ահռելի արձագանքներով, որ ներկաներուն վրայ պաղ դող մը իջաւ։

— Խենդեցա՜ւ . . . պռացին ամէնքը մէկ բերան, խենդեցա՜ւ . . . օ՜հ . . . թշուա՜ռ կին։

Իսկ ան աւելի պինդ գրկած դիակը, աչքերը առանց արտայայտութեան նայուածքի մը մէջ կորսուած կը շարունակէր օրրել զայն երգելով իր մեղեդին, և մերթ սուր քրքիջներով ընդմիջելով զայն։

Ան ատեն դահիճը փորձեց բանալ անոր թեւերը, և առնուլ գրկէն դիակը։

Տարաբաղդ կնոջ աչքերը զարհուրելի կերպով խոշորցան, դէմքը աննկարագրելի վայրագութիւն մը հագաւ, և թողլով տղան իր գրկէն, յափշտակեց մօտակայ սեղանին վրայ դըրուած պղնձէ հսկայ աշտանակը, և իր բոլոր ուժովը կատաղօրէն ինչեցուց անոր գլխին։

Ոլդեսպանը տապալեցաւ գետին զաւկին դիակին քով. հարուածը շեշտակի քունքին դիպեր, և մահը վայրկենական էր եղեր։

Այն առեն թշուառ կինը ծռեցաւ, նայեցաւ երկա՛ր այդ երկու դիակներուն, և նորէն թնդաց իր քրքիջը, սոսկալի՜, չարագո՛յժ քրքիջը, «հա՜... հա՜... հա՜...»։

ԽՈՐՏԱԿՈՒԱԾ ԿՈՒՌՔԵՐ

Ա՛վ խեղճ սիրես... ինչ խորան անմաչելի Սրբութեանց
Կանգնեցի մէջդ՝ նուիրուած իմ կուռքերուս պաշտօնին,
Ու խունկ կտրած՝ քաղցրաբոյր ամպերու մէջ հաճնելով
Ֆուլայ, քուլայ օրն ի բուն միացի ու մոխրացայ...։
Հալաւացեալ մոլեռանդ, երիտասարդ առաքեալ
Անոնց կրօնքն համարձակ տարփողեցի խանդավառ,
Եւ շատ սրտեր հաւատացին, տարուած իմ խոր հաւատքէս.
Ու երկրաւոր Սէրերը անգթօրէն մեռցուցած,
Երիտասարդ եւ առոյգ կեանքըս համակ տարամերժ
Զգացումներս էն կրակոտ, երազներըս էն բոցոտ
Իմ կուռքերուս բազնին վրայ սիրոյ ըրի ողջակէզ։
Ուրիշ աշխարհ գոյութիւն չունէր ընաւ ինծ համար,
Կուռքերուս մօտ ծնրադիր՝ կ'աղօթէի ջերմեռանդ,
Կը հաւատայի թէ անոնք՝ մարդ-էակէն գերագոյն,
Երկաթ կամքեր, սուրբ սրտեր, Իդէալին ուխտուած,
Մարդկային խօլ կիրքերուն՝ արհամարհոտ կը նային...
Եւ անսասան, ժայռ հաւատքս զանոնք աստուած հրէչակեց...։
Մէն մի խօսքը կուռքերուս՝ նուիրական պատգամ մ'էր,
Մանուկ մտքիս մէջ զանոնք քանդակեցի խորապէս,
Որպէս զի բառ մ' չըլլայ որ ես չի յիշեմ առոնցմէ։

* * *

Ո՞ւր էք հիմա, հէք կուռքերս . . . ջախջախուած ու խրոցելի
Պատուանդաններդ վար ինկած, ցեխերու մէջ քաշկռտուած,
Ձեր բեկորներն ցիրուցան արցունքներով ժողվեցի
Ու Ձեր շրթեղ խորանին դեռ կանգուն վէմ քարին տակ
Խոր յուզմունքով սարսռուն ես թաղեցի խնամքով,
Որ չըլլայ թէ փշրելով ըլլաք հողին հաւասար,
Ձեզի տրէս վանելու քաջութիւնը չունեցայ . . . ։
Ու իրիկունն երբ զըւարթ բուրաստանէս կը դառնամ
Կեանքիս լրին անապատն մինակուկ հեռն յուշերուս,
Կ'առանձնանամ տրիս խորն ու կը գտնեմ Ձեզ նորէն .
Ու այն ատեն երկրաւոր արհամարհուած Սէրերը
Մութին մէջէն վրէժխնդիր՝ կը ցցուին դէմս հեզնօրէն
Ցոյց տալով Ձեր բեկորներն, վէմ քարին տակը թաղուած
Մինչդեռ իրենք կենդանի՝ երեսիս լուռ կը խնդան . . .
Բայց եւ այնպէս չեմ զղջար, հվ իմ կուռքերս խորտակուած .
Թ՝ երիտասարդ կեանքս համակ Ձեր պաշտօնին զոհեցի,
Գուցէ Ձեզի կը պարտիմ ամբոծութիւնը տրիս . . . ։

Սիրեցէ՛ք ձեր եկեղեցին

Ս. ՀՈՒՓՍԻՄԵԱՆՑԻ Սանուցիներուն

Ամեն կիրակի մենք ձեզի կը պատուիրենք՝ «Եկեղեցի եկէք». ու դուք, տղաքս, մեծ խղճմտութիւն կը դնէք մեր այդ պատուէրը կատարելուն մէջ ու կուգաք սիրով։

Արդեօք ձեր դպրոցականի պարտականութի՞ւնն է միայն որ կը մղէ զձեզ եկեղեցի, արդեօք ուրիշ զգացում մը աւելի՝ վաղեմի, աւելի՛ տիրական չի՞ թրթռացներ ձեր սիրտերը, երբ կիրակի առտու կը լսէք ձեր եկեղեցիին, Հայ եկեղեցիին զանգակներուն մտերիմ ձայնը . . .։

Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, ե՛ս մոռցած եմ այսօր իմ մանկութեան երգերս ու խաղերս, ե՛ս մոռցած եմ իմ պատանեկան երազներս և յոյսերս, ե՛ս մոռցած եմ իմ երիտասարդութեան փառասիրութիւններն ու յաղթանակները, բայց կը յիշեմ . . . դորովագին խանդաղատանքով մը, անցած սիրելի բաներու համար զգացուած մորմոքիչ քաղցրութեամբ կը յիշեմ այսօր, նոյնքա՛ն իրական, նոյնքա՛ն կենդանի իմ բնակած թաղիս եկեղեցին։ Ծերունի պարոնդուխտ քահանան որուն ապիտակ փառայեղ մօրուքը կուրծքը կը ծեծէր ամեն անգամ երբ Ս. Աւետարան կը կարդար, դպիր տղաքը՝ որ իրենց դպրապետին կը նայէին աշխոյժ աչքերով, և լուսա-

բարը, հաւատացեալ ու բարեպաշտ մարդուկ մը, որը խորանէ խորան կ՝երթեւեկէր, անդին ծածկոյթի մը ժանեակները շոկելով, ասդին մոմ մը վառելով։

Կը յիշեմ «Տէր ողորմեա»ի մը մելամաղձիկ եղանակը, շարականի մը վսեմ նօթերը, աղօթքի մը միխիթուն շեշտերը . . . և այդ ամենը զուգորդուելով մմ անհեռացած բարեկամներուս քաղցր դէմքերուն հետ, դեռ այսօր սիրտս թունդ կը հանեն, և կը կարծեմ վերապրիլ այն օրերը, ուր այդ նոյն եկեղեցիին մէջ իմ երիտասարդ հաւատքովս անոնց հետ ծնրադիր, աղօթեր ու լացեր էի՞ . . . : Ահա՞ այնքա՞ն խորունկ, այնքա՞ն նուիրական է սիրելի՞ք եկեղեցիին սէրը մեր սրտերուն մէջ, որովհետև մենք անոր կապուած ենք սերտօրէն մեր կեանքի է՛ն քաղցր, ինչպէս նաև է՛ն դառն յիշատակներով։

Կը ծնինք, և հո՛ն է որ մեր ճակտին վրայ կը հանդչի Քրիստոսի Աստուածային համբոյրը, Ս. Միւռոնը։

Կ՝ամուսնանանք, և հոն է որ կ՝օրհնուի ու կը նուիրագործուի երկու զիրար սիրող սրտերու միութիւնը։

Կը մեռնինք, և հո՛ն է դարձեալ որ խունկի ու աղօթքի մէջ հանգիստ ու խաղաղութիւն կը գտնեն մեր տանջուած հոգիներն ու մարմինները . . . :

Եւ դեռ ինչո՞ւ համար կը սիրենք մեր եկեղեցին։

Արդեօք անո՞ր համար միայն որ մեր փրկութեան ճանապարհը ցոյց կուտայ մեզի։

Արդեօք անո՞ր համար միայն որ մեր անդրշիրիմեան կեանքի յոյսն է և մեր ներկայ ցաւերուն մխիթարութիւնն ու ապաստանարանը։

Չէ՛, սիրելի՛ ազգաքս . . . : Մենք կը սիրենք մեր Եկեղեցին անո՛ր համար մա՛նաւանդ որ անիկայ մեզի կը սորվեցնէ մեծ ըլլալ . . . :

Քրիստոսի կեանքը՝ որը եկեղեցին մեզի կը պատմէ, գերազանց և կենդանի օրինակն է այն ամենատաքինութեանց՝ որոնց աղբիւրն է ինքը, Քրիստոս և որմէ մենք պիտի խլենք, եթէ կ՝ուզենք ապրիլ թէ՛ հոս և թէ՛ հանդերձեալ կեանքի մէջ։

Եկեղեցին մեզի կը սորվեցնէ կեանքի խակական նշանակութիւնը, թէ կեանքը վիջոյ մըն է միայն հոգիի կատարեալ գործելու և ոչ թէ սին վայելքներու և հաճոյքներու հա-

մար միայն սահմանուած հանգրուան մը։

Եկեղեցին վերջապէս գերազանց դպրոցն է բարոյական դաստիարակութեան, ուր մենք ամենքս պարտաւոր ենք երթալ լսելու Աստուծոյ մը տուած դասը, և այդ դասը ոչ միայն խօսքով, տեսականօրէն կ՚աւանդուի մեզ, այլ գործնական, կենդանի, և ապրուած օրինակներով . . .։

Ամեն Քրիստոնեայ եկեղեցիի մէջ կը խօսուի այս դասը, իրա՛ւ, բայց մենք պիտի կապուինք մասնաւորապէս մեր եկեղեցիին, Հայ եկեղեցիին, անո՛ր համար մա՛նաւանդ որ անիկայ պահպանած է մեր ազգային ինքնուրոյնութիւնը, և իր սիրովը ներշնչելով զՍուրբն Մեսրոբ, մեր գեղեցիկ բարբառը անմահացուցած է հայ տառերու հրաշալի գիւտովը։

Եւ ո՛ր եկեղեցին աւելի վաեմ է քան մերը . . . և ո՞ր բարբառը կ՚արտայայտէ այնքա՞ն հարազատօրէն Աստուածային լեզուն որքան մերը, այն պաշտելի բարբառը՝ որով երգեր, աղօթեր, սիրեր են մեր նախնիքը, մեր սուրբերն ու մեր բանաստեղծները։

Այսօր, դո՛ւք որ մեր շուրջը կը թրվռաք, սիրելի տըղա՛քս, դուք որ ձեր ուրախ ճռուողիւններով այս վարժարանը ու մեր սիրտերը կը կենդանացնէք, ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, պիտի չունենայինք զձեզ, առանց մեր եկեղեցիին, որովհետև հայ լեզուն պիտի չապրէր առանց հայ եկեղեցիին, և դուք, որոց վրայ դրուած են ապագայի ամեն յոյսեր, ամե՛ն հաւատքներ, դուք ձուլուած պիտի ըլլայիք աւելի զօրաւոր ցեղերու մէջ, ձեր պապենական կրօնը խաթարուած, ձեր հայրերուն նուիրական գերեզմանները հողին հաւասար, բնաջինջ եղած . . .։

Ահա՛ թէ ինչո՞ւ համար մենք ոչ միայն սէր այլ նաև երախտիք կը պարտինք մեր եկեղեցիին, ու պէտք է անոր գիրկը մեռնինք իբրև հաւատարիմ, հարազատ և երախտագէտ զաւակներ։

Անիկա՛յ հայ տառերը գրող լուսեղէն ձեռքը ցոյց տուաւ Ս. Մեսրոպին։ Անիկա՛յ ներշնչեց Ս. Սահակի իր Աւագ Շաբթուայ հրաշալի շարականները։

Անիկա՛յ ներշնչեց Եղիշէին իր Վարդանանց Պատերազմին զմայլելի նկարագրութիւնը։

Անիկա՛յ ներշնչեց Ս. Վարդանի աղջկան, Սրբուհին Շուշանիկի «Գոհար վարդն . . .» գեղեցիկ շարականը որ եկե-

ղեցական գրականութեան գարդերէն մէկն է։ Եւ ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, ոչ մէկ քրիստոնեայ եկեղեցի տուած է աշխարհի, նման հանճարներ։

Ասկից զատ մեր ազգային կեանքի ամենագեղեցիկ դրուագները կապուած են մեր եկեղեցիին հետ։

Տրդատ կը տառապէր, Հռիփսիմեան կոյսերը ապաննուած ըլլալուն խղճի խայթէն. գիշերը քուն և ցերեկը հանգիստ չունէր, և ահա՛ Խոսրովիդուխտ իշխանուհւոյն երազը եկաւ Աստուծոյ հրեշտակը, կ՚ըսէ պատմութիւնը, և հրամայեց Ս. Գրիգորը հանել վիրապէն։ Ս. Գրիգոր վիրապէն ելաւ, և Տրդատ ու իրենները բժշկուեցան ու սրբացան։

Սուրբն Ներսէս կ՚աղօթէր Նպատ Լիրան վրայ և Հայոց բանակը կը յաղթէր, կ՚ըսէ պատմութիւնը, ու եղաւ որ յոգնեցաւ ու թեւերը վար կախեց, իսկոյն թշնամին սկսաւ յաղթական ելնել, այն ատեն երկու մարդիկ կեցան անոր թեւերուն տակ, մինչև որ պատերազմը վերջացաւ, Հայերը յաղթեցին։

Մենք զօրաւոր եղանք տղաքս, այնքա՛ն ժամանակ որքան կապուած մնացինք մեր եկեղեցիին. այն ատեն դժուարութիւնները մեզի չկրցին յաղթել. ու երբ փորձեցինք եկեղեցիէն հեռանալ՝ դժուարութիւնները մեզի յաղթել սկսան։

Կրօնքը մարդուն սիրտը ու հոգին բարձրացնող մեծագոյն ազդակն է. առանց կրօնքի կինը՝ անկեալ հրեշտակ մըն է։

Այն ամեն տուներուն մէջ ուր կրօնքի և եկեղեցիի դէմ արհամարհանք ու անտարբերութիւն կը տիրէ, այդ տունները վէճերու և հակառակութիւններու թատր մը կը հանդիսանան. իսկ ընդհակառակը օրհնուած է այն տունը ուր նուիրական և սուրբ բաներու համար երկիւղած յարգանք ու պաշտամունք կը տիրապետէ։

Նոյնպէս և դուք, տղաքս, դուք որ կը սիրէք ձեր հայրենի կրօնն ու եկեղեցին, մի՛ վախնաք, դուք պիտի կազմէք օրհնուած ընտանիքը, դրախտի ընտանիքը։

Ս. ԿՈՅՍՆ ՀՌԻՓՍԻՄԷ

[ԴՐՈՒԱԳ ՄԸ ԻՐ ԿԵԱՆՔԷՆ].

Ս. Կոյսն Հռիփսիմէ
Իշխանուհին Լիզիա (*Իր մայրը*)
Եւնիկէ (*Նաժիշտը*)
Ս. Գայիանէ

(*Իշխանուհի Լիզիա եւ Հռիփսիմէ արդէն սկսուած խօսակցութիւն մը շարունակելով*).

— Այո՛ աղջիկս, թագուհի պիտի ըլլաս. աստուածները արժանացուցին քեզ այդ գերագանց փառքին, որմէ ետքը՝ իրենց փառքը կը սկսի... : Հռոմի զօրաւորը, Դիոկղետիանոս արքան քեզի կ՚ընտրէ իրեն թագուհի. ինչպէ՞ս պիտի վայլէ արքայական թագը այդ աղուոր ճակտին և արքայական ծիրանին այդ շքեղ հասակին : Անմա՜հ աստուածներ. երջանիկ մայր մը ըլլալ զիս զարդարելով իմ աղջիկս այն ամէն շնորհներով, որ միայն անմահներուն յատուկ են. եւ այն օրը՝ ուր անիկայ պիտի տայ իր ձեռքը Հռոմի թագաւորին, ձեր բազմաները պիտի ողողուին անհամար զոհերու արեան հեղեղներովը, (մտնելով Հռիփսիմէին որ արքուր ու մտածկոտ կը մնայ) : Եւ սակայն կը տեսնեմ որ այս լուրը քեզի անտարբեր կը թողու, աղջի՛կս, ինչո՞ւ ուրախութեան ճառագայթը չի՛ լուսաւորեր անուշ դէմքդ, ինչո՞ւ տրտում ես... Դիոկղետիանոս մեր զարմիկն է. մո-

տէն կը ճանչնաս զայն. գեղեցիկ, քաջ, զօրաւոր ու երիտասարդ է. ամեն ինչ ունի հաճելի ըլլալու համար. խօսէ՛, ազջի՛կս, մի՛ ծածկեր սրտիդ ներքին զգացումներդ...։

ՀՈՒՓՍԻՄԷ.— Կ՚ուզէի մի՛շտ ձեր մօտը մնալ, մա՛յր իմ... Չիս չեն հրապուրեր աշխարհի թագերը. իմ ճաշակներս պարզ են ու համեստ և իմ փառասիրութիւնս ձեր սիրոյն ու գուրգուրանքին արժանի ըլլալու մէջ կը կայանայ միայն։ Ո՜վ մա՛յր իմ, այնքա՜ն երջանիկ ըրիք իմ մանկութիւնս, այնքա՜ն սիրելի է ինծի մեր տունը, մեր ընտանեկան անուշ յարկը... կը վախնամ... կը վախնա՜մ ես այն անծանօթ կեանքէն՝ որ կը բացուի իմ աչքերուս առջև...։ Կը վախնամ այն մեծութիւններէն, որոց տակ կը զգամ թէ՝ կը թաղնուին մե՛ծ վտանգներ, մե՛ծ սպառնալիքներ, և մե՛ծ դժբաղդութիւններ։ Ըսէ՛ հօրս, մա՛յր իմ թէ՝ ձեր ազջիկը կը բաղձայ իր ամբողջ կեանքը անցնել ձեր մօտը, ձեր քովիկը և ձեր ծերութեան օրերը չի՛ թողուլ առանձին առանց սիրոյ, առանց խնամքի. Կ՚ուզէի ձեր աչքերը ե՛ս փակել, սիրելի՛ մայր...։

ԷՒԳԻՍ. ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.— Սիրակա՛ն ազջի՛կս, ո՞ր ծնողք կրնայ ըլլալ այնքա՜ն անձնասէր, որ իր զաւկին համար պահուած այսքա՜ն փառաւոր ճակատագիր մը ուզէ պոհել իր «ես»ին սիրոյն. և միթէ աստուածները որ այս ճակատագիրը պատրաստեցին քեզի համար պիտի չբարկանա՞ն տեսնելով իրենց այդ գերագանց շնորհներուն մե՛ր կողմէն ապերախտօրէն մերժուիլը։ Զգուշացի՛ր, ազջի՛կս, անոնց զայրոյթը ահաւոր է. անո՛նց բարկութեան կրակը մոխիր կրնայ դարձնել զմեզ ամենքս. դողա՛ և հնազանդէ. այս միութիւնը անոնց հրամանն է։ Ծերունի հայրդ ատոր մէջ պիտի գտնէ իր գերագոյն փափաքներուն պսակումը... ու ե՛ս ալ, զաւա՛կս, ուզի՛ հանգիստ պիտի մեռնիմ, երբ յանձնեմ զքեզ ամուսնոյ մը՝ որը պիտի ըլլայ քու հայրդ, մայրդ, եղբայրդ, ընկերդ ու թագաւորդ։ Այո՛, ազջի՛կս, Դիոկղետիանոս բռնաւոր տէր մը չէ՛. Հռոմի գահը քիչ ունեցած է անոր պէս հայրագորով ու վեհանձն իշխան. և եթէ ունի չար բնազդներ, դո՛ւն ազջի՛կս, դո՛ւն քու անուշ և հեզ բնաւորութեամբդ պիտի կրնաս չարը բարիի փոխարկել... և անիկայ պիտի փոխուի, որովհետև կը սիրէ

քեզ, և կնոջ մը սէրը, մա՛նաւանդ քեզի պէս կնոջ մը սէրը, ապրի՛կս, հրաշքներ կը գործէ։

ՀՈՒՓՍԻՄԷ.— Պիտի հնազանդիմ, մա՛յր իմ, քանի որ այդ են ձեր հրամանները. զո՛ւք երջանիկ եղիք, իմ միակ բաղձանքս ա՛յդ է։

ԼԻԳԻԱ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ՝ (Հուփսիմէի ճակտին համբուրելով).— Թո՛ղ սատուածները քեզ օրհնեն։ Հայրդ ու մայրդ քեզմով հպարտ են. զո՛ւն պիտի գրաւես Հռոմի պատմութեան մէջ այն էջը՝ որը պիտի փառաւորէ զքեզ ու քեզ ծնողները։ (Կը մեկնի)։

ՀՈՒՓՍԻՄԷ՝ (առանձին).— Թագուհի՜... խե՜ղճ մայր... և ի՜նչ գահի վրայ պիտի բազմիմ... գահ մը՝ որ արիւններով շաղախուած է դարերէ ի վեր. գահ մը՝ զոր անպատուեցին անզուսպ Պապպէաներ և անառակ Մեսալինաներ. գահ մը՝ ուր իրենց մահը գտան Ակրիբինա և առաքինի ու թշուառ Օկթաւիան... ո՞վ գիտէ որ այդ գահը իմ արիւնովս ալ պիտի չի ներկուի օր մը...։ Դիոկղեսիանո՞ս, Քրիստոնէից հալածիչը, Ներոնի արժանաւոր յաջորդը, ե՛ս կ'առնեմ զայն. Ակտէ սիրեց Ներոնը, բայց ես չեմ կրնար հրէշ մը սիրել...։

Կա՛յ ուրիշ թագաւոր մը, քաղցր, ողորմած, բարի թագաւոր մը, որուն մասին խօսեցաւ ինծի այն սեւազգեաց կոյսը, այն Գայիանէն...։ Անոր խօսքերը վառեմ ու սարսռեցուցիչ խռովքով մը լեցուցին հոգիս. անիկա՛յ ինծի խօսեցաւ խորհրդաւոր Սատուծոյ մը մասին, բոլորովին տարբեր մեր սատուածներէն, Սատուած մը՝ որ մարդոց սիրոյն համար նախատուեր, խաչուեր ու մեռեր էր և իր փառաւոր յարութիւնով յաղթեր էր չարիքին ու մահուան, ա՜խ, որչա՜փ պիտի ուզէի ճանչնալ ես այդ Սատուածը։ (Կը մտնէ Եւնիկէն)։

ՀՈՒՓՍԻՄԷ.— Եկո՛ւր, Եւնիկէ՛, եկո՛ւր, լսեցի՞ր մեծ լուրը, որ տակնուվրայ կը դարձնէ այսօր ամբողջ Հռոմը։

ԵՒՆԻԿԷ.— Լսեցի որ մեր սիրելի իշխանուհին թագուհի պիտի ըլլայ։

ՀՈՒՓՍԻՄԷ.— Այո՛, թշուառ թագուհի մը բռնաւոր հրէշի մը շղթայուած։

ԵՒՆԻԿԷ.— Եւ սակայն պիտի ամուսնանաք հետը։

ՀՈՒՓՍԻՄԷ.— Ծնողաց հրամանն է այդ, ափսո՜ս . . . բայց ըսէ՛ ինծի, Եւնիկէ՛, ո՞ր է այն սեւազգեաւ կոյսը, զոր անգամ մը տեսանք Հռոմի արքունիքը, ան՝ որ ինքզինքը Գայիանէ կ՚անուանէր . անոր դէմքին վրայ անբացատրելի գեղեցկութիւն մը կը ճառագայթէր . և աչքերը մա՛նաւանդ այն սև, խոշոր ու խորունկ աչքե՛րը . . . ի՜նչ խորհրդաւոր բոց մը կ՚այրէր անոնց մէջ երբ կը պատմէր իր Աստուծոյն փառքը։ Իր խօսքերը ազդու էին և համոզիչ . իր շարժումները վեհ և ազնուական, իր կերպարանքը պատկառելի ու տիրական . ըսէ՛, Եւնիկէ՛, կը ճանչնա՞ս դուն այն կոյսը . . .։

ԵՒՆԻԿԷ.— Անոր Աստուածը ի՛մ ալ Աստուածս է։

ՀՈՒՓՍԻՄԷ.— Ճշմարիտ է այդ։

ԵՒՆԻԿԷ.— Քրիստոնեա՞յ եմ ես . . . Քրիստոնէից Աստուածը ի՛մ ալ Աստուածս է։

ՀՈՒՓՍԻՄԷ.— Եւ ո՞վ ճանչցուց քեզի այդ Աստուածը։

ԵՒՆԻԿԷ.— Նոյն ինքն Գայիանէ, ան՝ որ Քրիստոսի քաղցր կրօնը կը քարոզէ համարձակ նոյն իսկ Հռոմի արքունիքին մէջ . ան՝ որ չի վախնար մահուանէ, ան՝ որ կ՚արհամարհէ տանջանքը, կրակը, սուրը, գազաններու ժանիքները և իր Աստուծոյն համար մեռնիլը՝ գերագոյն փառք կը համարի։

ՀՈՒՓՍԻՄԷ.— Եւնիկէ՛, ե՛ս ալ կ՚ուզեմ ճանչնալ այդ Աստուածը։

ԵՒՆԻԿԷ՝ (յափշտակուած, երիտ ձեռքերը միացնելով).— Օրհնե՛ալ է Աստուած . . .։

ՀՈՒՓՍԻՄԷ.— Կ՚ուզեմ տեսնել Գայիանէն։

ԵՒՆԻԿԷ.— Որքա՜ն ուրախ պիտի ըլլայ երանելի կոյսը,

ահաւասիկ մոլորեալ հոգի մըն ալ որ Քրիստոսի դիրկը կը դառնայ։ (Կը մեկնի)։

ՀՌԻՓՍԻՄԷ՝ (առանձին).— Այո՛, պէտք է որ շատ հզօր ըլլայ այդ խորհրդաւոր Աստուծոյն Սէրը. կը յիշեմ ես Քրիստոնէից նահատակութիւնը, մանկական աչքերս շատ անգամներ տեսան հրաշէկ խարոյկներու վրայ գալարուող մարմիններ, խաչերու վրայ սարսռացող մարդկային անդամներ, առիւծներու երախներուն մէջ կտրտուած գլուխներ, և այս բոլորը, այս բոլորը քու սիրոյդ համար, ո՜վ Քրիստոնէից Աստուածը, որովհետև քու սէրդ երեւի քաղցր ու զովարար է ինչպէս առաւօտեան շունչը, և քեզ համար մեռնիլը պէտք է որ շատ քաղցր ըլլայ . . .։

ԳԱՅԻԱՆԷ՝ (մեղմով).— Խաղաղութիւն ընդ քեզ, որդեա՛կ։

ՀՌԻՓՍԻՄԷ.— Դո՞ւք էք . . . այո՛, ձեզի կը սպասէի։ Օր մը ձեր խօսքերը անծանօթ զգացումներ և տարբերնակ խռովքներ արթնցուցին իմ հոգիս մէջ։ Տարակոյսը մեռցուց իմ մէջս իմ հայրերուս աստուածներուն հաւատքը. ձեզ տեսնելէս ի վեր, իմ այնքա՛ն զօրաւոր ու վաղեմի հաւատալիքներս վերիվայր շրջեցան . կասկածը հիմայ զիս կը տանջէ . ըսէ՛ք, ո՞վ էք դուք. ուսկի՞ց կուգաք և ո՞ւր կ՚երթաք . . .։

ԳԱՅԻԱՆԷ.— Ես Քրիստոսի ամենախոնարհ ապրիչն եմ . որդեակ իմ, ու կոչուած եմ խօսելու ճշմարիտ բանը . ո՛վ որ ականջ ունի՝ թո՛ղ լսէ։ Եկա՛յ հոս, որովհետև զիս փնտռեցիր . կ՚երթամ հոն՝ ուր զիս պիտի փնտռեն . ու պիտի երթամ՝ ուր որ զիս կանչեն։

ՀՌԻՓՍԻՄԷ.— Ինչքա՜ն քաղցր է ձեր ձայնը . ինչքա՜ն գեղեցիկ է ձեր դէմքը, և ինչքա՜ն անուշ են ձեր խօսքերը . սիրտս կը տագնապի, ո՜վ մայր, ե՛ս ալ ճշմարտութեան ծարաւի եմ . վառէ՛ իմ մէջս ճշմարտութեան լոյսը, ցո՛յց տուր ուղիղ ճամբան . փարատէ՛ տարակոյսներս, հանդարտեցո՛ւր հոգիս, ճանչցո՛ւր ինծի Սիրոյ և Գթութեան Աստուածը՝ զոր կը փնտռեմ և որուն կը կարօտիմ։

ԳԱՅԻԱՆԷ.— Մեր Աստուածը կ՚ըսէ . «Եկէ՛ք ինծի, վշտացեալներ ու տառապեալներ, ե՛ս ձեզի պիտի միխիթարեմ»։ Եկէ՛ք ինծի դժբաղդներ ու գրկուածներ ե՛ս ձեզի պիտի հաւատացնեմ։ Եկէ՛ք ինծի, յոգնածներ ու բեռնաւոր-

ուածներ և՛ս իմ գրկիս վրայ ձեզի պիտի հանդչեցնեմ։ Մեր Աստուածը կ՚ըսէ. «Սիրեցէ՛ք զիրար, և օգնեցէ՛ք իրարու, ու ես պիտի սիրեմ զձեզ. և ինչպէս մայրը իր թեւերուն մէջ գրկած կը գգուէ ու կը փայփայէ իր ծագումները, այնպէս և ես իմ հօրս առնը մէջ պիտի գգուեմ ու փայփայեմ զձեզ»։

Մեր Աստուածը կ՚ըսէ. «Մ՚ոչ խօսքով, այլ գործնական ցոյց տուէք թէ՝ ինծի հետևող էք. ու կ՚ըսէ զարձեալ անոնց՝ որոնք կեղծ աստուածապաշտներ, ու կեղծ քրիստոնեաներ են.» կեղծաւորնե՛ր, որ ծանր ու դժուարակիր բեռներ կը դնէք մարդոց ուսերուն վրայ որ տանին և դուք ձեր մէկ մատովն իսկ չէք ուզեր զանոնք շարժել։ Օձե՛ր, իժի ծընունդներ որ ապանեցիք արդարները և մարգարէները. այդ արդարներուն ու մարգարէներուն արիւնը ձեր վրայ թո՛ղ թափի»։ Մեր Աստուածը կ՚ըսէ. «Երանի՛ անոնց որ գաւաթ մը պաղ ջուր տուին իմ անուանս խնդրողներուն. ճշմարիտ կըսեմ. առիկայ պիտի չի մոռցուի երկնքի արքայութեան մէջ. ու կ՚ըսէ զարձեալ. «Երանի՛ անոնց, որոնք իմ սիրոյս համար տանջուեցան ու մեռան. ճշմարիտ կ՚ըսեմ, ա՛նոնք յաւիտեան պիտի ապրին։

Ու մեր Աստուածը այնչափ սիրեց մարդիկը՝ որ անոնց սիրոյն համար թողուց իր երկնային փառքը, իջաւ աշխարհ, կամովին յանձն առաւ անարդ մահը, որպէսզի փրկէ զանոնք յաւիտենական մահուանէ։ Հաւատա՛ք, որդեա՛կ իմ, մեր Աստուածը։

ՀՌԻՓՍԻՄԷ՝ (յաւիշտակուած).— Գթութեա՛ն Աստուած, Սիրո՛յ Աստուած, Արդարութեան և Ողորմութեան Աստուած...։

ԳԱՅԻԱՆԷ.— Իր թեւերը բաց են ամենուն համար։

ՀՌԻՓՍԻՄԷ.— Ինձի՞ համար ալ որ հեթանոս աղջիկ մըն եմ, հեթանոսի մը զաւակ և վաղը հեթանոսի մը կինը պիտի ըլլամ։

ԳԱՅԻԱՆԷ.— Երկինքի մէջ աւելի մեծ կ՚ըլլայ ցնծութիւնը երբ կորսուած հոգի մը կը վերադառնայ Քրիստոսի գիրկը. բայց Քրիստոսեայ հոգին չի կրնար հեթանոսի մը հոգիին լծորդիլ, Քրիստոսեայ կոյս մը չի՛ կրնար հեթանոսի մը կինը դառնալ։

ՀՌԻՓՍԻՄԷ.— Եւ սակայն ծնողաց կամքն է այս։

ԳԱՅԻԱՆԷ.— Աստուծոյ կամքը գերաւորագոյն է, անոր կամքը միայն օրհնեալ է. եթէ շնորհքը իրօք քու մէջդ խօսեցաւ, որդեա՛կ, հեռո՛ւ փախիր այդ միութենէն, իսկ ե՛ս, ահա՛ պէտք է մեկնիմ, Դիոկղետիանոսի կատաղի հալածանքէն փախուստական, դեռ հանգստեան ժամը չէ՛ հասած ինծի համար. Տէր ընդ քեզ։ (Մեկնելու վրայ կ'ըլլայ)։

ՀՌԻՓՍԻՄԷ.— Կեցի՛ր, ո՞ւր կ'երթաս, ո՞ւր կը թողուս զիս, դո՛ւն որ աչքերս բացիր ճշմարտութեան լոյսին. ա՛ռ զիս ալ ա՛ռ տար հետդ, փախչի՛նք այս երկրէն, փախչի՛նք այս պալատէն, ուր ապառնալիքներէ, մահուանէ աւելի մօտ արցունքներէն կը վախնամ, ի՞նչ քաղցր պիտի ըլլայ պաշտել ազատօրէն և համարձակ Սիրոյ և Գթութեան այն Աստուածը՝ զոր դու ճանչցուցիր ինծի ո՞վ կոյս, և որուն քաղցրը կրօնը ինծի սովրեցուցիր, այն Աստուածը՝ որուն կ'ուզեմ նուիրել իմ ամբողջ կեանքս։

ԳԱՅԻԱՆԷ՝ (յաւիշտակուած, ձեռքերը երկինք բարձրացնելով).— Կը գոհանամ քեզնէ, Աստուա՛ծ իմ, որ ինծի անարժանիս վիճակեցիր այս ազնուական հոգին քեզի նուիրելու...։ Արիութիւն տո՛ւր իրեն, ո՞վ տէր, որ հեզութեամբ և համբերութեամբ տանի իրեն զրկելիք երկաթէ խաչդ... բա՛ց աչքերը անմահական փառացդ լոյսին. կարճեցո՛ւր իր տառապանքները և ընդունէ՛ զինքը գիրկդ, ո՞վ տէր։ (Դառնալով Հռիփսիմէին) Որդեա՛կ իմ, սոսկալի է տանջանքը և ահաւոր է մահը երբ կը մօտենայ.

ՀՌԻՓՍԻՄԷ.— Պիտի մեռնիմ մա՛յր, եթէ հարկ ըլլայ սիրոյն համար Անոր՝ որ մեզի համար մեռաւ։

ԳԱՅԻԱՆԷ՝ (վիզեն հանելով իր խաչը, կ'անցնի Հռիփսիմէի վիզը).— Թո՛ղ այս Սուրբ Նշանը զօրացնէ քեզ քու սրբազան ուխտիդ մէջ և հաստատուն ու զօրաւոր պահէ հաւատքդ. մի՛ վախնար, մեկտեղ կը մեկնինք։ (Կը հեռանայ)։

ՀՌԻՓՍԻՄԷ՝ (առանձին).— Ամբողջ Հռոմ կը քնանայ ու ե՛ս միայն դեռ արթուն կը հակեմ. օ՜հ... այս վերջին գիշերն է զոր պիտի անցնեմ հայրենիքիս մէջ իմ հօրս տունը...։ Մնաս բարեա՛ւ, Հռոմ, պերճաշուք քաղաքներու պերճագոյն թագուհին, մնաս բարեա՛ւ. դո՛ւն որ երբ-

Չանիկ մանկութեանս ժպիտներն ու անհոգ երիտասարդութեանս ծիծաղներն ու յոյսերը տեսար և այսօր ալ ցաւերս ու արցունքներս կը տեսնես. մնաս բարե՜ւ. պէտք է թողում զքեզ... Քրիստոնեայ Հռիփսիմէն ալ եւս տեղ չունի հեթանոս Հռոմի մէջ։ Դիոկղետիանոս կը պատրաստուի հարանեկան խրախճանքներու, պէ՛տք է փախչիմ կամ մեռնիմ։ Երանի՜ թէ իմ արեանս մէջ մարէր գազանին կատաղութիւնը, երանի՜ թէ իմ պաշտած Աստուս քաղցր կրօնքին դէմ եղած հալածանքը իմ դիակիս առջև կանգ առնէր. բայց ո՛չ. դեռ շատ զոհեր պէտք են, շա՜տ արիւններ պէտք է թափին, մինչև որ քու սուրբ նշանդ յաղթանակէ տիեզերքի վրայ, ո՜վ Քրիստոս։ Մնաք բարե՜ւ, իմ ծերունի հայրս, իմ սիրակա՜ն մայրս, ներեցէ՛ք ինծի, վերջին անգամ պիտի չտեսնեմ զձեզ. որովհետև կը վախնամ, կը վախնամ ես ձեր արցունքներէն, ո՜վ մայր իմ, ի՞նչ պիտի մտածես... պիտի անիծե՞ս զիս, պիտի բանե՞ս արդեօք. «ապերա՛խտ զաւակ, քար ծնէի քու տեղդ»։

Ի՞նչ երկաթէ դարու մէջ կ՚ապրինք, ուր մարդ ազատ չէ՛ ի՛ր խղճին, ի՛ր սրտին զաւանած Աստուածը համարձակ պաշտելու։ (Վիզեն կախուած խաչը հանդուրեղով ծնրադիր կ՚աղօթէ)։ Ո՞վ դո՛ւ, չարչարանաց գործիք, որ վրադ Աստուած մը կրեցուդ համար արբացար, օրհնե՞ալ ըլլաս... խորհրդանշան ճշմարիտ կրօնքին, մարդկային ազգի փրկութեան գործիք, Սուրբ Խաչ, օգնէ՛ ինծի այս գերագոյն ճրգնաժամին մէջ, տո՛ւր որ արժանի ըլլամ երկնաւոր փեսային։ Քաջութիւն տուր ինծի, Սուրբ Խաչ, քու վրադ թափուած աստուածային արիւնը թո՛ղ զօրացնէ իմ տկար մարմինս. թո՛ղ ահաւոր մահը, եթէ պիտի կայ միացնելու զիս իմ Աստուս, քաղցրութեամբ մօտենայ ինծի, որովհետև հոգիս յօժար է, բայց մարմինս տկար... փարատէ՛ մահուան սարսափը հոգիիս վրայէն, բա՛ց երկնքի դուռները իմ աչքերուս առջև, որպէս զի սաստիկ տանջանքներուս ժամուն՝ տեսնեմ աստուածային լոյսը։ (Գլուխը երկու ձեռքերուն մէջ առած շուռ կը մնայ, կը մտնէ Գայիանէ երեք ընկերուհիներով)։

ԳԱՅԻԱՆԷ.— Կ՚աղօթե՞ս, որդեա՛կ, այո՛... աղօթքը հոգին կը զօրացնէ և սիրտը կը միխիթարէ. Քրիստոս կ՚ըսէ. «Ցաճախ աղօթքի կեցէք»։

ՀՈՒՓՍԻՄԷ.— Պիտի մեկնի՞նք, մայր իմ։

ԳԱՅԻԱՆԷ.— Ժամանակը հասաւ, վագրը արդէն շատ ուշ է. պատրաստ ես, որդեա՛կ իմ։

ՀՈՒՓՍԻՄԷ.— Այո՛, մա՛յր։ (Նետելով թագը իր գլխէն, եւ քաշելով հանելով իր զարդեղէնները)։ Այոնք ապրանք մ՚է եւ պէտք չեն ինծի. հեթանոս Հռիփսիմէն հո՛ս պէտք է թողու իր աշխարհային փառքն ու պերճանքը, ինչպէս հոս կը թողու մանկութեան ու երիտասարդութեան սէրերը, յիշատակները ու հաւատալիքները։ Քրիստոնեայ Հռիփսիմէն ալ եւս ոչ մէկ բանով կապուած է աշխարհային կեանքին. անիկայ իզեր նոյն իսկ իր որդիական սիրոյ կապերը, բայց ի՞նչ տառապանքներու գինով, ո՞վ Քրիստոս. անիկայ նո՛ր կեանքով, նո՛ր արտով վերանորոգուած պիտի սկսի Քրիստոնէի հոլածական և տանջանալից կեանքը, մինչև այն երանելի օրը՝ յորում պիտի կոչէ զինքը Քրիստոս։ Հարուցո՛ւր ինծի մա՛յր սև պատմուճանը, ծածկէ՛ գլուխս սև քողը...։

ԳԱՅԻԱՆԷ՝ (կը մօտենայ ծանր ծանր, կը հանէ Հռիփսիմէի պատմուճանը, վրան կուտայ սեւ զգեստը, գլխուն պատկը վար կ՚առնէ կը ծածկէ քողը գլխուն եւ կը նայի անոր հոգեզմայլ, ապա ներշնչեալ ձայնով).— Որդեա՛կ իմ, այդ ի՞նչ կը տեսնեմ... այն ո՞վ է որ ապարոյի քողը կը պատէ իմ աչքերուս առջև. Հռիփսիմէ՞... դուստր իմ, արիացի՛ր, որովհետև փորձութեան ժամը կը մօտենայ... ահա՛ կը տեսնեմ քեզ, լուսեղէն ամպերու մէջ նահատակի և սուրբի անթառամ պսակը գարդ ճակտիդ... ահա՛ կը տեսնեմ լուսափայլ հրեշտակները շուրջդ որ քեզ կը սպասաւորին. ահա՛ կը տեսնեմ դարերու ընթացքին մէջ բիւրաւոր սերունդներ որ երանի՛ կը կարդան քեզի ու մատաղ ընթերցներ որ դարուց ի դարս քու փառքդ կ՚օրհնեցնեն։ Իշխանութի՛ հզօր, կոչուած էիր աշխարհի ամենէն փայլուն թագը կրելու ճակտիդ, բայց ի՞նչ էր այդ ժամանակաւոր փառքը ո՞վ կոյս, երկնաւոր անմահ փառքին մօտ որ ահա՛ քեզի կը սպասէ...։

ՀՈՒՓՍԻՄԷ.— Քու խօսքերդ հզօր ու կենդանարար են ո՞վ մայր իմ, ինչպէս պաղպաջուն ալբիւրներու ջուրը, ա-

նանք զիս կը քաջալերեն և ինծի ոյժ կուտան տարբեր-
բուս մէջ. օ՜հ խօսէ՛ ինծի մա՛յր, դեռ խօսէ՛ ինծի։

ԳԱՅԻԱՆԷ.— ճշմարիտ Քրիստոնեան իր ուժը և քաջու-
թիւնը իր հաւատքէն պիտի քաղէ... բայց ահա՛ կը տես-
նեմ ո՞վ Հռիփսիմէ, ե՛ս քեզ պիտի կանխեմ ճշմարիտ կե-
նաց ճանապարհին մէջ. ո՞վ երանութիւնս... Քրիստոս
զիս անարժանս ալ նահատակի փառքով կ՚ուզէ պսակել.
ե՛ս քեզնէ առաջ կ՚երթամ ահա Քրիստոսի քովը, կ՚աղաչեմ
իրեն որ զօրացնէ մատաղ հոգիդ և մահու ու կենաց մէջ
եղող սա՛ դժուարին ճամբան կարճեցնէ քեզ համար։ Ահա՛
Քրիստոս քու մօտդ է մահուան ժամուն, դո՛ւն կը տեսնես
զինքը, և անիկայ կ՚ըսէ քեզի. «Եկո՛ւր, ինծի եկո՛ւր, իմ
սիրոյս համար տանջուած աղջիկ, ե՛ս քեզի պիտի հանգ-
չեցնեմ»։

Ո՞վ նահատակ պանծալի, արժանաւոր Հարս երկնային
փեսային, կ՚օրհնեմ զքեզ յանուն Քրիստոսի։

(Կը խաչակնքի, ամենքն ալ կը ծնրադրեն)։

ՍԻՐՏՍ ԱՐԳԱՆ Է ԱՅՍՕՐ

ԱՆՆԻՒԷ ԻՆ

ՊՈՒՐԱԿՆԵՐՈՒՆ մէջ զուարթ հայրենիքիս գեղեցիկ
Վերջալոյսի ցոլքերով լուսաւորուած տրամօրէն,
Մտերմութիւն մը խորունկ ծառի մը տակ կ'երազեմ,
Ինչպէս երբեմն քեզի հետ, անզուգական սիրելիս...,
Մեր հոգիներն, ինչպէս ջինջ աղբիւր վըճիտ ու յըստակ
Իրարու մէջ վազէին անվերապահ յորդումով.
Աննիւթական ինչ Սէրեր կ'երազէինք քեզի հետ
Ընկողմանած մեծ կաղնւոյն հովանիին տակ հեշտին.
Եւ ինչ դրախտ հեշտալի դժոխք կեանքը ապրուած
Երբ ծեռք ծեռքի խնդալից, սուր խոյանքով մը խիզախ
Իտէալի աշխարհներն կը ճախրէինք երջանիկ...
Օ՜հ, իրական աշխարհէն ի՛նչքան հեռի, քեզի հետ
Պուրակներուն մէջ զուարթ հայրենիքին՝ գեղեցիկ,
Ապագայի խորհուրդներ մենք կ'երկնէինք խանդավառ...,
Եւ ինչպէս բուռն փոթորիկ կը խըլէ ծառն իր բունէն
Այնպէս եւ մեզ խօլ բաղդը խըլեց գրկէն իրարու,
Եւ ապագան ջախջախուած, ինչպէս քեզ՝ եւ ինձ համար
Մեր միասին հաւատքին վրայ խնդաց դառնօրէն...,

Սիրտը ամպած է այսօր . . . ուր է քու գիրկդ, սիրելիս,
Ուր կարենայ անկաշկանդ փոթորկիլ եւ անձրեւել,
Ինչպէս երբեմն երբ վիշտ մը կամ պատրանք մը ցաւագին
Հոգւոյս խորը նոր վէրք մը անգթօրէն կը փորէր։
Սիրտը ամպած է այսօր . . . ուր է քու սէրդ, սիրելիս,
Տարագրութեանս մէջ երկար փնտրուեցի այն ի զուր,
Ու չեմ գիտեր, ինչ եղար ովկիանէն ալ անդին.
Դատար երբէք զոյգն հոգւոյդ, երջանիկ ես, ով գիտէ . . .
Կորնցուցի հետքդ, ափսոս, եւ անցեալին մէջ թաղուած
Ցուշերուս տաք մոխիրներն կը քրքրեմ յամրօրէն,
Գուցէ գտնեմ մէջէն կայծ մ' որ ար արթիս կեանք տայ նորէն . . .։

* * *

Պուրակներուն մէջ զուարթ հայրենիքիս գեղեցիկ,
Վերջալոյսի ցոլքերով լուսաւորուած տրամօրէն
Մտերմութիւն մը խորունկ ծառի մը տակ կ'երազեմ . . .։

Իրապա՞ծ թէ իտէալիստ

Այս վերջին ժամանակներու ընթացքին մէջ, կը տեսնենք թէ՝ հոգեկան բարձր ձգտումները հետզհետէ կը պակսին մարդկութեան մէջ։ Անձնասէր, պզտիկ և միայն օրը օրին տափակ կեանք մը կապրինք հիմա։

Չկա՞ն այն ազնուական ժէսթերը, այն հոյակապ գործերը, այն սքանչելի հոգիները, մէկ խօսքով, որ մեզ կը յարիշտակեն երբ կը կարդանք Պրուտարքոսը, հին և նոր ազգաց պատմութիւնները առ հասարակ։

Ասոր պատճառը կը կարծեմ թէ չափազանց իրապաշտական ուղղութեան մը հետեւելնիս է։

Հին գրականութիւնը երեւակայելով մարդիկը այնպէս՝ ինչպէս որ պէտք էր ըլլային, ստեղծեց դուցէ այն գերազանց թիւերը, զորս այսօր իբր օրինակ հպարտութեամբ կը ցուցադրենք մենք մեզի մինչեւ՝ իրապաշտ պրոպականտը, իրապաշտ գրականութիւնը ցուցնելով մարդիկը այնպէս՝, ինչպէս որ են իրապէս, թեւաթափ կտրեցին մարդկութեան թռիչքը դէպի վեր, դէպի աւելի բարձրները։

Իրականութիւնը շա՞տ տխուր և շա՞տ ոգեղ է ինքն ըստ ինքեան իր բացարձակ մերկութեանը մէջ, և քանի՛ կը շեշտուի իրականութիւնը միայն տեսնելու, և անո՛ր միայն տարամերժօրէն հաւատալու այս ուղղութիւնը, այնքա՛ն մարդիկ կը դառնան սկեպտիկ, յուսահատ ամէն գեղեցիկ բաներու իրագործումէն և յոռետես՝ կեանքի մասին։

Օգտակար է սակայն միշտ աւելի՛ լաւատես ըլլալ դէպի մարդը, հաւատալ թէ՝ անիկայ ատակ է լաւագոյն ու բարձ-

բագոյն ձգտումներու։ Եւ որչափ մեծ ըլլայ հաւատքը, այնքան աւելի յուսալի է բարձրացումը անոր կեանքին և որչա՛փ աւելի յուսահատ ըլլանք, և նկատենք մարդը տիար էակ մը, գերի միայն իր կիրքերուն ձեռքը, այնքա՛ն պիտի ստորնանայ, պիտի իյնայ անոր կեանքը . . . ։

Իրապաշտ պրոպականտը չափազանց նիւթապաշտ դարձուց մարդը, և ա՛յդ է պատճառը որ անիկայ օրըստօրէ կը հեռանայ գաղափարականութենէ ։

Մեծ և ազնիւ գործերը զոհողութիւն կը պահանջեն . ու նիւթապաշտութիւնը ոխերիմ թշնամին է զոհողութեան, և սակայն կեանքը բարձրացնելու համար պէտքը կայ աւելի գաղափարականութեան մօտենալու ։

Մեզ, հայերուս համար կ՚ըսուի թէ՝ իտէալիստ ժողովուրդ մըն ենք . չգիտեմ թէ ո՛ր աստիճան ստոյգ է ասիկայ ։ Մեր իտէալիստները, ցանցառ բացառութեամբ իտէալիստի դիմակի տակ, ամենասինիք տեսակէն նիւթապաշտներ դուրս եկան դժբաղդաբար . . . ։

Ճշմարտապէս իտէալիստ մարդոց մեր ցեղը շատ քիչ անգամներ ծնունդ տուած է ։ Չափազանց անձնասէր ժողովուրդ մըն ենք, չափազանց յարած նիւթին, և ատոր համար է որ շատ հեռի ենք մեծ ժողովուրդ մը ըլլալէ ։

Ամենափոքր զոհողութենէ մը իսկ կը խրտչինք երբ հանրային օգուտը ատիկայ մեզնէ պահանջէ, և սակայն մեր հասարակական գործերը, որոնք այնքա՞ն տխուր կերպարանք մը ունին այսօր, իտէալիստ մարդոց պահանջքը ունի, ընդունակ ամէն զոհողութիւններու, ընդունակ վեղեցիկ ժէսթերու ։

Ազգային հաստատութիւնները՝ եկեղեցի, դպրոց, հիւանդանոց ևն. ևն. իտէալիստ մարդոց պէտքը ունին իրենց վեմ նպատակին ծառայելու համար ։

Գաղափարական հրաբորբոք եռանդով մը գերազանցօրէն խորունկ անկեղծութեան շունչով մը պէտք է զիրար ոգևորեն հանրային գործիչները, որովհետև եռանդ մը եռանդով կը բորբոքուի ։ Ամենէն հրավառ շուչը կը սառի անտարբերութեան և պաղութեան մթնոլորտին մէջ ։

Զօրաւոր նկարագիրներու տրուած է գլխաւորաբար այդ հզօր շունչը, այդ անչէջ եռանդը, որ ոչ մէկ բանէ կը յուսահատի ։

Մաղթենք որ սանկ նկարագիրներ՝ մեր ցեղին մէջ ծլին ու ծաղկին ։

ՀԱՍԱԿԸ

Եմեն մի նոր յեղաշրջում, որը կը կատարուի հասարակութեան կեանքին մէջ, բնականաբար իրեն նպատակ կ՚ունենայ հասարակութեան բաղդաւորութիւնը, առանց աստոր չարժեն այն եռանդուն պրոպականտները, շարաչար վրկանքներն ու տառապանքները, զորս մէկէ աւելի ընկերաբաններ ու դաւանանքի մարդիկ կուտան իրենք իրենց, մի որ և է մեծ, օգտակար սկզբունքի սերմը դնելու համար մարդկութեան — ասեմ — ապերախտ հողին վրայ, որը մինչև ընդունի զայն իր անհիւրընկալ ծոցին մէջ կը քամէ ու կը ծծէ անյաղ ընկերաբան, խմբագիր, վարժապետ-մշակին և՛ քրտինքը, և՛ արիւնը և՛ կեանքը շատ անգամ, սա՝ այնքան պայծառ ու որոշ ճշմարտութիւն է ինչպէս արեւուն լոյսը։

Արդ՝ կնոջ ազատագրական հարցը, որ ժամանակէ մը ի վեր հզօր արձագանք գտած է Եւրոպայի էն պատկառելի մտաւորական կեդրոններու ու շրջաններու մէջ, և որը վիթխարի քայլեր առնելու վրայ է դէպի վերջնական լուծումը, մին է անշուշտ այն մեծ յեղաշրջումներէն, որոնք մարդկութեան ճակատագրին վրայ կ՚ունենան խորունկ ազդեցութիւն, եթէ սակայն ատիկայ հիմնաւոր ու օգտակար նպատակի մը կրթնած կը յառաջանայ, հակառակ պարագային այդ պիտի նմանի տաշեղի բոցին որ ակնթարթի մէջ կը բռնկի, կը բարձրանայ մինչև երկինք ու կը հանգչի խակոն, բուռ մը

մոխիր միայն թողլով աշխարհային փոփոխական հովերու քմահաճոյքին, որը կը ցրուէ կը տարտղնէ զայն և տեղն իսկ կը թողու անյայտ։

Մենք «Ֆէմինիզմ»ի ներկայ սանձարձակ ուղղութեան մէջ կնոջական ոտնակոխ եղած իրաւունքները ձեռք բերելու եռանդէն ու տենչէն աւելի՝ այր մարդէն վրէժ լուծելու, անոր դարաւոր անիրաւութիւնները իրեն յիշեցնելու, անոր անձնասիրութիւնը քաւել տալու անորոշ գուշէ և անգիտակից ձգտում մը կը տեսնենք։ Ֆէմինիզմը կ'ուզէ ֆիզիքական տարբերութիւնը միայն տեսնել առն և կնոջ մէջ, ուրիշ ոչինչ, ճիշտ է որ ատիկայ ալդարացի պահանջ մըն է. բայց խնդիր է թէ՝ իր այդ ձգտումներուն լիակատար յաղթանակը օգտակա՞ր ազդեցութիւն պիտի ունենայ ապագայ մարդկութեան վրայ թէ վնասակար. ահա այս կէտը պէտք է ըլլայ մեր ուշադրութեան գլխաւոր առարկան։

Անուրանալի ճշմարտութիւն մըն է թէ՝ այսօր այր մարդը բարոյապէս հազար անգամ աւելի ինկած է քան կին-մարդը, և ատոր պատճառը դարերէ ի վեր իր վայելած սանձարձակ ազատութիւնն է, եթէ կնոջ ալ իր այր ընկերոջ կողքին կեանքի ամեն ճամբաներուն մէջ հաւասարապէս քալելու իրաւունքները լիովին տրուած ըլլային, այսօր՝ ինչպէս ուրիշ անգամներ ալ ըսած ենք, կիրքերու կերի, անասնական բնազդներով ապրող մարդկութիւն մը գոյութիւն պիտի ունենար աշխարհի վրայ։

Սակայն բնութիւնը անհունապէս բարձր, անհունապէս իմաստուն, ընտրելով կինը իբրև վստահելի, ապահով պահապան մարդուն բանականութեանը, ինքը առաջինը մերժեր է անոր տալ նոյն հաւասար ազատութիւնը։

Ճակատագրելով կնոջ մայրութեան վիճակը, կաշկանդեր է նախ անոր այն ամեն ձգտումները՝ որոնք անբարոյական բնութիւն մը կը թաքցնեն. և որպէսզի այդ լուծը դարձնէ անոր քաղցը ու բեռը թեթեւ, և պաշտպանելու համար զայն պիղծ անկումներէ, անոր ծոցին ու գրկին մէջ դրեր է Զաւա՛կը...։

Զաւա՛կը... ու միեւնոյն ատեն բռնկցուցեր է կնոջ սրտին մէջ որդիական գերագոյն սէրը... միակ անփոփոխելին, այդ մահուան պէս հզօր սէրը, սրբագոյն սէրը, որոյ վրայ չի կրնար ազդել տարիներու ընթացքը, որոյ համար ո՛չ ե-

ըիտասարդութիւն կայ, ո՛չ ծերութիւն, ո՛չ գեղեցկութիւն, ո՛չ ոգեղութիւն. մայրութեան վիճակը սուրբ պահած է կինը. առանց ատոր նա դուցէ ինկած պիտի ըլլար այն գեղեցիկ պղծութիւններուն մէջ, ուր թաթախուած է այր մարդը։

Այդ անսահման, ըսեմ անբացատրելի սէրը սրտին մէջ, անբնական չէ՞ արդեօք կնոջ համար հեռեւիլ ուզելը կեանքի այն ամեն պայմաններուն, որոնց անձնատուր կըլլայ այր մարդը անտարբեր ու անհոգ, վասն զի զաւակի սէրը նո՛յն բարձրութեամբ ու նո՛յն խորութեամբ չէ՞ զարգացած անոր սրտին մէջ։

Աղգային բանաստեղծ մը սապէս կը բացատրէ որդիական սիրոյ զգացման տարբերութիւնը հօր և մօր միջև. «Երբ որդին մեռնի՝ հայրը կուլայ ծանրոթախիծ. բայց ժամանակը անոր այս վիշտը ճիւս վիշտերէն աւելի չի յարգեր. բայց տարիներէ ետքը տե՛ս մօրը սիրտը, դեռ նոյն վէրքը արիւնահոս է։»

Անասուններուն մէջն ալ նոյն կարգը գրած է բնութիւնը, ո՞վ է որ կը հակէ ձագուկներուն վրայ, ո՞վ է որ կը պաշտպանէ զանոնք քաջաբար թշնամիներու դէմ, ո՞վ է որ սիրով ու գուրգուրանքով կը դիւցնէ զանոնք իր կաթով. չէ՞ որ էգն է դարձեալ . . .։

Մարդկութեան մէջ գիտակցութիւնը շա՛տ աւելի զարգացած է, և հայրը բաղդատմամբ մօր՝ թէպէտ անհոգ ու անտարբեր, և սակայն որոշ սէր, որոշ խնամք կը տածէ իր զաւկին համար։ Իսկ անասուններուն մէջ այդ չկայ, արուն արդէն մուցած անոնք՝ որ իր ալ ձագերն են, կը հեռանայ ամեն հոգ թողլով էգին վրայ։

Կը հարցնենք, ինչպէ՞ս և որո՞ւ թողուլ զաւակը, սրտի այդ հատորը, որուն համար կրած զրկանքը մայր մը կը դաւանի վայելք, և ընել ա՛յն ինչ որ իրաւունքը կը թոյլատրէ մեզի . . .։

Օրինակի համար կրնա՞նք թողուլ զաւակը անկիւն մը, երեսի վրայ, կամ յանձնել զայն օտար վարձկան ձեռքերու, ու երթալ հո՛ն ուր կը կոչէ մեզ իրաւունքը, կանգնիլ հո՛ն ուր կեցած է այր մարդը, և ընել ա՛յն ինչ որ կ՚ընէ ան. մեր սիրտը արդեօք կը թոյլատրէ՞ մեզ այդ բանը . . . չէ՛ անշուշտ, և ամենէն թունդ փէմինիստները այսօր, նախա-

մեծար կը համարին գուցէ գտնել իրենց ամբողջ դաւանանքը, քա՛ն իրենց գաւկին մագերուն մէկ թելէն անցնիլ։

Նոյն իսկ վայրկեան մը ենթադրենք թէ՝ իրաւունքէ դուրս բան մը ճանչնալ չուզեն, ուրանան գաւակը, ատիկայ հրէշային բան մը կըլլայ որ զգուանքէ ուրիշ բան չկրնար առթել։ Բնութիւնը լաւ է կարգադրեր է ամեն զգացումու եղնել բնութեան այս խմաստուն կարգադրութիւններուն հակառակ պահանջքներ ունենալը՝ նախատել է զայն, թքնե՞լ է անոր երեսին . . .։

Ենթադրենք դարձեալ պահ մը որ «Ֆէմինիզմ»ը կը յաղթանակէ շուտով . վեսակ դուրս ուրիշ ի՞նչ զգուա կայ ատար մէջ մարդկութեան համար։

Եղնելով բնական ճամբէն դուրս, մեր սուրբ ու փափուկ պաշտօնը առնելով ոտքի տակ, նեսելով մեր վզէն գաւակին մաքին ու սրտին վրայ հակելու բնական պարտականութիւնը, ամբարտաւանօրէն փգքանելով մեր անձնասիրութեան գոհացումովը և յղփանալով այն կարգ մը հաճոյքներուն մէջ, որոնք մեզի ծգելու ու մեր մաքրութիւնը արատաւորելու բնութիւնը ունին, այդ բոլորին համար կըսեմ, նախ պիտի առժէ գաւակը, անմեղը, որուն գոնէ կեանք տալու չէինք, և յետոյ ապագայ սերունդներուն բարոյական փճացումը մեր վրայ պիտի ծանրանայ, վասնզի «Մայրերն են որ ազգեր կուսան։»

Մենք այնքան բարձր ըլլալու ենք որ գիտնալու ենք զոհել մեր նոյն իսկ կարգ մը խա՛ որ իրաւունքներն ալ մեծ նպատակին, այսինքն սերունդի ազնուացման ու բարձրացման համար։ Ուրիշ առթիւ ըսած ենք թէ մօր ազդեցութիւնը անջնջելիօրէն կը մնայ ազգուն հոգւոյն ու սրտին վրայ, գիտնա՛նք ուրեմն միշտ լաւը, գեղեցիկը, օգտակարը ներշնչել անոնց։ Մտածե՛նք թէ՝ ամբողջ սերունդներ մեզի պիտի պարտին իրենց մեծութիւնը . և այս գիտակցութիւնը շատ մը ազատութիւններէ ու վայելքներէ աւելի մեզ չի՞ վարձատրեր, չ՚ե՞րջանկացներ արդեօք։

Մենք Հայ կանայքս, համեմատաբար, ամենէն աւելի զրկանք ու բռնութիւն տեսեր ենք։ Քաղաքակրթութիւնը հազիւ այսօր քիչ մը թուլացուցած է մեր ստրկութեան շղթաները։ Իսկ գաւառացի խեղճուկ հայուհին դեռ նոյն զրկանքներուն տակ կը հնձէ։

Այսու հանդերձ, այդ պատճառ մը չէ որ մե՛նք բոլորովին անձնատուր ըլլանք «ֆէմինիզմ»ի ուղղութեան, դաւանելով զայն իբրև մեր ազատարարը, մեր բռնաբարուած իրաւունքներուն փրկիչը . . . : Ատիկայ կորստաբեր կ՚ըլլայ մեր արդէն խախուտ ցեղին : Կամովին զոհելով մեր իրաւունքներէն շատ մը բաներ, պահպանելու համար ընտանիքը, սերունդը, ազգը՝ գիտնանք միեւնոյն ժամանակ քաջալերար պաշտպանել ա՛յն ինչ որ անհրաժեշտ է ապրելու համար իբրև մարդ, իբրև բանաւոր էակ . . . :

Այլ մարդուն համահաւասար ազատութիւն վայելել՝ չ՚ըլլայ թող մեր միակ նպատակը, ատիկայ շատ հասարակ ձրգտում մըն է, որը ծայրայեղ անձնասիրութիւն կը բուրէ լոկ . այլ մեր սկզբունքը թող ըլլայ գլխաւորաբար ազգութեան բարձրացումը, մեր խեղճ ազգութեան որուն կրապառնայ միշտ աւելի՛ մեծին, աւելի հզօրին մէջ ձուլուելու ահարկու վտանգը . . . :

Գիտնանք որ գաղափարի մը կամ սկզբունքի մը կոխը երբէ՛ք կրնայ միշտ միեւնոյն թափով յառաջ մղուիլ՝ եթէ սահմանեալ բարձր տեղ մը, ազնիւ նպատակ մը չունենայ իրեն յենակէտ, ուստի մեր յոլթանակը ապահով է, վտանգի մեր սկզբունքը վեհ՝ ու նպատակը ազնիւ պիտի ըլլայ :

Զսիրաւորենք մեր պահանջները, զգացնելով սակայն թէ՝ գիտակցութեամբ, և մեր իրաւունքներուն հաւասարութիւնը լիովին ըմբռնելով՝ ետ կը քաշուինք : Բայց ուժգին մաքառինք այն կարգ մը նախապաշարումներուն դէմ, որոնք մեզի դժբաղդացուցեր են դարերէ ի վեր և ցայսօր կրապառնան մեր կեանքի բաղդաւորութեան :

Պահանջենք որ իրաւունք ունենանք սիրելու բացարձակ և համարձակ, իրաւունք ունենանք ընտրելու առա՛նց որ և է թելադրանքի ու ատիպումի, ազա՛տ կամքով մեր կեանքի ընկեր այն՝ որուն սրտին հետ կապուած է և մեր սիրտը :

Իրաւունք ունենանք ազատ խօսելու և համարձակ կարծիք յայտնելու այն ամէն խնդիրներու մասին՝ որոնք կը շօշափեն հասարակական կեանքը, և պահանջենք որ մեր ալ կարծիքները նկատողութեան առնուին ու գաղափարները յարգուին :

Ազա՛տ ըլլանք մեր ընտանեկան կեանքին մէջ, ազա՛տ և անկախ մեր գործելու ու մտածելու եղանակին մէջ, ազատ հետեւելու ո՛եւէ գաղափարի կամ մեզ համար սիրելի մի նպատակի, մէկ խօսքով ազա՛տ այն ամեն բանի մէջ որը մաքուր և նախապաշարումներէ բոլորովին ազատ բարոյական մը կը թոյլատրէ ու ո՛եւէ կերպով չի վնասեր սերունդի ազնուացման գործին։

Այդ սահմանէն անդին չ՝անցնինք. կամովին ու սիրով մնանք մեր արբաղան դերին մէջ, յիշելով թէ՝ ամենէն բարձրը գոհունակութիւնը, ամենէն մեծ երջանկութիւնը պարտականութեան անթերի կատարման մէջ կը կայանայ։

Արցունքներ

ՀԱՅԿ ՄԱՐՏԻՆԵԱՆԻ Ցիշատակին

«ՄԻՆԱՅՆՈՒԹԻՒՆ ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է»:

Այս յոռետես ճշմարտութիւնը կընդունիմ կեանքի վայելչներով յզփացող մեծատունին, սին պերճութիւններու և յիմար մեծութիւններու հետեւէ հետ վազող ունայնամիտին, աշխարհային փառքի և իշխանութեան զարգացեալ հաւատ թաղաղարդ գլուխներուն համար, որովհետեւ անոնք երկնքի մէջ տեղ չունին, կըսէ Քրիստոս:

Իսկ քեզի համար, Հա՛յկ, դուն որ քու քանի չորս գարուններդ տուիր բոլորանուէր ազիտութեան և խաւարի դէմ Էջմիածնի մղած դիւցազնական պայքարին, դո՛ւն որ քու մաքուր և պայծառ կեանքիդ իրրև դերազանց նշանաբան ընտրեցիր քաջել միշտ դէպի Լոյսը, դէպի աւելի՛ Լոյսը, դո՛ւն որ տարամերժօրէն մտքի ու սրտի բարձրացման ու զարգացման հաւատացիր իրրև կեանքի միակ իսկական նպատակը, ո՛չ... քեզի համար այս ճշմարտութիւնը չեմ ընդունիր... սիրտս կըմբոստանայ ատոր դէմ. այլապէս պէտք է ուրանամ իմ Աստուծս, պէտք է ուրանամ Հոգւոյ անմահութեան հաւատքը, անդր-գերեզմանային կեանքի մը գոյութիւնը, այլապէս պէտք է որ Քրիստոնեայ չըլլամ ալ ես...:

Քեզի համար չեմ կրնար ընդունիլ թէ՝ մեռար. այլ կ'ըսեմ, դուն կը քնանաս և օր մը պիտի արթննաս, նորէն մը-ատածելու. նորէ՛ն գործելու և նորէ՛ն ժպտելու համար մեզի, ո՞վ սիրելի՞ սիրելի՞ բարեկա՛մ . . . :

Չէի կրնար երեւակայել թէ՝ քանի մը օր առաջ «Խաղաղութեան խօսքերս» գրած ատեն, նոյն այդ խօսքերը կրկնելու պէտք պիտի զգայի այսքան նաև ա՛նոնց, որ քեզ սիրեցին. քու սիրեցեալ դժբաղդ եղբօրդ, քու պապրոցական սիրատուն ընկերներուդ և ուսուցիչներուդ, քու պաշտօնակից մտերիմներուդ և Սնոր ալ որը երէկ իրիկուն քու մարմնոյդ և հոգւոյդ հանգստեանը համար Հակուտի սրտաբուղխ աղօթքներուն նախագահեց և հոգեւարք ճակտոդ վերջին անգամ օրհնեց ու զբգուեց, և որուն սիրտը, գիտեմ, ինչքա՞ն կարիւնի հիմա մերիններուն հետ այսքա՛ն արժանաւոր և այսքա՛ն խոստմնալից կեանքիդ վաղահաս, պիտի ըսեմ, եղերական վախճանին համար . . . :

Ափսո՜ս . . . այդ «Խաղաղութեան խօսքեր»ը ինքզինքիս ալ պէտք է կրկնեմ հիմա, ե՛ս որ քեզ ճանչնալու ուրախութի՛ւնը ունեցայ շուտով զգչալու համար սակայն թէ ինչո՞ւ ճանչցայ, և թէ լուսագոյն չէ՞ր չի տեսնել, չի ճանչնալ բնաւ կատարեալը, պարկեշտը, ազնուագոյնը, քանի որ այսքա՛ն շուտով դիակ մը պիտի մնար անորմէ մեր աչքերուն առջև և ցաւագին յիշատակ մը մեր սրտերուն մէջ :

Այս է երեւի ճակատագիրը վճիտ ու պայծառ կեանքին :

Ատուածային Սէրը չուզեր որ հոս, այս ողբմելի աշխարհին մէջ, ապերախտութիւնը, կեղծիքը, ձանձրոյթը քաշկռտէ երկար ատեններ ընտրեալ հոգին և կը կանչէ զանի իր գիրկը, զայն հանգստացնելու համար երանաւէտ և անվրդով խաղաղութեան մէջ :

Եւ հիմայ որ բաժնուած մահկանացու մարմինէդ հոգիդ կը թռչի դէպի երկնային կայաններրը, եկո՛ւր Հա՛յկ, եկո՛ւր մեր մօտը, ներշնչէ՛ մեզի, միխիթարէ՛ մեզի, ըսէ՛ մեզի թէ ալ հանգիստ ես ու երջանիկ. թէ գտար իրական ճշմարտութիւնը զոր կը փնտռէիր, լուսաւոր գիտութիւնը՝ որուն կը պապակէիր, և անխարդախ Սէրը՝ որուն կը տենչայիր : Ըսէ՛ մեզի թէ՝ այս բաժանումը ժամանակաւոր է . և թէ ինչպէս որ պիտի բաժնուէինք օր մը անխուսափելի օտար քաղաք մը

մեկնելու համար իւրաքանչիւրս մօտաւոր ատենի մը մէջ զիրար տեսնելու յոյսով, այնպէս և ա՛յս ալ ճամբորդութիւն մըն է դէպի աւելի՛ երջանիկ, աւելի՛ խաղաղ, և աւելի՛ գեղեցիկ աշխարհ մը, ուր մեզ կանխեցիր և ուր մենք ալ պիտի գանք օր մը քեզ գտնելու անպատճառ։

Այս խորունկ հաւատքով զօրացած ե՛ս կ'ըսեմ քեզի արցունքներուս մէջէն. Երթաս բարո՛վ, Հա՛յկ, Ցտեսութիւն։

ՀԻՆ ՏԱՐԻՆ ԵՒ ՆՈՐ ՏԱՐԻՆ

[ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ]

(**Հին Տարին** *ծերուկ, կորաքամակ, տքալով կը յառաջանայ*).

— ԱՍՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԵԱՆ *ժամը հնչեց . երեք հարիւր վաթսուն և հինգ օրերու տակ կքած, կորաքամակ, գերեզմանիս դրանն առջև գոգդոշուն, ա՛հա՝ կուգամ իմ գործունէութեանս համարը տալու աշխարհի . ներողամիտ եղի՛ք, ո՛վ ժողովուրդներ . . . :*

Եղաւ ժամանակ մը, ուր գեռատի և գեղեցիկ էի, կեանքով ու եռանդով լեցուն . իտէալներ ունէի, ժողովուրդներու երջանկութեան համար ծրագիրներ մտքիս մէջ կը մշակէի, ես ինծի կը խոստանայի իմ կեանքիս շրջանին մէջ կատարել գործը ժողովուրդներու յառաջդիմութեան . . . : Կրցի՞ ծրագիրներս իրագործել, կրցի՞ իտէալներուս թռիչը հասցնել մինչև ցանկալի նպատակը . . . ո՛վ Աստուած իմ, որքա՞ն շուտ կ'անցնի ժամանակը, և ինչքան դանդաղ յառաջ կ'երթայ գործունէութիւնը . փափաքներ ունիս, ծրագիրներ ունիս, հազիւ կը սկսիս զանոնք գործադրութեան վիճակի մէջ դնելու, ահա՛ մահը կուգայ անողոք, կը պրկէ թեւերդ ու կ'ըսէ . «ա՛լ բաւական է, եկո՛ւր գիրկս»,—«օ՜հ սպասէ՛ կը պաղաչի՛մ, դեռ գործս չի վերջացուցի, դեռ պարտականութիւնս չի կատարեցի,» —«Քալէ՛, քալէ՛ . . .» —«Օ՜հ թո՛ղ օր մը, օր մը միայն, սա՛ թշուառին արցունքն ալ սրբեմ, սա վիշտն ալ սփոփեմ,» —«Քալէ՛, քալէ՛ . . .» :

Եւ ահա՛ կը քաշէ զքեզ սիրած ասպարէզէդ դուրս, կը բաժնէ պաշտած գործէդ . . . : (Կը մտածէ) :

Երկրէ երկիր պտտեցայ : Այս ծերացած աչքերս շատ բաներ տեսան . մեծ վիշտեր ինչպէս նաև մե՛ծ ուրախութիւններ, մե՛ծ առաքինութիւններ ինչպէս նաև գեղեցիկ մոլութիւններ, մէկ կողմէն արցունք միւս կողմէն ժպիտ, մէկ կողմէն տառապանք միւս կողմէն վայելք . օ՜ շատ բաներ տեսան իմ այս ծերացած աչքերս . . . տեսան թէ՝ ինչպէս՝ մոլութիւնը յաղթանակեց առաքինութեան, թէ ինչպէս արցունքը խեղդեց ժպիտը, և սակայն առաքինին չի յուսահատեցաւ և լացողը դարձեալ ժպտեցաւ . . . : Ո՞վ ահաւոր գաղտնիք կեանքին, ո՞վ պիտի մերկացնէ զքեզ երբէք մեր աչքերուն առջեւ . . . ո՞վ երբէք պիտի կարենայ լուծել զքեզ խորհրդաւո՛ր հանելուկ . . . : (Մտածկոտ) :

Երկինք ինծի շնորհեր էր ամենակարողութիւն, թէպէտ քիչ ատենուան համար, աւա՜ղ . . . ամենց օգտակար եղայ կարծեմ, և անոնք կոչուեցան բաղդին չփացած զաւակները, եղաւ որ շատերէն անտարբերութեամբ երես դարձուցի և անոնք անբաղդ կոչուեցան . . . պէ՛տք է խոստովանիմ հոս, գերեզմանիս առջև իմ մեղքերս, որոնք մարդկային եղան, և գուցէ անկեղծութեանս մէջ ներողամտութիւն գտնեմ : (Երկու ձեռքերը միացնելով) Ինծի մօտեցողներուն մէջ ընտրութիւն ըրի . անոնց՝ որոց համակրեցայ, անոնց որոնք խունկ ծխեցին իմ երիտասարդութեանս և գեղեցկութեանս առջև, անոնց՝ որ փառաբանեցին, գովեցին զիս, անոնց շուայլօրէն թարիքներս շնորհեցի . իսկ անոնք որ վէճ օրէն մօտեցան և իրրև իրենց օրինաւոր բաժինը պահանջեցին ինձմէ աշխարհի տրուած բարիքներէս, անոնք որ վերջապէս զիս շողոքորթել չգիտցան, օ՜ անոնց դէմ կարծեմ անգութ եղայ . . . : (Երկու ձեռքերովը երեսը կը ծածկէ, ֆիչ մը ետքը զղուխը բարձրացնելով, աչքի եռանդով) բայց և այնպէս քաղաքակրթութեան զարկ տուի . գիւտերը կատարելագործելու ետեւէ եղայ, չէ՞ք տեսներ օդանաւերը . իմ օրովս մարդիկ թռչուններու պէս ահա կսկսին թռչիլ երկնից երեսը . . . գրականութիւնը ծաղկեցուցի, վարժարանները շէնցուցի, գեղեցիկը սիրեցի, ջանացի ժողովուրդներու նիւթական վիճակը բարւոքելու : Մարդի՛կ որոնք աղքատ ու թշուառ էին, իմ շնորհիս հարուստ ու երջանիկ եղան, հիւանդներ՝ որոնք՝ անբուժելի էին, այսօր

իմ շնորհիւս բուժուեցան. և սակայն . . . խիղճս կը տառապի. արդեօք առաքելութիւնը՝ զոր Աստուած ինծի վստահեր էր, արժանաւորապէս կատարեցի՞ . . . :

(Նոր Տարին գեղեցիկ ու մատաղ ճերմակներ հագուած ձիթենիի ճիւղ մը ձեռքը եւ դալիւռէ պսակ ճակտին կը մօտենայ, եւ ձեռքը երկնցնելով) .

— Կեցի՛ր . . . առաքելութիւնը, որուն համար Աստուած տուած է մեզ ամենակարողութիւն, աւելի՛ սուրբ, աւելի՛ վսեմ նպատակ մը ունի : Անիկայ տուած է մեզի Սիրոյ և խաղաղութեան առաքելութիւնը . ի՞նչ փոյթ թէ մարդիկ առաւել կամ նուազ մտաւորական յառաջդիմութիւն ունեցան . ի՞նչ փոյթ թէ օդին մէջ կը թռչին, կամ ցամաքի վրայ կը սուրան . ի՞նչ փոյթ թէ հարուստ են և երջանիկ իրենց հասկըցած կերպով . ի՞նչ փոյթ ասանք եթէ զիրար չեն սիրեր, եթէ չի թագաւորեր խաղաղութիւնը ազգերու և ժողովուրդներու վրայ . ի՞նչ փոյթ մանաւորներու երջանկութիւնը բաղդատմամբ ընդհանուրի թշուառութեան . . . ըսէ՛ ինծի, վերցուցի՞ր պատերազմները, վերցուցի՞ր կռիւը, քինախնդիր վէճերը, երկպառակութիւնը, զոր եղբայրը եղբօրմէն, ընկերը ընկերոջմէն, մարդը մարդէն կը բաժնեն, միացուցի՞ր վերջապէս իրարու ազգերը և ժողովուրդները իրարմէ բաժնող անդունդները . Սէրը, Եղբայրութիւնը, Հաւասարութիւնը տիրապետել տուի՞ր աշխարհի վրայ . պարտքդ կատարեցիր այն ատեն : Աստուած տալով մեզ ամենակարողութիւն ժամանակի մը համար ազգերու և ժողովուրդներու ճակատագրին վրայ, ահաւոր հաշիւ ունի մեզնէ պահանջելիք, երբ մեր շրջանը կատարելէ ետքը՝ պիտէ երթանք իրեն ներկայանալու . և այն ատեն երբ մեր առաքելութեան մարդը չենք եղեր, այն ատեն պիտի ըսէ մեզի . «Ծառայ չար և անհաւատարիմ, ի՞նչ ըրիր տիրոջդ վստահութիւնն ու հաւատքը . . .»:

Այսօր մարդիկ նոյ՞ն վայրենի են դժբաղդաբար որչափ առաջ . քաղաքակրթութիւնը միայն նրբացուցած է իրենց վայրագ բնազդները, ա՛յնչափ . դարձեա՛լ պատերազմներ, դարձեա՛լ սպանութիւններ, դարձեա՛լ արիւն դարձեալ արցունք, դարձեա՛լ կռիւ դարձեա՛լ անհամաձայնութիւն : (Աղեղի եռանկիով) Օ՜, ես պիտի նախընտրեմ Սէրը՝ որ կեանքը կը բանաստեղծէ, խաղաղութիւնը՝ որ ցամքած հոգիները կը զովա-

ցընէ ու ցաւը կամոքէ, անոնց յաղթանակին պիտի ծառայեցնեմ գլխաւորաբար Աստուծոյ ինձ տուած կարողութիւնները։ Կուզեմ որ համայն աշխարհ խաղաղութեան ու Սիրոյ դրօշին տակ ամփոփուած իրապէս երջանիկ անցնէ այն մի քանի տարիները՝ զոր Արարիչը շնորհեր է մարդոց, մաքրելու համար իրենց անմահ հոգիները աշխարհային փորձութեանց բովին մէջ, որպէսզի օր մը արժանի ըլլան իրենց արարչին, ու երթան հանգչելու վերջապէս հոգիներու երջանիկ կայանը, հոն վայելելու համար Սիրոյ, խաղաղութեան հաւասարութեան իտէալին սքանչելի և ամենակատարեալ մարմնացումը։ Քիչ մը առաջ կը հարցնէիր, «ո՞վ ահաւոր գաղտնիք կեանքին, ո՞վ պիտի մերկացնէ զքեզ մեր աչքերուն առջև։» Կեանքի գաղտնիքը Սիրոյ մէջ է, ո՞վ մայր, ո՞վ որ շատ կը սիրէ, անիկայ լուծած է կեանքի հանելուկը . . .։

(Ծերունին որ խոր ղողթեամբ կը ղսէր, ոտքի կ'ելլէ եւ ծանր ծանր մօտենալով իր մեկ ձեռքը կը դնէ Նոր Տարիին ուսին վրայ) — Ապրի՛ս, զաւակս, երնեկ քեզի, դուն ինձմէ լաւ ըմբռներ ես առաքելութեանդ նպատակը . դուն որ այնքան շատ կը սիրես ու պիտի սիրես աղօթէ՛ ինծի համար, որպէսզի Արարիչը՝ որուն կերթամ ահա ներկայանալու, գթած աչքերով նայի իմ վրայ, մնաս բարեաւ, զաւա՛կս, աղօթէ՛ ինծի համար։

(Ծերունին ծանր ծանր կը հեռանայ, մինչ Նոր Տարին ծունկի վրայ կ'իջնէ ձեռքերը միացուցած եւ ղոկ կ'աղօթէ անոր նայելով)։

ԳՈՒԹ, ՍԷՐ, ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ

[ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ]

ԳՈՒԹ — Տեսէ՛ք, օ՜հ տեսէ՛ք սա՛ թշուառները . . . անոնց երեսները ինչքա՜ն ա՛ժգոյն են ու մահատիպ. աչքերնին փոսը ինկած. իրենց պատռտած հագուստներուն ճեղքուածքներէն կերեւին ահա իրենց կմախացեալ թիկունքն ու կուրծքը . . . գթացէ՛ք անոնց:

Տեսէ՛ք սա՛ մանուկները . դալկահար ատուերներ որ կը թափառին ճոխ ապարանքներու շուրջը և զրկանքէ, անօթութենէ նուաղած աչքերով անյապօրէն ճոխ սեղանները կը դիտեն:

Անոնք ամե՛նքը, անոնք ամե՛նքը վաղը պիտի իյնան թշուառութենէ ու զրկանքէ, գթացէ՛ք անոնց:

Սա՛ աշխատող ժողովուրդները որ հո՛ն խորթացող մեքենաներուն տակ արիւն քրտինք կը թափեն, ան՛ոնք և. ա՛ն՛ոնց զաւակները վաղը պիտի իյնան ճամբաներուն անկիւնը և ատոնց դիակները շատ շատերուն բաղդաւորութեան ու փառքին պատուանդանը պիտի ըլլան . . . :

Ա՛նոնց արիւնը, ա՛նոնց միսը պէտք է այդ շատերուն կենսունակութեանը համար . ա՛նոնք սանդուխներն են, որոնց վրայէն կը բարձրանան մարդիկ պերճութեան և փարթամութեան գագաթնակէտը: Գթացէ՛ք անոնց:

Մի՛ արհամարհէ՛ք այդ թշուառները, ո՞վ դուք, զոր բաղդը չփայլեցուցած է իր լիաբուռն շնորհներով . . . Մի՛ ըսէք

երբէք. «միթէ մենք հաւասա՞ր ենք այդ մուրացիկներու, տանջուածներու և ինկածներու ամբոխին»։ Մի՛ ըսէ՛ք երբէք. «մեր պերճաշուք ապարանքը, մեր ազնուական անձը ի՞նչ առնչութիւն ունի անոնց խարխլած խրճիթին և այլանդակ կերպարանքներուն հետ.» «մի՛ մտածէք երբէք «միթէ անոնք մեր եղբայրները կրնա՞ն ըլլալ»։

Լռեցէ՛ք լռեցէ՛ք, չըլլայ որ արհամարհանօք խօսիք, կամ այնպէս վերաբերուիք դէպի թշուառը. ո՞վ մահկանացուներ. աւելի յառաջ չերթաք. չըլլա՛յ որ Արարիչը կարդայ ձեր մտքին խորը այդ ամբարտաւան մտածումները։

Ի՞նչ երեսով պիտի ներկայանաք իրեն, երբ աշխարհի մէջ ձեր պանդխտութեան օրերը լրացնելէ ետքը՝ երթաք յաւիտենական հայրենիքը։

Անիկա պիտի հարցնէ ձեզի. «Մարաւի էի. չուր տուի՞ք ինծի.. անօթի էի. կշտացուցի՞ք զիս... հիւանդ էի. տեսա՞ք զիս.» ի՞նչ պիտի պատասխանէք անոր այդ ահաւոր վայրկեանին, խեղճ մարդիկ, որ մի քանի աւուր յաջողութեան համար կը յոխորտաք, օ՜ կը սոսկամ ձեզի համար և ականջիս կը հնչէ Աստուածային ձայնը. «Ճշմարիտ կ՚ըսեմ. ձեզի ալ չեմ ճանչնար...» Գթացէ՛ք... գթացէ՛ք.. եա՛ որ գթութիւնն եմ. կ՚ապերսեմ ձեզի գթացէ՛ք։

Սէր.— Եւ ի՞նչ քաղցր բան կայ աւելի քան սիրելը Աստուծոյ ստեղծած այդ խեղճ էակները, որոնք ոչ մէկ բանով պակաս չեն ուրիշներէն և զորս շատ անգամ մարդիկ կը զրկեն, կը չարչարեն, կը ապտնեն իրենց ժամանակաւոր շահուն ու պերճանքին համար, և այդ բոլորին պատասխանատուն՝ բաղդը կը բռնեն... ի՞նչ է բաղդը սակայն. ո՞վ մարդիկ. միթէ աշխարհի վրայ բաղդը գոյութիւն ու նի՞... : Մարդն է որ մարդը կը դժբաղդացնէ, կը զրկէ, կը թշուառացնէ, մարդիկ են պատասխանատու այդ բիւրաւոր ժողովուրդներուն, որոնք իրենց ստեղծած դժոխքին մէջ կը տապկուին... : Անոնց արիւնը կը բողոքէ երկրիս վրայէն։ «Կայէ՛ն պիտի հարցնէ ձեզի Ամենակալը, ինչ ըրիր Աբէլ եղբօրդ»։ Ի՞նչ պիտի պատասխանէք, թշուառ մարդիկ. դուք պարտական էիք այդ զրկուածներուն տալ ձեր աւելորդէն, դու՛ք անոնց որբերուն հայրը պիտի ըլլայիք, անոնց հիւանդներուն պահապան հրեշտակը։

Վա՜յ ձեզի, եթէ անոնց անօթութեան ու զրկանքին առ-ջև ձեր յափրացումին ու զեղխութեան վայրագ տեսարանը պարզեցիք և զանոնք տանջեցիք. վա՜յ ձեզի, եթէ զանոնք չսիրեցիք։

Սէր, Եղբայրութիւն, Հաւասարութիւն ա՛յս պիտի ըլլայ մարդկութեան նշանաբանը, մոռցա՞ք միթէ որ Աստուած մը շատ սիրելուն համար մեռաւ։ Սիրեցէ՛ք զանոնք։

Ով դուք, որ չուզեցիք ձեր հողեղէն մարմինը անոնց հողեղէն մարմնոյն հետ համեմատութեան դնել և մոռցաք ձեր անմահ հոգին և անոնց անմահ հոգին։ Ի՞նչ պիտի ըլլայիք եթէ կարենայիք ձեր հողեղէն աչքերով տեսնել անոնց հոգիներուն զմայլելի գեղեցկութիւնը... օ՜հ պիտի սասկայիք ձերինէն որ ահռելիօրէն տգեղ ու այլանդակ պիտի երեւէր ձեզի։

Ե՛ս որ Սէրն եմ, կ՚ըսեմ ձեզի, սիրեցէ՛ք թշուառ-ները։

ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ.— Շատ անգամ արբայարներու մէջ կը տօնեն յիշատակը անոնց՝ որոնք գթացին, սիրեցին և ողորմեցան։ Անոնք ոմեն բան ունէին, փառք, պատիւ, պերճանք բայց ըմբռնեցին թէ՝ այդ բոլորը իրենց տրուած էր երկինքէն ոչ իրենց համար միայն, այլ որպէսզի ման ու բաժին հանեն իրենց տառապեալ եղբայրներուն։

Անոնք գուրգուրանօք սիրեցին տանջուածները, ժողվեցին զանոնք իրենց հիմնած նուիրական յարկերուն տակ և անոնց հայրը, բարեկամը, տէրն ու պաշտպանը եղան և անոնք հիմա վերը արդարներու հայրենիքը կը հրճուին հոգեկան անճառ ուրախութեամբ տեսնելով իրենց թողած մարդասիրական մեծ գործերը ծլած ու ծաղկած աշխարհի վրայ։

Իսկ դուք որ այնքա՞ն կապուեր էք անցաւոր պերճանքին ի՞նչ պիտի տանիք ձեր հետը գերեզման, ո՞վ մահկանացուներ, որո՞ւ համար կը դիզէք այդ ոսկիները, որո՞ւ համար կը կառուցանէք այդ շքեղ պալատները. ինչո՞վ պիտի հրճուին ձեր հոգիները յաւիտենական կեանքին մէջ, ի՞նչ պիտի պատասխանէք հոգիներուն որոնք ձեզ պիտի հարցնեն թէ՝ ի՞նչ գործեցիք աշխարհի վրայ, ի՞նչպէս պիտի տանիք անոնց գերագոյն արհամարհանքը։

Բացէ՛ք ձեր աչքերը ճշմարտութեան լոյսին քանի դեռ ժամանակ կայ. արթնցէ՛ք, քանի դեռ ուշ չէ։

Ես՝ որ Ողորմութիւնն եմ կ՚ըսեմ ձեզի ողորմեցէ՛ք։

ԳՈՒԹ.— Գթալ, Սիրել, Ողորմիլ, ահաւասի՛կ կեանքը.

ՍԷՐ.— Գթալ, Սիրել, Ողորմիլ, ահաւասիկ կեանքի նպատակը.

ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ.— Գթալ, Սիրել, Ողորմիլ, ահաւասիկ կեանքի իմաստը։

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՇԻՈՅ ՄԸ ԽՕՍՔԵՐԸ

ՄԻ՛ ՎՀԱՏԻՔ

Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ Սանուհիներուն

ԱՅԼԸ կարծուի, տղաքս, թէ՝ «Աշխարհ» բառը, շինուած է «Աշխարել» բայէն, որը կը նշանակէ շաղ, ըսել է մեզ որ կ՚ապրինք աշխարհի մէջ, մեզի ճակատագրուած է լալ յաճախ . . . :

Մանուկը երբ կը ծնի, իր առաջի աղաղակը լաց է, իր առաջին տառապանքը՝ մօրը կաթէն կտրուելուն տառապանքն է, իր առաջին ցաւը՝ մօրը գրկէն բաժնուելով վարժարան երթալու ցաւն է . թէև ետքը՝ այդ վարժարանը պիտի ըլլայ իր ամենէն շատ սիրած յարկը, որմէ բաժնուիլն ալ իրեն պիտի պատճառէ մեծագոյն վիշտը :

Վերջապէս, տղաքս, քանի կեանքի մէջ կը յառաջանանք , մեր տարիքին, մեր ապրած միջավայրին ու մեր կեանքի պայմաններուն համեմատութեամբն ալ կ՚աւելնան մեր ցաւերն ու տառապանքները :

Ուրախութեան, երջանկութեան օրերը խուսափուկ ատուպի մը պէս կը թռչին, իրենց ետեւէն թողլով հրեղէն հետք մը, որը յիշատակն է և որուն մէջ մխիթարութիւն կը փնտռենք երբ նոր ցաւեր մեր սրտերը կը ըզկտեն :

Չէի ուզեր այսպէս խօսելով կանուխէն տխրեցնել ձեր

անհոգ ու զուարթ սրտերը, սակայն, տղաքս, պէտք է դուք հիմակուց գիտնաք թէ՝ կեանքը միշտ այսօրուայ կեանքը չի մնար և թէ՝ դուք այժմէն պիտի պատրաստուիք արի ըլլալու և կեանքի կռիւին համար զինուելու։

Կեանքի կռիւը ահաւոր է, անիկա լեցուն է է՛ն դառն անակնկալներով, է՛ն աներեւակայելի տանջանքներով, և ահա ատոնց դիմանալու, ատոնց դէմ կռուելու համար պէտք է որ դուք ըլլաք խիզախ, հպարտ և անվեհեր։

Անոնք որ կեանքի ահարկու կռիւէն դուրս կուգան յաղթական առանց բան մը վրայ տալու իրենց բարոյական կորովէն, իրենց կամքի ու սրտի տիրական ուժերէն, ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, անոնք շատ աւելի մեծ են, շատ աւելի հերոսական, քան. պատերազմի դաշտին վրայ դիւցազնօրէն մեռնող կըտրիճները, որովհետև, տղաքս, երբեմն ամենէն վախկոտ ու տկար մարդն իսկ կրնայ կուռոյ բաց դաշտին վրայ պարապանքերու և պայմաններու գերազանցութեան տակ վայրկենական մահ մը ընդգրկել քաջարար, բայց ամեն օր տանջուիլ, ամեն օր դառնանալ, ամեն օր կռուիլ, և այդ յարատև կռիւէն դուրս գալ միշտ մաքուր և ազնուական սրտով, միշտ մեծ և վեհանձն հոգիով, ահա ատիկա ճշմարտապէս ընտրեալներու յատուկ գործ է. և անոնք որ այդ կեանքը կ՚ապրին անոնք ընտրեալ հոգիներ են, որոնք արժանի են մեր ամենուս յարգանքին ու պաշտամունքին։

Եւ քանի քանի նմանօրինակ հերոսներ ունինք արդեօք, որոնք այսօր գուցէ անծանօթ կը մնան, կամ յաւիտենական քունը կը քնանան աննշան անկիւն մը, հասարակաց փոսին մէջ, առանց իրրև յիշատակարան գոնէ պարզ խաչքար մը ունենալու իրենց վրայ, ափսո՜ս . . .։

Մի՛ վհատիք սակայն։

Մի՛ վհատիք եթէ որբ էք, թշուառ, լքեալ, մենաւոր . . .։ Կամեցէ՛ք միայն, և ձեր կամքին ուժովը պիտի կրնաք ճամբայ բանալ ձեզի համար, նոյն իսկ բաղդին է՛ն չփայլած զաւակներուն քալած ճամբաներուն քովէն։

Մի՛ վհատիք, եթէ երբէք կորանցնելով ձեր սիրելիները, զգաք ձեր սիրտը թափուր և տխուր չոր ու ամայի անապատի մը պէս։ Կամքի ու կորովի հզօր ճիգով մը թօթուեցէք ձեր վրայէն յուսահատութեան կնապարէ ծանրութիւնը, յուսացէ՛ք, հաւատացէ՛ք սիրեցէ՛ք միշտ, ու սիրոյ նոր ծաղիկ-

ներ պիտի գան փթթիլ ձեր սրտերուն անապատին մէջ, և անիկայ պիտի դառնայ ջրարբի և գուարթ ոլորտ մը։

Մի՛ վհատիք եթէ ձեր շատ սիրածներէն խաբուելու տակաւին տանջանքը կրէք երբեք, չ՚ըլլայ որ մեռցնէք ձեր սիրտը. չ՚ըլլայ որ անիկայ գոցէք նոր սէրերու, նոր համակրութիւններու համար, որովհետև սիրելի տղաքս, մեծ անիրաւութիւն մը պիտի ըլլայ — մեր կրած յուսախաբութիւններէն հետեւցնելով — ամբողջ մարդկութիւնը դատանիլ վատ ու դատաճան, մինչ այդ մարդկութեան մէջ կան գերազանցօրէն ազնուական և առաքինի հոգիներ, որոնց պիտի կրնանք հանդիպիլ. եթէ փնտռենք։

Դժբաղդ կ՚ըլլաք, տղաքս, եթէ ապրիք մի՛այն ձեր անձին համար. մարդ երջանկութիւնը ինքն իր մէջ ամփոփուելով չէ՛ որ կը գտնէ։ Ուրիշները սիրելուն, ուրիշներու նուիրուելուն, ուրիշներու օգնելուն մէջն է իրական երջանկութիւնը։

Եթէ երկինք տուած է մարդուն գերագոյն մեծութիւն մը, գերագոյն բարիք մը, որ կը մօտենայ աստուածային բարիքին աստուածային մեծութեան, ատիկայ՝ ինքզինքը կարենալ տալու, կարենալ նուիրուելու բարիքն է։

Կրնայ ըլլալ որ նիւթական գանձեր չունենաք տալու մարդկութեան սիրոյն ու օգտին համար, բայց մի՛ ցաւիք, դուք այնպիսի գանձ մը ունիք տալու —եթէ ուզէք— որուն առջև հողին հաւասար են աշխարհի է՛ն վիթխարի ոսկիզէն բուրգերը, այն է՛ ձեր սիրտը, ձեր կեանքը։

Մի՛ վհատիք, եթէ ձեր սէրը, ձեր անձնուիրութիւնը անցնին անն՚ըմար, եթէ ձեր հոգեկան ամբողջ գանձերը առանցնին անտես. դուք, տղա՛քս, աւելի՛ սիրեցէք, աւելի՛ անձնուէր, աւելի՛ առաքինի եղիք եթէ կրնաք, ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, մարդիկ որչափ ալ կոյր ըլլան օր մը անպատճառ կը ճանչնան զձեզ, գուցէ ձեզ կորանցնելէ ետքը, ձեր մահուանէն ետքը, բայց կը ճանչնան վերջապէս, այն ատեն արցունքներով կը փնտռեն զձեզ և ձեր կենդանութեան ատեն զձեզ ճանչցած չ՚ըլլալնուն համար կը ղըղջան...։

Մի՛ վհատիք, թող ձեր կուրծքերը հզօր և անդրդուելի ժայռերու պէս բարձր կանգնին կեանքի քամիներուն և ժայռերու դէմ. այդ մրրիկը կ՚անցնի, քամիները զեփիւռ-

ռի կը փոխուին, արեւը կը ծագի դարձեալ, բայց վա՜յ եթէ ձեր սրտերուն ժայռը խորտակուած ըլլայ . . . :

Մի՛ վհատիք երբէք . հպարտ և զօրաւոր եղիք ձեր արժանապատուութեան զգացումին մէջ, արհամարհեցէք ամէ՛ն փառք, ամէ՛ն պատիւ, ամէ՛ն սէր, եթէ ատոնք ձեզի պիտի տրուին ո՛ և է նուաստութեան մը գինովը :

Նախամեծար համարեցէք ամենէն համեստ վիճակը, բաւական է որ բան մը չի կորսնցնէք ձեր նկարագրին բարձրութենէն, բաւական է որ մնաք հոգիով, սրտով ու մտքով մի՛շտ մեծ, մի՛շտ վսեմ, արժանի՝ ամենուն յարգանքին ու հիացման, և ճշմարիտ կըսեմ ձեզի, եթէ մէկն ալ ձեզի չի ճանչնայ, դուք ձեր անձը ճանչնալու գերագոյն ուրախութեամբն ու արդար հպարտութեամբը պիտի հրճուիք ու մխիթարուիք :

Մի՛ վհատիք, եթէ օր մը ըլլայ որ դուք մնաք անտուն, անտէր, և անօթի : Ուրիշներու գթութեանը մի՛ դիմէք, ամօթ և նուաստութիւն համարեցէք ատիկայ ձեզի ցոյչափ հիւանդ և անկարող չէք : Ձեր անձին վստահեցէ՛ք, ձեր աշխատութեան կրթնեցէք, և այդ վիճակէն պիտի ազատիք :

Ծայրայեղ հպարտութիւնը ունեցէ՛ք ուրիշներուն ցոյց չտալու ձեր բարոյական ու նիւթական ցաւերը, տարէ՛ք զանոնք քաջաբար և ազնուօրէն :

Մի՛ զանգատիք ձեր վիճակէն, մի՛շտ հանգարտ և զբաղարթ երեւցիք, նոյն իսկ եթէ խռոված էք, ու վշտացած ձեր ներքին կեանքին մէջ :

Ձեր ներքին ցաւերը մի՛ յայտնէք օտարին, օր մը այդ խռովքներն ու ցաւերը կ՚անցնին ձեզի համար, ու դուք գուցէ կը մոռնաք, բայց օտարը միշտ կը յիշէ . . . :

Տեսաք ահա՛, տղաքս, թէ ի՛նչ պիտի ըլլան ձեր զէնքերը կեանքի կռիւին համար : Հաստատուն կամք, զգայուն և սիրող սիրտ, խիզախ, անվեհեր հոգի, գործող միտք և աշխատող ձեռքեր : Եթէ այս զէնքերով զինուած էք, մի՞ վհատիք բնաւ ու մի՛ վախնաք, դուք կեանքի մէջ յաջողուածներէն պիտի ըլլաք :

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԵՐ

ՏԱՆՋՈՒԱԾՆԵՐՈՒՆ

Ձեզի՛ կ՚ուզեմ այս տողերը, ո՞վ դուք որ հայր մը, եղբայր մը, սիրական մը կորսնցուցիք այս անիծապարտ պատերազմներուն մէջ։

Ձեզի՛ կ՚ուզեմ այս տողերը, քանդուա՞ծ սրտեր, ջախջախուա՞ծ հոգիներ խորտակուա՞ծ կեանքեր։

Գիտե՞մ, հիմա դուք աշխարհին կը նայիք զառնութեան և զզուանքի զգացումներով։

Գիտե՞մ, հիմա դուք կ՚ըսէք թուրք բանաստեղծին հետ.

«Պատաւեցած ջատուկ կնկան մը պէս կ՚երեւի երեսդ ինծի, աշխարհ»։

Ատանք բոլորը գիտեմ և սակայն պիտի ապրիմ։

Ա՛յս է ընութեան հրամանը, ա՛յս է կեանքի օրէնքը, այս է Աստուածային կամքը։

Եւ քանի որ պիտի ապրիք՝ պիտի աշխատիք, պիտի մըմտածէք ու պիտի գործէք. որովհետև մտածել, աշխատիլ, գործել, կեանքն իսկ է։

Ատոր համար սակայն կամք ու կորով է հարկաւոր, և յուսահատութիւնը կամքն ու կորովը կը սպաննէ։

Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, վատ է այն մարդը, որ մտածելէ, աշխատելէ, գործելէ խոյս տալու համար մահուան թեւերուն մէջ ապաստան կը փնտռէ։

Վա՛ռ է այն մարդը որ կորսուած սիրականի մը յիշատակին մորմոքէն փախչելու համար մահը կը կանչէ։

Վա՛ռ է այն մարդը որ իր եսական ցաւերուն, իր անհատական սուգին մէջ խորասուզուած և անորմոլ միայն տարուած կը մոռնայ իր շուրջը ծովացող տառապանքը . . .։

Վա՛ռ վա՛ռ վա՜ռ։

Նայուածքնիդ վայրկեան մը դարձուցէք հոն, ձեր մօտը, տեսէ՛ք սա կարիճը, անիկա՛յ կեանքի մրրիկներուն դէմ ամուր ժայռի մը պէս կուրծքը տնկած, հարուած հարուածի վրայ կ՝ընդունի խրոխտ և անվախ։

Օ՛հ, ինչքա՜ն վսեմ է ան այսպէ՛ս, ինչքա՜ն գեղեցիկ, ինչքա՜ն առնական և ինչքա՜ն պաշտելի։

Անոր հասակը չի՛ խոնարհիր, ա՜ռ՛ ոտքերը չեն ապթաքիր, անո՛ր սիրտը չի՛ տկարանար . . .։

Բազդը կը շարունակէ սակայն իր հարուածները։

Մէկիկ, մէկիկ կ՝առնէ ձեռքէն իր դիւրութիւնները, իր հանգիստը, իր խաղաղութիւնը, իր սիրականը։

Անիկա կը փորձէ ստեղծել դարձեալ այդ դիւրութիւնները, գտնել վրդովուած հանգիստը, փնտռել կորսուած խաղաղութիւնը և՝ սրտին խորը կանգնելով իր սիրականին յիշատակին նուիրուած սիրոյ սրբազան խորանը, ամէ՛ն օր և ամէ՛ն վայրկեան տառաքինութեան, բարութեան և ազնուութեան գործերու խունկովը զայն կը խնկարկէ, կը փառաւորէ և կը յաւէրժացնէ . . .։

Բազդը թո՛ղ շարունակէ իր անապորոյն իր անիրաւ հալածանքը . ի՛նչ փոյթ . անիկա՛յ կանգուն պիտի մնայ . անիկայ կեանքին զօրաւորներէն է, անիկա՛յ յաղթած է կեանքին։ Յարգա՜նք իրեն . . .։

Օ՛հ թօթուեցէ՛ք և գուք ձեր մտքին ու սրտին վրայէն այդ թուլամորթ եսականութիւնը։

Մի՛ ապրիք միայն ձեր անձին և ձերիններուն համար . չափազանց գժբաղդ, չափազանց անեղատակ կըլլայ կեանքը այն ատեն։

Քաջասիրտ, վսեմ, ազնուական և համբերատար եղիք, և ձեր կորանցուցած սիրելիները ձեր մօտը զգալով պիտի միխիթարուիք։

Ճշմարիտ կ՝բաւեմ ձեզի, այն ամէն բարի գործերը զոր գուք կը գործէք անոնց ներշնչումովն է։

Այն ամեն ազնուական ժէաթերը զոր դուք կ'ընէք ա՛նոնց թելադրութիւնովն է։

Այն ամէն գեղեցիկ և կորովի գաղափարները զոր դուք գործադրութեան կը դնէք ա՛նոնց մղումովն է։

Ցորչափ ազնիւ էք ու բարի, անոնք ձեր մօտն են կը գրկեն ձեզ ու կը գգուեն. չէ՞ք զգար միթէ անոնց շունչը ձեր ճակտին վրայ, անոնց ձեռքերուն քաղցր ու զովարար շօշափումը ձեր գէմքերուն վրայ։

Անոնք շնորհակալ կ'ըլլան ձեզի իրենց փափաքները, իրենց ունեցածները այսքան ուզիղ և այսքան նուրբ զգացողութեամբ մը գուշակած ըլլալնուդ համար։

Ճշմարիտ կրանք ձեզի, արցունքները, հառաչանքները, վշտի ու կոծի ազաղակները կը հեռացնեն ձեզմէ ձեր սիրելիները։

Եւ որքա՜ն քիչ սիրած կ'ըլլաք դուք անոնք երբ անոնց ներշնչումը, անոնց թելադրութիւնը, անո՛նց մղումը այս կերպով կը մերժէք, կը վանէք ու կ'օտարացնէք. որքան քիչ սիրած կ'ըլլաք անոնց հոգին ու սիրտը. և տարամերժօրէն կապուած մարմինին, քանի որ մարմի՛նը մահանալէն ետքը, ա՛լ հոգին կը մառնաք և ձեր սիրտերը ձեզ համար խստա կորսուած կը նկատէք։

Գիշերուան լռութեան մէջ մտիկ ըրէք ասկա՛յն ձեր հոգիներուն խորէն պիտի բարձրանան անոնց պաշտելի ձայները. մտիկ ըրէք, անոնք կրանն ձեզի.

«Ինչո՞ւ կուրաք մեր վրայ, խաղաղութիւնը իջած է մեր հոգիներուն մէջ և յաւիտենական հանդիստը կ'օրրէ մեր էութիւնը։ Մարդկային գժբաղդ կիրքերը՝ ատրամիջի կսկիծը ալ ետ չեն կրնար մեր սիրտերը չարչարել։ Թշուառնե՞ր... ձեր վրայ լայէք, զո՛ւք որ խաղաղութիւն չունիք ձեր հոգիներուն մէջ, զուք որ կը կսկծիք, զո՛ւք որ չէ՛ք հաւատար։»

Ա՜խ երանի՜ ձեզի... ի զուր կարօտագին կը փնտռեմ և ե՛ս հանդիստ. ի զուր անձկանօք կը կանչեմ և ես խաղաղութիւնը ու մեծ մարգարէին հետ կ'բաեմ պաղատագին.

«Որպէս եղջերու պապակի յաղբերս Ջուրց՝ այնպէս և քեզ պապակի անձն իմ։»

ՎԵՐՋԻՆ ԳԻՇԵՐԸ

ՎԵՐՋԻՆ գիշերն կ'անցընեմ իմ հայրենի երդիս տակ.
Վաղը պէտք է որ մեկնիմ, բռնակալը չի ներեր.
Կէս գիշեր է, աստղազարդ երկինք ժպտի տրամանոյշ,
Եւ իրեն է որ կ'ուղղեմ մնաս բարովս առաջին,
Վաղը գիշեր արդէն նոր երկինք մը պիտի դիտեմ,
Իր կապոյտով, աստղերով, իր դիւթանքով անծանօթ,
Որոնք պիտի իմ հոգիս ընեն երբէք չի թողին . . .
Վերջին գիշերն կ'անցնեմ իմ հայրենի երդիս տակ,
Օ՜հ քուն չունիմ . . . պէտք է որ արշալոյսին սպասեմ.
Հայրենիքիս արշալոյսն վերջին անգամ մ'ալ դիտեմ . . .

*
* *

Առանձին եմ այս գիշեր թուղթերուս հետ սիրական,
Զոր ջերմագին կարօտով կը համբուրեմ ու կուլամ.
Եւ որ սակայն քիչ եռքը պէտք է մատնեմ կրակին.
Իմ երազներս, յոյսերս այդ թերթերուն մէջ պահուած,
Իմ իսկ ձեռքովս այս գիշեր պէտք է մոխիր դարձնեմ.
Որովհետեւ բռնակալն չի ներեր որ ես սիրեմ . . .

*
* *

Այն ով է որ մութին մէջ կորաքամակ, խղճալի,
Ձերմակ մազերն ուսին փռած իբրեւ ստուեր թափառիկ,
Կը մօտենայ դողդոջուն, ու թեւերը կ'երկարէ,
Արցունքները կը վազեն իր ծերացած աչքերէն . . .
„Օ՜հ, ներէ՛ ինձ, Աստուած իմ, հօրս արցունքն կը տեսնեմ . . .„

Փա՛ռք Ձեզ

Ա՛վ դուք, մարքի վիթխարի առիւծներ, կամքի ու կրակի անհամեմատ հսկաներ, արիի և հոգիի անհեղուն հերոսներ, մարի՜կ ըրէք . . . այսպէս Ձեր փառքը կ՚օրհնեցին ամենք՝ որոնց կեա՛նք տուիք, մի՛ռք տուիք, հաւա՜տք ներշնչեցիք և որոնց անապատ սրտերուն մէջ յո՜յսը ծաղկեցուցիք։

Դո՜ւք գերմարդկայնօրէն տանջանքից երկունք մը քրտնեցաք բոլոր այս աքանչելի և նուիրական բաները՝ ստեղծելու համար էութեանը մէջ Ձեր ցեղին՝ զոր սիրեցիք ամե՛ն բանէ աւելի, Ձեր կեանքէն շա՜տ աւելի։

Արքայական գահի մը ատոռներուն տակ ծնած, պալատական պերճանքներու և փարթամութեան մէջ սնած ու մեծցած, արհամարհանօք նայեցաք աշխարհային այդ փառքերուն ու պերճանքներուն, և երիտասարդ, ու այնքան հոյակապօրէն գեղեցիկ, նետեցիք Ձեր կուշտէն ազատորդիի սուրը, թօթափեցիք Ձեր ուսերէն իշխանական ճոխ զգեստները, կամովին փաթթուելու համար կոշտ քուրձերու մէջ, և զրկանքի ու տուայտանքի կեանք մը ապրելու ժողովուրդին գիրկը և ժողովուրդին համար, ո՜վ մարմնաւոր հրեշտակներ . . .։

Դո՜ւք եղաք մե՜ծ աւելի քան զՄովսէս, որովհետև եթէ Անիկայ առաջնորդեց իր ցեղը դէպի Աւետեաց Երկիրը,

Դո՛ւք, ո՞վ երանելի հոգիներ, Դո՛ւք Ձեր ցեղը դէպի Անմահութիւն առաջնորդեցիք։

Մովսէս Սինա լեռնէն իջեցուց աստուածային պատգամները, Դո՛ւք, ո՞վ սքանչելի հոգիներ, Դո՛ւք Արարատի նուիրական բարձունքներէն իջեցուցիք այն արքազան ախտակները, որոնք կը կրէին ցեղի մը բարձրացման, ցեղի մը կեանքին մշանջենաւորման խորհրդաւոր և հրաշապատում նշանները, և որոնցմով Աստուծոյ շունչը նիւթականացուցիք և Աստուածային խօսքերը ա՛յնքան հրաշալիօրէն և ա՛յնքան հարազատօրէն ժողովրդականացուցիք։

Ձեր հզօր ու պերճ խօսքին համար՝ էն տարուած, վամշապուհ մեծ արքան գահէն վար իջաւ ապաւորելու համար Ձեր վառած Լոյսին. Հայոց աշխարհին երիտասարդները և պատանիները Ձեր շուրջը բոլորուեցան խանդավառ, հրաշալի մարմնացեալ Գաղափարը տարածելու համար Հայրենիքին ամենէն խաւ ու մութ անկիւններուն մէջն իսկ ...։

Դո՛ւք աւելի վսեմ եղաք քան Երեմիան, որովհետև եթէ անիկայ հոյակապ ներշնչումով մը մարգարէացաւ իր ցեղին տառապանքները և գերազանցօրէն ազնիւ շնչերով ողբաց անոր ցաւերը, Դո՛ւք պաշտելի հոգիներ, Դո՛ւք աւելի՛ կոտրուած, աւելի՛ խիզախ, աւելի՛ ուժգնօրէն ներշնչուած Ձեր ցեղին սիրովը, անոր անզուգական լեզուին, անոր փարթամ գրականութեան գիտակցութիւնը պարգեւեցիք և անոր պապենական հնաւանդ և ուղղափառ եկեղեցիին արքազան պաշտամունքը և Հաւատքին գերազանց ուժը և մխիթարութիւնը ներշնչեցիք, որով անիկայ զօրացած և ամրօրէն զօտեպնդուած, կրցաւ արիաբար դիմադրաւել իր գոյութեան ապառնացող հազար ու մէկ վտանգներուն, յաղթող հանդիսանալ այդ մշտակայ ահարկու կռիւին մէջ և ապրիլ մինչև այսօր . . .։

Դարերու ընթացքին մէջ երեւցող գիւտերէն ո՞րը արդեօք կրցած է ազգ մը, և այն ալ Հայուն պէս թշուառ, հալածական և տանջուած ազգ մը պահպանել և յաւէրժացնել...։

Ո՞ր գիւտը անապարտ, զուտ և անխարդախ կրցած է պահել արիւնը երակներուն մէջ ցեղի մը՝ որուն ան ճակատագրականութեամբ մը վիճակուած է զարուար տառապանք, հուր, սուր և վերջապէս իրմէն աւելի զօրաւոր ցեղի մը մէջ ձուլուելու ահաւոր ապառնալիքը . . .։

Մեր ցեղէն շատ աւելի զօրաւոր ցեղեր, փառքի և իշխանութեան գագաթնակէտին հասած, հակառակ իրենց շատ խորունկ հմտութեան և իրենց շատ խորհրդաւոր թագուն գիտութիւններուն, այսօր ազգերուն մէջ չե՛ն ապրիր ա՛լեա, իսկ մե՛նք դեռ կանք ու կը մնանք :

Այդ զօրաւոր ազգերուն անցեալ փառքերէն ու մեծութիւններէն անզգայ յուշարձաններ, հսկայ պաղ մարմարներ կը մնան միայն իբրև լուռ վիմաներ :

Ձեզնէ, ո՞վ սրբասուն հոգիներ, Ձեզնէ կը մնայ ու պիտի մնայ մի՛շտ կենդանի, մի՛շտ բարեխուն, մի՛շտ խօսուն հրաշալի յիշատակարան մը, այն է՝ հայ տառերը, հայ լեզուն, հայ գրականութիւնը :

Ի՞նչ պիտի ըլլայինք առանց Ձեզի ո՞վ սքանչելիք Մեսրոպ, և նոյնքա՛ն երանելիք Սահակ . . . :

Պիտակ ժողովուրդ մը ճամբաներուն երկայնքը ինկած, օտարներէ ոտքեգրուած և օտարին կաթովը սնած ու մեծցած . . . :

Ո՛չ սեփական լեզու, ո՛չ սեփական գրականութիւն, ո՛չ սեփական եկեղեցի և ո՛չ սեփական գ՝բեղման . . . :

Դուք եղաք այն հսկայ սիւները, որոնց վրայ կը բարձրանայ այսօր հայ լեզուին, հայ եկեղեցիին և հայ ազգութեան փառապանծ կենդանի կոթողը :

Փա՜ռք Ձեզ :

Բովանդակութիւն

	Էջ
Կենդանագիր Աշն. Տիկին Ս. Թ. Սպարթալիի	
ՆՈՒԻՐԱՇՆ	
Վեղարաւորը (Պ–դէր)	1
Արցունքներ (Ո–ան–ը)	19
Ձեր Պարտքը կատարեցէ՛ք	21
Մանուկներուն (Ո–ան–ը)	26
Սէրիմ Աղան (Պ–դէր Ա–բ–կան կէտէ)	28
Վիրաւոր Հայրենիքը կը խօսի	34
Կնոջ Ազդեցութիւնը	39
Տանջուածներուն (Ո–ան–ը)	51
Զիւպէյտա (Պ–դէր Ա–բ–կան կէտէ)	53
Պարկեշտ եղի՛ք	64
Էջ մը՝ Ազգային Հայ Պատմութենէն	70
Բանդուած Օձախներ (Ո–ան–ը)	75
Երկու Սէր	
Ա. Կեանքի Սէրը	77
Բ. «Նա»ի Սէրը	81
Մեծ (Պ–դէր Ա–բ–կան կէտէ)	85
Ամեծք (Ո–ան–ը)	91
Կիւր՝ Կրթական գործի մէջ	93
Կոիւի Սէրը (Ո–ան–ը)	109
Փառքը Սիրեցէ՛ք	114
Կեսուրը (Պ–դէր Գ–ան–կան կէտէ)	117

Էջ

Պէտքին (Պոռնաւոր՝ Պարէր Սրբեան կեանքէ) 131
Դարձեալ Երկու Սէր
Ա. Հիւանդ Սէր 136
Բ. Առողջ Սէր 140
Կամեցէք եւ Աշխատեցէ՛ք 144
Հաւրային Գործիչը՝ Հաւրային կարծիքին առջեւ 150
Զարշարանքի Շաբաթը 153
Երկու Սէր (Պոռնաւոր) 156
«Մի՛ վախնար, Դուք չէ՛ք հասնիր»
Ա. 157
Բ. 161
Խեղճի մը Վէպը 164
Կինը եւ Հաւրային Կարծիքը 169
Արդուլիներ 175
Կարծիքներ՝ Հայ Յեղափոխութեան վրայ 179
Զաւակը (Պարէր Սրբեան կեանքէ) 194
Խորտակուած Կուռքեր (Պոռնաւոր) 214
Սիրեցէ՛ք Զեր Եկեղեցին 216
Ս. Կոյսն Հռիփսիմէ (Դրամ մը էր կեանքէն) 220
Սիրտս ամպած է այսօր (Պոռնաւոր) 230
Իրապա՞շտ թէ Իտալիս 232
Զաւակը 234
Արդուլիներ 240
Հին Տարին եւ Նոր Տարին (Տրամաբանութիւն) 243
Գութ, Սէր, Ողորմութիւն (») 247
Մի՛ Վհատիր 251
Խաղաղութեան Խօսքեր 255
Վերջին Գիշերը 258
Փա՛ռք Զեզ (Մեծ Յոբելեանէն առաջ) 259

ԳԻՆ ԼՕ ՂՐՈՒՇ